

Արժանացեալ բարեկիշտառակ իզմիրեանի Սահ.-Մեսրոպեան մրցանակի.

ՀԱՅԱՍՏԱՆԵԱՅՑ ԵԿԵՂԵՑԻՆ

bh

ԲԻՒԶԱՆԴԵԱՆ ԺՈՂՈՎՐԾ

ՊԱՐԱԳԱՅՔ

ՊԱՏՄԱԿԱՆ ՅԱՌԱՋԱԴՐՈՒԹԻՒՆ

«Մի երկնչիր հօտ փոքրիկ զի հածեցա
«հալը ձեր տալ ձեզ զարբայութիւն» :

July, 1882.


9.6 b 8

ԴՐԱ ԱՐՁԱԿ ՏԻՐ-ՄԻ-ԳԵԼԵՐՆ

Մօնկական

ՏՊԱՐԱՆԻ ՄԿՐՏԻՉ ԲԱՐԽՈՒԹՅԱՐԵԱՆԻ.

1892



ՀԱՅԱՍՏԱՆԵԱՅՅ ԵԿԵՂԵՑԻՆ

ԵՒ

ԲԻՒԶԱՆԴԵԱՆ ԺՈՂՈՎՈՑ

ՊԱՐԱԳԱՅՔ

ԱՅՈ ԶԵՅԻ ԱԼՋՈՒՅ Յ ՊԱՌԱՎԱՐ-Ը ՀԱՅԱՍՏԱՆԻ ԱՐԵՎԱԿԱՆ ԱՐԵՎԱԿԱՆ

ՊԱՏՄԱԿԱՆ ՅԱՌԱՋԱԴՐՈՒԹԻՒՆ

«Մի երկնչիր հօտ փոքրիկ զի հածեցաւ
«հայր ձեր տալ ձեզ զարքայութիւն»:

ԶՈՒԿ. ԺԲ. 32.

ԳՐԵՑ

ԳՐ. ԱՐԵԱԿ ՏԵՐ-ՄԻՔԵԼԵՍՆ

ԱԿԱԴԵՄԻԿԱՍ
ՀԱԿՈԲ Հ. ՄԱՆԱԿՅԱՆ

ՄՈՍԿՈՒ
ՏՊԱՐԱՆ
ՏՊԱՐԱՆ ՄԿՐՏԻՉ ԲԱՐԻՈՂԻԿԱՐԵԱՆ Ի.

1892

ԹԵՐԱՎԱԴԱԿԱՆ ԱՆՁՆԱԿԱՐԱՎ

54

80. ՀԱՅՈՒԹԻԿ ՀԱՅԵՐԱՄՈՒԴԻՒԹ

Дозволено цензурою. С.-Петербургъ, 3 Апрѣля 1892 года.

www.english-test.net



Типографія М. Бархударінъ, Москва, Мясницкая, д. насл. Ананова.

731

h.8-726.

Ի ՅԻՒ Ա Տ Ա Կ

ԻՐԱՎՈՒՅՑ

ԲԱՐԵԿԱՄԻՍ ԵՒ ԵԿԵՂԵՑԱՆԻԵՐ ՄՈՐԵՂԲՈՐ

ԳՐԴԱԿԵՏԸ

ԱՆՔՍԱՆԴՐ ԹՈՎՄԱՅԵԱՆ

ՄԵԼԻՔ-ՀԱՅԿԱԶԵԱՆԻ.

μ ι σ υ σ μ 5 4 8 4

ԱՐԴՅՈՒՆ ԱԾ

ԵՐԵՎԱՆԻ ՏԵՍԱԿԱՆ ԱՐԴՅՈՒՆԱԴՐԱՄ

САРДИЧА

សាស្ត្រធម៌នុវត្ត ក្រសួងទំនាក់ទំនង

УПРАВЛЕНИЕ

“Յորժամ ուխտն որ պլուխն է եկեղեցւոյ ընալիք և պիտանիք լինիցին, ևս առաւել ժողովուրդն»:

Մ. Մահակ.

«Մի խառնեսցի պղտոր ուսումն ընդ յստակ և ա-
կանակիտ վարդապետութիւն ս. և առաքելանման հայ-
րապետին Գրիգորի»:

Նախարարք Հայոց.

**ԱԿԱԴԵՄԻԿԱՆ
ՀԱԿՈԲ Հ. ՄԱՆՈՒՉՅ**

ԱԿԱԴԵՄԻԿԱՍ
ՀԱԿՈԲ Հ. ՄԱՆՈՂՅԱՆ

ՅԱԴՎԱԳՐԱՆ

«Խզել զդժնղակացն գեկամուտսն, և վառել զիսս հակառակ շարին, և ի վայր կործանել գհակառակս արդարութեան» :

ԳՐԻԳՈՐ ՀՈՒՍԱԿՈՐԻՉ.

«Ալգոյ, որոյ չէ պարիսապ, զա-
ղանք մտեալ ապականեն զնա»:

ՑՈՎՀ. ՄԱՆԴԱԿՈՒՆԻ.

Պատմական անցեալն իւրաքանչիւր ազգի վեհագոյն հարստութիւնն է, իսկ ամենայն ազգ կայուն է, եթէ նորա անդամները զիտաստ են իւրեանց պատմական անցեալին և շարունակում են մէկ անընդհատութիւն պահպանել անցեալը ներկայով ապագային թողնելու։ Այդ զիտաստութիւնն անձնիւր հայի պարտաւորութիւնն է, ըստ որում իւրին զիտաստ լինելով՝ հայը պիտի զինքն ծանաչէ և այդ զիտաստութեամբ է՝ որ հայը պիտի կարենայ հայի նմանի՝ որպէս ամենքի ինքնաճանաշութեան հետեանք բաղձանքն է։ Այդ զիտաստութեան աղբիւրն է հայոց պատմութիւնն, որ ոչ թէ պատահարների, այլ հայ ազգի պատմութիւնն է։ Հայոց պատմութիւնը մէկ յարաշար ամբողջութիւն է, որի իւրաքանչիւր շրջանը հասկանալու համար պէտք է լաւ ըմբռնել նորա սկիզբն, որին խելահաս լինելու համար հարկ է նորա հաստա-

տութեան հիմքերն պարզել ըստ որում անհրաժեշտ է գիտենալ այն ձգտութիւնը, որոնք հայոց կեանքն են կազմել, այն ծրագիրն, որ հայի գործունէութեան նկարագիրն է եղել և այն գաղափարներն, որոնք նորա աշխատանոց հոգի և մարմին են տուել:

Մէկ ժողովուրդ աղդ է, եթէ նա իւր հոգեոր և մարմնաւոր ունեցուածքի հետ ամբողջութիւն մի կազմելովիւր պատմական շարունակութեան մէջ ինքնազիտաստ է: Իսկ մի աղզի գոյութիւն ապահովուած է, եթէ նա որպէս աղդ ձգտում է իւր յարապատմական աղջային բարեկեցութեան: Հայոց պատմութիւնն ևս այդպիսի մի աղզի պատմութիւն է, այսինքն նորա այդ ամբողջութեան և ձրգանց և դոցա համար նորն վարած մաքառման նկարագիրն է:

Հայ աղզն՝ որպէս ամբողջութիւն մի, չկարէ առանց իւր այս ու այն ամբողջացուցիչ տարրի աղդ համարուիլ և քննական պատմութեան նիւթ դառնալ ըստ որում և նորա այս ու այն ամբողջացուցիչ մասն անկարող է իւրապարփակ ամբողջութիւնից անջատեալ պատմութիւն ունենալ: Հայ աղզի ամբողջութեան այդպիսի մի նշանաւոր տարրն է — Հայաստանեայց եկեղեցին, որ և ունի նորա հետ իւր յարաշար և միահետեւ կենսագործութիւնը: Ետեւնք նորան աւելի ծաւալ տալով իւր ամբողջութեան հետ յարակցաբար, բարձրանանք աղջայնից առ եկեղեցականն և իջնենք եկեղեցականից առ աղջայինը պատմական անտարակցոյ քննութեամբ և մենք կստանանք Հայաստանեայց եկեղեցու ստոյդ նկարն աղզի պատկերի մէջ:

Կեանքը կեանք է, եթէ նա մարտ է և մաքառութն և ամենայն ինչ հէնց յեղյեղուկ վիճակումն է լաւ ճանաչելում. արդէն Հայաստանեայց եկեղեցին ևս պէտք է այդ մաքառման մէջ ճանաչել: Հիմք դնելով հեթանոսութեան ընդդիմադրութեամբ, սկսաւ պատերազմիլ երկու թշնամեաց գէմ. մէկ Պար-

սից կրակապաշտների և մէկ քրիստոնէական ասպարիզում մարդահնար հաւատաքի ախոյեսնների գէմ. մաքառման այս վերջին դաշտը հետաքննական է և ուշագրաւ, վասն զի այստեղ սուրն և գրիչը յարակից էին ընթանում: Սուր էր թշնամու թուրը, ծանր էր թշնամու լուծը, բայց սրագոյն էր հայի գրիչը, ասպարիչը էր նորա կենդանի խօսքն և ամուր էր նորա ոգին արիւնածորան մարմնի մէջ: Սակայն Հայաստանեայց եկեղեցին աչքի է ընկնում նախ իւր ներքին գործունէութեամբ, կազմելով իւր և իւր հօտի ինքնազիտաստութեան և ինքնուրցնութեան ամրացուցիչ շունչ տալու ժամանակն, ապա իւր պատերազմով Բիւլզանդացոց գէմ, որի նիւթն է կազմում Բիւլզանդական պետութեան ժողովների էութիւնն և եղակութիւնն, մարտի մեծ ահարան բանալով, մինչեւ խաչակրաց արշաւանքը կամ ժի գարու վերջերը կամ Բիւլզանդական պետութեան անկման ժամանակն. այնուշեաւ Հայաստանեայց եկեղեցին միջոց մի կռուեցաւ Հոռվմայ հակաքրիստոնէական շարամտութեան դէմ, որից յետոյ դադարում է Ճմարիտ մաքառութն և Հայաստանը դառնում է շուկատ խռովարարների ասպարէզ:

Այդ դարերում Հայաստանեայց եկեղեցին փակուեցաւ իւր մէջ, վասն զի Հայ ժողովուրդը հրոսակների անդադար յարձակմանց ննթակայ լինելով, անպարապ հոգ էր պատճառում Հայոց հայրապետներին, որոնք միակ աւագապետը լինելով աղջային տան, միայն այդ իսկ տունը կառավարելուն էին զբաղուած: Արտաքուստ ևս օգնութեան յուսոյ տեղեք չկային, զի խաչակրաց արշաւանքներից յետոյ դադարեցաւ հիմնովին արեմտեան աղդեցութիւնը: Բազմաթիւ իշխաններ էին Հայաստանի անկիւններում իշխողներն, որոնք լոկ իւրեանց հացի խնդրին էին նուիրուած: Հոռվմէական եկեղեցին էր, որ զեռ շարունակեց չարանիւթ մախողներ և բանսարկուներ ուղար-

կել որոնք երկպառակութիւն առթելուց զատ, ոչ մի յա-
ջողութիւն չէին ունենում, վասն զի անցական բարեբաս-
տութեան յուսատութիւնից բոլորովին գուրկ լինելով,
այլ ևս անզին և անզօր էին ամենակուրամիտ մարդկանց
իսկ որսալու¹:

Բախտ է սակայն, որ այսչափ բանսարկու նիւթողների
և մախողների մէջ Հայաստանեայց եկեղեցին սկզբում դա-
րեր անընդհատ՝ մաքառմամբ և այժմ անհաւասար ընդ-
դիմագործութեամբ մնում է դեռ նոյն անարատութեան
մէջ: Հայաստանեայց եկեղեցու այս հոչակը զարմայնում
է գերմանական և առհասարակ եւրոպական գիտնա-
կաններին, որոնք յաճախ կրկնում են, թէ քանի հոգի և
եռանդն կայ այդ աղքի և եկեղեցու մէջ, որ յարիւն և
ի մահ պահպանում է իւր հայրենի աննման սըրբ-
աւանդն, սրբաւանդն որ պարծանք կարող է լինել ամե-
նայն աղքութեան:

Յիրաւի, Հայաստանեայց եկեղեցին, ինչպէս նկատում
էր իմ մէկ ուսուցչապետն, իւր զաւանակից այլ եկեղեցեաց
մէջ անսպառ աղքեւր է եղել եռանդի, զօրութեան և լու-
սաւորութեան, որոնցով անվհատ և անվեհեր կոռւել է իւր
անաղարտ հայրենի փառաւոր ժառանգութիւնն, իւր
վեհագոյն հարստութիւնը պահպանելու համար: Հայ ժո-
ղովուրդն ազնիւ ինքնասիրութեամբ հաւատարիմ է եղել
իւր փառաց և պարծանաց, որոնց վեհութեան համար
իւր անմահ նախնիք ամենայն ինչ զոհելով, արիւն են
թափել և զայնոքիկ սերնդոց աւանդել Զատագովական
և վիճաբանական պայքարը վարեցին Հայոց հոչակաւոր

¹Մեր խօսքն ի հարկէ այն թեթևութիկ և տտչուտ մարդկանց վե-
րալ չէ, որոնց մասին եկեղեցու նախանձախնդիր մի՛ անցեալ դարի
սկզբում գրում է. «Թողումք զարպիլդողսն միշտ, որք վասն միոյ դա-
հնեկանի զԱստուած և զհաւատոն վածառեն»: Տես. Զենոբայ լիշտա-
կարանը. Կալկաթա, 1814 թ. էջ 89.

վարդապետները: Բայց քանի՛ բազմասայրի են նոցա կռուա-
բանական գրութիւնք, քանի իմաստուն, քանի խորա-
հայեաց էին ազգային գոյութեան խնդրին և ո՛րպիսի
անձնաղըհութեամբ հաւատարիմ էին իւրեանց միակ ա-
ւանդին և աւանդարանին:

Հայաստանեայց եկեղեցին՝ մեր այդ փառաւոր աւան-
դարանը, ծփում էր իւր վեհութեան մէջ դեռ առաջին դա-
րերում իւր պարզ, սուրբ և ազատամիտ սկզբունքներով,
որոնք ողյն այս դարում և յաւիտեան ամենալուսաւոր-
եալ աշխարհի հիմայման առարկայ են: Հայաստանեայց
եկեղեցին ոչ մի եկեղեցու կամ ազգի թշնամի չէ, սակայն
իւր անաղարտ էութեան և կերպարանքի մէջ մնալով,
նոյս զրկախառնելուց հիմնապէս և մահու չափ զգուշա-
նում է: Բայց իւրաքանչիւր եկեղեցու բարոյական պարտա-
կանութիւնն է ցցց տալ և խելամուտ անել իւր որդոց
իւր հիմնական սկզբանց և գաղափարներին, որպէս զի ա-
պահով լինի օտար մոլորութիւնից, վասն զի Հայը քանի
առաւել զարդանայ և քանի շատ խորամուտ լինի Հա-
յաստանեայց եկեղեցու ներքնոյն, այնքան աւելի կսիրէ
և կպաշտէ զայն: Իսկ ով դիտաստութեամբ չէ սիրում, նա
պէտք չէ իւր փառապանծ եկեղեցուն: Հայաստանեայց ե-
կեղեցու բարոյական պարտականութիւնն է, որպէս ընդ-
հանուր ընդունուած է, քարոզով ցցց տալ իւր որդոց
ոյն հաւատքն ու սկզբունքներն, որոնք կենդանի են ի
հնուց, որպէս զի Հայը պարզապէս կարենայ, համեմատե-
լով իւր սեփական եկեղեցին այլոց հետ, մեկին տեսնել
իւրի վեհագուեմ առաւելութիւնք: Հայաստանեայց եկեղեցու
բարոյական պարտականութիւնն է օտարաց զըպարտու-
թեանց զանազան թշնամական խեղաթիւրմանց ընդէմ
գալ և հերքել արխարար և ծշմարտութիւնն «ի վերայ
լերինն բարձու» հոչակել: Վերջապէս Հայաստանեայց եկե-
ղեցու բարոյական պարտականութիւնն է օգնութեան ձեռք

մեկնել իւր այն դաշնակից եկեղեցիներին, որոնք կարևոր չյժն ու եռանդն ծախսած լինելով, այժմ կենսազուրկ գրութիւն են վայելում. նորա պարտականութիւնն է ձեռք մեկնել, բարձրացնել նոյց, և յառաջ քաշել իւր հին գինակիցը լինելու ծշմարտութեան համար. Բայց թէ երբ և ինչպէս. այդ հայաստանեայց եկեղեցու ինքնազիտաստ որդոց գործն է, նոյց զբնքն է գործունէութեան սահմանահատն և իրերի յառաջազայութեան յաջողութիւնը ժամանակի պայման:

Իսկ այդ պարտականութիւնք կատարելու հնար չկայ առանց օատար եկեղեցիները քննադատելու, ուստի պարտ է և ուրիշ եկեղեցիները հետազոտելով ծշմարտութիւնն ու մայորաւթիւնը տարորոշ տեսարանի վրայ դնել ըստ որում ծշմարտութեան քննադատումն ոչ մի զարգացած բանականի վիրաւորող չէ: Եւ ինչո՞ւ:

Ընդհանուր ծշմարտութիւնն է, որ իւրաքանչիւր աղղի և երկրի մէջ եկեղեցին պէտք է և պարտ է ժողովրդական լինի և անհրաժեշտաբար ինքնուրոյնութիւն ունենայ և գարերի ընթացքում կազմութիւն ստացած լինի իւր հօտի հետ նորա հոգուն համաձայն, որպէս զի իրեւ եկեղեցի գործէ ժողովրդի փրկութեան համար. Արդ այս դրութիւնը հակառակ է եկեղեցիների միանմանութեան, վասն զի այն եկեղեցին, որ Գերմանիայում ըստ գերմանների հոգուն ծաղիկել է, չկարէ ծապոնիայում նշյն կազմակերպութեամբ յարատեել և օգտաւէտ լինել: Այն եկեղեցին, որ Անգլիայումն է ծաւալ ստացել չի կարող հունձ ունենալ հեռաւոր Ափրիկէի վայրենիների մէջ: Մըն այս գաղափարը փայփայւում էր հայաստանեայց եկեղեցում դեռ ՚՚ — ե գարերում, երբ հայք քրիստոնէութիւն մտցնելով ի Վրաստան և Աղուանք, սերմանեցին, որպէս զի ըստ տեղաբարյուն բարեխսառնութեան և պայմանաց և հողասննղին ածի և կազմակերպուի, և ոչ թէ

իւրեանց տնկած ածեցրածն էին տանում այնտեղ տնկում: Աւասիկ պատմական հետեւթիւն մի է գիտնական աշխարհում, որ եկեղեցիներն ոչ թէ ի մի ձուլուած պիտի լինին, այլ հինաւուրց քրիստոնէութիւնն՝ հաւատքն ու սկրն անազարտ պահելով, թոյլ տալ իւրաքանչիւր եկեղեցու իւրաքանչիւր երկրում իւր ինքնուրոյն կազմակերպութիւնն ստանալու: Իսկ որպէս զի իւրաքանչիւր ժողովրդական կամ ազգային եկեղեցի իւր ինքնուրոյնութիւնն և անկախութիւնը պահել կարենայ, պարտ է իւր քննադատական քարոզական գործունէութեան մէջ եռանդուն կեանք ունենալ ոչ թէ այս ու այն եկեղեցին անարգելու համար, այլ ծշմարտութեամբ զայնոքիկ իւր որդոց ծանօթայնելով, գիտաստ համոզման պաշար մատակարարելու համար, որպէս զի իւր հետեղող անվտանգ լինին պետութեան, հասարակութեան և ընտանիքի, իրեւ աւետարանի ծշմարիտ որդիք: Այդպիսի վսեմ գործունէութիւնն է, որ միայնում կապում է ամբողջ ազգն ոչ թէ անցական իրերով, այլ հոգով, ներքին կեանքով, որպէս զի մի շունչ լինի ազգը, մի եռանդով ողեւորուի, վասն զի մեր նախնիք ևս, որոնք այնքան սիրագործութեանց հեղինակներ են, «միով գոտեաւ ծշմարտութեան պնդեցին զմէջո արք և կանայք»¹: Բանին քարոզութիւնն, աստուածային ծշմարտութեան աւետարանումն էր, որ ծանահնար էր լինում «տալ զոգի Աստուծոյ իւրատու մարդկան, միաբանել իսպանել ի սէր աստուածորդոյն, զի ի սրտից ամենեցուն իրեւ մի աղաղակ իցէ»²

¹ Եղիշէ. Վենետիկ 1828 թ. էջ 115.—² Ագաթանգ. Դեռ անցեալ դարի սկզբի աղնիւ բարովիչ մի գրում է Տարօնի Ս. Կարապետ վանքում, լիշտակելով իւր և եղալքափեների բարողական ծանապարհորդութիւնը. «և էր սովորութիւն ի հարցն առաջնոց մերս զաւազանի, զի ի ծմեռնալին եղանակին շրջէին աշխատութեամբ քարոզել կրանս աստուածայինս ուր կամէր և յաջողէր Հոգին Աստուած, և ի

և այդ ծշմարտութիւնն է, որ վրկում է ամենքին և որից կենդանանում է ամենայն ոք անհաստապէս և զօրանում է ամենայն աղդ հանրապէս:

Արդ այս է հայաստանեայց եկեղեցու քարոզական հինաւուրց զերն, որ պիտի շահազրգուէ իւրաքանչիւր հայանհատի և ոչ թէ սոսկապէս նորան նուիրուած պաշտօնէից: Այս ինչը՞ւ:

Վերագոյն ասուեցաւ, որ հայաստանեայց եկեղեցին մէկ առանձնական աշխարհ չէ ազգից անջատուած, այլ նորանից անբաժան և նորա հետ ի մի ձուլուած ամբողջութիւն է կազմում: Հայ ազգինն է հայաստանեայց եկեղեցին, հայաստանեայց եկեղեցունն է հայ ազգն. և որպէս աղջն իւրաքանչիւր հայինն է, այնպէս և հայաստանեայց եկեղեցին անձնիւր հայի ժառանգական սեփականութիւնն է և հարստութիւնը. հայն է իւր եկեղեցին պայծառացնողը, հայն է իւր եկեղեցու հովիւ և հովուապետ տուող ընտրողն, ուստի և ազգի և եկեղեցու շահն ու գործունէութիւնը համակցական է: Որչափ ազգն բարեկեաց է և յառաջադիմում է, նոյնքան և կպայծառանայ նորա անդնահատելի եկեղեցին, որչափ զարգացած է ազգի անձնիւր անհատն, նոյնչափ անուանի կլինի նորա եկեղեցու պաշտօնեան, իսկ որքան պայծառանայ հայաստանեայց եկեղեցին, նոյնքան կծաւալի նորա անսպառ լոյսը հայրենեայ ամենայն անկիւններն: Սակա ուրեմն իւրաքանչիւր անհատի բարոյական և ազգային պարտականութիւնն է մի լինել իւր եկեղեցու հետ և աշխատել նորա պայծառութեան համար, օգտուիլ նորանից և իւր նորան իսկ տուած կարգն և օրէնքը յարգելով, ապրիլ, գործել, փառաւորուել նորա հետ և նորա մէջ:

գարնանալին հրոսակին դառնալին անդրէն ի սուրբ ուխտն:» Վերոյիշեալ լիշատակ. առ Զենորայ:

Վերոյիշեալ գաղափարք առաւել ևս մղում են մեզ գէպի ծշմարտութեան հանդէսը, յօրժամ նոյն այդ են քարոզում հայաստանեայց եկեղեցու առաքելական հարազատութեան և աղգային ինքնուրզնութեան վրայ հիացող նշանաւոր գիտնականք: Թօղնելով «Հին-կաթոլիկաց» Կեօնի ժողովում (11 սեպտ. 90) գերմանական՝ Խայնկենս, զուիցարիական՝ Հերցոգ, Հոլլանդական՝ Հայկամապ, անգլիական՝ Վորդավորթ եպիսկոպոսների և այլոց արտայայտած խորին համակրանաց հաւասարիքն ու ձայնը, զանց առնենք և աստուածաբանների յարգանաց ապացոյցներն և դնենք այստեղ իմ բարեկամ անտւանի պատմաբան արքունի խորհրդական ուսուցչապետ Հայնրիխ Գելցերի նամակն ծշմարտասէր գիտնականաց հայեացքին ծանօթանալու համար:

Դուք վճռել էք աստուածաբանութիւն սովորել ձեր բոլոր ոյժն ձեր ազգինն ուուիրելու համար. հոյսկանպ և փառաւոր նպատակ: Որպէս ևս պատանեկութիւնից անափի ի վեր քան զամենայն սիրել եմ իմ ամբողջ գործս ու ձրդտումներս միայն իմ թանգագինն գերման ազգի բարեկեցութեան համար տալու, այնպէս և դուք կամենում էք ձեր ազգի, հայկայ Հին, մեծայարդ ժողովրդի համար աշխատել: Ես բարեմաղթում եմ ձեզ առ այդ վճիռն, որ դուք յանձն էք առել Քրիստոսի նախատինքը. վասն զի աստուածաբանութիւնն աշխարհի երբեմնական առաջին և բարձրագոյն գիտութիւնն, աճող լուսաւորութեան և անաստուածութեան մօտ, որի սոսկալի արդիւնքը աեսնում էնք ընկերվարութեան (sozialismus) և ոչնչականութեան մէջ (nihilismus), երթալով իջաւ մինչև նախատեալ և ծառայող սպասարկութիւնը: Որպէս առ ձեզ, այնպէս և տիտրում է առ մեզ — եղուկ — բազմապատիկ այն հայեցողութիւնը, թէ սրբագոյնն ամենայն գիտութեանց՝ աստուածաբանալին հրոսակին դառնալին անդրէն ի սուրբ ուխտն:

ծաբանութիւնը, վարդապետութիւնն Աստուծոյ և եկեղեցու վրայ այլ ևս ոչ թէ ուսեալների համար է, այլ միայն ժողովրդի: Իմ լաւագոյն երկու բարեկամներս՝ ուսուցչապետն զործնական աստուծաբանութեան ի հայդելքերգ՝ դր. Բասսերման և տեղւոյս քարոզիչ պր. Կիւտ, ունեցել են նոյն փորձն, որպէս դուք. նոքա երկորին սիրուած են հարուստ և անուանի սոսկ ոսկեշահութեան վրայ մտածող վաճառական ընտանիքից և միայն մեծագոյն մաքառմամբ կարեցել են այդ քաջ՝ բայց սահմանափակ մարդկանց դատապարաւթեան զիմաց, Տէրի կոչման հետեւ և աստուծաբանութիւն սովորել: Նոյնն է և ձեզ պատահել. ձեր արիւնակից բարեկամները մարմնաւոր պատճառներով ընդդիմադրել են ձեզ Աստուծոյ արքայութեան համար գործելու՝ որպէս Քրիստոսի ս. եկեղեցու սպասաւոր: Արդ յարգոյ բարեկամ, գիտեմ, որ ձեր հաւատքն ամուլ հաստատուած է միակ հիման վրայ՝ որ է Յիսուս Քրիստոս, երէկ և այսօր, նոյն և յաւիտեան: Ուստի լսեցէք նաև նորա ս. աւետարանի խօսքերն, որոնք ի ձեղ՝ յանարժան անօթի, բայց և այնպէս աստուծային ողորմութեան ծառայի մէջ, կատարուել է. «Մի՛ համարիք՝ թէ եկի արկանել խաղաղութիւն յերկիր. ո՛չ եկի արկանել խաղաղութիւն, այլ սուր: Քանզի եկի քակել զայր ի հօրէ իւրմէ, և զդուստր ի մօրէ իւրմէ, և զհարսն ի սկեսրէ իւրմէ: Եւ թշնամիք առն—ընտանիք իւր: Որ սիրէ զհայր կամ զմայր առաւել քան զիս, ո՛չ ինձ արժանի. և որ սիրէ զուստր կամ զդուստր առաւել քան զիս՝ չէ ինձ արժանի: Եւ որ սիրէ զոնու զիսու իւր՝ և գայ զիսի իմ, չէ ինձ արժանի....: Եւ եղէջեր ատեցեալք յամենեցունց վասն անուան իմոյ. իսկ որ համբերեսյէ ի սպառ, նա կեցցէ¹: Այս մեծ և աստուծա-

յին խօսքերն ամրացնեն ձեզ ձեր ընտրած կոչման մէջ և ի ձեղ այդ որոշումը հասունցնեն ի սուրբ օծումն մըտնելու և որպէս Աստուծոյ օծեալ երէց գործել կարենալու: Լսեցէք թէ ինչ էր ասում արևմտեան եկեղեցու մէկ սուրբ այր՝ ձեր՝ աստուծացին սահմանմամբ ընտրած կոչման վրայ. «Վեհ է գաղտնիքն և մեծ է արժանիքն քահանայի, զի նոցա առւեալ է այն, որ ինչ չէ տրեալ հրեշտակայ: Քանզի միայն եկեղեցում օծեալ քահանայք են, որ ունին իշխանութիւն Քրիստոսի մարմինն և արիւնն օրէնելու և խորհուրդ բաշխելու: Քահանան է իրօք միայն ծառայ Աստուծոյ, որ Աստուծոյ խօսքը կիրարկում է ըստ Աստուծոյ հրամանին և պաշտօնատրութեան. սակայն Աստուծոյ է, որ աստ առաւելապէս զործում է և աներեւապէս աղջում է, որի ներքը է ամենայն, ինչ նա կամենում է, որին ամենայն հնաղանդում է, ինչ որ նա հրամայում է¹»:

Արդ եթէ զուք լոծութեամբ մտադիր էք ձեր աղջի վարդապետը դառնալու — գեղեցկազոյն կոչումն, զոր ես երեակայել կարեմ մի հայրենասէր և ազգասէր հայի համար՝ փորձեցէք ձեղ Աստուծոյ առաջ հանապազօր և ամրացրէք ձեղ եռանդուն պատուիրանքներով առ Քրիստոս մեր միակ Տէրն և միջնորդն, որպէս զի նա ձեղ ոյժ շնորհէ ձեր աղջի վերածնութեան համար ամբողջ հոգով և քաջակամութեամբ գործելու: Աստուծոյ օրէնէ ձեզ ձեր ընտրեալ գեղեցիկ կոչման մէջ:

Դուք զիտէք, սիրելի բարեկամդ իմ, որ ես իմ պարապմունքներով նուիրուած եմ արեւելեան հին ազգերի պատմութեան ուսումնասիրութեան. թէ աշխարհական, մեծ ուշադրութիւն եմ զարձրել ի սկզբանէ թէ եկեղեցական պատմութեան և թէ քաղաքակրթութեան պատ-

¹ Մատթ. Ժ. 34—38, 22.

¹ Թոփմաս, Յաջորդութիւն Քրիստոս. IV, 5.

մութեան էական մասին և ըստ նմին բերման զբաղուել եմ
բաւապէս մանրամասնաբար Սնտիռքայ ասորական եկեղեցու,
Եղիստոսի Ա. Մարկոսի և Հայոց Ա. Գրիգոր Լուսաւորչ
եկեղեցեաց պատմութեան: Ես չեմ կարող գերմանական
ուսումնականաց հասկանալ որոնք անզգամ, ընդ նմին
և անհանձար ու յիմար միաք յառաջ բերին, որ իբր
թէ Հայոց ազգային անբաղդութիւնն է եղած քրիստոնէու-
թեան ընդունելլ: Իբր թէ Հայոց Ճակատագիրն է եղել
իւրեանց լեզուակից և բարցյակից Պարսիկների հետ մաղ-
ղեզն խոստովանել: Ի՞նչ խենդութիւն. ընդունած լինէին
Հայք կրակապաշտութիւնն՝ այդ տաղակագոյն և ընչինա-
գոյն հեթանոսութեան մեծ վարդապէսութեան մէջ, այն
ժամանակ, է դարում, երբ Խոլամն ստուսմունքով արե-
ելքը նուածեց, Հայք մահմետական կրառնային և այսօր
լաւագոյն զրութեան մէջ անզգամ կլինէին զուրանապաշտ
աւազակներ, որպէս իւրեանց հարեւան Քրդերը: Քրիստո-
նէական վարդապէտութեան խոստովանումն բերաւ Հայոց
համար բոլոր գարերում սարսափելի հալածանքներ և շատ
արիւնաթօր նահատակութիւնք: Պէտք չէ ձեզ՝ տեղական
պատմութեան Ճշագրյն զիասցողիդ, երկար մանրամաս-
նել որպիսի սոսկալի նեղութիւնք կրելու սահպուեցան
Հայք Ասսանեան Պարսիկներից, արաբական խալիֆներից,
Թիւրքերից և Նոր-Պարսիկներից: Սակայն աղէտից բո-
լոր գարերում Հայ աղզը պահպանել է իւր թանզագրյն
գոհարն՝ իւր քրիստոնէական հաւատան, և ջահը չէ շար-
ժուել: Վասնորց և Աստուծոյ օրհնութիւնն իջնում է
յայտնապէս Հայոց առատահանձար աղզի վրայ և ես
հաստատ համոզուած եմ, որ ապագայ գարերում Հայ աղ-
զը գեռ մեծամեծ իրաց համար է սահմանուած:

Բայց իւր ապագայ տիեզերապատմական կոչման քա-
ջաբար նախապատրաստելու համար, աղզը պէտք ունի
հաւատարիմ և նախանձաւոր վարդապէտների, լուրջ իւր-

րատող հոգեռորականների և օծեալ սուրբ քահանաների,
որոնք իւրեանց հաւատացեալ հօտն առաջնորդեն Քրիս-
տոսի շաւղաց վրայ:

Այսօր ցաւալի է, որ ժողովուրդը բազմապատիկ
խրուել է արտաքին ծիսապաշտութեան մէջ. նորա նշա-
նաւոր անդամք գերազանց վաճառականներ են, սակայն
այնպէս խրուելով՝ երկրային բարեաց, ոսկու և արծաթի
ետեկց ընկած, որ նոքա յայնմ մոռանում են Ճշմարիտ
մարգարիտն որոնելու, զոր յայտնի վաճառականն աւե-
տարանի մէջ էր փնտուում և երբ գտաւ զայն, ծախեց
իւր բոլոր ստացուածքն այդ թանկադին գոհարը ձեռք
բերելու. Համար: Անհաւատութիւնն, որ մի կիսատ և ան-
հիմն իւրացմամբ արևետեան լուսաւորութեան հետ զինքն
թեթևապէս միայն զօտել է, յաջողութիւն է ունեցել
որպէս զուք ինքներդ խոստովանեցիք, նաև Հայկի զար-
գացեալ որդոց մէջ և թէ հարկաւ զարգացելոց և մա-
նաւանդ ժողովրդի մէջ բազում Ճշմարիտ և համոզա-
նուեր քրիստոնէայք իսկ կան, այնու հանդերձ միւս
կողմից՝ որպէս շատ ժողովրդագէտների տեղեկութիւնք
համաձայնում են՝ քահանացից և աշխարհականաց մօտ
քրիստոնէութիւնը մասամբ սուզուել է արտաքին ձեւա-
պաշտութեան մէջ: Ուստի յիշեցէք Փուք եսայի մարգա-
րէի սոսկալի խօսքերը, զոր Քրիստոս Տէրն մեր և Փրկիչն
ասաց առ Տրէաները. «Կեղծաւորք՝ բարւոք մարգարէացաւ
ի վերայ ձեր եսայի՝ և ասէ. ժողովուրդս այս՝ շրթամբք
պատուէ զիս, և սիրտ իւրեանց հեռացեալ մեկուսի յի-
նէն»¹⁾:

Աստուած մի՛ արասցէ որ այս սոսկալի խօսքերը Հայ-
կայ ժողովրդի վրայ ստուգուին և նա աստուածային
հրամանով նման զատավծիու կրելու սահպուի, որպէս

¹⁾ Մատթ. ԺԵ. 7:

Հրեկից գմբախտ ժողովուրպը: Ուստի վեհազըն է խնդիրն, որ մնում է այդ ժողովրդի ուսուցիչն: Դուք պէտք է հայոց վերստին երկիւղած և քաջ ժողովուրդ դարձնէք որպէս եղել են ս. Գրիգորի, ս. Սահակի և ս. Ներսիսի օրերով: Յիշեցէք որ ինչ ս. առաքեալն Պետրոս իւր առաջին թղթում առ հաւատացեալքն ասում է. «Դուք աղդ էք ընտիր, քահանայութիւն թագաւորական, աղդ սուրբ, ժողովուրդ սեպհական, որպէս զի զձեր առաքինութիւնս նուիրիցէք այնա՝ որ զձեզ ի խաւարէն կոչեաց յիւր սքանչելի լըսն: Որք երբեմն ժողովուրդ՝ բայց արդ ժողովուրդ Աստուծոյ. որք չողօրմեալք՝ այժմ ողորմութիւն գտիք»:

Ու փառաւոր է կոչումն վարդապետի, որ պէտք է գործէ իւր աղդն Աստուծոյ սեփականութեան ժողովուրդը զարձնելու:

Մեր գարում արևմտեանների մէջ զարթել է շահազըրդութիւն արևելեան ազգերի նկատմամբ: Անդիւն և հիւսիսային Ամերիկան, նաև Գերմանիան և Զուիցերիան բազմաթիւ քարոզներ են առաքել որոնք հայոց մէջ, Ասորիքում և Կոպտերի մէջ գործել են ուզում: Այդ ճշշմարիտ ճանապարհը չէ. նոքա ուզում են իւրեանց անդիւսկան, իւրեանց նորոգող կամ լութերական եկեղեցին հայոց շատ հնագյնին վիզը կապել: Իմաստութիւնը պիտի զինքն պատմել այց իւր որդիներին: Այդ չէ ճանապարհն, որով հայաստանեաց ս. եկեղեցու վերածնութիւն են բանում: այդ պարտ է ի ներքուստ կատարուի: Այն օտար պատուիրակները բերում են, որպէս հոռվմայ որդիքը, երկպառակութիւն և բանակուութիւն Քրիստոսի Փարախը: Գիտեմ, որ շատ աւետարանական (հոռվմաբողքական) քրիստոնեայք դատապարտում են այդ քարոզութիւնն արևելեան ժողովրդոց մէջ: Մենք ուրախանում ենք, երբ հայկայ որդիք գալիս են առ մեզ և արևմտում արևմտեան զարդացումն և գերմանական զիտու-

թիւն սեփականում: բայց ապա ոչ թէ օտարք, այլ նոքա պէտք է իւրեանց ժողովրդի մէջ գործին և նոյա ուսուցանեն և լուսաւորեն, որ նա, որպէս նախկին դարերում, վերստին մի երկելի դիրք բռնէ ուսեալ ազգերի մէջ: Ես համոզուած եմ, որ թէ հայաստանը լուսաւորուող տեղացի քահանաների միջոցով մի նոր կենսազօր քիստոնէական համար հաւաքի համար աղբային կեանքն ևս նոր զօրութեամբ կըզարթնի և էջմիածնի փառքը վերստին կըձառագայթի, որպէս հին ժամանակները:

Խոզիր մի մեծ սպասում է դեռ հայ ազգին և մանաւանդ նորա սուրբ եկեղեցուն, իւր քահանայից և վարդապետաց. բոլոր այն ժողովրդոց մէջ, որոնք հին եկեղեցու, Կիւրեղ Աղեքսանդրացու և այլ սուրբ հայրերի հաւատարիմ են մնացել այն է՝ Եղիպատացոց, Ասորոց, Եթովպացոց և հայոց մէջ, հայկայ որդիք միակն են, որոնք կատարելապէս և ամբողջապէս իւրեանց որդոց մեծ մասամբ՝ սեփականել են արևմտեան քաղակակրթութիւնը, վասն որոյ և մեծ առաւելութիւն ունին իւրեանց եղբայրներից ի Քրիստոս, ըստ որում և նոյա է մնում մէկ մեծ պատասխանատուութիւն. նոքա են Քրիստոսից՝ Ճշմարիտ հովուապետից՝ հաստատուած, որոնք այդ հնագյն և մեծայարդ եկեղեցեաց մէջ պիտի հսկեն, որպէս զի աւետարանի և առաքելոց և ս. հայրերի աւանդած Ճշմարիտ վարդապետութեան ջահը չհարուածուի: Արդ եթէ հայոց եկեղեցին բազմաթիւ քահանաներ վերըստին ունենայ, որոնք քարոզեն հին եկեղեցու վարդապետութիւնն ու հաւատան անկեղծութեամբ և սրբութեամբ, և բոլոր սրատով ու հոգով՝ ոչ թէ մարդու՝ այլ Աստուծոյ գործ կատարել կամենան, յայնժամ պարտ են նոքա նաև այդ տկար եղբայրներին ընդունել և զօրացնել նոցա, նոցա, որոնց որովայթ են զնում հոռվմայ պատուիրակ եղուիթներն և ցաւալի է, որ շատ Ասորիք և

Կոպտեր գոյա թակարդի մէջ են ընկնում: Հարեշստանում՝ լաւագոյն է. այնտեղ քրիստոնեայ կայսրներն՝ թէոփրոս և Յովհաննէս ս. բարեխշատակութեամբ վանդեցին այդ ռչսարազեստ գայլերին, նաև նոր թագաւորեալն նեղուս նեղեսուէ Մենելէքն Շօայի՛ մի հաւատարիմ որդի է ս. Մարկոսի եկեղեցուն:

Բատ իմ մասնաւոր կարծեաց, զոր որպէս աշխարհական և օտար առաջարկում եմ միայն բոլորովին խոնարհաբար, յարմար ժամանակ է, որ, եթէ աշխարհական կառավարութիւնք դժուարութիւն չեն յարուցանում, կաթուղիկոսն ամենայն հայոց պէտք է հնադաւան եկեղեցիներից մի ժողով գումարէ կամ յէջմիածին կամ ի կարին, ըստ որում հրաւիրելի են նախ, երկօքին կաթուղիկոսք Սոյշ և Աղթամարի, կ. Պոլսի և ս. Երուսաղէմի պատրիարքներն, հայաստանեայց ուղղափառ եկեղեցու համօրէն արքեպիսկոպոսք և եպիսկոպոսք և նշանաւոր վանահայրերն ու վարդապետները:

2) Ա. Պետրոսի Անտիռքայ աթոռի յաջորդն՝ ուղղափառ Ասորոց այսպէս կոչուած Յակոբիիների ի Մերդին և արևելքի Մափրիանների պատրիարքը և ընդ նմին բոլոր արքեպիսկոպոսք և եպիսկոպոսք և յայտնագոյն վանահայրերն Ասորոց ս. եկեղեցու:

3) Ա. Մարկոսի Աղեքսանդրիոյ աթոռի յաջորդն, ուղղափառ Եղիպատոսի պապն և արքեպիսկոպոսն Եղիպատոսի, Լիբիայի և Պետապոլսի իւր բոլոր կոպտական եպիսկոպոսներով, հանդերձ նիթրական և սկետական անապատի վանքերի, այլ և Ամբահակեր, Մարբոլոս, ՄարԱնտոնիոս, ընդ նմին և նիթրական անապատի Ասորոց վանքերի առաջնորդներով:

4) Ներկայացուցիչք ս. Մարկոսի աթոռից կախեալ Եթովպական քրիստոնէից՝ միտրապօլիտն կամ Արունան Հարեշստանի և վանապետն Դերս Տարօրին ի Շօա և այլ

քանի մի երեւելի, և ուսեալ հոգեռորականք եթովպական բարեպաշտ ժողովըդի՛: Եթէ կարելի լինէր՝ թէւ ինքս նախապէս տարակուսում եմ արտաքին պատճառներից՝ այդպիսի մի ժողով գումարել նա նոր վարդապետութիւն չէր ունենալ աւետարանելու, զոր ուղղափառք վերաթողում են ի վատիկանն հոգմայ ժողովեալ՝ Ճշմարտութիւնից մոլորուող արևմտեան եպիսկոպոսաց: Այլ հայոց, Ասորոց, Եթովպացոց և Եղիպատոց ս. Եկեղեցեաց սրբազնն պատրիարքներն, եպիսկոպոսներն և վարդապետները միացած կըխուտովանէին, որ իւրեանց հաւատն հանուր է և նոյն, զոր ս. առաքեալք Քրիստոսի բերանից լսելով, մեզ են աւանգել, զոր առաջին դարերի ս. հայրերը թողել են յետոց, զոր 318 հայրերն ի Նիկիայ (325-ին) և 150 ի կ. Պօլիս (381)՝ նորն հոգմ և 200 հայրերն յԵփեսոս (431) հաստատել են և որ յաւէտ Ճշմարիտ և անկեղծ հաւատքն է եղել այդ չորեքին Եկեղեցեաց: Եկեղեցու սրբազնն և բարձրագոյն Վարդապետաց այդպիսի մի հրապարակական և հանդիսաւոր խոստովանումն ս. հայրերի Ճշմարիտ հաւատքի՝ անշուշտ մեծ աղքեցութիւն կըդորձէ աղքերի վրայ, կամբացնէ տատանուողներին և կոչնացնէ հոգմայ խարդախ յարձակմունքը:

Ընդունեցէք այս խոնարհ խօսքերն, այնպէս՝ որպէս են, խօսքերն հայաստանի մի հաւատարիմ բարեկամի, որ աղօթքի և բարեկի խօսութեան մէջ յաճախտկի յիշում է զաղգն հայոց:

Հ. ԳԵՂՑԵՐ.

Ենա, մայս 25, 1890,
Հոգեգալստեան ս. տօնին.

Նամակն ինքն իւր համար խօսում է աղքուապէս, ըստ որում և պատուաւոր տեղ բռնելով ազգային պատմութեան մէջ, ականաւոր տեղ է տալիս իւր մարդասէր

Հայագետ զբողին ճշմարիտ հայասիրաց փոքրիկ շարքի
մէջ: Հայասէրներ շատ կան, բայց մարդասիրական զժու-
թեամբ, իսկ գիտաստ ճշմարիտ հայասէրք շատ հազուա-
գիւտ են, որոնցից է և Գելցեր ուսուցչապետը:

Աւասիկ, այսպէս են վերաբերւում գերման գիա-
նականք առ Հայաստանեայց պատիառելի եկեղեցին: Դոյն
գիտնականներից եկեղեցական պատմագետ Ֆրիզրիխ Նիպ-
պօլին՝ իմ բարեկամն էր, որ յնդրելով իսկ յորդորեց
նուաստիս Հայաստանեայց եկեղեցու հիմնական պատմու-
թիւնը զերմաններէն տալ եւրապացոց, զոր և ուրախու-
թեամբ կատարելով, կարելի ընդարձակութեամբ¹⁾ ի լոյս ընծայեցի,
ըստ կարեացս զոհողութիւն չինայելով: Սյդ նոյն գործին
քաջալեր եղաւ և եկեղեցական գաղանի խորհրդական,
ուսուցչապետ Ռ. Ա. Կիպսիուս հոչակաւոր դաւանաբանն
ու քննաբանն:

Տերիք է յիշատակել օտար քաջալերներին, եթէ օտա-
րաց կողմից այդպէս է, միթէ Հայաստանեայց եկեղեցու
ինքնագիտաստ որդիք անտարբեր կը գանուէին: Ահա իմ
բարեկամններից բժ. Միսաք Արամեան անխոնջ բանակը
հայերէն ևս բացատրած տեսնել կամեցաւ Հայոց եկեղե-
ցու հիմնական պէտքերն, առանց զիտենալու որ նոյն զեր-
մաններէն տալու էի հետամուտ: Այս ձայներն ուրախաց-
րին և եկեղեցու անձնուէր նախանձախնդիր իմ մօրեղբայր
հանդուցեալ գնդապետ Աղեքսանդր Մելքը-Հայկաղեան մ.ծ.
անձն հային, որ զիտէր տալ «զկայսերն կայսեր և զԱստու-
ծոյն Աստուծոյ», որի սիրտն շարունակ այս և գործի
հետ բարախելով, աչքերը յառել էր պայծառ ապագան
տեսնելու: Նա ըստ ամենայնի Հայաստանեայց եկեղեցու

համար շնչելով, օրինակ մի էր հաւատարմութեան և ան-
տիւեղծ նութիրման. նա քաջալեր էր բառի բուն մաքավ,
նա եղբայր էր և թեւակից իւրաքանչեւր ինքնագիտաստի,
ում մէջ աստուածային սերմի փոշեհատ իսկ էր գանում,
նա իւրը չէր, սակայն իւր սրտից բղիսած հոսանքներին
պտուղ մի տեսնել էր փափագում: նա հանգեաւ այդ փա-
փագանաց մէջ, անցնելով իւր նմանների անմահ շարքը:
Տիսուր մշուշի տակ կրակն անգամ հովի պէտք ու-
նի...: Մինչդեռ մերթ ընդ մերթ քաջալերների ձայնը գա-
լիս էր, Հայաստանեայց եկեղեցու գեր, արթուն հովիւներն
ևս անմանակից չմնացին: Մաղաքիա եպիս. Օրմաննեան
ևս Արմաշի նորափթիթ փարմարանից իւր հայրական
ձայնը պարզեց ի քաջալերութիւն: Ահա և Հայաստանեայց
եկեղեցու և Աթոռից նորա հզօր հովանաւորն, հանգու-
ցեալ ուսումնակը հայրապետն օդնական ձեռք կարկա-
ռեց: Այնտեղ ևս գեր, ներսէս եպիս. Խուզավերդեան մեր
այդ լուսավայրից իւր նպաստաւոր ձեռքը չմերժեց:

Անցաւ զրուածքս բարեյիշատակ նզմիրեանի բազմո-
գուտ կտակի տրամադրութեան ներքոյ և ահա Մահակ-
Մեսրոպեան մրցանակաբաշխութեան պատիւն ունեցաւ:
Յանձնաժողովն ևս առանձնապէս քաջալեր եղաւ և զր-
ուածիս հրտարակութեան փափագեց: Յիշեմ արգեօք և
այն քննաբանութիւնն, որ տուաւ գեր. Եղիշէ Դուրեան
բանակը փարմապետը, սակայն չնայելով գործի ծանրու-
թեան, զլուխ բերուածի կարեսորութեան, այնու հանդերձ
քաջալերութեան լծագիծ եղաւ և առաւելագոյն պաշանջը:
Զկար սակաւը, կարօտը շտա էր. ելաւ սակաւն և ահա
իւր համառօտառութիւնը շատերին բաւականութիւն չէ տա-
լիս. Հայաստանեայց եկեղեցու մի խնդիրը պարզողեց պա-
հանջւում է գեռ ամբողջ պատմութիւնը, զրականու-
թիւնն, այլրոց զրուածների քննաբանութիւնը, զանազան
ցնդեալ բաղբաղանաց հերքումն ինչ տալ:

¹⁾ Die armenische Kirche in ihren Beziehungen zur Byzantinischen, vom IV bis zum XIII Jahrhundert, Leipzig 1892. Gustav Fock.

Պատճառն այն է, որ մինչև այժմ հայոց պատմութեան, զբականութեան և ոչ մի կողմը չէ հետազօտուած և Մխիթարեանց գրուածները փոշի են վշել բանասէրների աչքերին։ Միթէ հարկ կայ օրինակներ բերելու և ցոյց տալու թէ քանի քանի մեքենայութիւնք և ստութիւնք են ամփոփուած դոցա գրուածոյ մէջ։ Մխիթարեանք իւրեանց հաւատքն առ ստութիւնն ուղղելով, ստութեան մէջ լիապէս ծածկուել են, ցաւ է միայն, որ յիշող չեղաւ այն սուրբ խօսքերը թէ «որ հաստատի ի ստութիւն՝ այնպիսին զհողմն արածէ»։ Հողմ արածել չէ հապա՝ ի՞նչ է այն ստարանական ոճն, որ գտնում ենք նոցա ստուարակարկատ գրուածներում։ Պէտք չմնաց որ ստութեանց այդ որոշողք չկեղծեն։ Նոյն իսկ չեղած անձնք, չեղած թղթեր եղած հրատարակուեցան և այդ ամենը յարդարուեցաւ Զամշեան իմաստակի ժամանակագրական վրապատախտակի յառաջախարութեամբ։ Հէնց այսօր այդ անրջասէր «կղղիաբնակներ»-ը չեն խորշում ի սէր հոռվմայ՝ աղքային պատմութեան ճշմարտութիւնք տակն ու վրայ անելուց, ըստ որում և փառաբանում են զարդարուն բանակցյաների հեղինակները պատմութեան հոտը չիմացողներից։ Խօսքով գովասանել ներողել, մանկական հեշտագացութեամբ փառաբանել և իրօք վատարանել, կեղծաւոր, հաւատազրուժ, գող, ստախօս դուրս բերել հայոց կաթուղիկոսներին . . . այս է դոցա արհեստը, որ եղրւիթ բարցյագիտութեամբ դատապարտելի չէ, վասն զի ի սէր հոռվմայ է կատարւում։ Հայաստանի սար ու ձորը, գաշտն ու շինը գուրգուրալով նկարագրել Հինդ տողով լսածը յիսուն տողով արտայցտել, անապատը ծաղկադարդ գուրս բերել, սակայն նորա ամբողջութիւնից իտալիայի հառվմ քաղաքը կամ Վենետիկի կղղին գերազասել զի այնտեղ եկեղեցական իշխան մի է նատած և Մխիթարեան «սուրբ հայրերն» են բնակւում, այս է նոցա ոճը։

Արդ միթէ հայն իւր նախնեաց պատմութիւն պիտի համարի դոցա գրչի արդիւնքը. միթէ անտարբեր աչքով կնայէ այն պատկերներին, որոնք շցուած են եղութեան մէջ թաթաւած ձեռքերով, միթէ հաւատ պիտի ընծայէ նոցա, որոնք պատմական աղբիւրներն անդիտանալով, ըդձալով և բաղձալով են ապացուցել ուղում իւրեանց հեքիաթները։ Բաւ և մի՛ լիցի. կուրութեան դարն անցել է և եթէ Մխիթարեանք իւրեանց խղճի խցիթը շոյելու համար նախնեաց իսկ իւրեանց շարքը դասել են ջանում, այդ ինքնախաբութիւնը պիտի իւրեանց վարձը լինի. . .

Հետու կըտանէր, մեզ եթէ մի առ մի թուէինք և կամ օրինակներ բերէինք. փափագողք կարեն այդ տեսնել, համեմատելով ներկայ գրուածքս և յիշատակուած աղբիւրը Մխիթարեանց հագածաբանութեանց հետ. իսկ եթէ հարկը սախակէ, անհրաժեշտ բացատրութիւններ կը տանք մենք ուրախութեամբ, վասն զի այժմ ձգտելով համառօտութեան, հասրաւորութիւն չկայ խնդրից դուրս գալու և ուշադրութիւն դարձնելու այն հեղինակութեանց վրայ, որոնք ինքեանք ինքեանց կջըն, երբ իրականութիւնք իսկ խօսել կսկսն. . .

Արդ եթէ նման անցաւոր ինդիրներով զըաղեցնէնք ընթերցողներին, չէ՞ որ վերջինս կսահիպուի մանրամասնութեանց մէջ բուն գործը կորցնել։ Բայց պարտաւոր չենք ամենայն մի զառանցողի անթիւ ստերը մի առ մի հերքել, իսկ եթէ այդ կամեցող կայ, թող յանձն առնէ կարևոր հոգատարութիւնը, պատրաստ եմ առանձին գըրութեամբ կատարելու, զի օր. Զամշեանի պատմութիւնը քննաբանելու համար, հարկ է երկու անգամ մեծ զիրք մի գրել։ Պէտք կայ և գրականութեան հետազօտութեան, որի շըջանում միայն մի երկու օրինակ կայ և այդ է հայ ուսումնական՝ Գարագաշեանի «Մովսէս Խորենացին» և

Խալաթեանի «Ղաղաք Փարսկեցին և գործք նորին»։ Ուրկերթայինք եթէ այդ ամենայն մանրամասնորէն յառաջազրէինք։

Ներկայ գրուածքս քանի մի որոշ խնդիրներով է զբագւում։ իսկ երկրորդական հարցերը միայն գործի լրութեան համար պիտի համառօտապէս յիշառակուին, մանրամասն ուսումնասիրել կամեցողը պէտք է ինքն ևս աշխատի և նշանակուած աղբիւրները բանալով՝ հետամուտ լինի. իսկ որոնք արտաքին աղբիւրներն ես ձեռնահաս են տեսնելու, պիտի ստիպուին գերմաներէն գրութեանս դիմել։ Շատ և շատ հանգամանքներ, այլ և անհրաժեշտութիւնը ստիպում են մեզ այս գրուածքը համառօտ թողնել, աւելին ապագային պահելով և կամ յուսալ որ նոր ձեռքեր են են Ս. Էջմիածնի զիստութեան տաճարի ինքնազիտաստ զաւակներից և թերեւ Արմաշի վարժարանի ծաղկման ուսավայրից, որի երիցագոյն աշակերաններն արդէն կայտուելու թրթիւներ են յօյց տալիս գիտութիւնը թեակոխելու։ Այդ երկու աղբիւրներն եմ յիշում, զի դոքա են, որ կարեն ձեռնհաս լինել զըռչագրաց մատենագարաններին նուիրուելու՝ ո. գործին զոհուելով, եթէ իրաւ պահ մի մտածում են Ե դարի աստղերի վրայ, առանց անյատակ հոսանքի ենթարկուելու. . .

Այսափ նկատելուց յեայց չմոռանանք յիշել, որ գրուածիս աղբիւրներն են Հայոց՝ զիստորպէս՝ ականատես աղբիւրները, մանաւանդ թղթեր ու նամակները։ Յետագայ մատենագիրները միայն համեմատական արժէք ունին։ Իսկ օտար եկեղեցեաց աղբիւրներն իւրեանց մատենագիրներն են և ոչ հակառակորդներին. վասն որոյ վերջինների նկատմամբ ևս յիշառակել եմ միմիայն այն գրութիւնք, որոնք նոցա մէջ ընդունուած և ի յարգի են։

Հուսկ ապա ինչ որ մեր խնդրին է վերաբերում և որքան աղբիւրները ներում են, կյիշառակուին պատմա-

կան ստոյգ հիմնաբանութեամբ. Երկրորդական հարցեր չեն շշափուկի, իսկ իդա ու բաղձանքները, վարկած ու թեթուքները կմնան լայնածաւալ թուղթ մրոտել փափաքողներին։ Հիմք կայ մեծայոյս լինելու, որ ունեցողին այս փոքրիկ գրուածը շատ կտայ, —զի բովանդակում է աւելի քան Ճշմարտասէր անձինք թախանձագին պահանջում են, —ըստ այնմ թէ «որ ունիցի տացի նմա և յաւելցի»։

ԱՐՇԱԿ ՏԵՐ-ՄԻՔԵԼԵՍՆ.

Ենա. 1891 սեպտ. 29.



**ՀԱՅԱՍՏԱՆԵԱՅՅՑ ԵԿԵՂԵՑԻՆ
ԲԻՒԶԱՆԴԵԱՆ ՃՈՂՈՎՈՑ
ՊԱՐԱԳԱՅՔ**

Կացէք յիս և ես ի ձեզ, որպէս ուռն
հՀայ յար մօրէ մ. ի կարէ պտուղ բերել յանձնէ իւրմէ,
եթէ ոչ հցէ հաստատեալ յորմն, նոյնպէս
և գորք՝ եթէ ոչ յիս հաստատեալ հցէք:

Թ շնամութիւնը խորին հաստատութիւն էր ստացել ի հնումն չովկմէական պետութեան և արևելքան ժողովրդոց մէջ. Հոռիմ յառաջ անելով իւր աշխարհական ձգառմներն, ոչ միայն փոքր Ասիոյ պետութեանց դէմ կռւում էր, այլ ճգնում էր նոյա ուժապառ անելու, խռովութիւնք մտցնելով նոցա մէջ և կռւացնելով թէ իշխողաց իրար հետ և թէ նոցա որդոց իւրեանց հայրերի դէմ: Ես ձգառմները լաւ հասկանալով և մանաւանդ ձանձրացած Աղեքսանդր Մակեդոնացու

լծից, ջանահար եղան այդ երկրների ցեղակից ազգերը միանալ և միահամուռ ցյժով ապահովուիլ հռովմէական աշեղ բռնութեանց դէմ: Ժողովուրդ իսկ «բարբարոս» նախատական խօսքին արժանանալով հռովմայեցիներից, խօրին ատելութիւն էր տածում դէպի նոցա, ըստ որում և Արշակունեաց հզօր ձեռքը հեշտութեամբ կարողացաւ միացնել նոցա մէկ դրօշակի տակ. թէ քանի հեշտ էր այդ՝ երեսում է հէնց նորանից, որ այս ու այն կողմերում հռովմայեցոց նշանակած հռովմայեցի իշխողք չէին կարենում յարատեիլ, մինչդեռ Արշակունեաց վերջինն անգամ պատիւ և մեծարանք էր գտնում բնիկներից: Զօրացան Արշակունիք և մէկ բուռն պատուար հաստատեցին արևմտատքի դէմ: Քանի որ այդ ցեղը հզօր էր, հռովմայեցոց ոչ մի խարդաւանակը չկարեցաւ յաջողութիւն դանել, ըստ որում և ապահով էր այդ պետութեանց դրութիւնը: Սակայն այդ մշտակեաց չեղաւ դոցաներին խոպան կառավարութեան պատճառով և 224—226-ին Արտաշէս Սասանեան խորատակից Պարսից արքայ Արշակունի Արտաւանի իշխանութիւնն, ինքն գահ բարձրացաւ և արինակալ աչքերով սլացաւ ընդգէմ հայոց Արշակունի տոհմին: Խոսրով Ա. ստիպուեցաւ միայնակ դէմ ելնել բայց և այնպէս ուժգին յետ մղեց նորան և ապա ջանահար եղաւ այլ դաշնակից որոնել: Հռովմ քաղաքականապէս հակառակ գոլով այդ երկրների միահեծութեան, բնականաբար ձեռք պիտի տար Խոսրովին Պարսից շյժը թուլացնելու, ըստ որում և արինակիցի արեան վրէժինդրութիւնը յառաջ բերաւ մշտական ոխակալութիւն այդ երկու տոհմազահերի միջեւ: Խոսրով սպանուեցաւ 235—236-ին, այսինքն Արտաւանի անկումից 10 տարի յետ: Նորա որդին Տրդատ փախցուեցաւ և հռովմայեցոց օգնութեամբ ու Արտաւազդ Մանդակունի՝ հայրենայսէր զօրավարի աժանդակութեամբ, որին արեւ

մտեանք թագաւոր են կոչում, քանի մի ջաներից զինի, 261-ին թագաւորեց (որ է ըստ Խորեն. մօտ 27 տարի Խոսրովի մահից յետց):

«Սէզն» Տրդատ իւր պետութիւնը զօրացրեց, սակայն այլ ձեռքեր էր վիճակուած ազդի ինքնազիտաստութեան և նորա հոգու յաւիտենական ինքնուրցնութեան զարկը. այդ կրօնի գործն էր: Այդ հայոց կրօնը խառնուրդ մի էր դարձել պարսկական և հռովմէական հայախորթ տուրբերի, ըստ որում և ազգային չէր և փչացնում էր ժողովրդի յատուկ բնոյին և օտարացնում նորան, Հայացնում: Պտելու, նորոգելու հնար և առիթ չկար, դարձեալ աստուածայինը պիտի՝ որպէս մարդուն բնակից՝ հային ևս օգնութեան հաւանէր, նորանը դառնար: Այդ աստուածմարդկայինը—քրիստոնէութիւնը պիտի բանար ժողովրդի աչքն ու միտքն, որպէս զի նա հեթանոսութիւնից վերջընդմիշտ չկուրանար և վտանգի չենթարկէր իւր անպայման գյուղիւնն, անցաւոր պայմանաւորութեան հետ կապուելով:

Առաքելոց ցանած սերմերը աճում էին. նոցա յաջորդութիւնը յարատեւում էր ի հայաստան: Հայոց Սէհրուժան հայրապետը նահատակուեցաւ, ընդ նմին և քրիստոնեայք սոսկալի հալածանքի ենթարկուեցան (Ազաթանգ. ԺԲ.)¹, սակայն զոքա այնպէս զօրացել էին արդէն, որ Տրդատի քարացած սիրտն իսկ շարժուեցաւ Գրիգոր Լուսաւորչի՝ իւր սիրելու չարչարանքից. ուժգին եղաւ նորա հոգեկան յնցումն, ապա և բուռն եղաւ նորա գործունէութիւնը. նա ընդունեց քրիստոնէութիւնը քաջարի շահա-

¹ «Դիոկետիանոս» ինչպէս և «Սեղբեստրոս» նին սխալներ են առ Ազաթ. Հին մատնազիրք տարածալն էին Տրդատի ժամանակի նկատմամբ. զոր. Ազաթ. և Զենոր, որոնց միաբանեցրել են յետինք. ունս Ուխտ. Եպիսկ. I. 2.

տակութեամբ և Վաղերիանոսի հալածանաց ժամանակները, 276-ին առաջին սնգամ աշխարհի վերայ քրիստոնէութիւնը պետական կրօն դարձրեց, ընդ նմին հրովարտակ հանեց, մունեափիկ յղեց ամենայն կողմ՝ քրիստոնէութիւնն ընդունելու (Սպաթ. ձ. ժ.). բորբոքուեցան Պարսիկները և փրփրեցան Հռովմայեցիք, մինչև իսկ Մաքսիմինոս յարձակուեցաւ Տրդատին պատժելու, բայց յետ մղուեցաւ: Քրիստոնէութիւնը մտաւ Պարսկաստան. այդ կողմից ևս դարեր շարունակ հալածանաց հնոց վառուեցաւ ի պաշտպանութիւն իւր հայրենի կրօնին: Հայերն ևս մնացին երկու թշնամեաց մէջտեղ և ոչ մէկի դաշնակցութեան չյուսալով, սկսան ներքին ամրութեան աշխատախիլ: Աշա այս քաղաքական տրամադրութեան ներքոյ Գրիգոր Լուսաւորիչ Պարթեն ու պետականը կաղմակերպեց իւր եկեղեցին յօդուտ իւր սիրած աղքին, զօրութիւն տալով նորա ինքնուրցն ոգուն, ներշնչելով այնպիսի ինքնազիտաստութիւն, որ պանծացաւ դարերի ընթացքում ահեղ մաքառման մէջ: Նա այդ արաւ աննման իմաստութեամբ, քառուս աչքին իսկ պարզապէս նկատելի է: Նա ժողովրդականացրեց քրիստոնէութիւնն, ազգայնացրեց, մեշնաների տեղ եկեղեցիք շնույ և հեթանոսական կալուածներն վանքերին թողեց. քուրմերին կրթեց, քահանաներ դարձրեց, առանց նոցա յարաբերութիւնը ժողովրդի հետ փոփոխելու, ըստ որում հայը տեսաւ ոչ թէ նոր կրօն, այլ իւրը վեհացած: Հայն սկսաւ հային եղբայր կոչել և քանի որ Ս. Գրիգոր «Հոգոյ և մարմնոց» համար էր ջանում միանգամայն և «վասն հասարակաց», ուստի եկեղեցին և ազգը լրացնում էին իրար. եկեղեցին տուաւ ոչ միայն անձնազոհ եկեղեցականներ, այլ և քաջարի զօրապետներ և զինուորներ. Աստուած սիրողը, պիտի սիրէր և իւր աղքն և իւր հայ եղբօրը. մեռնել ազգի համար—աստուածային գործ էր, որպէս հայ զօրա-

վարն իսկ ասում էր Դ գարում՝ «այն ինքն մահ՝ վասն Աստուծոյ է, փոխանակ եկեղեցեաց նորա և ուխտի նորա, և ի վերայ բնակ տէրսնց աշխարհիս Արշակունւոյ» (Բիւզ. Խ. Խ.): Եկեղեցին եղաւ հայի եռանդի աղքիւրն ամենասառապեալ ժամանակ. «ղթագաւորս՝ քաղցրացյց եկեղեցի, զգաղանս ընտելացոյց, զգայլս՝ գառինս արար, զձեղ պայծառացոյց, զթշնամիս Ճմարտութեան ամաչեցյց» (Փարպ. 551): Նա պարզ որոշեց իւր հօտի հաւատպիքն և պատուիրեց չշեղուիլ «ոչ ձախ և ոչ յահեակ», կապեց նորան ուղղակի Աստուծոյ հետ և լիովին միացրեց հօտն իւր յաջորդաց հետ, որպէս որբոյ և հարց մի ընտանիք կազմելով: Նա պատուիրեց Ս. Գրքով կրթուիլ հանապազ և Աստուծոյ նմանի, անդադար յառաջապիմել, զի «անցանեն ժամք և աւուրք և ամք, և յառաջադէմն նկրտի». ինքն ևս զդնելով, անցայտութեան մէջ ծածկուեցաւ, որպէս զի հօտը չյուսահատուի, այլ իւր միջից տայ միշտ արժանաւոր հովուապետ: Նա օծեց ս. Ռուտակէսին և իւր ձեռքի տակ կաթուղիկոսութիւն անել տուաւ, որպէս զի հմտանայ իւր կառավարութեան: Հայոց նոր Սիոնը Քրիստոսից իսկ հաստատուեցաւ իրեւ անմահ կոթող իւր փառաց: Նոր Սիոն հիմնագրեալ Աստուածանից, Հայաստանեաց կաթուղիկէն որ ժողովէ զամենայն ժողովս ի միաբանութիւն հաւատոց ի. ներքոյ թեոյն իւրոց» (Սպաթ. ձ. ժ.): Իսկ հայրապետական աթոռը պահապան ազգի, որին հրամայեց Քրիստոս՝ «Զգոյշ լեր աւանդիղ՝ որ քեզ հաւատացաւ. ի Տեառնէ»: Ուստի անմահ է այդ եկեղեցին և զայն «ոչ ներքինք շարժել կարեն և ոչ վերինք զրդուեցուցանել» (Եղիշէ 78): Այսպիսով Աստուած շնում է Հայոց եկեղեցին, Աստուած օծում է Գրիգոր Լուսաւորչին քահանայապետ, աստուածանալն է Հայի նպատակը (Յաձախսապատում 16): Նոյն իսկ աստուածային հրամանով տարածեց Տրդատ քրիստոնէու-

թիւնն արագապէս: Եւ որպէս զի ըստ ամենայնի ինքնուրոյն լինի հայոց եկեղեցին և ապահով օտարից, ս. Գրիգոր հրաւիրեց ասորի քարոզիչներ և ոչ յշն, ասորերտկան պաշտամունք մասրեց եկեղեցու մէջ և ասորականի վրայով ընթերյուածք (Փարպ. ԺԱ): Նա ձեռք մեկնեց և հայաստանից դուրս իւր յրուեալ հօտը հովուելու. աւետարանը պիտի կապէր և յրուեալ հայոց ի մի, ուստի և Դանէլ ասորի եպիսկոպոսին վերակացու քարոզիչ նշանակեց սահմանից դէնը հեռաւոր կողմէր (Բիւղ. III, ԺԴ): Խնդրից շատ կհեռանայինք, եթէ Գրիգոր Լուսաւորչ գործունէութիւնը մանրամասն ներկայացնէնք¹. այդ այլ ժամանակի սպասող առանձին, մի նիւթ է. սակայն յիշելի է, որ վերագրյն թուած աչքի ընկնող կէտերի պատկն է այն ազատութիւնն, որ նա ներշնչում է ամենայն ինքնագիտաստ հայի սիրտ, կապելով նորան Շշմարտութեան, աղմիւի, բարւոյ հետ և ոչ որ և է անձի հեղինակութեան ենթարկելով: Եկեղեցու մէջ գտաւ հայն իւր ազատութիւնն և ազատաց հետ միացաւ, ընդ նմին եկեղեցին կապեց հայոց անցեալն իւր ամենայն փառքով նորա ապագայի հետ և հայկայ ժամարդոց յաւիտենականութեան ձգտող ազգ դարձրեց: Եկեղեցին ազնուացրեց ազգինը և ոչ թէ փոխեց, վասն որոյ ս. Գրիգոր ասումը է հրաշտապէս. «ոգւոյ և մարմնոյ ձերոց պատրաստեցաք, զօգուտն ձեր՝ ձեզ մատուցանել»: այս է հայ ազգի վեհագրյն կատարելութեան սկզբունքը: Այսպիսով մարմնն, հոգի, ազգ, հայրենիք, անցեալ և ապագայ, փառք և գործք, հանգուցեալ քաջեր և կենդանի լաւեր միացան եկեղեցու մէջ ի փառս հայրենեաց և ի զօրացումն հասարակաց:

¹ Գրիգոր Լուսաւորչի հոչակը հասկանալու համար բաւ է միայն յիշել, որ նոյն իսկ Դ-րդ դարում և թերեւ իւր կենդանութեան միշոցին մինչև անդամ հեռաւոր Կովկասում դոր. Վրաստանում նորա ացիւր կատարեցին միացան եկեղեցին մէջ ի փառս հայրենեաց և ի զօրացումն հասարակաց:

Բ.
ՀՈՂՎՄԷՍԿԸՆ ՊԵՏՈՒԹԻՒՆՆ ԵՒ ՆԻԿԻՈՅ ԺՈՂՈՎԸ.

«Մարդ ըստ բնոյթին
քաղաքական էակ մի է:
Արծուունք».

Գրիստոնէութիւնը դուրս գալով Պաղեստինից,
հաստատուեցաւ Անտիոքում, ծաւալուեցաւ Եփեսոսում,
Աղեքսանդրիայում և մտաւ հռովմէական պետութեան
մայրաքաղաքը՝ Հոռվմ: Հեթանոսութիւնը զեռ շատ հզօր
էր, ուստի և քրիստոնեայք անդադար հալածում էին
կուապաշտ կայսրներից. իսկ պետութեան անկիւններում
եպիսկոպոսները ջանում էին իրար օգնել և քաջալերել
ընդհանուր թշնամու դէմ դիմացկունութեամբ մաքառելու
համար: Ըստ բնական բերման նոքա ոչ մի կապ չունենա-
լով իրարից, աշխատում էին աւետարանին հետեւ և
սէր պաշել միմեանց մէջ: Առաջին զարու եպիսկոպոսաց
գաղափարն էր, որ եկեղեցու պլուխը՝ Գրիստոս և քրիս-
տոնէական հաւատար մի լինելով, մի են բոլոր հաւատա-
ցողք իրար հետ: Դեռ Պետրոս առաքեալի յաջորդն
Անտիոքում՝ Խոնատիոս (+ 115) վարդապետում էր որ
եկեղեցին մի է աշխարհում և այդ միութեան մէջ իւրա-
քանչիւր համայնական եկեղեցի առանձնաբար երկնայնի
նկարակերպն է:

Բ-րդ դարից, երբ սաստկացաւ քրիստոնէութեան
մաքառումն հեթանոսութեան դէմ և քրիստոնէութիւնը

նուամբ վանքեր էին շինուում: Իսկ լետազայ դարերում նա տօնուել
սկսաւ նեռաւոր արևմտքում իսկ:

զիխաւոր անկիւններից տարածուեցաւ շրջակայքը, համայնքի վարիչները բնականաբար դեր պիտի կատարէին թէ քաջալերելու և թէ ուժի համար միութիւն պահելու: Զօրութիւնն անշրաժեցաւ էր մանաւանդ հերձուածողների պատճառով, որոնք ուժասպառ էին անում քրիստոնէից միահամուռ դործունէութիւնը: Այդ իսկ ժամանակ ձբգտում յառաջացաւ պետութեան մէջ քրիստոնէական եկեղեցին իբրև ընդհանուր ինչ նկատելու, հակառակ զանազան հերձուածողաց. հարկաւ այդ յառաջացաւ նախ գաւառական շրջահայեցողութեամբ և ապա ամբողջ պետութեան վերաբերմամբ: Որպէս քրիստոնէութիւնն իւր աստուածայնութեամբ տիեզերքը պիտի իշխէր և ընդհանրական կրօնը դառնար ըստ աւետարանին, այսպէս ևս չոռվմէական հեթանոս աշխարհում, ոչ թէ մասնաւոր համայնութիւններ տալու էր, այլ հակառակ հերձուածողաց, ընդհանրական միութիւն: Այսպիսով ընդհանրականութեան գաղափարը քրիստոնէականին փոխարինեց: Բնական էր ուրեմն, որ այդ գաղափարն ոմանց մէջ ձիշտ ըստ աւետարանին հասկացուէր, իսկ ոմանց մէջ ծերուէր և աշխարհային զիտմանց ծառայէր. և ահա երկու տեսակ ձգտումներ յառաջացան պետութեան եպիսկոպոսաց մէջ: Նախ՝ քրիստոնէութիւնն իւր ընդհանրականութեամբ միացուցիչ մարդկութեան իմ զիւլին Քրիստոս. և 2)համայնքի միացուցիչն եպիսկոպոսի անձի մէջ: Առաջինն էր առաքելական ճշմարիտ ձգտումն ըստ Քրիստոսի պատուիրանաց. իսկ երկրորդը՝ մասնաւոր անձանց մատածմունքն էր մարմաւորական իշխանութեան նպատակով, որ պատճառ պիտի լինէր եկպառակութեան, կոիւնէրի և հայհայութեան:

Քրիստոնէական ընդհանրականութեան կամ կաթուղիսութեան առաջին յերարկողք են չոռվմէական պետութեան մէջ Փոքր Ասիօյ եկեղեցականք՝ Պոլիկարպ Զմիւռնացի († 166), Սերապիոն Անախոքացի, Դիոնի-

միոս Կորնթացի, դոցյա Հետեւեցան ապա և միւս եկեղեցիք: Պետութեան գօրաւոր եկեղեցիք հաստատուած էին առաջնակարգ քաղաքներում. այսպէս՝ յԱնախոք, յԵփեսոս, յԱղեքսանզրիայ և ի Հռովմ: Առհասարակ իւրաքանչիւր ժողովուրդ և համայնք քրիստոնէութիւնն ընդունելով սրբագրծում էր իւր հեթանոսական վայրեն և իւր նոր կեղսն դարձնում. որտեղ հռչակաւոր կուռքերն էին, այնաեղ էին հաստատուում և քրիստոնէական հզօրագոյն նիստերը: Անախոքիան, որպէս արևելեան հին մայրաքաղաք, կեղրոցրեց իւր ժողովրդի մաքերն, Աղեքսանզրիան առանձնացրեց իւր սեփական ազգն, իսկ Հռովմոց կեղրոնսավայրն էր Հռովմն, ոչ միայն իբրև արքայանիստ մայրաքաղաք, այլ և որպէս հեթանոսութեան սրբագյր, որ կուապշատ հռովմայեցիների համար նոյնն էր, ինչ որ Երուսաղէմը քրիստոնէից համար, ըստ որում և կոչւում էր «քաղաք յաւիտենական» (urbs aeterna), «քաղաք սուրբ» (urbs sacra) և այլն, իսկ նորա կուապաշտական ծէսէրն օրինակելի էին ամենուրեկ:

Այդ կեղրոնսավայրերից իւրաքանչիւրում առանձին գալոց էր և ուղղութիւն, միայն Հռովմումն էր որ քրիստոնէական զիտութիւնն առաւել ուշ ծաղկեցաւ կուապաշտ կայսրների մտաւոր հայտանաց պատճառով: Բոլոր այդ ուղղութեանց «ընդհանրական» եկեղեցու գաղափարը հիմնապէս չէին շեղուում իրարից: Բ գարում արդէն հաստատուն մի սկզբունք էր, որ եպիսկոպոսը Քրիստոսի փոխանորդն է և յանձին եպիսկոպոսի է հաստատուած իւրաքանչիւր համայնք: Եւ որովհետեւ աւանդութիւնն առաւել բարձր նշանակութիւն ունեցաւ այդ եկեղեցիներում և եպիսկոպոսից բարձրագոյն զիրք չկար, բնականաբար աւանդութեան կրօղներն եպիսկոպոսները համարուեցան. այդպիսով իւրաքանչիւր եպիսկոպոս եկեղեցու ծաւալման աղբիւր դարձաւ, ըստ որում անձնիւր եպիսկոպոսի

ձեռքում ինքնուրոյն գործունէութիւն մի կելրոնացաւ: Եկեղեցին դեռ զարգացման մանուկ հասակում գոլով, կարօտ էր զանազան հարցերի բացայայտութեան, ուղիղ և մոլար կարգերի որոշման և այն. այս ամենի պարզող հաստատողն էր եպիսկոպոսը: Եպիսկոպոսաց գորութիւնն այն աստիճանի հասաւ, որ չուզմայ Կալստոս (217—222) արգելեց չարագործ եպիսկոպոսի պաշտօնանկութիւնն, եկեղեցին նմանեցնելով Նոյեայ տապանին, յորում կային սուրբ և անսուրբ կենդանիք, թէև Կուրնելիոս եպիսկոպոսը (որ 251-ին հոռվմայ աթոռը բարձրացաւ) դուրս եկաւ և հիմն ի վեր տապալեց այդ վարդապետութիւնը:

Եկեղեցու փրկութիւնը ժողովրդի համար ամուր որոշումն ստացաւ ընդհանրութեան գաղափարի տակ. դորա սովորական արտայայտութիւնն էր ամենուրեք՝ «արտաքոյ եկեղեցւոյ չեք փրկութիւն», որ մէկ չափ էր անձնիւր հաւատացողի համար: Սակայն պիտութեան եկեղեցիք իրարից անկախ և մանաւանդ ըստ այլացեղ ժողովրդոց բնոյթի զարգանալով, բնականօրէն տարբեր կերպաւորութիւն ստացան. նոյն իսկ վարդապետութիւնք այս ու այն եպիսկոպոսի մենաշնորհը լինելով, իրարից պիտի շեղուէին. ահա այս իսկ պատճառ եղաւ այն վէճերին, որոնք տեղի ունեցան, երբ քրիստոնէութիւնն ընդարձակուեցաւ և տարբեր գպրոյների հետեւողք ընդհարուեցան, սկսեալ Գ դարու վերջերից: Քաջայայտ է որ կելրոնական եպիսկոպոսը դժուարութեանց պիտի հանդիպէին տարաձայնութեանց վժիռ տալու. վասն որոյ անհրաժեշտաբար իւրաքանչիւր եպիսկոպոս սկսաւ իւրը ճշմարիտ համարել և թոյլերին պարաւորեցնել իւրին հետեւելու: Այնուհետեւ յարձակման դուռը բացուեցաւ: Այդ ժամանակ անձնիւր եպիսկոպոս մաքառմամբ գորանալու համար սկսաւ դիմել իւր շրջանի եկեղեցականաց ժողովի օգնութեան, ըստ որում և ժողով գումարելը միջոց զարձաւ եպիսկոպոսաց

ձեռքում, որոնց մէջ մայրաքաղաքի աթոռակալք և ծերագոյնք գահերիցութիւն էին վայելում: Իսկ Գ դարի վերջում արդէն առաջնակարգ տեղը բռնեցին առաքելական յաջորդք: Այսպիսով երբ վերջինքս վարիչներ հանդիսացան և թշնամական խմբերն ստուարացան, կոխութեախտիչ ուղղութիւնն առաւ պետութեան դէմ, վասն զի զօրաւոր եպիսկոպոսք, ջանալով իւրեանց բանակը մեծացնել, բռնահարում էին միւսներին՝ տիրելու համար: Հանձարաւոր եպիսկոպոսք, որոնք յաձախ ջանում էին իւրեանց պաշտօնակցաց մոլար ընթացքն ուղղել, յանդիմանելով և ժողովով գատապարտելով, զօրաւոր խնամող չկարէին լինել. անհրաժեշտ էր այլ զօրութիւն, որ եղաւ պետութիւնը:

Քրիստոնէութիւնն յառաջանալով կայսրներին վարանման մէջ էր ձգում: Հեթանոսութիւնը յոյս չունէր ապագայի, և ահա կոստանդիանոսը խոհեմութիւն համարեց հակուիլ առ նոր կրօնը: Նա լաւ գիտէր որ պետութեան ապագան քրիստոնէութիւնն էր, սակայն առժամանակէս հեթանոսութիւնն ևս զօրաւոր էր, որի արհամարձելը վտանգաւոր էր: Թէև իւր միահեծանութեան ժամանակները քրիստոնէից թիւը հազիւ 10—15 թիւրերիւրի էր համար, սակայն հեռատեսութեամբ սկսաւ խնամել նոյա շուրջ 314-ին և վտանգից խուստիելու համար երկիրիմի քաղաքականութիւն բանեցնել: Հէնց որ նա պաշտպան երեւեցաւ քրիստոնէութեան, պետութեան եկեղեցիք պայմանաւորեցան նորա քաղաքականութեան հետ, զոր երկար ժամանակ ի նկատի ունեցան և նորա յաջորդները: Կոստանդիանոս նայում էր իւր գայիսոնի տակ գտնուած բոլոր ինքնուրոյն եպիսկոպոսական աթոռների վրայ, որպէս մէկ միութեան, ըստ որում և աշխատում էր այդ միութիւնն իւր միահեծանութեան ներքոյ ամուր պահել: Այդ ձգտման հետեւանք էր որ նա խնամեց

միաժամանակ թէ հեթանոսութիւնն և թէ քրիստոնէութիւնն, ըստ որում և կարգուեցաւ թէ հեթանոսաց չաստուածների և թէ քրիստոնէից սրբոց շաբքը, բայց նրբ չկարեցաւ այդ երկդիմութիւնը պահպանել, ըստ որում նոյն իսկ նորա նախորդք խոյս էին տալիս ի հռովմ ինակուելուց, միայն այն ժամանակ հզօր հեթանոսներից հեռու լինելու համար փոխաղբեց (330-ին) իւր արքունիքն Կ.Պօլիս, ընդ նմին մկրտուեցաւ միայն մահուան օրը (337-ին):

Եկեղեցու շրջանում նա միայն ներքին ինդիրներն էր եպիսկոպոսներին թողնում, իսկ մնացեալն ամենայն իւր ձեռքին էր. «Պուք կարէք եպիսկոպոսներ լինել եկեղեցու ներքին գործառնութեանց, իսկ ես Աստուածանից հաստատուած եպիսկոպոս եմ արտաքին գործառնութեանց¹», ասում էր նա եպիսկոպոսաց. այդ գաղափարի հակիրճ արտայայտութիւնն է նորա յաջորդաց՝ «Ես կայսր եմ և քահանայապետ միանգամանցն»՝ խրոխտ խօսքերն, որոնք լիակատար նշանակ են արքունիքի և եկեղեցականաց յարաբերութեան:

Կոստանդիանոս ըստ այս սկզբանց առաջնորդուելով, տեսաւ որ իւր պետութիւնը կանոնաւոր կարգի էր, մինչ պետ եկեղեցականը գյն մի չունէր. ինքն միահեծան պետ էր, սակայն անձնիւր եպիսկոպոս մարմնաւոր գերիշխանութեան էր ձգտում. նոյն իսկ գաւառական աննշան եպիսկոպոսք թեակոխում էին միահեծանութեան: Կոստանդիանոս բաժնել էր իւր պետութիւնը չորս կուսակալութեան՝ Արեւելք, Իլլիրիայ, Խոալիայ և Դալլիայ, որոնք կազմում էին 14—15 նահանգ. առաջինում՝ Արեւելք, Եգիպտոս, Աղիա (Եփեսոսի), Պոնտոս, Թրակիայ. Երկրորդում՝ Մակեդոնիա, Իլլիրիկայ, Դացիայ. Երրորդում՝ Խտա-

¹ Եւսեբ. Կոստ. Կոստ. IV. 24.

լիայ, Աղրիկայ. չորրորդում՝ Հիսպանիայ, Գալլիայ, Բրիտանիայ: Այդ նահանգներն ես՝ բաժնուած էին գաւառների, և աշա գաւառի եպիսկոպոսը ձգտում էր իւր գաւառի վրայ իշխելու, նահանգինը նահանգի վրայ և կուսակալութեանն ոչ միայն ամբողջ կուսակալութեան վրայ, այլ և նկրտում էր գահերցիութիւն ձեռք բերելու արքունիքի առաջ: Կոստանդիանոս տեսաւ այս ամէնն և աչքաթող չարաւ:

Պետութեան քաղաքական վարչութիւնը կեղրօնացած էր պետական ծերակցյառում և որպէս զի եկեղեցականն ևս կանոնաւոր վիճակի մէջ լինէր, յղացաւ նա ըստ այդ ծերակցյան «մեծ ժողովի» գաղափարը (փոքր ժողովք էին գաւառականք), որ պէտք է հսկէր ըստ հարկին ամբողջ պետութեան եկեղեցեաց վրայ: Այդ ժողովներում պէտք է ներկայ լինէին պետութեան բոլոր «պապերը» կամ եպիսկոպոսք, որպէս զի ժողովի որոշումները խաղաղաբար ընդունուեին բոլորից: Ժողով հրաւիրողն էր ինքն կայսրն, եթէ եպիսկոպոսք վէճի էին բռնւում, գանգատւում էին կայսրին և պատիւ էին համարում միայն կայսրից գատուել: Ժողովում նախագահում էր ինքն կայսրը մէկ եպիսկոպոսի միջոցով:

Երկպառակող եկեղեցականներին խաղաղացնելու գիմեց Կոստանդիանոս այդ ժողովների օգնութեան ա. անգամ 314-ին. դոյն ժողովը տեղի ունեցաւ Արևելում և լինելով ամբողջ պետութեան համար, «ափեղերական» կոչուեցաւ ոմանց զրուածներում, որպէս տիեզերական էր կոչում արքունիքը, բայց և այնպէս չկարեցաւ խռովութեանց վերջ տալ գանգատներ էին, զորոնք ստանում էր, ըստ որում տեսնելով պետութեան եղկելի վիճակը, հրաւիրեց 325-ի Նիկիոյ «մեծ ժողովն»՝, որի հեղինակութիւնը բարձրացնելու համար հրաւիրեց նաև օտար եկեղեցեաց ներկայացուցիչներին: Հայոց քաղաքականութիւնը պահան-

ջել է միշտ գոնէ մէկ դաշնակից ունենալ իւր հարեան թշնամի պետութեանց մէջ: Կոստանդիանոսի քրիստոնէական տրամադրութեան ցըցերը բաւ էին հայոց ևս զրաւելի. հաւանական է, որ 323-ին Մաքսիմնոսի ջարդուելուց յետոյ, երբ Կոստանդիանոս միապետեց իւր երկիրը, Տրդատ առիթ ունեցաւ նորա հետ տեսնուելու Նիկոմիդիայում, որտեղ նա քանի մի ամիս անցցրեց: Աստ կարէր և դաշնք տեղի ունենալ, նոյն իսկ կուսաւորչի և Եւսեբիոս Նիկոմիդիայի եպիսկոպոսի ներկայութեամբ: Այս բարեկամութեան յարակից նկատելի է որ ասիական կաղմակերպուած հնագոյն եկեղեցեաց ձայնը մեծ կշիռ պէտք է ունենար հոռվմայեցւոց նորադարձ պետութեան համար, ուստի թախանձագին եղաւ Կոստանդիանոսի հրաւերն և սիրառաք հայաստանեայց եկեղեցու ներկայացուցիչը: Նիկիոյ այդ մեծ ժողովին մասնակցեցան այդպիսով բոլոր այն ժամանակի նշանաւոր եկեղեցիք, վասն որոյ և իւր բովանդակութեամբ կարող է նա տիեզերական ժողով համարուել սակայն ըստ զիւանաձեին « մեծ ժողով » կոչուեցաւ արձանագրութեան և պատմութեան մէջ:

Երկապառակութեան մօտագոյն պատճառ տուողն էր Սրիոս, որի մոլար վարդապետութեան դէմ եղաւ Աղեքսանդրոյ Աղեքսանդր եպիսկոպոսն (պապան կամ էլ Բաբան) 313—26, որ արդէն գերիշխանութեան էր հասել հոռվմէական պետութեան մէջ և մերժեց նորան եկեղեցուց 321-ին ժողովով: Սրիոս ապա օգնութիւն գտաւ Եւսեբիոս Նիկոմիդացուց, որ թշնամի լինելով Աղեքսանդրին, սկսաւ գործել ընդէմ նորա: Վէճը ժամանակ մի տեսեց և ատա ըստ երեսյթին հանդամանքը ներեց Սրիոսի Աղեքսանդրիայ վերագառնալու, սակայն վէճը կրկին սաստկացաւ: Սրիոս սկսաւ իւր գաղափարը երգերով տարածել. կարծ միջոցում կոխւն այնպէս սաստկացաւ, որ եպիսկոպոսը ու քրիստոնէութիւնը ծաղրի ենթարկ-

ուեցան Հրէաներից: Կոստանդիանոս պատերազմներից վերադած, խորին թախծութեամբ տեսաւ եպիսկոպոսաց պատերազմն, որ վտանգում էր պետութեան խաղաղութիւնը: Նա անձամբ զիմեց նամակով առ Աղեքսանդր և Սրիոս: Սյդ նամակը հիմնաւոր յիշատակարան է նորա քաղաքագիտութեան: Նա դրում է, որ մինչդեռ յըս ունէր արեւելեան եպիսկոպոսաց օգնութեամբ անհետացնել տօնացեանների երկպառակութիւնն, ահա տեսնում է, որ իւր պետութեան արևելքն իսկ կորստական պառակտման է մատնուած, ուստի և ինքն իւր միջնորդութիւնն է առաջարկում խաղաղութեան: Հարկ չէ, շարունակում է նա, այդ վիճաբանութիւնը տգէտ ժողովրդի մէջ տարածել այլ պէտք է մէկ համաձայնութեան գալ, ըստ որում մնութեաց վրայ վիճում են տգէտ ամբոխն ու մնները: Զգացուած զրում է նա, որ այն վէճը սպառնում է խաղաղութեան և խանկարում միութեան զործը, վասն որոյ խնդրում է խաղաղ մնալ, եթէ մինչև իսկ գաղափարայ համաձայնութիւն չկայանայ. « գարձրէք ինձ իմ հանդիսա օրերն և անհոգ գիշերները. մի թողէք տիրութեամբ անցցնել կեանքիս մնացեալ ժամանակն », տում է հզօր կայսրն և աւելացնում է թէ պատրաստում է Աղեքսանդրիա զնալու, սակայն յետ է կացել իւր մտադրութիւնից, երբ ստացել է երկպառակութեան լուրը, և խոստանում է, որ եթէ հաշտուին, իսկոյն այցելել:

Այս նամակի հակիմք բովանդակութիւնը ցոյց է տալիս թէ քանի քնքոյշ էր այն ժամանակի քաղաքական վիճակն, որ արիւնը ուշաց կայսրն անգամ, որ իւր ատելի տոհմակիցների արեամբ իսկ խաղում էր, այդպիսի աղաչական զիմումն է անում առ մէկ եպիսկոպոս: Բայց նամակն ազդեցութիւն չունեցաւ և խոռվութիւնն այնպէս բորբոքուեցաւ, որ Եղիպատոսում կայսեր պատկերն անգամ անարգեցին: Պետութիւնը վտանգի մէջ էր և ահա նի-

կիոյ այդ ժողովը պէտք է նորա արիւնաթաթախ սրի տեղը բռնէր: Ժողովը տեղի ունեցաւ 250—300 եպիսկո- պոսաց ներկայութեամբ, նախագահէց կայսրն Եւսեբիոս Կեսարացու միջոցով, առաջնակարգ զեր կատարեցին Աղեք- սանդր եպիսկոպոսն Աղեքսանդրից, Եւսթաթէոսն Ան- տիոքայ և Մակարն Երուսաղէմի. Եւսեբիոսի նախագահու- թիւնը ձշգրիտ և որոշ է, սակայն հարց կայ նաև Եւս- թաթէոսի և Նողիսսի վրայ:

Սյդ ժողովում Կոստանդիանոս ձեց բոլոր գանդատ- ների խառնակոյար կրակի մէջ առանց կարգալու և մէկ կարծ ճառով որոշեց ժողովը Հրաւիրելու նպատակը. «Երկպառակութիւնն եկեղեցու մէջ համարում եմ ես, ասաց նա, աւելի ցաւալի և սոսկալի, քան որ և է պատե- րազմ: Հէնց որ ես Աստուծոյ օգնութեամբ թշնամեաց յաղթեցի, կարծում էի թէ այլ ևս ոչինչ պէտք չէ, միայն թէ իմ ազատաձների հետ ընդհանուր ուրախու- թեամբ Աստուծոյ գոհութիւն մատուցանեմ: Բայց երբ ձեր երկպառակութիւնը լսեցի, հաւաաացած էի որ այդ չպէտք է ուշացնէի և փափաքելով իմ ծառայութեամբ օգնութիւն հասցնէլ իսկցին հրաւիրեցի ձեզ: Սակայն իմ բաղձանքս այն ժամանակ կատարած կլինեմ, եթէ բոլորէ սրտերը միացած և խաղաղ ի միաբանութեան տեսնեմ; զոր և գուշք, որպէս օծեալք Աստուծոյ, սյլոց ևս կաւե- տէք: Մի՛ յապաղէք իմ բարեկամք, մի՛ յապաղէք ծա- ռայք Աստուծոյ. հեռացրէք վէճի բոլոր պատճառներն և կոտորեցէք երկպառակութեան հանդոյցները խաղաղութեան օրէնքով, որով Աստուծոյ ամենահաճոյ զործ կատարած կլինեք և ինձ ձեր պաշտօնակցին չափազանց մեծ ուրախու- թիւն կառթէք»: Կոստանդիանոս չասաւ իւր նպատակին. նա պատրաստ էր Արիոսականաց կողմն անգամ անցնելու, եթէ միայն դորանով կարենար խոռվութեան վերջ տալ- սակայն Աղեքսանդրիոյ աթոռը հզօր էր, ուստի և հեշտու-

թեամբ չէր զոհուիլ աղանդաւորին:

Արդ, ի՞նչ եղաւ Նիկիոյ ժողովում: Արիս բանա- գրուեցաւ և աքսորուեցաւ. Աղեքսանդրիոյ հեղինակու- թեան ներքոյ վերափոխած հաւատամքը պարտաւորիչ դրուեցաւ ամբողջ պետութեան մէջ: Պետութեան եպիս- կոպոսաց յարաբերութիւնը Ճշտելու համար զրուեցան- օրէնքներ, որ նոքա իւրեանց վիճակաց եկեղեցական վարչա- պետք գոլով, իրար հաւասար են, ընդ նմին և որոշուեցան- քանի մի վարչական կանոնք նոցա համար: Ա. կէան- ընդհանուր քրիստոնէական էր, վասն զի աղանդի եղե- լով խաղաղութիւն պիտի շնորհէր եկեղեցական աշխարհին, ուստի և որպէս Ճշմարտութեան յաղթանակ եկեղեցինե- րում յիշատակելի. թ-ը հետազայ զարերի համար նը- պատաստաոր եղաւ, զի առաքելական հաւաաթի իւրովանն օրինակելի ամիոփումն տուաւ հաստատուն արժանագրու- թեամբ. իսկ դ-ը պատկանում է բացառապէս հոռվմէական- պետութեան եկեղեցեաց: Ուրեմն առաջին երկուքի մնա- յուն արժանիքը զատելով նշանակութիւն ունին միմիայն քրիստոնէութեան պատմութեան համար և իրական առ- ընչութիւն չունին հոռվմէական պետութեան չպատկանող եկեղեցեաց հետ:

Նիկիոյ ժողովի որպիսութիւնն ու նշանակութիւնն ըմբռնելուց յետ, գանք այժմ քննելու հայաստանեաց եկեղեցու յարաբերութիւնն առ այդ: Գիտենք հաստատա- պէս, որ ա. Խստակէս ներկայ էր ժողովին և նորա ա- նունը զանւում է սատրագրութեանց տախատկի վրայ: Հապա իւր հետ հայաստան բերաւ նիկիոյ ժողովի կա- նոնն երն, որոնք, որպէս և շատ ուրիշ ժողովների կա- նոնները, կարող էին նաև հայոց օգտակար լինել: Այնու- հետեւ այդ ժողովն նկատուեցաւ որպէս մէկ կողմնակի- լաւ զործ քրիստոնէական եկեղեցում: Իբրև¹ կողմնակի-

¹ Հալոց հաւատամքի կտորներ և նմանութիւնք տես զորօր. Ագան.



գործ պիտի նկատուի նիկիոյ ժողովը, զի նորա ըստն հաւատամքը մուտք չդաւաւ հայոց եկեղեցում: Հայոց հաւատամքը շատ տարբեր է նիկիականից և չի կարող վերջինի ընդարձակումը լինել սակայն քանի որ համագաւան է նիկիականին, կարէր և նիկիական կոչուիլ—ըստ բովանդակութեան, թէե ոչ ըստ ձեմն: Ինչպէս ուրիշ տեղ ասել ենք, հայոց հաւատամքը ծագել է արեւելքում, Ասորոց, Կապադովիկիոյ, հայոց և գուցէ Պաղեստինում նոյնանման կազմութիւն ստանալով: Իսկ ապա կարէին Լուսաւորչի արդիւնքը քանի մի լրացումներ ևս անել այդ հաւատամքին՝ միայն թէ ամենառաջն մինչեւ Ե դարու սկիզբը, վասն զի բնութեան խնդրի վրայ բայորոշ յիշաւակութիւն չունի: Քանի որ Կիպրոսի եպիսկոպոս Եպիփանը Պաղեստինյի կր և իւր երկու հաւատամքներն անտարակցոյ այդ արեւելեան հանգանակներովն է ձեւել չենք կարող չյիշել, որ արեւելեան եկեղեցիները բաւական հեղինակութիւն են ունեցել հաւատոյ խնդիրներում: Կապադովիկեան - Աղեքսանդրեան դպրոցը դեռ երկար փայլեցաւ քրիստոնեայ աշխարհում: այդ դպրոցին Եր պատկանում և հայոց Ճիւղը բոլորովին տարբեր Բիւղանդեան դպրոցից:

Աւելորդ չէ բերել այդ երկու հաւատամքներն ի դատողութիւն ընթերցողի.

Հայոցը.

Հաւատամք ի մի Աստուած ի հայրն ամենակալ յարարին եր Աստուած հայր ամե-

նիկիականը, հին
թարգմանութիւն
Կիւրեղ Աղեք. մէկ-
նութեան մէջ.

289. 197. 356. 376. 215. 226. 116. 147. 55. 312. 331. 385. 499.
253. 211 էջերը (տա. Թիֆլիս). Յածախապտ. 190 և այլն. Բիւղ. IV, Ե. Եղիշէ Վենետ. 1828. էջ 48. 50. 51. 64 ևայլն:

կնի և երկրի, երևելեաց և աներեսոյթից: Եւ ի մի տէր Յիսուս Քրիստոս որպին Աստուածոյ, ծընեալն յԱստուածոյ հօրէ միածին, այսինքն յէութենէ հօր: Աստուած յԱստուածոյ, լոյս ի լուսոյ, Աստուած Ճշմարիտ, յԱստուածոյ Ճշմարտէ Ճնունդ և ոչ արարած: Նոյն ինքն ի բնութենէ հօր. որով ամենայն ինչ եղեւ յերկինս և ի վերայ երկրի, երեւելիք և աներեսոյթք: Որ յաղագս մեր մարդկան և վասն մերոյ փրկութեան իջեալ ի յերկնից՝ մարմնացաւ, մարգացաւ, Ճնաւ կատարելապէս ի Մարեմայ սրբոյ կինս և յերկրի: Որ կուսէն հոգուովն սրբով: Որով էառ զմարմին, զհոգի և զմիտ և զամենայն որ ինչ է ի մարդ Ճշմարտապէս և ոչ կարծեօք: Զարչարեալ խաչեալ, թաղեալ յերրորդ աւուր յարուցեալ, եւ եալ ի յերկինս նովին մարմնով ընդ աջական մարմնովն և փառոք հօր ի գատել զկենդանիս և զմեռեալս, որոյ թագաւորութեան ոչ լոյս կախճան: Հաւատամք և ի երբեմն, յորժամ ոչ ս. Հոգին յանեղն և ի կատարեալն, որ խօսեցաւ յօրէնս և ի մարգարէս և յաւետարանս: Որ թէ յոչնչէ եղեւ, կամ էջն ի Յորդանան, քարոզեաց յայլմէ հութենէ կամ Հայ. Եղեղ և Բիւղ. ժողով. պար.

զառաքեալն (բատ իս յառաքեալն) և բնակեցաւ ի սուրբսն: Հաւատամք և ի մի միայն ընդհանրական և առաքելական եկեղեցի, ի մի մլրատութիւն, յապաշխարութիւն, ի քաւութիւն, և ի թողութիւն մեզայ: Ի յարութիւն մեռելոյ, ի դատաստանն յաւիտենից հօգուոց և մարմնոց յարքայութիւնն երկնից և ի կեանս յաւիտենականս:

իսկ որք ասեն՝ էր երբեմն,
յորժամ ոչ էր որդի, կամ էր
երբեմն, յորժամ ոչ էր ս. Հոգի,
կամ թէ յոչէից եղեն, կամ
յայլմէ հութենէ ասեն լինել
զօրդին Ասաուծոյ՝ և կամ ըզ-
սուրբ Հոգին. և թէ փոփոխելիք
են կամ այլայլիք, զայնպիսիսն
նզովէ կամուղիկէ և առաքելա-
կան եկեղեցին.

Տարբերութիւնն աշազին է, վասն որոյ և բաւական
է այդ ապացուցելու, որ Նիկիոյ ժողովը հայոց ականա-
աես հայրերից առանձին իման հեղինակաւոր նշանակու-
թիւն չէ ստացել և համարուել է միւս տասնեակ ժո-
ղովների շարքում որոնք առօրեայ էին քրիստոնէական
աշխարհում։ Այդ պարզ երեւում է նաև հայոց հնագոյն
մատենագրութիւնից, մանաւանդ Գրիգոր Լուսաւորչի
ձառերից որոնց մէջ որ և է ժողովի յատուկ հեղինա-

¹ Գրչագիր լարքալական մատենադարանի ի Բերլին № 32, թերթ 206.

կութիւն տալ չկայ: Ինչ տեսակէտից էլ նայենք այդ
հաւատամբների վրայ, մեր եղրակացութիւնը կմնայ ան-
փոփոխ: Դրյն այդ ճշմարտութեան վկայում է նաև պատ-
մութիւնն, ըստ որում տեսնում ենք որ Ծստակէս, ըստ
վերնոյն, միայն ժողովի կանոններն է բերել իւր հետ,
որոնք և փոփոխութեամբ վաւերացուեցան Գրիգոր Լու-
սաւորչից նաև Հայոց համար, որպէս Հին ժամանակ սո-
վորութիւն կար զանազան եկեղեցեաց զգուշացուցիչ կանոն-
ներից օգտուիլ: Արդ աւելորդ չէ բերել և պատմութեան
վկայութիւնք:

Ազաթանգեղոսը պատմում է Ճարտասանօրէն (զլ. Ճիկ).
(Ծառակէս) «Երթեալ հասանէր ի ժողովն մեծ նիկիոյ
ընդ եպիսկոպոսն ամենայն, ուր ամենայն տիեզերացն
կարգեցաւ ընդունելութեան աւանդութեան, հաւատացաւ
հաւատք, կարգք լուսաւորութեան, կանոնք պայ-
ման աւորք աստուածատուր զօրութիւն հածոյիցն
Աստուծոյ անշափ բարձրութեանցն: Ուր և մեծ կայսրն
Կոստանդիանոս. Իսկ երանելին Ծառակէս գայր
հասանէր պայծառ ծագեալ հաւատովքն և հաստատուն
աստուածահանոյ նիկիական կանոնօքն երե-
ւեալ ի Տայաստան երկրին. առաջի գնէր թագաւորին և
կաթողիկոսին սրբոյ զք երեալ աւանդութիւնսն:
Որով ո. Գրիգորի ի նոյն լուսաւորական կանոնսն
յաւելեալ, առեալ զիւր վիճակն զչայաստան երկիրն
պայծառացուցեալ հանդերձ արքայիւն Տրդատաւ, զամե-
նայն աւուրս կենաց իւրոյ լուսաւորէր »:

Պարզագոյն ես հաղորդում է «Պատմութիւն վարուց և նա հատակութեանց երջանիկ հայրապետացն. . . » այնտեղ տառած է. « Զայսու ժամանակաւ յայտնեալ լինէր Արխոս Աղեքսանդրացի, որ դաւաճանեալ լինէր ի զիւէ անտի, ոչ գոլ ասէր զՄրդի ի բնութենէ հօր, և ոչ հաւասար նմա. վասն այսորիկ իսկ ապէս

ժողով՝ եպիսկոպոսաց լինի ի հրամանէ Կոստանդիանու
ի Նիկիայ Բիւթանացւոց, ընդ որս և մերն Առիսատակէ ո
կոչեցաւ. և անդ հարք երկք հարիւր ութ և տասն ըստ
Հոգևոր սրբութեան քակեալ զազանդն Ա-
րիսսի՝ նզովեալ մերժեն զնա ի հաղորդութենէ
եկեղեցւոյ. . . . իսկ ապա մերն Առիսատակէս դարձեալ-
գայր, բերելով ընդ իւր զարժանընկալ քսան
կանոնեալ գլուխս ժողովոյն. ընդ որ յաւետ
խրախ լեալ Գրիգորի, յաւելոյր այլ ևս զլուխս ի նոյն՝
ի զգուշութիւն վիճակելոց իւրոց» (Սով. Ժ. 48): Հետե-
ւաբար Նիկիայ ժողովը գումարուեցաւ խսկապէս Արիսսի
պատճառով. Աստակէս ևս վերադառնալով բերաւ ժողովի
քսան կանոնները: Որ ժողովն միայն Արիսսի պատճառով է
գումարուել, յիշում է նաև Բիւզ. արտղանցիկ (III. Ժ.):
Սակայն թէ Հնագոյն գրութիւններից քաղելով և թէ
Գրիգոր Լուսաւորչի երրորդ աշակերտաց պատմածները
լսելով, ամփոփում է պատմահայրն Մով. Խորենացի Հե-
տեւեալը. « Յայնժամ գայ հասանէ հրովարտակ ինքնակա-
լին կոստանդիանոսի առ մեր արքայն Տրդատ, զի
զառւրին Գրիգոր առեալ ընդ իւր ի ժողովն երթիցէ.
զոր ոչ առ յանձն Տրդատ. . . բայց և ոչ սուրբն Գրի-
գոր հաւանեցաւ երթալ. զի մի զառաւել պատիւ վասն
խոստովանողական անուանն ի ժողովոյն ընկալցի. որպէս ո
զի այսպէս փափաքանօք և մեծաւ փութով
կօչեն: Այլ նոքա առաքեն փոխանորդ իւրեանց զմբու-
տակէս, հանդերձ Ճշմարիտ խոստովանու-
թեամբ երկողունց՝ գրով:

Երթեալ Ռստակէս ընդ մեծին Ղեռնղի, հասանէ ի
քաղաքն Նիկիացւոց, ուր եղեն ժողովեալ հարք երեք-
հարիւր և ութեատան ի քակտումն արի անոսաց
զորս նզովեալ մերժեցին ի հաղորդութենէ եկեղեցւոյ. սա-
պէս և ինքնակալն արտասահմանեաց ի մետաղս: Ապա

դարձեալ Ըստակեայ արժանահաւատ բանիւ և
քսան կանոնեալ գլխովք ժողովոյն, գայ
համելիափի հօրն և արքային ի Վաղարշապատ քաղաքի:
Ընդ որ ուրախացեալ սրբըն Գրիգորի սուլ ինչ պլուխս
յինքնէնէ ի կամոնս ժողովոյն յաւելու, վասն առաւել
զգուշութեան իւրոյ վիճակին» (Ա. Զթ):

Արդ Արիստի պատճառով զումարեալ այդ ժողովին
հրաւիրուեցաւ Տրդատ Լուսաւորչի հետ գնալու. հրաւիրը
թախանձագին էր. Նոքա ուղարկեցին Ռստակէւին իւրեանց
գրաւոր խոստովանութեամբ հանդերձ: Ռստակէս բերաւ
20 զլուխ կանոններն արժանահաւատ գրութեամբ¹, զորոնք
և ս. Գրիգոր առելացումներով յարմարեցրեց իւր վիճակին:
Բոլոր այդ վերե պատմածք համառօտում է և Յովհան.
կաթուղիկոս (Թ³) և ասում: « Խոկ ապա մերն Առիստա-
կէս գարձեալ անտի գայր բերելով ընդ իւր զար-
ժանըն կալ քառնական կանոնեալ զգլուխս ի
ժողովոյ ընդ, ընդ որ յաւէտ խրախ լեալ սրբոյն Գրի-
գորի՝ յաւելոյր այլ ևս զլուխս ի նոյն ի զգուշութիւն
վիճակեց իւրոց »:

Եղբակացութիւնը պարզ է. Հայք ոչ մի կապ չունին Նիկիոյ ժողովի հետ, այլ մասնակցեցին քրիստոնէական նախանձախնդրութեամբ, որպէս սովորութիւն էր, վեհայք ևս նման ժողովներ ունէին, որոնց հոռոմոց հայրերն ևս երեխն մասնակցել են: Ռոտակէս նպաստեց ուղղափառութեան յաղթանակին և Արիոս պարտեցաւ, ուստի Նիկիոյ ժողովը յարգուեցաւ ազատամիտ եկեղեցիներում իրեւ «ա. ժողով» և այդ ևս երբ արևմտեանք հին հաւատքը խախտեցին:

¹ Եցինը Թիւրիմացութեամբ և կամակութեամբ Թարգմանում է այդ խօսքը՝ «արժանահաւատ խոստվանութեամբ» — «Ծ ծօշտօնեփհամծ սլուցութեամծ», լէջն 157. Մով. Խոր, ուսերէն Թարգմանութեան:

Կ. ՊՕԼԵՄԻ 381 ԹՈՒԻ ԺՈՂՈՎՐԾ

«Եւ ոչ յալլմէ ումերէ այնպէս
երկնչիմ ես՝ որպէս յեպիսկոպոսաց,
բաց ի սակաւուղ»:

0 0 4 b B b R U i.

Կոստանդիանոսից յետոյ երկպառակութիւնք շարունակուեցան. Աղեքսանդրից միահեծան գահակալն Աթանաս (326) պահում էր ամբողջ պետութեան եկեղեցական գործերն իւր ձեռքում, որպէս ժառանգել էր իւր նախորդից. Նա այնպէս զօրացել էր, որ այլ ևս իւր աթոռի թշնամի արիոսականութեան վերահաստատման հնար չէր թողնում, թէև կայսրները պետութեան խաղաղութեան համար երբեմն ձգում էին առ այդ: Աքսորւում էին մերթ Արիոսեանք մերթ Աթանասեանք, բայց անօգուտ: Արքունի քաղաքականութիւնը սրահանջում էր ընկճել Աղեքսանդրից զօրութիւնն, սակայն Կոնստանց Աղեքսանդրից աթոռին ոյժ տալով, խանգարում էր Կ.Պոլսի աթոռի միահեծանութեան ձգտելուն: Երբ Կոնստանցի հովանաւորութեան ներքը Աթանաս վերաբարձաւ աքսորանքից և նորա մեռնելուց յետոյ կրկին աքսորուեցաւ Կոնստանցիոսից, Եգիպտացիք գտարանջեցան և միայն զէնքի տակ խաղաղուեցան: Թէ ինչպիսի սարսափ էր ձգել Աթանասը Կոնստանցիոսի սիրտն, երեսում է նորանից, որ անտպատ քաշուելուց գինի ոգևորում էր իւր ժողովրդին, այնպէս որ կայսրը զիխագին նշանակեց,

սակայն ոչ ոք յանձն չառաւ հզօր եպիսկոպոսի վլուխը բերելու. Աթանասեանք նեռն էին անուանում կայսրին: Եկատ հեթանոս կայսրն Յուլիանոս, ապա հետեւցաւ արիոսեանը՝ Վաղէս և խռովութիւնն առաւել սաստկացաւ մինչև Թէոդոս Մեծն (379): Վէճերն այնակս տաղտկալի էին որ շատ եպիսկոպոսք զգուելով քաշում էին հասարակական ասպարեզից: «Ոյք երեկ մէկալօր, ասում է Գրիգոր Նիւսացին, արհեստանոցից են դուրս եկել, թեկն են ածում իսկոյն դաւանաբանութեան ուսուցչեն: Ոյք թերես ստրուկներ են եղել և ծառայութիւնից փախել, խորին պատուով իմաստաբանում են անըմբռնելի իրաց վրայ: Զեղ անշուշտ անծանօթ չէ, թէ ինչ մարդկանց վրայ է մեր խօսքը. ամբողջ քաղաքը՝ շուկան և փողոցները լիք են այրպիսիներով — Հնոտիավաճառների, ըգգեստավաճառների, զրամափոխների, նպարավաճառների վրայ է իմ խօսքը: Եթէ հարցնում ես թէ ինչքան օրալ (դրամ) պիտի ստանայ, իմաստաբանում է ծնեալի և անծինի վրայ» ևայլն: Այսպիսի խառնակ վիճակում եր գտնուում պետութեան եկեղեցական աշխարհն. իսկ ժողովները. «Ես, եթէ ծշմարտութիւնն ասել պէտք է, ասում է նո, այնակս տրամադրուած եմ, որ եպիսկոպոսների ամենայն մի ժողովից փախչում եմ, փառն զի գեռ երբէք չեմ տեսած, որ մէկ ժողով որ և է լաւ վերջ ունեցած լինի կամ թէ չարիքը նորանով վերացած լինի, այլ միշտ դրքա աւելի ևս բազմացել են, զի վիճասիրութիւնն և իշխանասիրութիւնը, (մի կարծիք թէ ես աստ կոշտ եմ արտայայտում) այդ ժողովներում ամենայն նկարագրութիւնից վեր է և մարդ աւելի շուտով նախատինքի և դանգատի կենթարկուի, եթէ համարձակուի այլոց փատութեան դէմ խօսելու, քան թէ յաջողութիւն կունենայ այդ փատութիւնքը յաղթելու: Ուստի և ես յետ եմ քաշուել և զորանում եմ միայն իմ հոգու

Հանգստութիւնը դաել¹» Այս էր իրերի վիճակը. վէճեր յարուցանել և «Հաստացյ գործերը²» զոհել սովորական էր այդ խառն ժամանակ:

Այս իսկ միջոցին թէոդոս թագաւորելով, շուտով հրաման հանեց 380-ին փետր. ի հաստատութիւն նիկիականին, բայց երբ այդ չօգտեց, 381-ին 10 յունուարի վերստին հրովարտակով արգելեց բոլոր աղանդներն և հականիկիականաց պաշտամոնքները³: Այսու հանդերձ նորա երկու տարուայ բոլոր ջանքերն անօգուտ անցան. նա չկարեցաւ խաղաղութիւն հաստատել և ճարահատեալ դիմեց ժողովի օգնութեան: 381-ի մայիսին գումարեց Կ.Պօլսի ժողովը: Բացի խաղաղութիւն վերականգնելը պիտի և Աղքասանդրիոյ աթոռը յետ քաշեր, ուստի և որոնեց նորա հակառակորդ արեւելեան եկեղեցիների օգնութիւնն, որմնք անփանդ էին և միայն Աղքասանդրիոյ աթոռին չննթարկուելու էին ձգտում: Թէոդոս տուաւ ժողովի նախագահութիւնն ոչ թէ Աղքասանդրիոյ եպիսկոպոսին, այլ Անտիոքայ Մելիտիոսին, որին և արեւելեան բաժնի գլուխ կարգեց: Անտիոքայ օգնութեան անհրաժեշտութիւնն արտայայտեց նա, երբ մերժեց եպիսկոպոսաց խնդիրը՝ ժողովն Աղքասանդրիոյում գումարելու: Թէոդոսի հոգը—Կ.Պօլսի գերիշխանութիւնն էր. այդ էր պէտք կայսրակցի աթոռը խորտակելու համար. դորան նպաստաւոր եղաւ Մելիտիոսի մահն, որից յետոյ նախագահեց ժողովին Պօլսի նեկտարիոս եպիսկոպոսը: Իշխող ժողովականք արտայայտեցին ժողովի բանահիմն անդադրում բացականչութիւններով՝ «արեւելքից է ենում արեգակն, արեւելքից է մարմնացեան Աստուած լուսաւորել»: Թէոդոս մեծն այդ իսկ արեւելքն զօրացնելու համար՝ բարձրացրեց Պօլսի եպիս-

¹ Նամակ 55, 381-ից յետոյ գրեալ: Տես և Նագիանց ծառ XXII.

4. 416. 14. 423. — ² Նագիանց. նամ. 65. ծառ XXXII. 4. 581.

³ Cod. Theod. XVI. 1, 2: 5, 6:

կոպոսին ևս, այլ և Երուսաղէմի «մայր ամենայն եկեղեցեաց» հաստատեց, հակառակ Աղքապանդրիոյ աթոռին, որ ձգտում էր Պաղեստինի վրայ իշխելու: Ժողովը նզովեց Մակեդոնին, առաջին կանոնով հաստատեց Նիկիականը. երկրորդ կանոնով արգելեց եպիսկոպոսներին իրար գործերին խառնուելու. երրորդ կանոնով որոշեց որ Կ.Պօլսի պատրիարքն որպէս Նորհռովմայ աթոռակալ, Հինհռովմայ հետ հաւասարապէս յարգուի: Իսկ փոքր ինչ ուշ գուրս եկաւ թէոդոսի հրօվարտակն, որով նա պատրիարքութիւն առուաւ Երուսաղէմի եպիսկոպոսին: Այս էր Կ.Պօլսի ժողովի 150 ընարովի եպիսկոպոսաց գործը. Նիկիան քայլ մի արտաւ և Աղքասանդրիոյ շարքում զրաւ Հռովմայ և Անտիոքայ աթոռները. Կ.Պօլսի ժողովն ևս փոքր ինչ աւելի առաջ գնաց: Սակայն գեռ գորանով Աղքասանդրիոյ գերիշխանութիւնը չընկուեցաւ. նա ^{1/2} դար ևս իւր առաջնակարգ գերը պետութեան մեջ կատարեց, մինչև որ սրի զօրութեամբ նուածուեցաւ:

Արդ Կ.Պօլսի այդ ժողովի եպիսկոպոսաց 150 թիւը պարզ ցցյ է տալիս որ պետութեան ամբողջութեան մասնակցութեամբ չէ եղել: Այժմ տեսնենք արդիօք հայք մասնակցեցին Բիւղանդական այդ ժողովին: Ականատես պատմիչը Փաւստոս, որ իւր պատմութեան ամբողջ կէսը նուիրել է Հայոց կաթուղիկոսաց և անսահման շաղակրատութեամբ պատմում է նոյա կմնաց պարագայք, աականին չէ յիշատակում որ և է ժողովի մասնակցութիւն:

Խորենացին դար մի յետոյ գրում է (III. 49). Թէոդոս «դարձյց զամենայն հարս սուրբս, որը յաղագս ուղղափառութեանն արտասահմանեալ էին. ընդ որս և զմեծն ներսէս ածեալ առ իւր ի Բիւղանդիոն, պահէ մեծաւ պատուով, մինչև Ճշմարտութեանն ստուգեցաւ հաւատ, որ յաղագս ամբարշախն Մակեդոնի հայհռութեանցն . . . »: Այնուհետեւ պատմելով վարդապետու-

թիւնը, յարում է, « Եւ ժողովեալ սուրբ հարքն ի թագաւորեալ քաղաքն Բիւզանդիոն, Դամասիոս Հռովմայ(?), Նեքտառիոս Կ.Պօլսի . . . և այլ եպիսկոպոսը, միանդամայն 150 հարք, որք նզովեալ մերժեցին զՄակեդոն և զամենայն հոգեմարտն»: Ուրեմն Խոր. ևս չէ յիշում թէ Ներսէս որ և է ժողովի մասնակցած լինի. ըստ նորին այսքան միայն՝ որ Թէոդոս Ներսիսի միջոցով ստուգեց թէ որն է Ճշմարիտ հաւատը: Բայց Վաղէս մեռաւ 378-ին օդոստ. 11-ին, իսկ Պօլսի ժողովը գումարուեցաւ 381-ին մայիսում, ըստ որում Ներսէս չէր կարող ամբողջ 2 տարի օտարութեան մէջ մնալ և իւր երկրի խորովութիւնք մոռանալ մանաւանդ որ այդ միջոցին ոչ ոքի մաքով, որպէս տեսանկք, ժողովի գումարումը չէր անցնում:

Սցնը հաստատում են և հետագայ դարերի գրուածները: Յովհան կաթուղիկոսն աւելի քան 4 դար յետոյ գրում է (գլ. ԺԲ). « Ընդ որս և զմեծն Ներսէս ածեալ առ իւր պահէր, մինչեւ ի ձեռն նորա զամբարիշտ հայ-հոյութիւնն Մակեդոնի ի ստուգութիւն հաւատոյ ճշշմարտութեան դարձուացէ: Եւ ապա ժողով եպիսկոպոսայն միանդամայն ՃՇ ի Բիւզանդիոն արարեալ, նզովեալ մերժեցին ի բաց զՄակեդոն » որ և ամենապարզ կերպով արտայայտում է մեր հետևութիւնը: Բայց Փաւստոս պատմում է, որ Վաղէս «զառաջինն մեծապայծառ փառք մեծաւ շքով մեծարեաց զնոսա» (IV, Ե.): Իսկ Ներսիսի վարուց պատմին ասում է. « Վաղէս զառաջինն մեծարեաց յոյժ զնախարարսն Հայոց Մեծաց, և եղ զաթոռ մեծին Ներսիսի ի վեր քան զմետրապոլտացն և քան զպատրիարքին» (Էջ 53). և ապա վերսաին գրում է. Թէոդոս «ածեալ առ ինքն և եղ զաթոռ մեծին Ներսիսի ի վեր քան զամենայն «եպիսկոպոսացն որ ժողովեալ էին և զպատրիարքին ևս, որ վասն հոգէմարտին Մակեդոնի էին գումարեալ» (Էջ 62): Այս երկրորդ մեծարանքը չէ

յիշում Փաւստոս, այլ զրում է որ Վաղէսի մահից յետ ներսէս ինքն դարձաւ: Համեմատելով այդ երկու մեծարանքները, տեսնում ենք որ յար և նման են և կրկնութիւն. բայց և այնպէս երկրորդ կտում «ածեալ առ ինքն» «և եղ զաթոռ» . . . խօսքերի մէջ անկարելի է 2 տարի թուել, ըստ որում և պարզ է որ կայսրական խորհրդակցութիւն կամ կաձառ. է եղել Մակեդոնի պատճառով, վասնորոյ և միայն մի պատրիարք է ներկայ եղել: Այսու հանգերձ բոլոր պատմիները զիտեն որ Արշակ արքան բանտարկուեցաւ Շապուհ Բ-ի օրով. այդ Շապուհ Բ թագաւորեց 309—379: Մեծն Ներսէս թագաւորեցրեց Պապին գարձեալ Շապուհ Բ-ի օրով. ընդ նմին Ներսիսի գառնայու միջոցին Արշակն էր շքով հանդէպ զնացողը: Այնուհետեւ Ներսէս դժկամակած Արշակից, հեռացաւ արքունիքից (Բ. IV, ԺԵ. ԾԱ.): ըստ որում նորա տեղը բռնեց Զունակ անունով «սուտանուն քահանայ» մի (Բ և Խ. III, ԻԴ.): Արշակ անդադրում պատերազմ ունեցաւ Պարսից զէմ և նախարարք զժողութեամբ դիմեցին առ Ներսէս (Բ. IV, ԾԱ): Հուսկ ուրեմն երբ Արշակ բռնուեցաւ, Մուշեղ ժողովեց նախարարաց և զնաց առ կայսրն, ինդրելով թագաւորեցնել Պապին. անտի գառնալով, «գային և ի մի վայր բովանդակէին, և լինէին ի խնդիր սրբոցն՝ մէծի հայրապետին Ներսիսի» . . . «ապա մէծաւ ջանիւ հաղիւ հաւանեցուցանէին զնա երթալ նմա ընդ նոսա ի բանակն արքունի. զի յաւուրց ժամանակին ի մահուանէն Գնելոյ մինչեւ յայն ժամանակին թագաւորութեան Պապայ ոչ էր երթեալ նա ի բանակն արքունի» . . Այսպէս Փաւստոս նմին նման պատմում է և Խորենացին թէ «մէծին Ներսիսի առեալ զամենայն նախարարսն, որք կամակից էին ընդ տէրութեանն Պարսից և որք ոչ, և զպատրիարք կամսարականն Ապանդարատ, սոյա միաբանութեամբ ածէ Պապ յաշնարհս Հայոց (Խ. III, ԼԶ):

Հետեւաբար Մեծն Ներսէս Արշակի մահուան ժամանակ, որ 379-ից առաջ է յիշատակում, արդէն Հայաստանումն էր:

Սակայն Ներսէս Մեծն 381 թուին ոչ միայն Կ.Պօլ սրում չէր, այլ և վաղուց արդէն վախճանուած էր: Այս հաստատական իրողութիւն է:

Փաւստոս պատմում է (IV. Ե, Զ.), որ Վաղէս աքսորեց Ներսիսին, որպէս և ամենայն ժողովրդոց առաջնորդաց իսկ գնոցա տեղիսն կալան մշակք սատանայիր: Փաւստոս յիշում է այդ աքսորանքից յետոյ (IV. Բ, Թ.), որ Վաղէս Կեսարիայումն էր և քննութեան ենթարկեց Եւսեբիոս եպիսկոպոսին և բանտարկեց, ընդ նմին և սաստիկ նեղեց քրիստոնէից: Եւսեբիոսին յաջորդեց Բասիլիոս, որ Նոյնպէս բանտարկուեցաւ: Արդ հաստատ գիտենք, որ Վաղէս իւր հալածանքն ու աքսորելն սկսու 368-ից ոչ յետոյ. Բասիլիոն ընտրուեցաւ 370-ին (†379-ին). Քանի որ Ներսէս աքսորուեցաւ Բասիլիոսից առաջ, ուրեմն 370-ից ուշ չի կարող լինել: Այդ խոստովանում է և Փաւստոս, ըստ որում ասում է որ Ներսէս աքսորանքից վերադարձաւ 9 տարի յետոյ, հաշուելով նորա աքսորուելու տարին 368-ը և վերադարձը Վաղէսի մահից զինի 378-ին: Եւ որովհետեւ Փաւստոս զանազան առասպելների հետեւելով շեղում է պատմական Ճշտութիւնից, Ներսիսի դարձն այդպէս ուշ զնելով և Վաղէսին մեռած համարելով այլ ևս իւր պատմութեան բայցը լրացնել չէ կարենում և չէ յիշում թէ այնուշետե որ կայսրն էր պատերազմի մէջ: Ներսիսի գալուց յետոյ ևս Արշակ արքայի բոլոր գործերը պատմում է և ասում է թէ 34 տարի պատերազմի վարեց Ներսիսի առանձնացած ժամանակ, Վաղէսի մահից յետոյ և ահա թէ Շապուհ թէ Արշակ մինչև V դարու սկիզբն ապրում են Փաւստոսի երեակայութեան մէջ:

Սակայն եթէ Ներսիսի աքսորանիքն եղելութիւն է և ինը տարին չափաղանցութիւն ինն ամսուայ, հասկանալի է որ նա դարձել էր արդէն 369-ին: Խորենացին, որ աշխատում է Հայոց պատմութիւնը համաձայնեցնել Բիւղանդականին, ունեցել է իւր աչքի առաջ Փաւստոսի յիշարկած աղբիւրը (գուցէ Ներսիսի կենսագրութիւնը (Սոփերք)): Ուստի և չափաղանցութիւնք ուղղագրելով և անգիտայած կայսրի անունը Թէոդոսին Ճանաչելով, Ներսիսի կեանքը ձգում է մինչև 385-ը: Այդ զարմանալի չէ վասն զի նա չգիտէ որ Վաղէս քանի մի տարիներ հայստանի կողմերումն է եղել, որ Փաւստոսին քաջ յայտնի է: Բայց Փաւստոսի, «ամս ինն»ը ուղղելով «ամիսս ինն», բանը չէ վերջանցում: Ինքը լաւ գիտէ որ Ներսէս ոչ թէ ուղղակի Կ.Պօլիս գնաց, այլ Կապատովկիայ. և թէ այդ 368-ին էր, ինչպէս կարող էր 9 ամսից յետոյ Վաղէսի մահուամբ վերադառնալ: Այդ լաւ գիտենալով, ահա չէ յապազում և Ներսիսին երկու անդամ է տանում գէպի արեմուաք, ընդ նմին երկու անդամուայ գեսպանութիւնն ևս պատմում է լիովին յար և նման կրկնութեամբ (III, Ի. Ա. Յ. թթ.): Այլ Ներսէս այդ ժամանակ ոչ մի անգամ ևս Կ.Պօլիս չէ գնացել, վասն զի հաստատ է, որ Վաղէս 370 թուից առաջ արեելք գնալով մինչև 376 թիւը Պարսից պատերազմներում է եղել, ըստ արեմուան պատմագրաց, իսկ ապա 376 թուին արագապէս արեմուաք գնաց յարձակուող Գոթաց գէմ և մեռաւ մի Ճակատում:

Արշակ բռնուեցաւ յունա-պարսկական պատերազմի միջոցին. Վաղէս թագաւորեցրեց Պապին, որի յաղթութեան ժամին Ներսէս նորա հետ էր և աղօթում էր Նպատի վրայ: Այնուշետե Փաւ. յիշում է Ներսիսի մահն: Բայց շատ չանցաւ և ահա Պապն ևս իւր վերջակէտն ունեցաւ. «իշխանիքն թունաց և զօրքն նոցին տակաւին

Էին յերկրինն չայոց ո, և երբ կայսրի հրամանն եկաւ
գաղտուուկ, խնջյքի միջոցին սպանեցին նորան: Եյդ բոլորը
կատարուեցաւ ըստ պատմական ամենայն տեղեկութեանց
Շապուհ Բ-ի օրով:

Այսպէս ուրեմն Ներսէս Մեծի մահն ոչ մի կերպ չէ
կարելի թէողսի ժամանակ դնել: Բայց աւասիկ Յունաց
ականատես Ամիանոս Մարցելինոս լատինագիր պատմիչն,
որ աւանդել է 353 — 378 դէպքերը, հաղորդում է որ
Պապ սպանուեցաւ 374-ին. ուրեմն հաստատ է որ Ներ-
սէս վախճանուեցաւ 373-ին:

Այս մանրամասն բովանդակութիւնից յետոյ, այլ
և աւելորդ է Կ. Պօլսի ժողովի մասնաւոր նշանակու-
թիւնը բացարեկ. բայց և այնպէս յիշենք և մի կէտ ի-
լլումն ամենայնին: Մեզ համար մասնաւորապէս ատահով
ազգիւր են ժողովների ստորագրութեանց տախտակներն.
արդ 325-ի նիկիոյ ժողովի հայրերի անուտանք գտնում
ենք Ճայորէն նոյց ստորագրութեան տախտակում, ի-
շարս որոնց կայ և Ռաստակէսի անունը բոլոր թարգմանու-
թեանց և բնագրաց մէջ միաձայն հայերէնին, իսկ Կ. Պօլսի
այդ ժողովի ստորագրական տախտակի մէջ հայոց անու-
ան հետք չկայ:

Յոյն-պարսկական պատերազմը վերջացաւ Դ. դարում
Հայոց կորստարեր մի խաղաղութեամբ։ Հայք ձեռքից
տալով՝ Պարսից գաշնակցութիւնն և հոռոմեց հաւատա-
լով՝ դաւաճանուեցան և մնացին երկու թշնամեաց մէջ։
Բիւզանդ նախ փորձեց Հայոց ձգել Պարսից սրի տակ
(Բիւզ. IV, իԱ). թուլացնելու համար և ապա համաձայնե-
լով բամբեկեց Հայաստանը Պարսից հետ, նկատելով թէ
«լաւ է զի այսու եղծանել և խանգարել կարսցուք զայս
թագաւորութիւնս. նախ ընդ երկու բաժնանել երկու
թագաւորօքս Արշակունօք՝ զորս կայուցաք, ապա և նոցա
կրծել ջանացուք, աղքատացուցանել ի մէջ արկանել
ի ծառայութիւն, զի մի կարսցեն ի մէջ մեր ամբառ-
նալ զգութս» (Բիւզ. V, Ա. III, ԽԱ.):

Այս ծանր հարուած էր, որ ոչ թէ տապալեց, այլ
գարթեցրեց հայոց և զարկ տուաւ նոցա ներքին ոյժ
կաղմելու, ամբայնելու սուրբ Գրիգորի ներշնչած հոգին
ազգի մէջ: Երկու ատեցող ազգերի մէջ «ատատանէսլք»
որք կեղէին զիեանս մեր զանազան վշտօք, վասն որց
եղկելի գտաք քան զամենայն ազգ» զրում է
Ժամանակակից մի ձառախօս (Սովերք. Բ, 7): Հոգի էր
պէտք որ անձեռնմլսելի մնար: Ս. Սահակն որ վշտահար,
բայց քաջակամ ականատես էր այս ամենին, օդաւում էր

ամենայն առթից, ս. Ներսիսի նման, իւր ժողովրդի մէջ շըջելու և աստուածային ամբութիւն տալու նորան. սակայն բան մի պակասում էր հայոց, որ շատ հարուածում էր ազգի ինքնուրոյնութեան, կախեալ պահելով նորան օտարներից. այդ էր հայոց տառերի պակասութիւնը: Հայք մինչեւ այդ ժամանակ յիրարկում էին ասորերէն և մասսամբ յոյն տառեր. իսկ հայոց հին նշանագիրք պակասաւոր գոլով, անուշաղիր էին մնացած: Նոյն իսկ Վասար շապուհ թագաւորին այս հոգ սպատձառեց և նա պատեհ առթից օգտուելով, ձգտում էր ինքնուրոյն տառեր հնարել տալու: Սակայն այդ ձգտումն աղաւել վառուեցաւ ս. Մեսրոպի մէջ, երբ նա նկատեց որ իւր կամ ս. Սահակի բացակայութիւնը զրկում էր ժողովրդին Ս. Գրքի բացատրութիւնից, զի այդ ընթերցուածները կատարւում էին ասորերէնի վրայով թարգմանաբար: Նա հետամուտ եղաւ և Վահակի քաջալերութեամբ անցաւ Ասորիք, հարցուի փորձ արաւ և հայոց հին զրերը գտնելով, բերաւ և առ ժամանակ ուսուցման հետեւից ընկաւ: Իսկ երբ դոցա պակասութիւնը նկատեց, վերստին հետամուեց և ոչ մէկից բաւարարութիւն չգտնելով յօյոր դրաւ իւր և Աստուծոյ վրայ և Սամսսատ քաղաքում զրերին լրացումն տուաւ, ոչ միայն պակասորդները յօրենելով, այլ և եղածը կոկելով, ուստի և իւր ժամանակակիցներից ամբողջ այբուբէնքի հեղինակ հանդիսացաւ: Վասարշապուհի է տարին, (Կորիւն 21) որ թագաւորեց 383-ին (Խոր. III, Ծ. ԾԱ.) հայոց լեզուն յարակայ շունչ ստացաւ. իւրաքանչիւր հայ անհատ անգամ ապահովութիւն ինքնիշխան ազատութիւն ստացաւ, որպէս Ճառախօսն է ասում, թէ «աչք կուրաց բացցին, և ականջ խլեց լուիցեն. այժմ երագեսցէ կաղութիւն լեզուիս մերոյ . . . այժմ ոչ կարօտասցի ոք թարգմանութեան և ոչ ընթասցի ոք առ ոք թէ ընթերցիր ինձ զայս»:

Ջօրաւոր միջոց անհատի ազգային-պատմական ինքնագիտաստութեան — ահա այդ մեծ գործի էութիւնն, որ հիմնաբար եղաւ Հայոց եկեղեցու սրբագաւիթ գալոցների։ Սուրբ Էր այդ միջոցն, սրբութեան մէջ ևս զրոշմուելով եղեցաւ, երբ ս. Մեսրոպ իւր Յովհան և Յովհէփ աշակերտների հետ թարգմանեց Հին Կտակարանն և տուառուածին հայաբարբառ ընթերցարանը Հայի ձեռքը¹։

Երբ ս. Մեսրոպ իւր նոր դպրոցում խումբ մի տւսեալ վարդապեաներ պատրաստեց, առաւ նոցանից քանի մին և դիմեց գէպի հիւսիս, քարովեց ի Վրաստան և Աղուանք, գտաւ նոցա համար ևս զրեր, բացաւ զպրոց-ներ և իւր աշակերտաց ոմանց եպիսկոպոս ձեռնազրեց նոցա՝ գործի յառաջադիմութեան ի նպաստ, ապա դառ-նալով հանդիպեց ս. Սահակին նոր Կտակարանը թարգ-մանելիս (Խոր. III, ԾԴ.): Այս յաղթող գործունէու-թիւնից խոցուեցաւ Բիւզանդ և սկսաւ չարիք նիւթել Հայոց լուսաւորութեան դէմ. նա բոնի միջոցների դիմեց և ստիպեց իւր բաժնի Հայոց ոչ թէ ասորերէն զրեր, այլ և յունարէն գործածել, սակայն Հայաստանեայց եկե-ղեցու քաջարի ամոլն օգնութեան հասաւ իւր հօտին և իւր մի խումբ պատրաստի աշակերտներով անցաւ Հայոց անիշխանութեան միջոցին դէպի արեւմուաք (շուրջ 410 թուին): Բիւզանդ, որ մինչև այդ ժամանակ տակնահան էր գործում Հայոց դէմ, այժմ դիմակը փերյոց և արգե-լեց ս. Սահակին իւր եկեղեցական վիճակներում քարո-գելու. « այնչափ ատեցեալ զմեզ, մինչ զնշանագիրս ան-գամ ոչ ընկալան », գրում էր վշտացած ս. Սահակը: Հարկաւ այդ անիրաւութիւնը նորան չյուսահատեցրեց և նա իսկոյն ս. Մեսրոպի և Վարդան Մամիկոնեանի հրեշ-տակութեամբ հակիրճ բողոք մի առաքեց առ կայսրն

¹ *hunp.* III, 53.

Թէոդոս, պահանջելով չկապտել իւր եկեղեցական իշխանութիւնն իւր վիճակներում:

Թէոդոս մեղաղրում է ս. Սահակին նախ՝ որ նա «ամենայն սրտիւ» միտել էր առ Պարսից թագաւորն և չըր կամեցել գոնէ մի թղթով ինքեան՝ կայսրին ծանօթանալ. և 2), որ արհամարհել էր Յունաց ճարտարներին և զրերի գիւտն Աստիքում որոնել: Աստիկոս պատրիարքն ևս մեղաղրում է ս. Սահակին, զի նա Ոսկեբերանի օգնութեան չըր դիմել. և քանի որ Ոսկեբերանը մեռաւ 407-ին, անշուշտ այս նամակագրութիւնը շատ ուշ քան 410 թիւը չըր կարող լինել: Բայց առուածային աջն էր որ միշտ օգնում էր Հայոց. Աստուծոյ տաճարն էր՝ որ պատսպարում էր Հայոց յրուեալ հօտին, Աստուծոյ թեւն էր՝ որ հովանաւորում էր Հայոց զործերն. և ահա այստեղ ևս Աստուած է օգնութեան համում, որպէս զրում է Թէոդոս չար նախանձով. «բայց զի յետոյ պատմեաց մեզ Մեսրոպ, թէ կատարումն արուեստիդ ի շնորհաց վերնոյն եղեւ, գրեցաք զի ամենայն փութով ուսցին, և զքել պատուավ ընկալցին...» (Խոր. III, Ծէ.): Այսպէս աստուածային շնորհաց հովանաւորութեան ներքոյ Հայոց եկեղեցւոյ հանճարաւոր ամոլը յառաջ տարաւ ազգի ինքնուրոյնութեան զործը, եկեղեցու գաւթում ժողովրդի ինքնազիտաստութեան զօրութիւն տայով: Անսասան հիմքն աստուածային բաղկով զրուեցաւ, շինութիւնը բարձրացաւ ամրապէս, աղզը իւր հոգու մեջ իւր պատիւը ծանաչեց և ասպահովուեցաւ. այնուհետեւ վտանգ չկար մարմնաւոր հոսանքի զիմաց: Ս. Մեսրոպ վերագրած շուտով և բերաւ Ա. Գրոց նոր օրինակներ, որոնց համեմատեցին վերսաին Հայոց թարգմանութիւնը (Կոր.): Երբ 420-ին թագաւորեց Արտաշէս, Մեսրոպ շարունակեց իւր քարոզչական զործունեութիւնը պետութեան թոյլ կողմերում. ապա ուղարկուեցան Յովսէփ և Եղիշիկ յԵղեսիա, ասորա-

կան զիքերը թարգմանելու, որոնք պատուէրը կատարելով ուսումնական նախանձակին նպանդամութեամբ դիմեցին ի Բիւղանդ հոյա հետևեցին նոյնպէս ինքնակամ՝ Ղեռնդ և Կորիւն (Մելիտինէից), մինչդեռ ուղղակի առաքուածք՝ Յովհան և Արձան շատ ուշ հասան կ. Պոլիս: Ըստ երեսյթին այս առաջին աշակերտաց անցուղարձը եղել է 425—434 միջացին (Խոր. III, կ: Կը. 28) եկեղեցեաց ս. Հարց գրուածների ստոյդ օրինակներ, որոնց թարգմանութեան համար առաւել նախապատրաստութիւն էր պէտք, վասն որյոյ ուղարկեցին Խորինացուն և ընկերներին յԱղեքսանզիա «վերաբանութեան» կամ բարձր աստուածաբանութեան (Anagogie) Ճեմարանը (Խոր. III, կԱ.):

427-ին Հայոց անմիտ նախարարք, որոնք խելահասութիւն չունէին հասկանալու, թէ ազգի պետի վասութիւնից վատթարագոյն է նորա անկումն, որոնք առժամանակեաց գոլով չգիտէին որ ազգի գահը չէ կարելի զոհել նորա անցաւոր-մահկանացու գահակալի տապալման, որոնք վատին ընտանեբար խրատելու խանդն ու եռանդը չունէին, հանրականն անձնականին զոհեցին, առանց վարանման՝ ազգային գերդաստանի ներքին գործն արտաքին օտար գատաւորի Ճանկը ձգեցին և թշնամու դրան ամբատանեցին իւրեանց հարազատ արքային: Վատ էր Արտաշէս, բայց իւր վատութեամբ հանգերձ գահապահ էր. անկանա, անկաւ և Արշակունեաց հզօր գահն, որ ինչպէս էլ լինէր, քաջալեր պահապան էր աղզի: Իսկ ս. Սահակ, որի սկզբունքն էր «ինձ քաւ լիցի մատնել գայլոց զիմ մոլորեալ ոչխար» (Խոր. III, ԿԳ), սրբազն բանահիմն, իւր անվիշեր հաւատարմութեան համար արգելուեցաւ Պարսից դրանը: Բայց շատ չանցաւ և նոյն գահապրուժ նախարարաց աղաշանօք դարձաւ 430-ին: Այնուհետև թողնելով ս. Մեսրոպին ս. Էջմիածնի ընդհանրական եկեղեցում, ինքն ևս շարունակեց «զհոգեոր կաթնն տիե-

յուշանել մանկանց եկեղեցւոյ», գործելով Բագրեանդում «ուր ծագեաց յերկնուստ լցոն ի մլրտել ս. Գրիգորի զԾրգաա արքայ և զբոլոր հայո» (Խոր. III, ԿԶ.): Նորա գործունէութեան կնիքն է նորա վերջին խօսքն, որով պատուիլոց հաւատարիմ մնալ ս. Գրիգոր Լուսաւորչի վարդապետութեան և օրհնեց ասելով. «որդեակք, փոխանակ իմ տէր հովուեսցէ զձեղ և ինքնին վերակացրւ լինիցի ձեղ...» (Փարպ. 104): Նա ոլացաւ իւր փառաւոր նախնեաց կարգը 439-ին, ընդ նմին «մահկանացու ծնեալ, անմահ զիւրն յիշատակ եթող» (Խ. III, ԿԵ.):

Ա. Սահակի վերջին ամաց են պատկանում և եփեսոսի 431-ի ժողովի պարագայք: Վերագցն բերուած տեսութեանց հիման անշեղ հետեանք է, որ Բիւղանդական հետագայ ժողովներին հետ առընչութիւն չունեցան հայք: Սակայն երբ Եփեսոսի ժողովից հալածուեցան նեստորական աղանդաւորք՝ Թէոդորէտ և այլք, եկան նորա ի հայստան հող որոնելու: Այդ ժամանակ դառնում էին հայոց թարգմանիչք իւրեանց ուսումը վերջացնելուց գկնի, ըստ որում և կիւրեղ Աղեքսանդրացին, Պրոկոպ Կ.Պօլոսին և Ակակիոս Մելիտինացին պատեհ առթից օգտուելով, թուղթ զրեցին առ ս. Սահակ և զգուշացրին նորան յիշեալ աղանդաւորներից: Սակայն շուրջ 560-ին ևս ոմն Լիւրատոս սարկաւագ զանազան բաղանք յօրինեց, (առ Մանսի 1X, 639 Հայլն.), որ իբր թէ հայք ժողով են գումարել և գեսպան ուղարկել Ղեռնդիոսին և Արերիոսին (?) ի Կ.Պօլիս հարցնելու Պրոկոլից թէ արգեօք Թէոդորի, Ռաբուլասի թէ Ակակիոսի գրութիւնք են հարազատ և այն, ըստ որում այս ևս մի հետեանք է Յունաց այն ջանքին, որով ձգնում էին ցոյց տալ թէ հայք առանց Բիւղանդի օգնութեան նոյն իսկ սեն սպիտակից զանազանել չեին կարենում: Բայց, որպէս պիտի տեսնենք, հայք ընաւ չիսաբուեցան: Սակայն ահա երկու այլ թղթեր ո-

րոնք ս. Սահակին են վերագրում Հրատարակողք (Սոփ. I, 150). և մէկին մասնակից է գուրս զալիս, մինչդեռ միւր միւսի կրծատումն է: Աւելորդ չէ այդ թղթոց աչք մի զարձնել տեսնելու համար՝ թէ որպիսի կարծամիտ անձինք էին այդ կեղծողք: Հետազոտելով այդոքիկ, զարմանում ենք թէ ինչ անբովանդակ զրութիւնք էին շինւում, միայն որ և է բանակուուական և խաբուսիկ նպատակի համար: Թուենք միայն քանի մի կէտեր, որ գոքա տգէտի մի հերերանքներ են. նախ որ այդ թղթի նպատակ չունին. ս. Սահակ պէտք չօւնէր նեստորականութեան դէմ Եփեսոսի ժողովից յետոյ բան գրելու, զի հոռոմք արդէն նզովել էին նեստորին. պէտք չունէր և իւր հաւաաը հազորդելու, զի նոքա գիտէին որ հայք նեստորական չէին. բնական էր միայն այն, եթէ ս. Սահակ շնորհակալութիւն յայտնէր նոցա թղթին, որ չկայ այդ թղթերում: 2. այդ թղթերը բնաւ նման չեն ս. Սահակի միւս թղթերին (Խոր. III, Կ.): ոչ ձեռվ, ոչ ոգով, ոչ ոճով: 3. լիովին անըմբոնելի և օտարութի է, թէ ինչո՞ւ ս. Սահակ անպամ մի միայնակ է զրում և միւսը ս. Մեսրոպի հետ: 4. յիշեւում է, որ իբր թէ ս. Սահակ թղթեր է գրել և զգուշացրել իւր հօտն և այդ է միայն նորա միջոցք ընդդէմ հերձուածողաց մախանայ, մինչ պատմութիւնն ասում է՝ հալածեց վանդեց նոցա իւր երկրից: 5. բայց թուղթն իսկ ինքեան հակասում է, ասելով՝ «այլ յաղանգոյն որ զրեցեր զատչել՝ առ ժամանակա ի շնորհս Աստուծոյ այնպիսի ինչ չէ հասեալ»: 6. թղթերը յորդորում են հոռոմոց հալածել հերձուածողաց, մինչեռ նոքա էին ս. Սահակին նոյնը յօրգորել: 7. թղթում նկատում է որ պարտ է վերացնել եկեղեցեաց մէջ գայթակղութիւնն, որ այն ժամանակի պատմութիւնը չգիտէ: 8. հերերողն ընթերցող հային իւրեանից ագէտ կարծելով և այսչափս իբր հային զիւրական ինչ շինելով.

այժմ սկսում է իւր քմահաճութեան ծառայել. ս. Սահակ, որ քաջարի ախոյեան էր գիտութեան, որ ձեռքն ընկած ուսումնատենչն ուղարկում էր գիտութիւն սովորելու և կանոնով պարտաւորիչ էր հաստատել եկեղեցականաց ուսումը (Սոփ. II, 81.), հանդիսանում է թշնամի և ատեցող բարձր ուսման, առարկերով որ իր թէ քանի առաւել ուսում են առնում հոռոմք, այնքան աւելի հերձում են և հերձաբանում, ըստ որում այդ անյաջող թուղթը յօրդորում է նոյա մեծ ուսում չտալ մարդկանց: Հերերողն այս ողորմելի սառվ է զարկում հայի հաճոյական երակին: 9. Հեղինակը դաւաճանում է իւր հոռոմ լինելն, ըստ որում չափազանց ևս նուաստացնում է ս. Սահակին, որ մինչդեռ իւր հալածեալ ժամանակ հակիրճ, կտրուկ, մեծանձնութեամբ էր զրում առ իւր հալածող կայսրն, աստ այնքան խղճանում է այն էլ իւր վեհութեան տարիներում, որ նոյն իսկ զրում է. «Ե եթէ ինչ ըստ չափյ թղթոյդ առ տղիտութեանս(1) վրիպեալ իցէ՝ ուղղել կամեսջիր»: Զենք սխալուիլ՝ եթէ նկատենք, որ հեղինակը պարզ վանական մի է: Բայց թողնենք այս. բաւ է որ հայոց ոսկեդարու պատմագիրք, ս. Սահակի և Մեսրոպի մօտագոյն աշակերտք բնաւ նման թղթեր չեն յիշում, սրով և եթ իսկ լիովին խորտակում են այդ թղթոց հարազատութիւնը: Միայն ժ դարումն ենք հարեւանցի յիշտակութիւն մի գտնում (Սոսոլ. III, ԻԱ.), եթէ այդ տողերը խծրծուած չեն, ուրեմն և այդ շրջանումն են հրապարակուել այդ շինծու թղթերը:

Արդ որ այդ թղթերին ոչ մի կերպ հարազատութիւն վերադրել անկարելի է, այդ ակներեւ է. մնում է դոցա յերկարման նպատակն, զոր գտնում ենք թղթերի մեջ իսկ. «Չան լիցի մեզ խզել զիոչն, և զգայթակղութիւն գայն (?) ի միջոյ ի բաց կորուսանել, զի միաբանութիւն որպէս ձերում ի միջի փառաբանի, և զմեզ

ի հաւասարութիւն փառաւորութեան, առ Աստուած հասուցանել արժանի արասցէ»: Այս բիւզանդական խրատ էր ս. Սահակի գիմառնութեամբ:

Ի վերստին հաստատութիւն վերոյիշեալ կէտերին աւելորդ չէ յառաջաբերել ականատես և գործակից պատմիչների մեծաբարրառ վկայութիւնք:

Խորենացին զրում է. «վասն զի ոչ հանդիպեցան յայնմ ժողովի մեծն Սահակ և Մեսրոպ, զրեն առ նոսա կիւրեղ Աղես. և Պողոս կ. Պոլսի և Ակակ Մելտինոյ եպիսկոպոսք, զգուշացուցանել զնոսա, քանզի լուան, եթէ ոմանք ի չարափառացն աշակերտացն առեալ զգիրսն թէողորոսի . . . զվարդապետին Նեստորի և զաշակերտին թէողորի, գնացին յաշխարհն իւրեանց: Ապա եկեալ թարգմանիչքն մեր՝ Յովակի, Եղնիկ, Ղեռնդ, Կորիւն (Յովհան և Արձան), գտին զմեծն Սահակ և զՄեսրոպ յ Մշտիշատ Տարօնոյ, և մատուցին զթուղթման և զկանոնս ժողովյն Եփեսոսի՝ վեց սահմանեալ կանոնաւ զլխով, և զսացյդ օրինակս զրոյ» (III, ԿԱ.):

Բայց ինչու հեռու զնանք. աւասիկ ինքն թղթաբերն Կորիւն զրում է (25). «Յայնմ ժամանակի բերեալ երեւեցան հայաստանեաց աշխարհին զիրք սուտապատումք, ընդունայնախօս աւանդութիւնք առն ուրաւմն հոռոմի, որում թէողիոս անուն: Վասն որոյ սիւնհողսական հայրապետաց եկեղեցւոյն սոյա նշանակեալ աղդ առնեին՝ Ճշմարտահաւատ փառաւորչացն Սահակայ և Մաշտոցի: Եւ նոյա Ճշմարտասէր փութով զայն ի միջոյ բարձեալ՝ աշխարհահալած արտաքոյ իւրեանց մերժեցին, զի մի՛ ի լուսաւոր վարդապետութիւն՝ ծուխ ինչ սատանայսական մերձեսցի»: Կորիւն մինչեւ անգամ չէ յիշում թէ արդեօք թղթաբերք թարգմանիչներ էին թէ այլք:

Ուրեմն թարգմանիչք, ուրոնց անուանք մի առ մի յիշուած են, վերադառնում էին 434—435-ին. նոքա

տեսակցեցան Եփեսոսի ժողովի հարց հետ և ստացան զրոց օրինակներ և ժողովի կանոններ. սակայն լսելով որ ժողովի նպոված հերձուածողք հող որոնելու գնացին ի Հայաստան, «առաքեալ թուղթս ազգ առնեին Ճշմարտահաւատ փառաւորչացն Սահակայ և Մեսրոպայ»: Այս իմանալով, Սահակ և Մեսրոպ իսկոյն հալածեցին այդ «սատանայական ծուխն» իւրեանց աշխարհից:

Այժմ ամփոփենք մեր ասածները. ժողովներ գումարւում էին քրիստոնէական եկեղեցեաց մէջ շատ յաճախ. այդպիսի ժողովներ ունեին և Հայք¹: Հոռոմոց կայսրը պետութեան եկեղեցեաց վրայ իշխելու միջոց գտնելու համար, իւր մայրաքաղաքի ժողովը բարձրացրեց գաւառականաց վրայ և վարչական մարմնի փոխեց: Այդ ժողովնեկեղեցական ծերակոյտ էր քաղաքականի նմանութեամբ և գոցա միջոցով «կայսր ու քահանայապետք» վարում էին եկեղեցական գործերն և գատում էին պատրիարքաց կամ եպիսկոպոսաց: Այն ժողովք, որոնց սահմանները պետութեան մէջ մշտական նշանակութիւն ունեին և վերաբերում էին ամբողջ երկրին, պարտաւորիչ էին հրատարակւում կայսրներից պետութեան մէջ. այդպիսի ժողովք մասնաւորներից որոշելու համար Դ գարուց սկսան կայսրները «տիեզերական» հրատարակիչ՝ այսինքն՝ պարտաւորիչ ամբողջ պետութեան մէջ: Դոքա «տիեզերական» էին հրատարակւում ոչ թէ իսկոյն, այլ յաճախ շատ ուշ, այն է՝ երբ կայսրները կարեոր էին համարում: Օտարերկրեայ եկեղեցիք գործ չունեին այդ ժողովոց հետ, իսկ թէ երբեմն երբեմն մասնակցում էին, այդ լինում էր քաղաքական իրաց բերմամբ, ուղղադաւանութեան նպատակները համար և կամ լոկ պատահական հանդիպմամբ, ըստ որում օտար եկեղեցեաց նկատմամբ որ և է գործ:

¹ Սով. II, 82. Փաւ. Բիպ. IV, 4. 63—64.

տեղի չէր ունենում այդ ժողովներում: Սակայն զոքա, որպէս ասուեցաւ, ազատամիտ օտար երկրներում ևս յարգւում էին, եթէ մի որ և է քրիստոնէական լսուգործ էին կատարում, ուստի և յետին դարերում ի հեծուկս հոռոմոց սկսան Ասորիք և Հայք տօնել որպէս սուրբ ժողովներ, սուրբ՝ զի նոյցա կատարածը սուրբ գործ էր:

Ականատես և ժամանակակից Հայք սակաւ նշանակութիւն են տուել այդ ժողովոց, ուստի և հարեւանցօրէն են յիշում գոյց իրագործութիւնք — այդ ևս ի քաջալերութիւն քրիստոնէական նախանձախնդրութեան երբ վերջին ժամանակներում Հայաստանի քանի մի մասերն ընկան հոռվմէական իշխանութեան ներքոյ, Բիւզանդ սկսաւ իւր հպատակ հայոց ևս ժողովները պարտաւորել այնուհետեւ սկսուեցաւ մաքաւումն այդ բռնութեան դէմ, որ յետոյ պիտի տեսնենք: Հայք բանակոխւ ունեցան և օրըստօրէ կրկնուեցան այդ ժողովոց անուանք, զորոնք յառաջ բերելով, ջանում էին Բիւզանդական զէնքով Բիւզանդիոնի դէմ կուուել այսինքն ցցոց տալ որ վերջինս իւր եկեղեցական բարձրագոյն հեղինակութեան գաւաճանել է և շեղուել Ճշմարիտ հաւատքից: Այնուհետեւ Նիկիոյ 325-ի ժողովը յիշուեցաւ որպէս առաքելական հաւատքի միութեան մի ապացոյց, որին աւելի ևս ոյժ էին տալիս Կ. Պոլսի 381-ի և Եփեսոսի 431-ի ժողովները, վասն զի վերջինքս յիշուեմ էին որպէս առաջնի հաստատողք: Այդպիսով, այդ ժողովք ոյժ ունեին միմիայն Բիւզանդիոնի դէմ բանակուուի մէջ:

Քանի բանակոխւ սաստկացաւ Հայոց և Բիւզանդացոց միջև, այնքան յաճախ յիրարկուեցան այդ ժողովներն, որպէս յենարաններ: Ժ գարից յետ բանակցութիւնն յաճախեցաւ և Բիւզանդական զրութիւնք սպատեցին իւրեանց արտայայտութիւնք և Հայոց մէջ. այդպէս եղաւ

նաև «տիեզերական» բառի հետ։ Սակայն՝ ո՛ զարմանք,
այդ ժամանակի եկեղեցականք ևս հասկանում էին գործի
ժութիւնը։ Նոյն գրուածները կրկին և կրկին հաստատում
են նոյնը։ Ոչ մի տեղ չէ գտնուում տիեզերական բառը
Կ.Պոլսի 381-ի և Եփեսոսի 431-ի ժողովոց յատկացրած,
յնդ նմին և «տիեզերական» կոչելով միայն նիկիոյ 325
ժողովը, Գրիգորիս կաթուղիկոս յիրարկում է «տիեզե-
րական ժողովոյդ», «տիեզերական եկեղեցւոյդ», «տիեզե-
րական տէրութեանուդ» խօսքերը, «տիեզերական» բառին
Ճարտասանական նշանակութիւն տալով, որ իսկապէս ծաղը
է երեւում։ տիեզերական էին կոչում և չայաստանում
ոչ միայն եկեղեցին, այլ և չայոց տեղական ժողովները,
կիլիկիոյ Տարասոնի չայոց ժողովն, այլ և այս ու այն
վանք, ինչպէս օրինակ Մարմաշէն վանքն¹։ Բազրատունի
թագաւորն կոչում էր զինքն «Ես Աշոտ թագաւոր թագա-
ւորաց ամենայն տիեզերաց²»։ Երբ Բիւզանդացիք գրում
էին սովորաբար, ընդունել և 3 տիեզերական ժողովոց հետ
և 4-դն», Գրիգորիս կաթուղիկոս, չկարենալով քաղաքա-
կան խառն դրից պատճառով, պատասխանել կոշտութեամբ՝
որ ոչ երեք տիեզերական ժողով է ձանաչում և ոչ
չորք, նուրբ քաղաքաղիտութեամբ գրեց, որ ամենայն ե-
կեղեցեաց մէջ եղած ուղղափառ հայրերի ուղղափառու-
թեան ձայնակցում է և նոյանից նզովեալներին նզովում
է և ինքն, վասն զի նոքա «արդարև յարդարեցին ըզ-
գժուարինսն ի զիւրինս և զարապարն ի հարթ ձանա-
պարհս, և Խլեցին գորո՞մն ապականիչ որք են գայլք ի
հանդերձս գառանց, յորոց զգուշացուցին զբանաւոր հօտո
ովնարաց³» և այդչափ միայն, իսկ օտար՝ եկեղեցեաց իրաց

¹ Շահիսաթունեան, Ստորագր. Արարատայ Ա. 271 ևալն. —
² Անդ իսկ, էջ 305. — ³ Ընդհանրականք. ս. էջմիածին. 1872.
էջ 252.

հետ գործ չունի այլապէս, որ և վեհութեամբ ասում է՝
«զՔաղկեդոն ոչ գիտեմ, և ոչ զԼեսն ձտնաչեմ. իսկ եթէ
բարիք են՝ անձանց և ժողովրդեանն, և եթէ չարիք են՝
անձանց և ժողովրդեանն¹»։

Իսկ թէ այդ Յ ժողովները նոյն նշանակութիւնն
ունին հայոց համար, որպէս և այլ ամենայն քրիստոնէա-
կան ժողով, այդ ևս ամենայն ստուգութեամբ որոշում է
Գրիգոր կաթուղիկոսն, ասելով. «գտանին և այլ և այլ
ժողովոց կանոնադրութիւնք ի մէջ մեր և ընդունելիք են՝
որք զզանազան կարգս եկեղեցւոյ հաստատեցին և զպէս-
պէս հերձուածս հերքեցին. որպէս և անկիւրեայ ժողովն
ի հերքումն կիկիանոսի ամբարշտութեանն՝ որ ի զոհս
կողյն բռնազատէր զերիցունսն. և կեսարիայն ընդդէմ
յուռթից կանանց. և Նէոկեսարեայն ընդդէմ անխտիր
պոռնկութեան ևայլն»։ Այզափ նշանակութիւն ունին և
այդ Յ ժողովներն, որոնք դոցա կարգումն են գտնուում
տարերկեայ եկեղեցեաց նկատմամբ։ Իսկ հայի ս. պարտիքն
է իւրոց հաւատարիմ մնալ որպէս ասում է Գրիգոր.
«առ մեզ մի լիցին խոտելիք մերն ս. լուսաւորիչք և
հարք. այլ պատուելիք և պաշտելիք, ս. Գրիգոր և զարմն
իւր սուրբ. ս. Ներսէս և Սահակ, և որ ըստ նոցայն
քարողեսցի քաջութիւն յեկեղեցիս մեր, և յաղագս նո-
յա բանակուռեսցուք եթէ գացին հակառակք²»։



¹ Թ. առ Տուտէորդի. Վեն. 1865. 50, 65. — ² Անդ էջ 59.

ՀՐԱՎԱՐԻԱԿՈՆ ՊԵՏՈՒԹԵՈՆ ԱԹՈՈՆԵՐԻ
ԻՐԱԿԱԿՈՆ ՎԻՃԱԿԸ /Վ-դ ԴԱՐՈՒՄ.

Նիկիոյ ժողովը որոշեց իւր ն-րդ կանոնով պետութեան եպիսկոպոսական աթոռների իրաւասութիւնը, վճռելով. «Նախընթաց սովորութիւնք պահեսցին որպէս ինն յԵղիպառու, ի Լիբիա, և ի Պենտապօլիս, զի Աղեք-սանդիթյ եպիսկոպոսն ունիցի զիշխանութիւն ի վերայ սոցա ամենեցուն, վասն զի և Հոռովմայեցւոյ եպիսկոպոսին այս սովորութիւն է, նոյնպէս և յԱնտիոք և յայլ և ու գաւառմ պահեսցին իշխանութիւնք և պատիւք և մեծութիւնք իւրաքանչիւր եկեղեցեաց»։ Կ. Պօլսի ժողովը ևս նոյնը վերստին նորոգելով, յիշատակեց նաև յականէ յանուանէ — «որք յԱսիայ են եպիսկոպոսունք որ ինչ յԱսիա միայն կարգաւորութիւն է, անօրինեացին, և եպիսկոպոսունք Թրակիոյ զԹրակիա միայն կարգաւորեացին, և Պոնտոսին զՊոնտոս»։ Ըսդ սմին և ինքնակախ իշխանութիւն տուաւ կ. Պօլսի աթոռին, որ մինչեւ այդ ժամանակ գտնւում էր Հերակլեոյ աթոռի իրաւասութեան ներքոյ։

Հաս այս կանոնաց Աղեքսանլրիոյ աթոռը տարածում էր իւր իրաւունքը զրեթէ ամբողջ հիւսիսային Ափրիկէի վրայ և ունէր 10 վիճակ և գերիշխանութիւն Հաբեշստանում։

Հոռովմայ աթոռն ունէր 10 վիճակ, այն է 1. Տուակիա և Աւմբրիա, 2. Կամբանիա (Կապուա), 3. Լուկա-

նիա և Բրիտիւն (Թէգիում), 4. Ապուլիա և Կալաբրիա, 5. Սամնիում, 6. Պիկենում, 7. Վալերիա, 8. Սիկիլիայ, 9. Սարդինիայ, 10. Կորսիկայ և Խոալիայ կոչուած աթոռն, որ իւր ներքեւ ունէր 3 թեմեր՝ Վենեցիա և Հիատրիա, Ֆլամինիա և Պիկենում, Արպէս Կողիա։ Հարկաւ որչափ յաջողուում էր Հոռովմայ եպիսկոպոսներին արեմտեան Եւրոպայի քրիստոնէից հռովմէական գարձնելու, այնչափ և ընդարձակուում էր նորա իրաւասութիւնը։ Աքուիլէա, Կիպրոս, Թրակիա, Հերակլէա, Մայլանդ, Կարմագինէ և այլն ինքնակախ աթոռներ էին և ձգտում էին պատրիարքութեան։

Պետութեան արեկեան մասում ևս կային քանի մի ինքնազլուխ աթոռներ։ Անտիոքիան ունէր 12 վիճակներ. 1. Առաջին Ասորիք, 2. Բ Ասորիք (Ապամէա), 3. Ա. Փիւնիկէ (Տիւրոս), 4. Բ Փիւնիկէ (Դամասկոս), 5. Արաբիա (Բոստրա), 6. Ա. Կիլիկիայ (Տարսոն), 7. Բ Կիլիկիայ (Անաւարդ), 8. Եփրատայ վիճակ (Հերապոլիս), 9. Օսրոյէնք (Եղեսսայ), 10. Միջազեաք (Ամիդա), 11. Իսաւրիայ (Սելևկիայ), 12. Պաղեստին, որ 381-ին անկախութեան իրաւունք ստացաւ 4 վիճակներով որոնք են՝ 1. Ա. Պաղեստին (Կեսարիա Պաղեստ.), 2. Բ Պաղեստին (Սկիւթոպոլիս), 3. Գ Պաղեստ. (Պիտրա), 4. Կիպրոս։ Բայց վերսիշեալ վիճակներից ոմանք երբեմն ինքնազլուխ են եղել։

Ասիոյ կամ Եփեսոսի աթոռն ևս տարածում էր իւր իրաւունքը 10 վիճակաց վրայ, որոնցից շատերն սկզբում անկախ էին Վերջապէս պետութեան արեկեան մասում զանւում էին քանի մի ինքնազլուխ աթոռներ. որպէս առաջին Կապադովկիան ունէր իւր ինքնազլուխ աթոռն ի Կեսարիա. աս աշխատում էր իւր իրաւասութիւնը պահել երկրորդ Կապադովկիայի ի Տիանայ աթոռի վրայ։

Սկզբնաբար անկախ աթոռ էին նաև Ա. և Բ. կոչուած Հայք գտաւաները, իւրեանց աթոռներով ի Սեբաստիա և ի Մելիտինէ, որոնք ենթարկուեցան Կեսարիայի աթոռի գերիշխանութեան Դ-րդ դարու վերջերում: Կեսարիայի աթոռի ներքոյ էին գտնւում և Գաղատիա (Անկիւրիա), Պոնտոս (Նիոկհսարիա և Պափլագոնիա (Գանդրա):

Ահա այս և նման բոլոր եպիսկոպոսական մեծ աթոռներին առեն վերցիշեալ երկու ժողովք ինքնազլուխ, պատիւ և հաւասար իրաւունք Աղեքսանդրիայի, Հռովմայ Անտիոքայ և ապա Կ. Պօլսի աթոռների շարքում: Աակայն այդ եպիսկոպոսաց վէճերը թուլացրին վիճողներին այնու, որ Հռովմ, Աղեքսանդրիա և Կ. Պօլիս սկսան նոցա գործոց մէջ խառնուել, ըստ որում և վերջինս սահկաւ առ սակաւ տարածեց իւր իրաւասութիւնք իւր հարեանների վրայ, զօրանալով կայսեր թեմնաւութեամբ: Անձնիւր եպիսկոպոս մէկ նոր քայլ արաւ այդ ուղղութեամբ. Ոսկեբերանը ձեռք մեկնեց գեպի Եփեսոս և Պոնտոս. Ատահկոս պատրիարքն ևս (406—26) գրաւեց Իլիրիկան, որ Հռովմայ գերիշխանութեան ենթարկուելու տրամադրութիւն ունէր: Վերջապէս Քաղկեդոնի 451-ի ժողովք մեկնաբանելով Նիկիոյ և Կ. Պօլսի յիշատակեալ կանոնք, վճռեց. «Պոնտական և Ասիական և Թրակեան վիճակաց մետրապոլիտք միայն և նաև եպիսկոպոսունք նախայիշատակեալ վիճակաց որ են ի Բարբարիկ աշխարհը, ընկալցին գձեռնալրութիւն—ի գահէն եկեղեցւոյն Կ. Պօլսոյ, իսկ ի նահանգս իւրաքանչիւր մետրապոլիտք վիճակաց ընդ եպիսկոպոսաց որ ի նահանգին տացեն գձեռնալրութիւն եպիսկոպոսաց որ յիւրաքանչիւր գաւառս իցեն»...: Կ. Պօլիսն այդ ժամանակ ունէր արգէն 30-ից աւելի թեմեր իւր այդ բոլոր վիճակներում: Իսկ յիշեալ Բարբարիկ երկրներում ևս կային քանի մի ա-

թոռներ, որոնք են. Գոթերի մէջ մէկ աթոռ, Զեխերի երկրում 3, Լաղերի երկրի մէջ 1 ի Փաղիս, 1 ևս Աբազգի այում: Այսպիսով Կ. Պօլսի պատրիարքի գործը յաջողեցաւ այն միջոցին, երբ Հռովմ ևս զարթեցաւ և Լէօ Ա. սկսաւ ջանք գործ դնել իւր աթոռը բարձրացնելու, ըստ որում զիմեց առ արևմտեան կայսրն Վաղենտիանոս Գև 445-ին «տիեզերական առաջնորդ» (Rector universalis) տիտղոսն ստացաւ նորանից, ձգտելով Հռովմէական պետութեան «տիեզերքի» վրայ գահերիցութեան: Սակայն պետութեան եկեղեցական տիեզերականութիւնը Կ. Պօլսոյ պատրիարքին էր վիճակուած. . . :

ՀՈՂՎԱՐԱՅԻ ԽԱԿԱՐԸ.

卷之三

« Որ հաւատացին յՈրդին Աստուծոյ՝ նոքա
վայելեսցեն ի բարումիւնսն անպատում։ և
որ յայսց հաւատոց վրիպեցան՝ զանկոխ և
զանխուլ գնացին և զարտուղի անկան։ Խրա-
մատեցին իւրեանց ցանկս անկարկասու, և
զբաղումս ի ծշմարիտ հաւատոց թիւրեցին »։

ԳՐ. ՀՈՒՍԱԽՈՐԻՑ

Բիւզանդական ժողովների էութեան զրայ արած
քանավարութիւնից յետ հարկ չկայ իսկապէս այս աշ-
խարհակործան ժողովի վրայ առանձնապէս խօսելու, ով
այդ ժողովն ըստ ինքեան ոչ մի վերաբերմունք չունի առ
հայաստանեայց եկեղեցին։ Սակայն Բիւզանդիան, ըստ իւր
գարաւոր՝ և այժմ բազմաց ժառանգած՝ քաղաքականու-
թեան՝ սկսաւ Զ դարից զինի հայոց աղջն իւր հետ ձու-
լել աշխատիլ, օգտուելով նորա պետական զօրութեան
անկումից, ըստ որում և նկատելով որ հայաստանեայց
եկեղեցին հզօր խոչնդուն էր իւր այդ տմարդկային ձգտման
և անկաշառ՝ անընկճելի պահապան հայոց, ջանահար
եղաւ քրիստոնէական սիրոյ և միաբանութեան թափանցիկ
քողի տակ ծպտեալ յարիւն և ի քրածինք մանելով
վտանգել այդ անաղարտ եկեղեցու ժողովրդականութիւնն,
ազգայնութիւնն և ծշմարտութիւնը. բնականաբար Քաղ-
կեդոնի ժողովն, որպէս նորահնար վարդապետութեան մի
հեղինակող, այդ ձգտման իրարանցման ոլորտակէտ դարձաւ:
Վասն որոյ և այդ ժողովի պատամութիւնը հետաքննական

Է նոյա համար, որոնց շահագրդում է այն արիւնահեղ
և պանծալի մաքառումն, զոր վարեց մշտապէս հայաստա-
նեաց եկեղեցու հաւատարիմ հօան իւր ինքնապահա-
նութեան համար թիւզանդական ձգտմանց և անողոք հա-
լածանաց վէմ:

Քաղկեդոնի ժողովում յեղաշրջուող խնդիրն է Քրիստոսի ընութիւնը. դորա վրայ առաջին անգամ խօսք բարձրացրեց Պօլսի Նեստոր պատրիարքը 428 թուին, չուղենալով յիրարկել Մարիամ Կոյսի նկատմամբ Աստուածածին բառը: Նորա զէմ հզօրապէս դուրս եկաւ Աղեքսանդրիոյ Կիւրեղ պատրիարքն, որին Նեստոր չկարենալով միայնակ լնդղիմաղրել հրաւիրեց հռովմայ Կոլեստին պապին իւր հետ Կիւրեղի զէմ դուրս դայու։ Սակայն Կիւրեղ պահանջեց Կոլեստինից հին հաւատքին նախանձախնդիր լինելու և ինքն զրեց Նեստորի զէմ 12 տուն նզովք։ Դորա զէմ զրեց Նեստոր 12 պատասխաններ: Կոլեստին ևս յարձակուեցաւ Նեստորի վրայ, հիմն ի վեր տապալելով նորա վարդապետութիւնը: Նեստոր խռովութեան սաստկանալը տեսնելով, սկսու իւր վարդապետութիւնից սակաւ առ սակաւ յետ քաշուիլ բատ որում պատրաստ էր իւր սխալ քայլը բոլորովին ուղղելու, միայն թէ խռովութիւնը վերջանար. նա զրում էր իւր երկրորդ նամակում առ Կոլեստին. «Երկաքանչիւր բնութիւնքն, որը բարձրագոյն և անշփոթ կապակցութեամբ պատռին ի մի անձնաւորութեան»¹. սակայն այս խօսքերը մերժուեցան Կոլեստինից, որ և զրեց նորան ի պատասխան այնպիսի մի նզովալիք նամակ (Մանոհ, IV, 1026), որ ոչ մի եպիսկոպոսի պատիւ բերել չէ կարող: Ընդ նմին և զումարեց 430-ին մէկ ժողով և պահանջեց Նեստորից յետ

¹ «Utraque natura quae per conjunctionem summam et inconfusam in una persona unigeniti adoratur.» *Uuūup.* IV, 1024.

առնել իւր ասածները, սպառնալով նորան բանապիել։ Նեստորի ժողովուրդը խովզեցաւ և զյշրանալով կիւրեղի գործունէութեան դէմ պահանջեց կայսրից մեծ ժողով կազմել։ Կայսրն Թէոդոս թ դժկամակած կիւրեղից, հրաւիրեց 431-ի Եփեսոսի ժողովը, մտադրելով կիւրեղին վայր գլորել կիւրեղ եկաւ 50 եպիսկոպոսներով և առանց Նեստորին և նորա մատակից անախոքացոց բացաւ ժողովը 200 ժողովականաց մասնակցութեամբ, քննեց Նեստորի վարդապետութիւնն և հակառակ գանելով եկեղեցու հայրի վարդապետութեան և Նիկիականին, միաձայնութեամբ բանագրեց նորան։ Երբ ապա բացակայ եպիսկոպոսք եկան, Նեստոր միացաւ նոցա հետ, ժողով կազմեց կայսեր յանձնարարների յառաջմամբ և բանագրեց կիւրեղին։ Յաղթութիւնը գոգցես հակւում էր առ Նեստոր, սակայն կիւրեղ չյապաղեցաւ, գումարեց վեստին ժողովն, յորում և կարդացուեցան գործերն, ընդ նոցին և Հոռվամայ կոլեսախինի և Կարթագինէի Կապրէօսի թղթերը (Մանսի IV, 1207)։ Ժողովը բանագրեց Նեստորին և գոհութիւն յայտնեց կիւրեղին և կոլեսախինին, որպէս «հաւատոյ պահակների»։

Աղմուկը չդադարեցաւ. Կայսրն աքսորեց կիւրեղին, սակայն տեսնելով կիւրեղեանց զօրութիւնը, կրկին վերադարձեց նորան և Նեստորին նորա վիճակին փոխարինեց։ Այժմ էլ Սնատիքացիք չխաղաղուեցան, սկսուեցաւ բանակցութիւն. սոքտ չին ուղում Նիկիականից զատ ինչ ձանաչել սակայն ըստ կայսեր կամաց մէկ բացատրութիւն (Մանսի V, 303) տուին, որ խառնուրդ է Ճշմարիտ հաւատքի և Նեստորականութեան. գորտ մէջ ասուած է որ Քրիստոս միացեալ մէկ բնութիւն ունի, միայն թէ նորա ստացած թշնամանքները վերաբերում են մարդկութեան, իսկ փառաւորումն աստուածութեան։ Այս բացատրութեան ստիպուեցաւ կիւրեղ ստորագրել մասնաւորապէս

կայսեր պահանջմամբ, սակայն շուտով բարձաթող արուեցաւ Եփեսոսի վճռի «ափեղերականութեան» հրատարակմամբ։ Նեստորի գլութիւնք այրուեցան և նորա հետեւղք կոչուեցան «Սիմնեանք»։

Աղեքսանդրից աթոռն իւր առաքելահաւատատ նախանձախնդրութեամբ հասել էր իւր փառաց և գերիշխանութեան կատարին։ Կիւրեղին († 444) յաջորդեց Դիոսկուր քաջարի եպիսկոպոսն «խաղաղութեան և մաքառման» անձն, որ շարունակեց իւր աթոռի ժառանգական քաղաքականութիւնն, ըստ որում հակառակ լինելով պետական ձգտումներին և Կ. Պօլսի նորընձիւղ աթոռի զօրանալուն, ձգնում էր արքունեաց ձեռնահարութիւնն եկեղեցական գործերի մէջ յետ մղել Դոյն այդ ձգտումն ունէր և Հոռվամայ և երբ Նեստորով ընկաւ Կ. Պօլսի աթոռն, ամենքի նախանձը շարժեց Աղեքսանդրից գերիշխանութիւնը։ Բայց Կ. Պօլսի աթոռի թիկունքն էր կայսրն, ըստ որում ամենայն ժամանակ կարող էր զօրանալ. վասնորոյ և երեք հզօրագոյն պատրիարքութիւններ կանգնած էին իրար վիմաց գերիշխանութեան համար զինուած։ Այս անորոշ վիճակը հարկաւ պիտի լուծուեր, ուստի և խաղաղութիւնն երկար չաեկց։

Ընդհարման խնդիր տուաւ Եւակքէս, Կ. Պօլսի վահականն Եւակքէս մաքառելով նեստորականութեան դէմ, ինքն ևս սուլզուեցաւ Ապօղինարի վարդապետութեան մէջ, ըստ որում ասում էր թէ Քրիստոսի մարդկութիւնը սպառուել է նորա աստուածութեան մէջ, որպէս կաթիւմի մեղք անսահման ծովում։ Այս նկատելով Սնատիքայ Դոմիուս եպիսկոպոսը զրեց առ կայսր 448-ին. գանդատը ներգործութիւն ունեցաւ, երբ նորան ձայնակցեց Դօրիկումի եպիսկոպոս Եւակքէսը, բողոքելով Կ. Պօլսի պատրիարք Ֆլավիանոսին Եւակքէսի դէմ։ Եւակքէսի վրայ յարձակուեցաւ երգուեալ Նեստորական՝ կիւրոսի եպիս-

Կոպոս Թէոդորէան († 457) և նորա վարդապետութիւնն աղանդակոյտ հրատարակեց. սորան աջակից էր նետորականաց միւս զլուխն՝ Եղեսիոյ եպիսկոպոս Իրամն (436—457): Ֆլավիանոս գժուարացաւ սկզբում իւր հայեացքն որոշակի արտայայտելու բայց յետոյ ձեռնարկեց գործը. նա միտք ունենալով իւր զահի յարգն ու վարկը բարձրացնել շտափեց, կաղմեց 448-ին մէկ ժողով և հերքեց եւտիքսի վարդապետութիւնը: Իսկ Դիոսկուր, որ հին հաւատքի վրայ հաստատ մնալով ճանաչում էր իւր խնդիրը, խորտակեց իւր թշնամու՝ Թէոդորէանի աղբեցութիւնն արքունիքում, որտեղ և օգնական դտաւ հղոր ներքինի Քրիստովոսին (440—450) և Եւգուսիա կայսրուհուն, մանաւանդ որ այդ ներքինին պետական նախարար էր և գաւաճանելով պետութեան, ձգուում էր ոյժառու Դիոսկուրին և ձնշել կայսեր՝ հեղինակութիւն ստանալու մտօք: Դիոսկուր իրաւունք ստացաւ «տիեզերական» ժողով կաղմելու:

Հոռվմայ Լէօ Ա յայժմ վարանում էր Եւտիքսի նկատմամբ իւր կարծիքն յայտնելու, զի վերջինո սակաւ առ սակաւ յապաւելով իւր վարդապետութեան մոլար կողմերը, ջանում էր զօրանալ իւր ատելի թշնամեաց դէմ, ըստ որում և մօտենում էր Դիոսկուրին: Լէօի զրութիւնը գժուարին էր. նա տեսաւ որ Աղեքսանդրիոյ տթուն բնկճելով պետութեան արևելեան Եկեղեցիք, զօրանում էր հակայական քայլերով, իսկ Կ. Պօլսի աթոռն արգէն թորշումում էր. մարտի ասպարէզը մնում էր ուրիմն իւրեան և Դիոսկուրին: Ծրագիրն որոշ էր. պէտք էր Հոռվմայ դաշնակյութեան նշանակութիւնը բարձրացնել արքունիքում նորա բաժանման սպառնակով: Այս ի հարկէ, յաջող ապաղայ էր խոսանում: Լէօ սկսութանակութեան դուռը բանալ. նամակներ զրեց առ Ֆալֆիանոս (Մանսի V, 1359), նորան իւր բարեկամն և ըն-

կերն անուանելով. զրեց և առ կայսրն և առ Կ. Պօլսի վանահայրերն, առ արևելեանք, առ Յուլիանոս եպիս. Կոստացին, և այլն, ամենայն կերպ իւր աջակյութիւնը խոստանալով: Սակայն նախատեսելով, որ Դիոսկուրի աղղեցութիւնն անխափան լայնանում էր, ջանացաւ ժողովը խանգարել: Այս նամակների 33-րը մէկ գեղեցիկ օրինակ է թէ ինչպիսի ստախօսութեանց էր զիմում հռովմ իւր նպատակներին համնելու համար: Նա կեղծում է իրերի այն վիճակը, յորում հրաւիրում էր ժողովն, ասելով՝ իբր թէ կայսրը զիմել է իւրեան՝ Լէօին Եւտիքսի վէճի պատճառով, որպէս Պետրոսի յաջորդին և իբր թէ ինքն Լէօ իսկոյն Պետրոսի հաւատալեաց հիման վրայ պարզել է մարզեղութեան ծշմարիտ վարդապետութիւնն և Եւտիքսին հերքել. ըստ այդմ հետեւնում է սրամտութեամբ Լէօ, Եւտիքս դադապարտուած է և այլ հարկ չկայ նոյնը ժողովով կրկնելու: Բայց այսպիսի զրպարտութիւնը անհետեանք էին մնում քաղաքական զրից պատճառով. այդու հանգերձ Դիոսկուր գումարեց 449-ին Եփեսոսի երկրորդ ժողովն, ինքն նախագահեց և Հոռվմայ պատուիրակներին առուաւ երկրորդ տեղը: Լէօ նկատելով որ կրկն Աղեքսանդրիոյ աթոռը պիտի բարձրանար այդ ժողովով, չշատացաւ պատուիրակաց առաքմամբ և զրեց իւր անուանի չարեացապարտ առումարը: Մինչգեռ նա իւր զրութեանց մէջ միարեկում էր՝ թէ «բնութիւնն Որդուցն Աստուծոյ խառնութն է մարմնոյն»¹ «ընդ միոյ բնութեան խառնեցաւ միւսն», այժմ իւր այդ առումարի մէջ փոխեց բոլորովին իւր հին վարդապետութիւնն, անտարակոյս, Դիոսկուրին հակառակ գտնուելու և ինքեան հեղինակութիւն տալու համար, վասն զի նա քաջ գիտէր, որ Դիոս-

1) „Dei filius natura carnis immixtus“; „naturae alteri altera miscebatur“. Serm. 34, 4:

կուր Կիւրեղի դաւանանքով է զինուած: Այդ տումարը գրելուց յետոյ միայն մէկ ձանապարհ, մէկ ելք կար, այն է կամ Դիսսկուր կամ Լէօ. Դիսսկուրի հետ կապուած էր Հին վարդապետութիւնն, Աթանասի, Կիւրեղի և այլ եկեղեցական հայրերի գրութեանց վրայ հիմուած: Լէօի հետ կապուած էր մէկ նոր վարդապետութիւնն, որի հիմքը խախուտ էր և կատարածն անորոշ. մէկի անկումը, միւսին բարձրութիւն պիտի տար:

Արդ ի՞նչ էր այդ Հին և նոր վարդապետութեանց էռութիւնը. քանի որ Եփեսոսի 431-ի ժողովում Կիւրեղ Աղքսանլրացու 12 նզովները հաստատուեցան և ամբողջ չոռվմէական պետութեան համար ընդունեալ հրատարակուեցան և քանի որ այստեղ խօսքը լոկ այդ պետութեան եկեղեցեաց և ժողովների վրայ է, այդ իսկ պատճառով համեմատենք դոյն այդ եկեղեցեաց ս. հայրերի քարոզածն և նոյա ժողովով հաստատուած վարդապետութիւնը Լէօի տումարի հետ:

Կիւրեղի 12 նզովների զիխտորներն են. 1) «Եթէ ոք ոչ խոստովանեսցի՝ ի մարմնի բնութեամբ միանալ բանին Աստուծոյ Հօր, և մի Քրիստոս զնոյն հանդերձ իւրացեալ մարմնովն Աստուած միանգամայն և մարդ, նզովեալ լիցի»:

2) «Եթէ ոք զմի Քրիստոս բաժանեսցէ յերկուս բնութիւնս յետ միանալցն. և միայն մերձաւորութիւն և յարելութիւն ասիցէ, իբրև պատուով և կամ Ճոխութեամբ զօրութիւն գտնալ և ոչ միութիւն բնութեամբ, նզովեալ լիցի»:

3) «Եթէ ոք որոշէ զբանս աւետարանչացն, զոմանս ասել ի դէմս աստուածաբանութեանն և զոմանս ի դէմս մարդկութեան և կամ զանուանսն Փրկչին մերոյ որ ի զիրա, զաստուածավայելուչս աստուածութեանն, և զմարդկաբարսն մարդկութեանն յետ անձառ միաւորութեան, նզովեալ լիցի»: (Մանսի VI, 1082 և ըստ նախն. ժարդմ.):

Նոյն Կիւրեղ գրում է և այլուրեք. «Այլ ասեն հակառակորդքն, եթէ մի բնութիւն է մարմնացելց բանին Աստուծոյ՝ Հարկ է ամենայնի շփռթումն ընդունել և խառնակումն, որպէս Տախեցելց և ի նելքս գողացելց մարդկայնոյ բնութեանն. և անգիտանան՝ որք զուղիղսն թիւրեն, թէ ըստ Ճշմարտութեան ասէ՝ «մի բնութիւն մարմնացելց բանին Աստուծոյ»¹:

Սրդ մի բնութիւն էին քարոզում բոլոր հին հայրեն, ըստ որում և ասում էին թէ նոյնը չարչարուեցաւ, նոյնն անշարժարելի մնաց, նոյնը մեռաւ, նոյնն և կենդանի էր. նոյնը թաղուեցաւ, նոյնն և մնաց իւր աստուածութեան մէջ, վասն զի խաչուող, մեռնողն ոչ թէ բանն Աստուած էր սոսկապէս, այլ աստուածամարդն. և դաւանում էին պնդյն Որդի Աստուծոյ, զնոյն և Որդի մարդոյ. զնոյն յերկնից, զնոյն յերկրէ. զնոյն չարչարելի, զնոյն անշարժարելի. ոչ զայլ ոք և այլ և այլ»:

Իսկ Լէօի պումարը ժխտում է «մի բնութիւն» ասել և գաւանում է երկու բնութիւնք, «Եկեալք առ իրեարս ի մի անձնաւորութիւն». «Քանզի, գրումէ նա, թէպէտև ի տէր մեր Յիսուս Քրիստոս մի անձն է Աստուծոյ և մարդոյ, այլ՝ այն է՝ որով երկոցունցն ևս հասարակ են թշնամնքն, և այլ այն՝ որով հասարէ են փաստքն»:

«Զի երկոքին կերպարանքն գործեն հաղորդութեամբ միւսցն զայն որ ինչ իւրն է, այսինքն բանն գործէ զոր բանին է, և մարմինն կատարէ զոր մարմնոյն է»:

«Որպէս զի որ մերոց գարմանաց ի դէպ էր՝ մի և նոյն միջնորդն Աստուծոյ և մարդկան մարդն Յիսուս Քրիստոս, կարող լիցի մեռնիլ միովն և մի՛ լիցի կարող մեռնիլ միւսովն»:

¹ Քրիստոսի բնութեան վրալ Կիւրեղի գրածները Թարգմանուած են ի նախնեաց և ծեռնարկ են եղել վիճաբանութեան ընդէմ հակառակորդաց:

Ուրեմն ըստ Լէօի, անարդուող թշնամնու ողը մարդկային բնութիւնն է, իսկ փառաւորուողն, երկրպագուողն աստուածային բնութիւնն. քաղցող, զարհուրող, մեռնողն այլ է, հրաշագործող, մարդարէացող, յառնողն այլ. բանն Աստուած գործում է իւրը, մարդն Քրիստոս կատարում է իւրը. բայց մի է դէմն Քրիստոս, միջնորդն երկուքին, որպէս Լէօ հարցնում է Եւափեսին. «Թ այն բնութիւն բենեալ կախեցաւ ի վերայ խաչափացախ և այլն»: Յայտ է որ տումարի քարոզածը Կիւրեղին հիմնովին և լիովին հակառակ է, ոչ միայն այնու, որ մերժում է մի բնութիւն ասել բանին մարմնացելոյ, այլ մանաւանդ այնու որ որոշում է նորա մէջ երկու բնութիւնք և միայն մերձաւորութիւն, հաղորդութիւն, յարելութիւն վերագրում նոցա, որով ի Քրիստոս երկուութիւն է շեշտում իրապէս:

Բայց Քիւղանդական բոլոր հին հայրերն, որպէս ցըց է տալիս Եփեսոսի 431 թուի ժողովի վճիռը, լիապէս միաձայն են Կիւրեղի 12 նզովներին. նոքա ամենքը ժխտել են երկու բնութեան վարդապետութիւնն, այսպէս, օր. Նազեանց ասում է. «Եթէ զանազանութիւն՝ աննմանութիւն, և եթէ աննմանութիւն՝ ոչ պարզութիւն՝ ի բազմաց դրութիւն, որ լինի բազում դրութիւն»: Եւ մի ուրիշը «որ երկու բնութիւն ասեն՝ գտանի ըստ նոցա մտացն չորս տեսրո՞ ասէլ չորրորդութիւն և թէ այս մասունս յամառին, պարախն փառս տալ չորրորդութեան. և պարտ է նոցա ասել՝ փառք հօր և Որդուց և միւս Որդուց և հոգեցն Սրբոյ»: Ա. Հայրերի գրուածոց մէջ «երկու բնութեան» հետք բնաւին չէ կարելի գտնել, ոչ մի տեղ չկայ այդպիսի մի վարդապետութիւն: Սակայն Լէօ հիմնում է միմիսյն այն հռովմէական եկեղեցու երեք հայրերի վրայ՝ Տերտուլիանոսի, Ամբրոսիոսի և Օգոստինոսի. սոցա վրայ էր յենուում և Նեստոր: Արդ Ամբրոսիոս († 397) և Օգոստինոս († 430)

Տերտուլիանոսի վրայ են յենուում († 220—), ուրեմն հնագոյն պատճառն այդ վարդապետութեան՝ Տերտուլիան. բայց սա ևս երկու բնութիւն չէ ասում, սորա ասածն այլ է. սա յիշարկում է մէկ խօսք իրաւաբանական առածութեամբ և ոչ թէ իմաստավիրական - աստուածաբանական մտօք. այդ խօսքն է՝ «Երկու գցացութիւն ի մի անձնաւորութեան». արդ գցացութիւն (substantia) անձնաւորական ինչ չէ, այլ տատակութիւն է, իսկ անձն գցացական չէ (substantiell), առ իրաւաբանաց, այլ իրաւատէր, կարող ենթակայ, որ զանազան գցացութիւնք կարող է ունենալ, ըստ որում և մէկ գցացութիւն կարէ շատ ենթակաների ունեցուածքը լինել: Ընդ սմին Տերտուլիան յիշարկում է «մահ Աստուծոյ» խօսքեր, սակայն «բնութիւն» բառը չենք զանում դրու գրուածներում:

Յայտ է ուրեմն, որ այն հայրերն, որոնց վկայութեամբ Նեստոր ջանուում էր իւր մոլորութիւնը հասաւաել, այդպիսի բան չեն ասում: Նեստոր պնդում էր. «Երկաքանչիւր բնութիւնքն — բարձրագոյն և անշփոթ կապակցութեամբ պատուին ի մի անձնաւորութեան». նա մեռաւ և ահա Լէօ ըստ հռովմէական Ճարտարութեան այդ Յայրերի անունները միայն տալով և առանց վկայաբերութեան ճգնում է իւր նեստորական մոլորութեամբ կործանել բազմաթիւ հայրերի և նզունեալ ժողովոց վարդապետութիւնը:

Դիսկուրին վիճակուած էր չգաւաճանել իւր նախնաց: Սակայն նա չուղեցաւ իւր ներքին գժգոհութիւնը յայտնել, այլ խոհեմութեամբ, գողցես նշանակութիւն չտալով խոթեց Լէօի գրութիւնն առանց կարգալու գործագրութեան մէջ: Ժողովի գործավարութիւնն եղաւ Ճիշտինակէս սովորաբար Քիւղանդական միւս ժողովներինը Նիկոյ և Եփեսոսի ժողովներն ընդունեալ հաստատուեցան վերստին և ապա սկսուեցաւ Եւտիքէսի գործը: Եւ-

տիքէս, որ արդէն կամաց-կամաց թողել էր իւր մոլորութիւնք, որտանց թէ երեսանց նղովեց նեստորին, Ապօղենարին, Մանէսին և Վալենտինին և ընդունեց Կիւրեղի զրութիւնք, ըստ որում ժողովը հաստատեց միաձայնութեամբ Կիւրեղի 12 նղովքները, բանագրելով երկու բնութիւն քարոզներին, ստկայն չոռվմայ պատուիրակները հրաժարուեցան այս հաստատութեան ձայն տալու: Ապա Դիոսկոր առաջարկեց ժողովականաց, որ անձնիւր եպիսկոպոս գրաւոր բացատրէ, թէ արդեօք Նիկիական վարդապետութիւնից դուրս ելողներին պատժել պէտք է: Այս խնդրին ընդդիմացան և չոռվմայ պատուիրակներն, ըստ որում ժողովը պաշտօնանկ արաւ կ. Պօլսի Ֆլավիան պատրիարքին և Դիօրիէումի Եւսեբիոս եպիսկոպոսին, որպէս նեստորականաց: Հոռվմայ պատուիրակները չեկան այլ ևս միւս նիստին. իսկ Բ. և Գ. Նիստերում պաշտօնանկ արին իբասին, Սաբինեան Պեռացուն, Թէոդորէտին (որ Կիւրեղի 12 նղովքներին հակառակորդ էր եղել ի պաշտպանութիւն Դիոդոր և Թէոդորոս երկարնակաց). (Մանսի XI, 252), Դիմնուս Սնտիոքայուն և այլ համախոհից. բոլոր այդ բանագրուածները, տեսնելով չոռվմայ պատուիրակների դժկամակութիւնը, դիմեցին իսկոյն Լէօի բանակը, վերջնիս իննկարկելով և ներբողելով: Դիոսկոր հաստատելով հին հաւատալիքն, առանց որ և է փոփոխութեան խաղաղացրեց արևելքն, իսկ Ֆլավիանոսին տեղ որ ըստ պատմութեան կայսրական ոստիկաններից ծեծուելով, մեռել էր, նշանակեց Աղեքսանդրիոյ երէց Անատոլիոսին: Աղեքսանդրիոյ աթոռը փառաց ի փառս բարձրացաւ: Որպէս կայսրն Թէոդորոս սկզբում հրամայել էր, զրելով առ Դիոսկոր. «Մնկք կոչում ենք Քո երկիւղածութիւնդ, ըստ որում շնորհակալութեամբ յարգում ենք քեզ որպէս հօր և ձեր աշխատանքն իբրև մեր սեփականը նկատում, մէկ շըջաբերական պատրաստել հա-

ւասոյ բովանդակութեամբ. որ ոչ ոք չհամարձակուի այդ հաւատքին բան աւելացնել կամ պակասեցնել կամ մեկնել զի նա ինքն իւր մեկնիցն է և ամենքին հասկանալի» . . . այդպէս և վճռեցին և ուրիշ ոչինչ, թէ ժողովականք անդում էին օրինակ. այրուի իբասն Անտիոքիսյի մէջ. . . Դւերը Քրիստոսին Աստուած են Ճանաչել իբասն ոչ. . . Ով իբասին չէ տառւմ, դւ է: Ով իբասին սիրում է, սատանայ. . . : Նեստորիոսն և իբասը պիտի միասին այրուին... Պատրիարք, կանգնի՛ր ուղղափառութեան համար» ևայլն: Ժողովի ելքն յայտարարուեցաւ կայսրին և հաստատուեցաւ: Դաւանական վէճը վերջացել էր. այլ ևս դորա վրայ հարց չկար. այժմ խօսքը գերիշխանութեան վրայ էր. որի համար վէճը նորոգել պէտք էր:

Տեսնելով որ իւր բանակը բաւապէս ստուարացել է, լէօ անուանեց այդ ժողովն «աւազակաժողով»: Նա շաապեց մէկ ժողովով եղածը մերժել ուստի և բանապրուեցաւ Դիոսկորից: Լէօ խիստ երկիւղի մէջ իւր աթոռի փանգաւոր վիճակը նկատելով, որպէս պարզ երեւում է նորա 43—72 նամակներից, վասն զի, ինչպէս տեսանք, Եփեսոսի 2-դ ժողովն ուրիշ բան չէր արել, այլ միայն վերստին հաստատել էր նիկիոյ և Եփեսոսի առաջին ժողովների հաւատալիքը: Ուրեմն լէօ մերժելով Դիոսկորի արածը, մերժում էր նաև նիկիոյ և Եփեսոսի ժողովները. այս վտանգաւոր շահատակութիւն էր, զոր միայն արքունի սուրբ կարող էր տպահովել Այս լաւգիտէր լէօ, ուստի զիմելով չոռվմայ կայսրական ընտանիք Անատոլիոս. III) նամակներ զրել տուաւ առ Թէոդոս և աշխատեցաւ իտալիայում ժողով մի գումարել տալ, ըստ որում ջանում էր ուղղել իւր սիսալը, հաւատացնելով անդադար թէ ինքն ևս նիկիոյ ժողովին էր հենելով անդադար թէ ինքն ևս նիկիոյ ժողովին էր այժմ Եփեսոսի տեսում. վտանգորոյ և զգուշանում էր այժմ Եփեսոսի

վճռին հակառակ ինչ զրելուց, այլ միայն ուղղում էր Եւտիքէսին բանալրել որպէս ազանդաւորի և մանիքեցիութիւն էր վերապրում նորան։ Սակայն Թէոդոս Ա չխաբուեցաւ և բացատրեց ի պատասխան իւր ազգականաց նամակներին, որ ժողովը վերականգնել է հինն և խորտակել է ֆլավիանոսի նոր վարդապետութիւնը. խաղաղութիւնը հաստատուած է, ապա ուրեմն և պէտք չկայ որ և է ժողովի։

Բայց Լէօփ բախտար բանուկ էր. Թէոդոս մեռաւ 450-ին և իրերի վիճակը փոխուեցաւ։ Պուլիսերիան գահ բարձրացաւ, Մարկիանոսն ևս նորա թեր մտաւ. Թէոդոսի բարեկամները սոցա թշնամիքն էին, ուստի և սկսուեցաւ նոր քաղաքականութիւն։ Քրիստովիոս սպանուեցաւ։ Լէօսկսաւ իւր զործունէութիւնը. նա գտաւ արքունիքի թոյլ երակն, այդ Պուլիսերիան էր. և ահա բացաւ Լէօնամակների ճանապարհն և շողբորթութեան լայնալիք պարկը¹։ Պուլիսերիան ամենայն ինչ էր Լէօփ համար, նորա աստուածուհին էր. նա բարձրացաւ այն անսխալականութեան, որի ժառանգը պիտի դառնար Լէօ յաջորդն 19-դ դարում.. Լէօ զրում էր 13 ապրիլի 451 թուին առ Պուլիսերիան². «Խոստովանեցաք մեք, եթէ հաւատք քրիստոնէականք, քանզի Դուք ի պաշտպանութիւն նոցա պատրաստեալ կաք ի Տեսոննէ, մոլորիլ ոչ կարեն»։ Պուլիսերիան բարեկամացաւ Լէօփ հետ. Մարկիանոսի առաջ բացուեցաւ մէկ նոր ճանապարհ. արևելքից վտանգ չկար. խօսքն Աղեքսանդրիոյ և Հռովմայ վրայ էր, որոնք երկուքն էլ վտանգաւոր էին աղքունիքի համար։ Հռովմը դնել Աղեքսանդրիոյ տեղ—անմառութիւն կլինէր, ուրեմն հարցն Աղեքսանդրիոյ «լինել և չլինել»-ի վրայ էր. «լինելը» պի-

տի բաժաննէր արևմուտքը պետութեան միութիւնից. «Ոինելը» պիտի բանիքրացնէր նորան. միակ ելքն էր, նորա չլինելը Պոլսի բարձրացմամբ։ Աղեքսանդրիան Դիոսկուրն էր, որ սերա ձուլուել էր առաքելական հաւատալեաց հետ. Հռովմը Լէօն էր, որ անբաժան էր իւր առւմարից. իսկ Պոլսիր կայսրն էր իւր սրով։ Եթէ ընկնէր Դիոսկուր, կորած էր և առաքելական հաւատալեքը. Լէօի անկումը, նորա տումարի անարգումն կլինէր. իսկ դոցանից մէկի բարձրանալն վտանգ էր պետութեան միութեան։ Դիոսկուր ատելի էր Մարկիանոսի աչքում, աւելի ևս ատելի դարձաւ, երբ իւր յաղթութեամբ հապարտացած սկսաւ գրգռել Եղիպատոսի ժողովուրզը Մարկիանոսի գէմ ուսաի վերջինս զրեց Լէօին մի նամակ և նորան տուաւ այն գահերիցութիւնը, զոր Թէոդոս չնորհել էր Դիոսկուրին. ընդ նմին խոստացաւ նաև նորա խնդրած ժողովը գումարել։

Լէօն աւեսաւ որ զործելը կարգի են և ամենայն ինչ իւր սրտովն է, սակայն այժմ էլ մէկ նոր ցաւ պաշարեց նորան. Թէոդոսի օրով նըրա խնդրած ժողովն այժմ պէտք չէր և աննպաստ էր, վտանգաւոր էր իւր տումարին, ուստի և սկսաւ ջանալ զորա աւելորդութիւնը հաստատել (Նամ. 82—86), ասելով թէ ինքն արդէն ինչ որ պէտք էր նամակներով՝ արել վերջացրել է, ըստ որում և ինքն իւր համար վտառում էր եպիսկոպոսներին, ներում էր ամենքին և հեռատեսութեամբ կ. Պոլսի պատրիարքին իւր հրամանատարն էր հրատարակում։ Նորա երկիւղն առաւել ևս սաստիացաւ, երբ նկատեց որ առւմարի հականիկիական լինելը ատրածուել էր ամենուրեք։ Սակայն նորա բոլոր ջանքերը ժողովը խափանելու զուր անցան. կայսրը չխաբուեցաւ։ Սյս տեսնելով Լէօ սկսաւ իւր տումարն ապահովելուն աշխատել, ըստ որում զրեց¹ ամենայն կողմ,

¹ 79 նամակ... ² Cognovimus christianam fidem vobis... in difensionem ejus a Domino praeparatis non passe turbari.

¹ Նամ. 89—95:

որ ով Եւտիքէսին նզովէ և Նիկիան ընդունէ, օրթոգոքս է: Միւս կողմից ևս հասասատում էր¹ Եփեսոսի ժողովի կիւլեղեան նզովքն, որպէս զի ինքեան նեստորական չհամարեն: Բայց Լէօին պաշարեց այժմ ևս մի այլ երկիւղ վասն զի նկատեց որ Մարկիանոս ձգտում էր կ. Պօլսի պատրիարքութեան գերիշխանութիւն տալ: Դորա դէմ կոռւելու զէնք չունէր Լէօ—նա յաղթուեցաւ կայսեր կամաց զօրութեան տակ:

Մարկիանոս նշանակեց ժողովն ի Նիկիայ, որի հեռուութիւնն կայսրից սարսափեցրեց Լէօին. աս զիմեց և խնդրեց ժողովը կ. Պօլսին մօտիկ գումարելու: Այս խնդիրն, որ կայսեր ևս հածոյ էր, չմերժուեցաւ. ժողովը հրաւիրուեցաւ ի Քաղկէդոն 8 հոկտ. 451-ին: Հոռվմ նշանակեց 4 պատուիրակ և քանի որ կայսրն Լէօին էր տուել նախագահութիւնը, վերջինս նշանակեց Պալասինուս եպիսկոպոսին: Լէօ բանեցրեց ամենայն զգուշութիւն. նա մինչեւ անգամ պատուիրեց իւր նուրիրակներին բերել տալ Դիոսկուրին որպէս յանցաւորի և ոչ որպէս ձայնատու եպիսկոպոսի². այս արդէն բաւ է Լէօի երկիւղը հասկանալու:

Դիոսկուր հրաւիրուեցաւ ժողովին. կայսեր հրեշտակը ջանացաւ թշյլ չտալ նորան եպիսկոպոսաց հետ միամին զալու³. նա խորամանկութեամբ նստեցրեց Դիոսկուրին մէկ նաւում. իսկ միւս եպիսկոպոսաց մի ուրիշում և պատուիրեց նաւավարին, որ Դիոսկուրի նաւի ծովեղերքին համնելուն պէս, միւս նաւը յետ վարեն: Սակայն չնայելով նորան աշխատանաց, Դիոսկուրի մի ուրիշում գտնելում էր դժաշունչ տումարը, նորա յետեն ևս ձայն մի՝ «առ այս գիւքը, Պուլիսերիա, և տուր Մարկիանոսին»: (Հանդ. եգիպ. 1882. 25):

Վերջապէս հասան կ. Պօլիս և հրաւիրուեցան արքունիք առանձին մի ժողովի: Մակար կեղաստ շորերում էր և երբ Պետրոս յիշեցրեց նորան զգեստաւորուիլ կայսեր ներկայանալու համար, նա պատախանեց. «կայսեր սիրտն առաւել կեղտոտ է քան իմ հագուստը. հաւատա, որդեակա, որ եթէ ևս կեղտոտագոյնն ունենայի, այն կը հագնէի, որպէս զի արժանանամ մի օր փառաշեղ զգեստաւորուելու, երբ երթամ առ ձշմարիտ Թագաւորն Քրիստոս» (1883. 18): Դրան մօտ կայսրականք խանգարեցին Մակարին ներս մտնելու, որ և իսկոյն պատախանում է անվրդով. «երեքտակ պարանը դժուար է կարւում. եթէ ինձ արգելում էք մտնելու, աշաւասիկ երեքն իմ գաւառից այնտեղ են, որոնք աեղեակ են հաւատոյ ուղղափառութեան առաւել քան ամենայն եպիսկոպոսք և զի-

¹ Նամ. 93: ² Մանսի ՎI, 580: ³ Հանդէս եգիպտաբան. (Քրանս.) 1882. էջ 22. Դիոսկուրի ծառը, զոր ասել է նա ի Գանգրա, լսելով ծերունի Մակարի խոստովանական մահն, արձանագրեալ Թէոպետոսի և Պետրոսի ծեռքով: Այդ ծառը կարդացւում է ամենայն տարի կոպտական եկեղեցում տօնախմբութեամբ:

տունք»։ Սակայն նորա բացակայութիւնը զգալի էր Դիոսկուրին, ըստ որում և խկոյն հրամայեց սա ներս թող նելու նորան, ասելով որ իւր թղթերը նորա մօտ են։

Դաշլիճում ներկայ էին Մարկիանոս, Պուլսերիա, Մաքսիմոս Անտիռացի, Ստեփաննոսն Եփեսոսի, Անատոլիոսն Կ. Պոլսի, Խվենալն Երուսաղէմի և այլք։ Մակար ներս մոնելով հայհյեց և նղովեց ամէնքին և ապա զնայ ու նատաւ եպիսկոպոսների յետեւ։ «Մաշն, ասում է Դիոսկուր, երեսում էր նորան քաղցր որպէս խնձոք կամ հարսանիք, թերեւս ասում էր նա իւր սրտում «եթէ ես մեռնեմ Քրիստոսի՝ աստուածորդուն հաւատոյ համար—այդ մէկ նահատակութիւն կլինի» (1883. 19)։ Հարկաւ Մակարի հայհյանքները կոպտերէն էին, իշխողներին անհասկանալի։

Մարկիանոս տեսնելով սոցա տրամադրութիւնը, հրամայեց Դիոսկուրին յայտարարել իւր գաւանանքն և հեռանալ. վերջինս պատասխանեց. «Ամեր հայրերի հաւատոքն է մինչեւ այս ժամն, որին մենք հետեւում ենք. դու ասում ես թէ ուղղադաւան չեն մեր այն հայրերն, որոնք մեզ հաւատք են աւանդել, այն է՝ Աղեքսանդր, Աթանաս, Թէոփիլոս, Կիւրեղ, Յուլիոսն հոռվմայ, Խնոսկինտիոսն, Կոլեստին»։ ըստ որում և առաջարկեց լսել դոցա ասածները, քննել և զատել արդեօք ուղղադաւան են, թէ ոչ։ Այս խօսքերն արդէն ցցց են տալիս թէ ինչ պատրաստութիւն էր տեսնելում արքունիքում։ Իտ յայտանիշ է մանաւանդ եպիսկոպոսներից մէկի խօսքը, իպատասխան Դիոսկուրին, կայսեր հետ վախսալուց յետոյ, թէ մախնիք այլ ևս չկան, տեսնում ես, որ մենք այժմ նոր մարդիկ ենք»։ ուրեմն նոր հաւատք էին ուղում այդ նոր մարդիկ նորապէս փրկուելու համար...։ Դիոսկուր հրաժարուեցաւ նոցա հաւատախախտման աջակցելու թերին տումարը կարգալու, սակայն Դիոսկուր փեր թռաւ

և խլելով զայն, շպրտեց մէկ կողմ, ասելով՝ «մի յառաջաբերէք այն մարդու խարդախութիւնն, ապա թէ ոչ կրանադրենք այս ամբողջ քաղաքն և կերթանք»։ Յանդուգն էր Դիոսկուրի արարքն, ուստի սպառնացաւ. Պուլսերիան նորան ևս Ոսկեբերանի օրը ձգելու. սակայն նա չփախեցաւ, այլ յիշեցրեց այն տանջանկները, զորոնք քաշել էր Պուլսերիայի մայրը, Ոսկեբերանի աքսորողն և աւելացրեց. «Եթէ չես վախենում քո մօր գլխին եկածները տեսնելով, արա ի՞նչ կուզես և ինձ հետո։ Դիոսկուր գոզցես սարսափի ձգեց թագուհու սիրան և ապա զառնալով առ ժողովը, բացարեց քաջաբար, որ եթէ զինքն մերժեն և բանազրեն, բանազրած կիխնեն և ճշմարիտ հաւատքը, զոր գաւանել են իւր հայրերն։ «Ասա միայն, որն է իմ հաւատքի մայորութիւնը, զոշում էր նա խոյացած առ կոյսրն, մի՛ մեղանչիր, ո՛ կայսր, Աստուծոյ զէմ, որի ձեռքին է քո շունչդ. Հարկաւ դու անցապազ երեալու ես նորա առաջ. մի՛ խախտիր այն հաւատքն, ո կայսր, զի ես որդի եմ աշխարհի զօրաւոր ուղղազաւան հայրերի, որոնցից ուսել եմ իմ հաւատքը։ Հեռացի՛ր աշխարհական. մի՛ մօտենար, քանի դեռ չես զորուել, այն տեղին, յորում Աստուած ներկայ է։։ Սակայն լռութեան տրուեցան այս վեհաշունչ խօսքերը¹։

Այսուհետեւ սկսուեցաւ հաւատոյ վիճաբանութիւն. Թէոփորեատ ասում էր որ իւր «Հայրն Լէօ» վարդապետում է Քրիստոսի աստուածութեան և մարդկութեան անցատութիւն, ըստ որում ոչ թէ Քրիստոսի աստուածութիւնն, այլ մարդկութիւնն է չարչարւում։ Նոյնպէս և

¹ Ծնորհալին ասում է նղեսիոյ ողբի մէջ. Աղեքսանդրիա...՝

Հիմն և արմատ ուղղափառաց,

Տարամներժող հերծուածողաց,

Էին գումարք հայրապետաց

Որ առ ի բոյդ նախագահի... 115:

Հայ. եկեղ. և բիւզ. ժողով. պար.

ոչ թէ նորա մարդկութիւնն, այլ տստուածութիւնն է փառաւորւում: Այս լսելով Դիոսկուր սկսաւ բացատրել, որպէս ինքն ուսել էր Կիւրեղից, ըստ որումնա այնպէս գեղեցկաբարբառ օրինակներով բացատրեց այդ տստուածային խորհուրդն, որ եպիսկոպոսներն ոգեսրուեցան, կրակուեցան և մոռանալով ամենայն ինչ, գոչեցին՝ «Ելրաւի, Դիոսկուրի հաւատքն է լաւը. նորա մէջ չկայ մոլորութիւն. խարեխայութիւն է Ֆլավիանոսի հաւատքը. մենք հաւատում ենք, որպէս մեր հայրն Դիոսկուր. . . Աղատեցէք կայսեր այդ շների խարդախութիւնից»: (Հանդեգ. 88. էջ 23):

Թէւ Լէօ բացէ ի բաց չթշնամանուեցաւ, այդու հանգերձ Մարկիանոս երկիւղով տեսնում էր գործի անցածողութիւնը. նա այլ ելք չուներ. հունները սպառնում էին պետութեան արևմտաքին. Լէօին արհամարհել նոյն էր թէ արևմտաքը փանզի մէջ ձգել: Նա արձակեց ժողովը. հէնց որ Դիոսկուր հեռացաւ, հրամայեց Մարկիանոս միւս եպիսկոպոսաց կրկին յետ կանչելու. ժողովը նորոգուեցաւ. տումարը կարգացուեցաւ և որոշուեցաւ զայն յառաջ տանելու. խօսուեցաւ նաև Մակարին կեանքից զրկելու վրայ: Այդպիսով ծրագրեցին Քաղկեդոնում կայանալիք ժողովի գործունեութիւնն և ցրուեցան: Դիոսկուր գիտէր այս ամէնը, զի նորա հիւրընկալ Նիկեասաի որդին Միայլէն արքունի ներքինի էր և ամենայն ինչ հաղորդում էր նորան:

Քաղկեդոնի ժողովը բացուեցաւ¹ և կայսրական յանձնակատարք նորա գլուխն անցան, իսկ առաջին ձայնի իրաւունքը տուին հոգմայ պատրաւիրակաց: Սոցա առա-

¹ Կոպտաց պատմիցն Մակրիցի ասում է, որ Դիոսկուր նախ քան այդ բերել է տուել կայսրից պատրաստուած դաւանագիր մի իր ստորագրելու, գրել իւրը, նոցա բանադրել և յետ լղել:

ջին ջանքն եղաւ Դիոսկուրին զրկել ձայնաւորի իրաւունքից, որ զեռ ձանապարհին հանդիսով բանագրել էր Լէօին և իւր ուղեկից եպիսկոպոսաց ստորագրել տուել (Մանոի VI. 1006), ըստ որում զրպարտեցին թէ նա կայսեր դէմ է, ուստի և գատապարտեալ է. այդ յաջողուեցաւ նոցաւ և Դիոսկուր սախպուեցաւ հակառակ Բիւզանդական սովորութեան, գատապարտեալի նստարանի վրայ տեղ բռնել: Ժողովին հրաւիրել էին և բուն նեստորականաց, որոնք Լէօից արդէն պաշաններ էին ստացել. երբ դոցանից Կիսլոսի եպիսկոպոս Թէոդորեա, Դիոսկուրի անողոք թշնամին, որի գրուածներից զգուշացրել էին հայոց Պրոկոպ և այլք, երբ այդ կատաղի նեստորականը ներս մտաւ, սոսկալի աղմուկ բարձրացաւ. Դիոսկուր ևս յիշեցրեց ժողովականաց, ասելով. «Թէոդորետ նզովիկ է ս. Կիւրեղին, այժմ էլ Կիւրեղին էք ուզում արհամարհէլ»: Աղմուկը սաստկացաւ. ժողովականը գոչում էին. «Պուրս ձգեցէք այդ հրէային, Աստուծոյ այդ հակառակովին և մի կոչէք նորան եպիսկոպոս»: Գոչինները և յիշոյները շարունակուեցան մինչև որ կայսրականք նկատեցին՝ «անօգուտ և անվայել է եպիսկոպոսաց այդպիսի ամբոխային գոռիւնը...» և զժուարութեամբ կարողացան լուեցնել: Սակայն լուեցրին նոցա, առանց Թէոդորեաին գուրս անելու. սա ևս տեղ բռնեց ժողովականաց մէջ, որպէս ձայնաւոր:

Թէ որոնք էին արքունի միջոյները ժողովի գործերն ըստ ծրագրին վարելու համար, աեսնում ենք նոյն իսկ ժողովի առաջին ժամին: Եպիսկոպոսներից ոմանք անշուշտ ստիպուած սկսան զրպարտել Դիոսկուրին, որ իւր թէ վերջինս ուժով լինի նոցա ստորագրել տուած Եփեսոսի Բ. ժողովի վճռին, սակայն Եղիպատոսի եպիսկոպոսք պատասխանեցին՝ «գուք հէնց մեր առաջ էք ստորագրել, հէ ինչու ձեր կղերականք զոչեւններ են հանում», ըստ

որում երբ նոքա չկարողացան, ապացուցանել այդ ամբաստանութիւնը, սկսան անամօթաբար ներողութիւն խնդրել, ասելով որ սիալական մարդիկ են, սիալմամբ են ստորագրել և որ իւրեանց համովմունքն արդէն փոխել են և այլն: Քանի տհաւոր էր կայսրական խրտուիլակն, որ եպիսկոպոսք արածիցն անդամ վախենում էին... իսկ Հռովմայ և պատուիրակներից մէկն՝ Յուլիանոս Կոստանդին, թողած իւր 3 ընկերներին, մտել էր եպիսկոպոսաց մէջ նոցա լեզուները վարելու:

Մինչդեռ Հռովմէտականք առանց ակնածելու հրապարակում էին Լէօփ տումարը միայն և ուրիշ ոչինչ չէին ուղում ճանաչել, կայսրականք ջանում էին այնպէս անել որ երկու հակառակ կողմերն ի մի յարուին, երկուքն ևս գոշ մնան: Երբ կարգացուեցաւ կիւրեղի թուղթն առ Յովհանն Անտոնքայ, ամենեքեան գոչեցին՝ «պատիւ կիւրեղին, մենք հաւատում ենք որպէս նա». սակայն հռովմէտական նիւթողք ձայների մէջ խառնեցին թէ ֆլավիան ևս օրթողքս է. սորանով թուի թէ տակաւ տակաւ ուղում էին բարձրանալ առ Լէօ. այս միայն փորձ էր: Այս նկատեց Դիոսկուր և պահանջեց իսկոյն կարգալ ֆլավիանի գրութիւնն և ամբողջապէս քննել. սակայն գործավարք զանխլացան այդ: Դիօսկուր կրկնեց. «Ֆլավիան իրաւապէս է դատապարտուած, զի՞նա ևս յետ միաւորութեան երկու ընութիւն էր պնդում: Ես կարող եմ Աթանասից, կիւրեղից և Գրիգորից ապացուցանել որ միաւորութիւնից յետոյ պէտք է խօսել միայն բանի մէկ մարմնացեալ ընութեան վրայ: Ես մերժուելու եմ ս. Հայրերի հետ, սակայն պիտի պաշտպանեմ նոցա վարդապետութիւնն և կայն պիտի պաշտպանեմ նոցա վարդապետութիւնն ոչ մի կտում չպիտի շեղուիմ նոցանից» (Մանսի 71, 679—683): Բայց գործավարք արդելեցին նորան խօսելու: Խօսքն այժմ նեստորականաց էր պատկանում: Դարիլէումի Եւսեբիոսն, որ զեռ Կ. Պոլսի 448 թուի ժողո-

վում հարցնում էր Եւսեբէսից՝ «խոստովանում ե՞ս երկու բնութեան գոյաւթիւնը նաև մարմնանալուց զինի», պատուաւոր տեղ էր բոնել: Սակայն գործավարաց ջանքն էր Նեստորի անունը հանել գործից. և իրաւ, Նեստորի հետեւողք իսկ, որոնք ատելի էին ժողովականաց աչքում, իւրեանց վարդապետի անունը քթի տակ նզովելով, փոշե փչեցին ամէնքի աչքերին: «Նեստոր» անունը նզովուեցաւ. այդ մէկ խոչընդակն հարթուեցաւ:

Բայց ժողովականք պնդում էին, որ ինքեանք ևս կիւրեղի պէս են հաւատում և ուրիշ բան չեն ուղում: Տումարականք տեսնելով իրերի վատ լնթացքն, ուղառնացին կայսրականաց՝ ժողովը թողնելու, եթէ տումարը յառաջ չբերուի: Կայսրականք ջանալով գործին լոիկ ելք տալ հրամայեցին եպիսկոպոսաց՝ զրով տալու իւրեանց զաւանանքն ըստ երեք ժողովոց՝ Նիկիոյ 325-ի, Պոլսի 381-ի և Եփեսոսի 431-ի և ըստ եկեղեցական հարց՝ Գրիգորի, Բարսեղի, Աթանասի, Հիլարիոսի, Ամբրոսիոսի և կիւրեղ Աղեքսանդրացու. ընդ նմին ձարպիկութեամբ աւելացրին, որ նամակ մի ևս ստացուած է Լէօփ ընդգէմ Եւսեբէսին (տումար): Վերջին կտը զրժգոհութիւն պատճառեց տումարականաց, որոնք ուղում էին տումարի անպայման հրատարակումն, ըստ որում Սեւաստոպոլի եպ. Կիլոտափիոս տումարէր. «Եւսեբէան ինդրի լուծումն արդէն տուած է Հռովմայ արքեպիսկոպոսից, զոր և նոքա տմէնքը ստորագրել են: Պորտ բաւարարութեան համաձայնում են ամէնքը»: Բայց ոչք էին այդ ստորագրողք. ոչք էին այդ ամէնքը. Հարցնող չկար: Հարկաւ կայսրականք չէին ուղում դորանով գործը վերջացնել, զի այդ մէկ նշան կիմնէր Լէօփ անկախ հեղինակութեան: Մինչդեռ Հռովմէտականք պատրելով էին ուղում տումարը ժողովականաց զլսին կտել կայսրականք տում էին որ դորանով բաւարական չեն, այլ ուղում են որ

բոլոր պատրիարքներն անձնիւր 1—2 եպիսկոպոսով ժողովուէին, հաւատքի վրայ խորչէն և հետեանքը զրով բերեն, որպէս զի տարակուսանքի տեղիք չլինի. Հասկանալի է թէ այդ ինչ ժողով և զրութիւն պիտի լինէին: Այդու հանդերձ հռովմէականներից Սարդէսի եպ. Ֆլորինցիոս նկատեց «յամենայն դէպս այդ ժողովը պիտի մի նոր դաւանանքի համար շատ ժամանակ ունենայ, սակայն ինքս ևս կարծում եմ, որ Լէօփ զրութիւնը բա՛ւ է»: Այս խօսքերն անլուր մնային: Կարդացին Նիկիականը, որից յիտոյ հռովմէականք գոչեցին՝ «այդպէս է ուսուցել կիւրեղն, այդ է դաւանում Լէօ»: Հապա երեան ելաւ յանկարծ մէկ նոր հաւատամք «Պոլսական» անոււամբ, որ իբր թէ կ. Պոլսի 318 ժողովումն է հաստատուել մէկ կողմից կիւրեղին և Լէօփն, միւս կողմից ոչ զոք չնզովելու և պետութեան հերձուածողաց հաշտեցնելու խնդիրն էր այս: Այդ մի փոփոխութիւն է Եպիփանոսի մասնաւոր հաւատամքի: Դորանով պիտի վերացնէին այն հակասութիւնն, որ ակներե էր Նիկիականի և ժողովի որոշելիք դաւանանքի մէջ: Մինչև 450 թիւը պատմիններից ոչ ոք չէ յիշում այդ իբր կ. Պոլսի հաւատամք¹: Ահաւասիկ այդ հաւատամքը.

Հաւատամք ի մի Աստուած հայր ամենակալ արարիչ երկնի և երկրի, ամենայն երեւելեաց և աներեւութից. և ի մի տէր Յիսուս Քրիստոս, Որդի Աստուծոյ միաձին, որ ի հօրէ ծնեալ յառաջ քան զամենայն յաւիտեանս. լոյս ի լուսոյ, Աստուած Ճշմարիտ յԱստուծոյ Ճշմարտէ, ծնեալ և ոչ արարեալ համազոյ հօր, որով ամենայն եղե. որ վասն մեր մարդկան և վասն մերոյ փրկութեան էջ յերկնից և մարմնացաւ ի հոգւցին սրբոյ

¹ Սոկրատ V, 8. Սոցոմ. VII, 7. 9. Թէոդորետ V, 8. Գրիգ. Նամ. 102:

և ի Մարիամայ կուսէն և մարդացաւ խաչեցաւ վասն մեր ընդ Պիղատոսիւ Պանցիոսի և չարչարեցաւ և թաղեցաւ և յարեաւ յերկիր տւուր, ըստ զրոց. և ել յերկինս և նստաւ ընդ աջմէ հօր և գայ միւս անդամ հանդերձ փառօք գատել զինդանիս և զմեռեալս, որոյ թագաւորութեանն վախճան ոչ լիցի: Եւ ի հոգին սուրբ, տէր և կենդանարար, որ ի հօրէ ելանէ, որ ընդ հօր և ընդ Որդւց երկրպագի և փառաւորի, որ խօսեցաւ մարգարէիւք: Ի մի սուրբ, ընդհանրական և առաքելական եկեղեցի: Խոստովանիմք մի մլրատութիւն ի թողութիւն մեղաց: Ակն ունիմք յարութեան մեռելոց և կենաց հանդերձելոյն յաւիտենից: Ամէն»¹:

Մեր նպատակից դուրս է քննել այս հաւատամքը. բաւ է նկատել որ այդ հաւատամքը Նիկիականից շատ հեռու է և թշնամանող: Այդ իսկ հաւատամքը կարդացուեցաւ և ոչ ոք չյիշեցրեց որ Պոլսի ժողովը հաւատամք չէ ունեցել: Այս էլ անցաւ: Կարդացին նաև կիւրեղի երկու զրութիւնք: Ըստ ոմանց (Մանսի. VI, 962) կարդացել են և տումարն, ընդ նմին իլլերիկումի և Պաղեստինի եպիսկոպոսք յայտնել են որ տումարի մէջ նեստորականութիւն կայ: Այս հարկաւ անդիւրեկան է եղել մանաւանդ երբ ոմանք ժամանակ են խնդրել՝ որ ժողովը տումարի վրայ հանդիսաւ խորհրդակցէ: Այս լսելով կայսրականք յանձնարարեցին Անաստիոսին ընտրել «պիտանիներին», որպէս զի սոքա առանձինն ուսուցանեն, խելքի բերեն տումարի նկատմամբ տարակուսողներին: Եպիսկոպոսներին ուսուցանելու... Այս սարսափեցրեց տարակուսողներին, ուստի և գոչում էին. «Ամէնքս էլ սխալուել ենք, ողորմեցէք ամէնքին. այս ասում ենք օրթոդոքս կայսեր. եկեղեցին երկպառակուել է» ևայլն: Եւ ահա կայսրականք ո-

¹ Տես. Hahn, Bibliothek der Symbale, § 73 և 75. Hort-հիետազօտութիւնն այդ հաւատամքի վրայ. ևայլն:

բոշուած յայտարարեցին որ մէկ յանձնաժողով գումար-
ուի դաւանանքն կազմելու համար. մասնաժողովի գլուխին
էր Անատոլիոս պատրիարք:

Φαղովականք օրստորէ սակաւանում էին. Գ. Նիստում 600 ժողովականներից ներկայ էին միայն շուրջ երկու հարիւրը: Բացակայ էին նաև կայսեր յանձնակատարք: Նիստը բացաւ է. Պոլսի սարկաւագ էտիոս. այս մայորդները հրաւիրեցին Դիոսկուրին, որ և հրաժարուեցաւ, ասելով որ կզայ եթէ կայսրական յանձնակատարք և միւս եպիսկոպոսք ներկայ լինեն: Նոքա թողեցին այդ ամէնք մի կողմ և սկսան յառաջ վարել Դիոսկուրի ամբաստանութիւնը. եպիսկոպոսները յարուցանում էին զգուելի գանգատներ փողոցային մանրամասնութեամբ. զատապարտեալը ներկայ չէր և դատապարտողք արխացել էին անդուռն բերանով յարձակուելու եկեղեցու այն մեծ հերոսի վրայ: Այս ինքնիշխան ամբաստանութիւնից յետոյ ժողովը գրեց առ Դիոսկուր՝ «առւրբ և մեծ և ընդհանուր ժողովն... առ Դիոսկուր: Ծանիր որ դու սրբազան կանոններն արհամարհելուզ և ժողովին ստունգանելուդ համար և որովհետեւ, բացի քո միւս պակասութիւններդ, ժողովի երիցս հրաւիրմանն չհետեւեցար, ի 13 հոկտեմբերով ժողովի սուրբ և ընդհանուր ժողովով պաշտօնանուեղած և ամենայն հոգեոր գործերից հեռացած ևս» (Մասսի. VI, 1038): Ժողովն այստեղ զգուշանում է Դիոսկուրին որ և ամբաստանութիւն գրել, բացի նորա անհնագանդութիւնը. սակայն դայն ժողովը յայտարարեց կայսեր, հաղար ու մէկ զբարտութիւնք բարդելով Դիօսկուրի վրայ:

Արդէն Դ. Նիստը զբաղեցաւ միայն գաւառնանքով։ Անատօլիս ջանացաւ Հին դաւանանքը կանգուն պահելու և երբ մասնաժողովի արդիւնքը բերաւ «յերկուց բնութեանց» մէկ բնութիւն (Մանսի VII, 97) հաստատելով,

Հռովմայ պատուիրակները սպառնացին հեռանալ. սակայն
յառաջ բերին և մէկ ձարտարարուեսող գտանագիր: Ժո-
ղովը չկամեցաւ այդ ընդունել, այս տեսնելով հռովմայ
պատուիրակները սկսան գոչել թէ ինքեանք ևս կիւրեղի
պէս են դաւանում, բայց երբ Պաղեստինի եպիսկոպոս Ա-
նանիստ տռաջարկեց նոյց այդ հրապարակով խօստովա-
նելու, նոքա զանց արին այդ ամենը: Չնայելով ստիպ-
ման, զոր գործ էին դնում եպիսկոպոսների վրայ, այդ
գաւանագիրը չընդունուեցաւ. բանն այնտեղ հաստ որ
սպառնացին ժողովը հտալիս վերատանելու. Եղիպատացիք
գոչում էին ողորմագին. «մենք կուզենայինք այստեղ ձեզ-
նից, քան թէ այնտեղ սպանուել. թող այժմ մի արք-
եպիսկոպոս նշանակուի Եղիպատոսում և ապա ստորա-
գրենք և ձայնակցենք ձեզ: Գթացէք մեր ալեռ զլխին:
Պօլսի Անատօլիոս զիտէ որ Եղիպատոսում ամենայն եպիս-
կոպոս պարտ է լսել Աղեքսանդրիոյ եպիսկոպոսին: Գթա-
ցէք մեղ մենք առաւել սիրով կմեռնենք կայսեր և ձեր
ձեռքից քան տանը. կուզեք վերցրէք մեր վիճակները»...
Այս խօսքերը պարզ ցցց են տալիս թէ ի՞նչ սարսափ
էր տիրում ժողովականաց. «զթացէք մեր ալեռ զլխին...
մենք առաւել սիրով կմեռնենք կայսեր և ձեր ձեռքից,
քան տանը», գոչում էին այն ծերունիները. ինչպիսի բռո-
նութիւններ էին գործ գնում, որ այդպիսի աղաջական
բացականչութեանց տեղիք էին տալիս... Սակայն ժողո-
վականաց ընդդիմազրութիւնն ուժգին էր. նոքա ընդու-
նեցան պատրիարքի զրութիւնը, հռովմէականից խոյս տա-
լով ըստ որում և բայցականչում էին: «ով սորան հա-
կաձառում է, նեստորական է. այդպիսիք կարող են չը-
ոռվմ գնալ»: Վճռական ճգնաժամ էր. սկսան եպիսկո-
պոսներին մի-մի առանձնացնել: Այդ ժամանակ Եւակեանք
ևս մէկ խնդրազիր մասուցել էին կայսեր յիշեցնելով՝ որ
քրիստոէնական եկեղեցին երկպառակուում էր և միայն հե-

թանոսք էին որ խաղաղութիւն էին վայելում. որ կայսրը պէտք է ժողովի ժամանակ եկեղեցականներին բռնահարելն ու սպատժելը, պաշտօնից զրկելը կամ ուժով ստորագրել տալն և այլն արգելէ (Մանսի VII, 66): Եւտիքեանք մերժեցին ամենայն ինչ, միայն նիկիան և եփեսոսն ընդունելով: Սոքա էին որ համարձակապէս ցոյց տուին անվայելու վիճակն, անարդար պատժումները, բռնութիւններն, զարոնք գործ էին զնում ժողովականաց վրայ նոր զաւանազիրը ստորագրելու համար, և միայն սոքա են լինում որ ժողովից չեն փախչում և ընդդիմակրում են մինչև վերջին վայրէեան:

Վերջապէս յայտարարեցին թէ հին հաւատալիքը պէտք է պահել յանձնաժողովի կազմած նոր բաց ատրութեան հետ, այլ և մէջ սպրագեցին կիւրեղի և էջօի զրութիւնք, իբր իրար համաձայն: Երբ այդ ամէնը ներկայ սակաւաթիւ ժողովականներին ստորագրել էին տալիս, բերին նաև եւտիքեանց մօտ, որոնց առաջնորդից պատասխան ստացան. «Ես մնում եմ նիկիականին հաւատարիմ. դուք կարող եք մեզ դատապարտել և աքսորել. արդէն Պօղոսն ասել է, ով «աւետարաննեսցէ ձեզ աւելի քան զոր աւետարաննեցաքն ձեզ, նզովեալ լիցի»¹. Եթէ եւտիքէս չէ հաւատում, որպէս ընդհանուր ժողովը, նզովեալ լինի»: Մատորագրութիւնը վերջացաւ:

Զ. Նիստին եկաւ նաև կայսրը Պօւլիսերիայի հետ ձեւականութեան համար և լսեց ժողովականներից ի հարուած էջօի եկեղեցապետական ձգումներին. «Կեցցէ Մարկիանոս, նորոգն Կոստանդիանոս, նորոգն Պօղոս, նորոգն Դաւիթ»... «Մարկիանոս Կոստանդիանոս է նորոգ, Պուլիսերիա նոր Հեղինէ»: Մարկիանոս հասել էր իւր փառաց կատարին, երբ լսեց բիւզանդական հնագարեան քաղաքակա-

նութեան Ճարտար արտայայտութիւնն իւր մէջ մարմնացած և առ ինքն ուղղեալ «զու ես քահանայապետ և կայսր միանգամայն, յաղթող ի սպատերազմի և վարդապետ հաւատատոց»²: Ահաւասիկ ամբողջ ժողովի գաղտնեաց Ճարտարախօս յայտարարը:

Կայսրը ձեռք բերաւ իւր ուղածը, սակայն միայն պարտամուրհակով, ըստ որում թանգ պիտի վճարէր յեաց. . .

Թէ քանի խախուտ էր Քաղիեգոնի զրութիւնն, երեսում է այն հրովարտակներից, որոնք հրատարակուեցան փետր. 7, մարտ. 13 և յուն. 28 452 թուին². Դոքա արգելում էին ամենայն վէճեր հաւատքի վրայ, որպէս զի չմատնուին գաղանիքները հրէից և հէթանոսաց. եւտիքեանք և ապօղինարեանք զրկուեցան հոգեորական ունենալուց, իսկ նոյա ժողով գումարելու և եկեղեցի շինելու իրաւունքը վերապահուեցաւ կայսեր, հակառակողի ունեցածը յարքունիս գրաւելու սպառնալեքով: Եւտիքեանք և Դիոսկուր աքսորուեցան: Էջօ բերկրանաց մէջ ծփալով գովիսաներ էր որ շռայլում էր Մարկիանոսի գլխին (Նամ. 104). Բայց այդ խաբուսիկ էր, շռւտով լսեց որ Պօլսի Յ-դ կանոնը կատարեալ ընդարձակութեամբ մտել է Քաղիեգոնի կանոնաց մէջ, որպէս 28-դ, զոր ջանացել էին Հռովմայ պատուիրակները խափանել ժողովի վերջին նիստում, սակայն անզօր էին գտնուել: Էջօ չէր կարող երազել, որ նորա խորտակել տուած Աղքասանդրից տեղ այժմ կ. Պօլիսը պիտի բարձրանար և առաւել վտանգաւոր զառնար իւր ակնկալութեանց: Նա խարիւ էր և խաբուած էր. ապաշաւեցաւ (Նամ. 100, 114. 115—117). Նա կարեց իւր յարաբերութիւնն Անատօլիոս

¹ Պոյն այդ սկզբունքն արտալալուեցաւ կոշտութեամբ ալդ իսկ ժողովի 17 կանոնում: ² Մանսի VII, 476. 477. 501.

պատրիարքից (Նամ. 119, 129) և դիմեց վերստին Աղքածանղրիայ և արևելք և յլշեցրեց որ պատրաստ է նոյս պաշտպանելու: Սակայն նորա նամակները չշահագրգռեցին նոյսա, զի ամենեքեան կատաղել էին տումարի դէմ:

Քաղկեդոնի ժողովս նոր խռովութիւն յարցոյ — չարտգոյն քան երբէք. նոյն կ. Պօլում, կայսեր քթի տակ բորբոքուեցան ուժին խլրումներ: Իւվենալ եպիսկոպոսը ստացել էր իւր հաւատագրժման հաստուցումն, եղուսաղէմի աթոռը. ժողովուրդը վտարանջեց և հալածեց նորան. վարիչն էր և Պետրոս եպիսկոպոսն Գաղայի, որին մտակից էր Եւղոկիա այրի կայսրուհին: Իւվենալ եկաւ Պօլիս օգնութիւն ինդրելու. Կօմէս Դօրօթէոս զօրքով մոտաւ Պաղեստին, կոտորեց արեղաներին, գուրս քշեց նորահաստատ պատրիարք Թէոդոսիոսին և արեան Ճահճում, անմեղ զիսակակցուի վրայ հաստատեց անօրէն Իւվենալին: Ասում են թէ տումարը բերել են Աքու Հերման ծերունու մօտ, որ և տարել է ս. հայրերի շիրիմներից Հարցրել, թէ ընդունելի է այն և ձայն մի դուրս է եկել գերեզմաններից. անիծուի անաստուած Լէօն, այդ հոգեգողն, որպէս իւր անունն է ցոյց տալիս. անիծուի նորա պիղծ տումարը. անիծուի Մարկիանոս և անաստուածն Պուլիսերիա, Քաղկեդոնն և նորա հաւատամբն և ամենեքեան. որոնք նորան հնագանդում են, անիծուի, ով ի Քրիստոս յՈրդին Աստուծոյ յետ միաւորութեան երկու բնութիւնն է խռովավանում (Renaudot hist. patr. 120). այս գեղեցիկ արտայայտութիւնն է ժողովովի տրամադրութեան: Խռովութիւնը շարունակուեցաւ անխափան մինչև 453 թիւը:

Առաւել սոսկալի էր Աղքածանղրիոյ խռովութիւնը: Ժողովուրդը չէր ուղում Ճանաչել կայսրահաստատ պատրիարք Պրօտերիոսին, որին դարձեալ օգնական ուղարկուեցաւ լորքը. սակայն կատաղած ամբոխը յարձակուեցաւ նորա

վրայ, վախցրեց ի Սրապիոն և հրզեհեց այդ տաճարն ի սարսափ արքունեաց (Եւաղը. II, 5): 2000 զինուոր ուղարկուեցաւ վերստին. Ֆլորուս կուսակալը կողոպտեց և բռնեց բոլոր հասարակական վայրերը կարեց ցորենի փոխագրութիւնը յԵղիպատոս, Անապարհը Պելուզիոն ձգելով: 454-ին մեռաւ քաջահաւատոն Դիոսկուր և իւր մահով իսկ ոգեսրեցրեց տղին: Կ. Պօլիսն ևս խռովեցաւ և Անատոլիոս անցաւ հակառակորդաց կողմէ այնպէս որ նոյն իսկ Լէօն գիմեց և զրդուց կայսեր (Նամ. 143) վճռաբար գործելու նորա դէմ: Պուլիսերիան մեռել էր 453-ին. Մարկիանոս ևս կառւելով յարիւն և յապաժոյժ հակաքալեգունականաց դէմ մեռել էր 27 յուն. 457-ին, թողնելով բոլոր տանջանքը յուսահատուած Լէօնի վրայ: Վերջինս գրգռեց (Նամ. 149, 150, 152) Լէօն կայսեր և նորա նախարարին Եղիպատոսը կարգի բերելու: Սյդ Ժամանակ Տիմոթէոս Էլուրոս, գահընկեց անելով Պրօտերիոսին, ինքն բարձրացաւ հաւատքի թշնամիներից վրէժինդիր լինելու. կրկին զօրք եկաւ օգնութեան. խռովութիւնն այնպէս սասակացաւ, որ Պրօտերիոս և արքանեակների հետ սպանուեցաւ եկեղեցու մէջ: Տիմոթէոս իւր բարեգործութիւններով զրաւեց ժողովովի մէրը (Մանսի VII, 524—), սակայն հակառակ կողմի 13 եպիսկոպոսաց չընդունելով, առիթ տուաւ նոյն՝ կայսեր զիմելու: Կայսրը մտածեց չարիքի առաջն առնելու համար ժողով գումարել, սակայն Անատոլիոս վախենալով արգէն հաստատած: 28 կանոնը վասնզի ենթարկելուց, խանգարեց այդ և խորհուրդ տուաւ հրամայել բոլոր նախակոպոսաց զրութեամբ յայտարարելու, թողնել Տիմոթէոսին պատրիարք, թէ ոչ: Տիմոթէոս մնաց պատրիարք: (Զաքարիա Հռետոր. IV, 5):

Լէօն սկսաւ գանգատուել Անատոլիոսի դէմ, որ իւր եղբայրն չէր գործում հակաքաղիկոնականաց դէմ և անուանեց նորան ժամավածառ (Նամ. 151, 155): Լէօն

շարունակեց թղթերով գրգռել կայսեր (Նամ. 148—152), սակայն վերջինս թողեց Կիւրեղեանց իշխելու: Գրեց քաղաքագիտութեամբ և ի հոռվմ Տիմոթէոսի պատրիարքութեան նկատմամբ, որին հովանաւորում էր արքունիքում Ասպար պատրիկը: Լէօ վարանում էր պատասխանելու: անցաւ մի տարի և ապա զրեց 2 նամակ 458-ին 17 օգոստ: իւր հաւատարիմ Դօմեցիանոս և Գեմինիանոսի հետ, յորդորելով պաշտօնանկ անել Տիմոթէոսին, պատժել «Հերետիկոսաց» և այլն: Կայսրն յդեց նորա թուղթը Տիմոթէոսին նորա կարծիքն ևս լսելու համար (Զաք. IV, 6. Եւազր. II, 10): Տիմոթէոս, այդ զարգացած և արի եկեղեցականը զրեց մէկ հրաշալի պատասխան հիմն ի վեր տապալելով հոռվմայ վարդապետութիւնը (Զաք. IV, 6): Այս նամակը ձգեց կայսեր վտանգաւոր զրութեան մէջ: Մեռաւ Անատոլիոս 458-ին և իրերի վիճակը կրկին փոխուեցաւ: Նորան յաջորդեց Գեննատիոս, բուռն քաղկեդոնականը (—471). Տիմոթէոս 459—460-ին զօրքով գահընկէց եղաւ և յաղթական երթով անցաւ Գանդրա, որտեղ մի ժամանակ Դիոսկուրն էր. Բերիւդոսում մէծ փառքով հանդիպեց նորան Սատթէոս եպիսկոպոսը: Գանդրայում շարունակեց իւր գործն, ուսաի և հեռացուեցաւ ի Քերսոն (Զաք. IV, 9. 10): Սակայն կայսրը մտախոհութեան մէջ էր. ամբողջ պետութեան մէջ խոռվութիւնը չէր խաղաղում թէ ձնշումն, թէ արեան նախճիրը չէին սաշատափեցնում հաւատքի հաւատարիմներին: Լւսն I մըտածում էր քաղկեդոնականութիւնը հիմնովին կործանել, որպէս ցցոյ նու տալիս նորա նամակները: Եղիպտացիք զրգուած իւրեանց պաշտած փառաւոր նախնեաց հաւատալիքի խափանումից, և Կ. Պոլսի պատրիարքի առաջնութեան վրայ, ձգաւմ էին անկախութեան: Պատիւլիսյի ժողովը զրեց կայսեր Քաղկեդոնի դէմ: առաքելով ձշմարիս հաւատալիքն և խորհուրդ տալով թողնել

Քաղկեդոնը միայն վէճի համար և ոչ ժողովուրդ ուսուցանելու (Մանսի V, 573—): Նշնպէս Բագելիոս 500 եպիսկոպոսաց ստորագրութեամբ նզովեց 476-ին Քաղկեդոնի ժողովն և այրեց նորա որոշումները:

Մեռաւ Լւսն 474-ին և աչա Բագելիոս կայսրն հրատարակեց իւր հաչակաւոր Էնկիլիոնը 476-ին, նզովեց Քաղկեդոնի ժողովը, Լէօի տումար և հակառակորդաց յառաջ քաշեց, Տիմոթէոսին և Անտիոքայ Պետրոս Ֆուլլոին կրկին գահ բարձրացնելով: Բայց Պոլսի պատրիարք Ակակիոսի (471—89) օգնութեամբ գահընկէց եղաւ Բագիլիսկոս, տեղն անցաւ 477 Ձևնոն: Իսկ Լէօ իւր մեծագործութեանց «վաստակը» չփայելեց. գոնէ այս չարիքները շաենելու բախտն ունեցաւ. նա մեռաւ յաւերի մէջ 461 թուին...: Նորա գործած չարիքները չփարեցան տանել նորա յաջորդները...: Զենոն հրատարակեց 482-ին հենողիկոն, որ խորտակեց Քաղկեդոնը, վերականգնեց Կիւրեղի 12 նզովքներն և վերստին հաստատեց Նիկիան: Այդ ժամանակ հոռվմայ Ֆելիքս II անարքեց հենողիկոնը և բանալիք Ակակիոսին, ըստ որում բաժնուեցան հին և նոր հոռվմը 484—519:

Միւս կողմից Աղեքսանդրիոյ Պետրոս Մանլոսի (483—90) յարտերութիւնը Ակակիոսի հետ կրկին սասակացրեց ատելութեամբ լի ժողովրդի խոռվութիւնն, որ շարունակուեցաւ. Անաստաս կայսեր ժամանակ ևս: Զօրապետ Վիտալիան բարձրացաւ Կիւրեղեանց օգնութեամբ կայսեր դէմ: Սակայն հոռվմայ միութիւն անհրաժեշտ էր. այդ միաբը սափակեց Յուստինեանոսին և Վիտալեանին Քաղկեդոնն ընդունելու. Կիւրեղեանց դէմ օգնելու եկան հոռվմայ պատրիարքներ, որոնք Ծնջեցին այդ հակառակորդաց անունները «սրբութիւնից» և սկսան 519 թուից փակել Աթէնքի, Անտիոքայ, Աղեքսանդրիոյ եկեղեցական դպրոցներն և ամենայն խուժագուժ միջոցներով ժողո-

վուրդը ձնշել: Այս յաջողեցաւ նոյտ, սակայն ձնշուած ժողովրդի բողոքը չբարձուեցաւ. հաւատարիմ ձայնը զեռ շարունակում էր հնչել տւերակաց և գերեզմանաց մեջ... Քաղկեդոնի ժողովը չտիրապետեց, զի Պօլսի եկեղեցականք անդամ զիտակ էին որ այդ ժողովը դաւաճանել էր ձշմարիտ հաւատոքին, ուստի զուրս ելաւ առաջին պոլաստիկոսը Ղեղնդիոս թիւղանդացին (485—543) և աշխատեցաւ իմաստակօրէն «անձն» և «բնութիւն» բառերը նցյնանիշ հրատարակել և համաձայնեցնել Քաղկեդոնը Կիւրեղի նղովքների հետ: Յուսահնիանոս ևս աշխատեցաւ թողնել իւր նախորդների անյաջող բանութիւնք և ձարտարութեամբ հին հաւատալիքը յառաջ քաշել: Նա հրաւիրեց զանազան կողմերը վիճաբանելու 531-ին, քննեց և հաստատեց թէ ժողովն դարձուածքով իմն, մի մարմնացեալ բնութիւն է խոստովանել. կեղծեցին նաև ժողովի արձանագրութեան մեջ «յերկու բնութիւնս» խօսքերը— «յերկուց բնութեանց» շնչելով, որ մնաց ցայժմ իսկ լատիներէն «in duabis naturis» իբր ապօղինարեաններից կեղծեալ յայտարարեցին (Մանսի VIII, 817—): Եւ ապա հրովարտակներ հանեց և զինքն Կիւրեղան հրատարակեց, առանց Քաղկեդոնի ժողովը վերացնելու: Կայսրուհին ևս սկսաւ բացարձակապէս պաշտպանել Կիւրեղեանց, ըստ որում նորա սենեակում աշխատում էին «երկիւզած վարդապետութեան» յաղթութեան օգնելու: Աշնուհեաև Կ. Պօլսի պատրիարք նշանակուեցաւ ջերմ Կիւրեղեան Սնթիմոս և արքունիք մտաւ Սևերոս, որոնց ջանքով լիովին ընկաւ Քաղկեդոնը: Արքունիքի գործունեութիւնն զարգացաւ այս ուղղութեամբ, որ նկատելի է մանաւանդ գարգացաւ այս ուղղութեամբ, որ նկատելի է մանաւանդ «որ խաչեցար»ի վէճի ժամանակ, ըստ որում չոռվմայ նուիրակները հակառակ էին զուրս եկել այդ խօսքերին, թէ այդպէս է յիրարկուած կտակարանում և ամենահին հայրերի գրուածներում: Հռովմայ հորմիզաս (514—23)

չուղեցաւ իւր նուիրակաց արածը մերժել, և սկսաւ կայսեր պահանջներից խոյս տալ, սակայն Յովհան I (—526) կատարեց Յուստինեանի պահանջն, ընդունելով այդ խօսքերի գործածութիւնը:

Բայց խաղաղութիւնը չէր վիճակուած Բիւզանդին. կրօնական հալածանքներն և կրտորածները պիտի շարունակուէին. նորա սուրը պիտի աւերէր եկեղեցիքը, վանքերն ու կուսանոցներն, այլադաւաններին ճանապարհ հարթելու համար... 536 թուին անձամբ եկաւ չոռվմայ Ազարեա պապասն, ջանացաւ և կարողացաւ Սնթիմոս պատրիարքին գահընկեց անել տալ և Կ. Պօլսի մի ժողովում հաստատեցին նոր պատրիարք Մեննասի նախագահութեամբ երկու բնութեանց վարդապետութիւնն, ընդ նմին և նղովեցին Սնթիմոսին և պետութեան խաղարարներին: Ի յիշատակ այս քաջագործութեան մնաց Ազարեա ի Կ. Պօլս († 536):

Սակայն 543-ին նղովեց հրովարտակով Թէոդորի, Թէոդորեաի և իբասի քաղկեդոնական գրութիւնք և այդ նղովքն ստորագրեցին ստիպեալ և պատրիարքներն՝ Պօլսի, Սնափառայ, Աղեքսանդրից և երուսաղէմի, նեղը ձգելով քաղկեդոնականաց: Նորա և յաջորդ կայսրների քաղաքականութիւնն էր Քաղկե. Ժողովը չնղովել, սակայն հին հաւատոքն իբր նորա վարդապետութիւն հրապարակել: Ուստի և խորվութիւնն այժմ ընդարձակուեցաւ քաղկեդոնականաց ընդդիմութեան ևս հանդիպելով¹: Այդ խորվութիւնը վերջ չունեցաւ մինչև Բիւզանդի անկումն: Այս թուուցիկ հայեացքը բաւարար ուրուագիծ մի է անվերջ իրարանցման պատմութեան:

¹ Բիւզանդեան 553-ի Ե-դ ժողովում ծերեց Յուստինեանոս Քաղկեդոնականութիւնն ի միքնութիւն վերածելով, և Հռովմայ պատերազմին հանդիպեց:

Ամփոփենք. Քաղկեդոնի ժողովը գումարուեցաւ ոչ
թէ դաւանական խնդրի առթիւ, այլ անձնական և քա-
ղաքական շահերից զրդուած, դի բնութեան խնդրիր վեր-
ջացած էր Եփսոսի 431 ժողովով և վերստին նոյն քա-
ղաքում 449-ին: Ժողով կազմով Մարկիանոսն էր—որ
ջանահար եղաւ Կ. Պօլիսը բարձրացնել, սակայն պետու-
թիւնն չպառակտել ժողովի գումարման հակառակ էր
հովմայ Լէօ I: Թէ ինչ և թէ ինչպէս պէտք է ժողովը
գործադրուէր, նախապէս ծրագրել էր կայսրը. որոշուած
էր հին և նոր վարդապետութիւնը յարակից հաստատել-
բայց զլուխ չկաւ. Հոռվմայ վարդապետութիւնը յառաջ
տարուեցաւ: Բոլոր հին եկեղեցականք Քրիստոսի մէջ մի
բնութիւն են քարողել. նոյն իսկ Լէօ I այլ բան չէ քա-
րողել, մինչեւ այն շահադիտական խնդրի յարուցուիլը:
Լէօի տումարը վարդապետում է նոյնն, ինչ որ նեստոր
գրել էր իւր վերջին նամակներում, այնպէս որ նեստոր
նղոփուելով, նղոփուում էր այն վարդապետութիւնը, զոր
նախ նա և ապա Լէօի տումարն է քարողել:

Ժողովում Դիօսկուր ուղղագաւառն պատրիարքին
նստեցրին դատապարտեալի նստարանի վրայ Հերետիկոս
նևատորականաց գանդատի պատրուակով, որ հակառակ էր
Քիուզանդական հին սովորութեանց: Դիօսկուր արքունի
ժողովից յաղթանակով էր դուրս եկել Քաղկեդոնում և
նորա գաղափարակիցները շատ էին, սակայն նորա ձայնը
խեղդեցին, առանց նորա ասածները հերքել կարենալոււ
Նորան վախեցնել ջանացին և ուղեցան մի այլ ժողովում,
որին ներկայ չեին արքունի ոստիկանք, բռնահարելու,
բայց յաջողութիւն չունեցան և ամբաստանեցին նորան
կայսեր առաջ, առանց Դիօսկուրի ներկայութեան: Եպիս-
կոպոսները ստիպուել էին նորան ամբաստանելու, իսկ երբ
չկարեցան ապացուցանել սկսան ստորաբար ներողութիւն
ինդրել: Ժողովը չուղեցաւ ներս թողնել նեստորականաց

սակայն կայսրականք վանխլացան նոյսա գովանները: Շատ խաբկանքների անյաջադութիւնից յետոյ, չլուեցին ժողովականաց խօսքին, որոնք պնդում էին Կիւրեղի նզովքները նորոգել և նոր բան չաւելացնել: Ժողովում կեղծեցին հին արձանագրութիւնք և հնարեցին մէկ նոր հաւատամք կ. Պօլախ ժողովի անունով: Տումարի ընթերցումը կասկած յարոյց և ընդունուեցաւ, որպէս նեստորամիտ գրութիւն: Կայսրականք սարսափեցրին կասկածող եպիսկոպոսներին, հրամայելով առանձնագէս նոցա խելքի բերել: Այնուհետեւ Անատօլիոս ջանացաւ հին վարդապետութիւնը ներա սպրգել բայց անյաջող: Հոռվմայ պատուիրակների սպառնալիքից վախեցած, յաւաջ բերին արգէն պատրաստ մի այլ զաւանագիր: Ժողովը չկամեցաւ այդ դաւանագիրն ընդունել, հոռվմեականք գոչեցին որ ինքետնք ևս դաւանում են Կիւրեղի նման, իսկ երբ նոցանից պահանջեցին այդ հրապարակագէս ասելու, նոքա խոյս տուին: Սակայն դաւանագիրը ստորագրել առուին եպիսկոպոսներին առանձին առանձին թէ բոնութեամք և թէ խոստումներով. ստորագրողք հագիւ թէ ժողովականաց չորրորդ մասը լինին: Տումարն ևս կցուեցաւ դաւանագրին, ընդ նմին և Կիւրեղի նզովներն, որ հակասական է: Կայսրը հանդիսացաւ միահեծան քահանայագետ և վարդապետ հաւատոց, իսկ կ. Պօլիսը բարձրացաւ հակառակ Լէօի ամենայն բաղձանաց: Թէ ժողովի գործը, թէ նորա վարդապետութիւնն ապահովուեցան կայսրական սրով: Սարսափելի հալածանքներ յարոյց կայսրն, որ տեեց մինչեւ Բիւզանդիոյ անկումն. այդ ժամանակի ընթացքում Բիւզանդիոյ կայսրներից շատերը ջանացին խափանել այդ ժողովը, սակայն չյաջողեցաւ. . . :

Ի վերջոյ եզրափակենք, դնելով այսակա-
ւոր դաւանագիտ Հարնակի խօսքերը.—«Խորտակուեցաւ,
ասում է նա, արևելեան եկեղեցու հաւատքը...» Բանին

Աստուծոյ Քրիստոսաբանութեան կաղմածքը փշրուեցաւ.
(Նեստորի) «Երկու անձինքն որոշապէս չնզովուեցաւ...
ոչ աստուածութիւնն է յինքն ձգել զմարդկութիւնն և
ոչ մարդկութիւնն է աստուածութեան վեհութեան բարձ-
րացուել, այլ պարզապէս անձի մէջ են, ըստ որում
մարդկային և աստուածային բնութիւնք միջնորդա-
բար միանում են մէկ անհատի մէջ։ Այդ ոչ մի երկիւ-
ղած հռոմէ՝ որ Աթանասի և Կիւրեղի դպրոցն է գնա-
ցել չեւ կարող որպէս իրաւացի միջինն ձանաչել. այդ
նոյն իսկ 433 թուի խառնաձելը չէր. այդ մէկ ժխտումն
էր Քրիստոսաբանական բանաձեն ըստ փրկչաբանութեան
խիստ զարգացնելուն։ Եւ հէնց այդ իսկ կազ է։ Եթէ
մարդկութիւնը Քրիստոսի մէջ աստուածացած չէ, այլ
նորա մէջ նորա մարդկութիւնը միայն անձի միջոցով
կապակցուած է, ի՞նչ արդիւնք կարող է այզպիսի կա-
պակցութիւնը մեզ համար ունենալ...։ Մերկ, բացասական
և որոշումները (անշփոթ, անբաժան և այլն) որոնցով
ասուելու է ամենայն ինչ, հիմնովին մոլար են ըստ զգաց-
մանց յունաց գասական աստուածաբանների։ Դոքա զըրկ-
ուած են ջերմ, թանձրացեալ բովանդակութիւնից. դոքա
այդ կամուրջն, որ հաւատացելոց հաւատն է, այդ կա-
մուրջն որ ձգուած է երկնից յերկինս, դարձնում են մէկ
գիծ, որ սղագըն է քան այն մազն, որի վրայով իալա-
մութեան խոստովանողք անզամ մի զրախտը գնալու յօյս
ունին։ Արդարեւ կարելի է ասել. քաղկեդոնականութիւնը
պահեց միայն նուազագոյն (minimūm) արևելքի պատմա-
կան այն հասողութեան, որ կար Քրիստոսի անձի նկատ-
մամբ, այնու՝ որ նա փրկազործութեան վարդապետու-
թեան հետեղութիւնք անհետացրեց, որով և սպառնա-
ցաւ աւետարանի Քրիստոսին լիովին աջնջացնել։ Իսկ հայ-
րերն, որոնք այդ դաւանանքն ընդունեցան, այդ չմտածե-
ցին—բանաղատուելու թուլութիւնն ունեցան,—բայց եթէ

մտածած լինէին, թանգազոյն կլինէր այն վճարը, զոր
նորա պյուլ համար վճարեցին։ վասն զի մէկ աստուածատ-
բանութիւն որ հիմնական հարցերում սոսկ բացասականի
վրայ է յենւում, ինքն ինքեան դատապարտում է։ Ան-
նպաստ է նաև ասել թէ ժողովը միայն խորհուրդը հաս-
տատեց և այդու ծառայութիւն մատոյց հոռոմոց եկեղե-
ցու և աստուածաբանութեան շահերին։ Ճշմարիտ խոր-
հուրդն երկու բնութեանց էական միութեան մէջ է և
եթ.... իսկական խորհուրդը յետ մղուեցաւ, մէկ կեղծ
խորհրդից...։ Իսկ այն դրութիւնն, որ հիմակ ուղղագա-
ւան պիտի համարուեր... մէկ անձն իրապէս երկու է
դարձնում, ըստ որում և ուրանում է հին հաւատը»։

1 Միքայէլ Մեծն պատմում է, որ Պետրոս եպիսկոպոս Գաղա-
ցին զբեց Հայոց. «Ի Քաղկեդոն ուրացան զՔրիստոս. դուք պինդ կա-
ցէք ի հալրենի հաւատոց՝ որ շնորհեցաւ ծեզ ի Տեառնէ և աշխարհիդ
ծեր. զի որպէս երեմն սերմն մարդկութեանս այդուստ սփռեցաւ ընդ
աշխարհ, նոյնպէս առ ծեզ պահեցաւ սերմն ուղղափառ հաւատոյ. և
ի ծէնջ տարածելոց է ընդ բազում։ Ողջ յերուք լանսասան վէմն
Քրիստոս, որդեակք իմ»։

զրա զյուշի մնաց զիսից հրաբուծի վիճակը նախառ
առաջ տասն թիվ դր մասի մեջըցաւի դաւաշ պար տղու
ժմանցաւցոց խառ նորդցուած մարմանից ու մայթիւնոց
մինչ և Առաջարկուար մանգան մզիլ մառմի, և պար
առաջ զբարչուոյ միամի պարան մի լուս մաս և առաջան
մքիմ զնառու բայուն մայթիւնուած արքու և զնառու
զույ ամբունեց սեփական մատենաւուած ու առաջ և զնառու
և մ զնի մատենացի մատու կ. բայունուած առքու մրգուէ
ճրդի թիվ ու արդուուն ամ, պայտաշու մարման ու մ
արարուար մատեն ու մատենաւու զու իւ և արդուուն

ՀԱՅԱՍՏԱՆԵԱՅՅՅ ԵԿԵՂԵՑԻՆ ՄԱՔԱՌՄԱՆ
ԴԱՇՏՈՒՄ.

«Հստ մեծի վնասուցն և մեծ ջանք
և աշխատութիւնը պիտուանան»:

Ա. ԳՐԻԳՈՐ ԼՈՒՍԱՀՈՐԴ.

Աենաց այն ընթացքն, զոր անցցրեց Հայաստանեայց եկեղեցին խրոխաւապանձ նահատակութեամբ, սոսկալի գարեր յիտ զլորելով, իւր զարկն ու լարում ստացել է Գրիգոր - Սահակիւան շրջանից, որ Հայոց եկեղեցու և ինքնազիտաստ Հայ աղզի 16 հարիւր ամեայ գոյութեան կենդանացուցիչ զարկերակն է: Այդ շրջանն է, որ հօգի տուաւ Հայոց, այդ շրջանն է, որ ոգեօրում էր Հային և այդ շրջանն է, որ պիտի մնուցանէ և կրթէ յաւիտաեան Շշմարիտ Հային: 449—450-ին Մազգէզն սպառնում էր Հայոց և ս. Սահակի անմահ հիտեօրդք՝ մահն աչքի առաջ՝ զրում էին իւրեանց հաւատոյ խոստափանութիւնն առ մոլի ալլքան, շեշտելով: « յայսմ հաւատոյ զմել ոչ ոք կարէ խախտել ոչ հրեշտակը և ոչ մարդիկ, ոչ սուր և ոչ հուր» (Եղ. 67), որ Հայոց եկեղեցու ախոյեանի անվեհէր հիմնաքարը դարձաւ: Աստ ևս զրօշմեցին Հայք այն

զիբքն, որի մէջ և եթ խրեանց գոյութիւնը պահել կարէնս. այդ այն խօսքն է, զոր զրում է ևպիսկոպոսաց ժողովն առ. Պարսիկներն. «Եթէ սովին հաւատովք թողուս, ոչ յերկրի այլ տէր փոխանակեմք ընդ քեզ, և ոչ յերկինս այլ Աստուած փոխանակեմք ընդ Յիսուսի Քրիստոսի». Միմիայն Պարսիկ իշխանութեան տակ էին հաւատում ապահովութիւն գտնել. այսչափ էին խրամառել նորա անցեալ պատմութիւնից: Այս չհասկացաւ Յաղիրտ և Վարձեց:

Ըստ Հայոց պատմութեան անխոռասափելի էր և հայոց միակ աղքանքն էր Աստուածանից որ իրագործուած տեսնեն իւրեանց բաղձանքն, որ էր. «յօրում սկսաք, ի նմին և կատարեացուք քաջութեամբ, և ոչ վատութեամբ» (Եղ. 150): Յուսահատութիւն չկար, վասն զի գիտեին «զի ոչ եթէ ընդ մարդոյ է ուխտ հաւատոց մերոց, եթէ պատրիշիմք իրեւ զազայս, այլ անլուծութեամբ ընդ Աստուծոյ, որում չիք հնար քականել և ի բաց ելանել» (68): Վասնորոշյ և նոցա նշանաբանն էր. «ոչ պատրիմք իրեւ զազայս, և ոչ մոլորիմք իրեւ զանտեղեակս, և ոչ խաբիմք իրեւ զադէտս, այլ պատրաստ եմք ամենայն փորձութեանց» (150): Դիտեին հայոց եկեղեցու յաւիտենականութեան զիմաց իւրեանց անցաւորութիւնը. զիտեին թէ ինչպիսի հաւատարմութեամբ էր որ նախնիք փառք ժառանգեցին, ըստ որում և խոստովանում էին՝ «չեմք ինչ լաւ մեք քան զառաջինսն, որ յայսր վկայութեան վերայ եղին զինչս և զառայուածս և զմարմինս իւրեանց» (67): Եւ ի հաստատութիւն իւրեանց այս յաւիտենական սկզբանց՝ զիմապրաւեցին՝ փառաւորապէս զոհաբերելով իւրեանց անձն Աւարայրի գաշտում: Ընկան զինավառ զինուորաց շարքի մեջ զիտենական վարդապետք պատերազմի գաշտում և իւրեանց զինակից հոգեհրաշ եղիշեի զրչի տակ քանոդակեցին այն գաղափարք, որոնց հա-

մար քաջապէս մեռան և յաղթապանծ ոլացան նախնեաց և գողը:

Մազդէզն ընկճուեցաւ հայաստանեայց եկեղեցու վեհութեան առաջ, թէպէտ և «անարին» և «անաստուածն» Մարիկիանոս, որպէս ասում է Եղիշէ, հայոց անկումն էր նիւթում: Անցաւոր թշնամիք կարէին այո՛ կարձամտաց և ինքնազրուժ ժամաբոյցներին լքութիւն պատճառել և ի կորուստ մատնել, սակայն հայաստանեայց եկեղեցու վեհութիւնն և հայ ազգի փառքն յաւիտինականութեան վրայ է հիմնադրուած և նոցա պահակք են աղնիւ և աստուածային հոգիք: Դարեր շարունակ պիտի փշրուէին զարդարուն խեցեր, հայաստանեայց եկեղեցու անշուք ժայռերին ընդհարուելով, և այդ ընդհարումն պիտի նորա որդոց խելամուտ անէր օտարի խարդաւանաց և խարէութեանց: Ներսէս-Սահակեան գլորոցն ուսոյց հայաստանեայց եկեղեցու գաւթում հայկեան որդոց և պարզեց նոցա այն ցաւերն, զորոնք կրեցին Բիւզանդի մախանքներից և ահա Վահանն Մամիկոնեան դրաւ իւր յշյն իւր սրի վրայ, լաւ ձանաչելով «զթուլութիւնն և զիսաբէութիւնն Յունաց» «թէ որպէս նախնեաց մերոց ու խտեցին երդմամբ և ստեցին» (Փարպ. ԿԶ. 362). վասնորոյ ընկաւ Վարդան արեան գաշտում և բարձրացաւ յաղթաբար՝ ձապաղեաց շեղակոյտի վրայ՝ նորա զուգակիցն Վահան իւր սակաւաձեռն քաջերով: Եյդ երեսնամեայ պատերազմի շրջանը կնքեց հրաշախօսն Յովհանն Մանդակունի (469—479 տեղակալ 479+487) իւր ոսկեղրոշմ խօսերով առ իւր հօտն. «եկեղեցւոյ սիրիչք, առաքելոցն որդիք, Քրիստոսի արեան զինք, մի՛ ծառայեցուցանէք զոգիս ձեր երկիւղի մարդկան. տուք զկայսերն կայսեր, և զԱստուծոյն՝ Աստուծոյ: Եեկեղեցիս օրհնեցէք զԱստուած և զտէր յաղբերացն իսրայէլի: Ահա սիրեցէք զեկեղեցիս, և սիրեցայք յեկեղեցւոյ. զթագաւորս՝ քաղցրացոյց եկեղեցի, զգազանս

ընտելացելոյց, զգայլս՝ գառինս արար, զքեղ պայծառացոյց, զթշնամիս Ճշմարտութեան ամաչեցոյց» (Փար. 551):

Հայաստանեայց եկեղեցին հանգիստ շունչ մի առաւ և սկսաւ իւր պայծառութեան աշխատիլ: Արդէն երբ ս. Սահակի մահից զինի Բ. թարգմանիչք դարձան, որբ նկատեցին ինքեանց, բայց չվհատուեցան հալածանաց մէջ. ողբացին այո՛. «՞Ու այսուհետեւ զմերս յարդեսցէ զուսումն, ՞Ով ուրախասցի ընդ առաջադիմութիւն աշակերտիս, ՞Ով գհայրականն բարբառեցի գուարծութիւն, մասսամբ յաղթահարեալ յորդւոյս»: սակայն առայժմեայ էր այս ողբն և պարտաւորացումն գործունէութեան, առ որ և քաջալերուում էին խրախոյս ձայնն իներքուստ լսելով. «բայց զոհութիւն զարդարողին զնոսա, Աստուծոյ հոգւոյն. զի թէպէտ և մարմնով հրաժարեցին ի մէնջ, այլ իմաստութեամբ հոգւոյն առ մեզ են: Թէպէտ և քաջ սերմանողքն նեցեցին, այլ սերմանեալն ի նոցանէ ինքնին բերէ զպտուղն ըստ բանին Տեառն մերոց թիսուսի: Թէպէտ և ի տեսութեանց մերոց անջատացան, այլ անտրոհ աղօթիւքն առ մեզ են» (Խոր. III, ԿԲ. և Կարինեանի ուղղագր.): Նոցա նմանիլ, նոցա շաւզով ընթանալն էր իւրեանց երախտագիտութիւնն և սկսիանքն: Գրչով խորտակեց սուրբ ամոլ իւր ահեղագցն թշնամցն և ահա սոքա ևս գրչով պիտի գլորէին թշնամու գիտումները՝ դէպի մահուան խորխորապ վարելով: Եւ ահա ժամանակի հերձուածք ու հերետիկոսութիւնք հրապարակական աղբիւսի վրայ նետուեցան Մամբէի, Մովսէսի, Դաւիթ Անյաղթի, Եղիշէի, Եղնիկի և այլոց երկաթէ թիսկներով: Ճշմարտութեան ուսուցումն—այս էր Ե. գարու իմաստուն վարդապետաց ջանքն ու Ճիզը. ժողովրդին ճանաչեցնել հայաստանեայց եկեղեցու վարդապետութեան էութիւնը հակընդէմ ամենայն մոլորութեան, այս էր նոցա սրբազան ինդիրը, վասն զի հայն անպատճառ պիտի միրէ

իւր ազգն ու և կեղեցին, եթէ ձանաչէ նոցա ձշմարտապէս: Աւանիկ քոջազբէն Եղիսիկ արշաւումէ մինչև թշնամու սիրում՝ եզելով խաւարտչին աղանդները: Ահա և Գիւտ (459 — 479) «լուսաւորապէս ունուցանէր բովանդակ ժամովագոց. որոյ բանք իւր նման յորդառատ անձը բեի զամենայն լուղի ծաղկեցնեցեալ պաղաքերէր զողիս» (Փարսկ. ԿԲ.): Աւանիկ և Անյաղթն Դաւիթ փառաբանում է խաչն ու խաչեցեալն ըստ Հրամանին այդ վեհախրծանակեալ հայրապետին «զի բարձրի հերեսիուսաց հերձուածն, և խլեսի յագարակաց փուշք, և որո՞ն սատանայական սերմանց, որ ի մարդ յուսան և ոչ յԱստուած»: Ահա և մուամմէն Եղիշէ, վերաբանելով Քրիստոսի մարդեղութիւնը պատմական ձախրի մեջ տապալում է Հակառակորդաց երկաբանութիւնը շեշտելով. «յարութիւն էր մարդոյ և Աստուածոյ. մարդոյ ըստ բնութեան, Աստուածոյ ըստ տարաբնութեան. և երկոյունց միացելոյ՝ ոչ ես այնուշեաւ երկու թուին, այլ միական գոյականին»: (Ճառք. 306): Աստ զեղազբոյն Մամբրէ անձրեւում է իւր շանթերը հակառակորդաց վրայ և ոգեսրուած իւր վարդապետութեան ձշմարտութեամբ, զոչում է առ նեստոր և առ նորա աշակերտն քաղկեդոնական. «ամաչեամ թէոդորիտոն, մի՛ ամբանար զաշսդ յերիխոս, նեստորիոս, քանզի կոյր աշօք էք ի միաբանութենէ ա, երրորդութեանն. վասն կորստեան ձերոյ միաբանեցէք պատմել զամօթալից վարդապետութիւն: Ոմն, ասեն, կարդայ՝ և ոմն լուէ. ոմն աղաչէ և ոմն աղաչ, ոմն խանդաղատի, և զօմն ի խանդաղատանա ածէ...» (Ճառք. 50.): Բայց մեր Հրաշաբանը զնում է և իւր գատակնիքն արևմտեան բոլոր խառնվութեանց վրայ, վերաձայնելով. «ընդ անբաւելի մեզօք անկեալ այնոքիկ նի՛ որիք յանբաժանելի բնութիւն բաժինս արկանեն. իբրև անդ ոչ են ձեռնհաս առնել խռովութիւն, ինքեանիք յանձինս իւրեանց խռովեալ տագ-

նապին, ի մարդկանէ հայկոյին և յԱստուածոյ դատապարտին և ջնջին ի դպրութենէ կենաց» (51, 71.): Անդ ազգային և աստուածային դործունէութեան մէջ լեզուի և գրչի աշխատանքից դագար չառնելով հանգերճ, պայքարատենչն Մովակս Խորենացի՝ արածով չե շատանում և ասպարիզի կարօտով ողբում է. «այժմ մարտք ի ներքուստ և արհաւեիրք արտաքուստ. արհաւեիրք ի հեթանոսաց և մարտք ի հերձուածողաց, և խորհրդականն չէ ի միջի՝ որ խրատէր և յարդարէր ի պատերազմ»:

Բայց հերիք, չերկարաբանենք. սակայն յիշելով պիտի յիշել թարգմանչաց զլուխ զործոյն, որպէս համայնական աշխատութիւն՝ այն բաղմավաստակ զրուածքն, որ գարել շարունակ հայոց վարդապետաց ջատագովական սեղանի զարդն է կաղմել զրութիւն մի, որի մեջ ջանքով ժաղովուած են քրիստոնէական եկեղեցեաց առաքելական հայրերի խօսքերն ի հաստատութիւն հայաստանեաց եկեղեցու հաւատոց առանձական խնդիրների — «վկայութիւնք վասն ողղափառ հաւատոց» կամ պարզաբետ «վիրք վկայութեանց»¹, որից յարաժամ օգտուել են հայոց եկեղեցականք կոռուպտանական յաղթական հանդիսում:

Եւ ի՞նչ սկզբունքով էին առաջնորդւում այս մեծաջան գործոց նուիրեալ անմահ թարգմանիչք և նոցտ վառակից ժառանգները: Ինքեանք իսկ թող պատասխաննեն: Եթէ մի կողմից հիմնաքար է եղել քրիստոնէական ազատամատութեան մի դաղափար՝ «զի՞նչ պէտք են խընդրել և բանակախւ լինել. հաւատալն է օգտակար և պաշտեն և երկրպագել լռութեամբ.» միւս կողմից զպացել են բարոյական կենսազին պարտիք մի ձշմարտութեան ամբութեան աշխատիլ որպէս ասում էին առ հակառա-

¹ Մատենադարան ս. Էջմիածնի № 1945. երկաթագիր - մագաղամ: Օրինակը առ J. B. C. Pitra, Anal. Sacra. P. IV.

կորդք՝ «Եթէ զցանկ հարցն ոչ էիք պատառեալ և բաժանեալ զմի Տէրն՝ և զ՞րիստոս և զԱստութեամբ ընդդէմ ամրութիւն ցանկոյ և փականս պիտոյ էր զնել զի և վասն ախտից գեղք» (Ասող. III, իԳ.): Այդ անմատչելի փականքներով և տոչորիչ տեղերով հարուստ էր Հայաստանեայց եկեղեցին և պատրաստ՝ հիմն ի վեր տապալելու թշնամու հոգեկորուստ մոլորութիւնք և ախտերը:

Հայոց այս քաջարի գործունէութիւնն օրէցօր զօրանում էր, քանի աճում էր թշնամու խարդաւանանքը: Ե. գարու Բ. կիսում Հայաստանը լիապէս պաշարուած էր հերձուածողներով. մէկ՝ Եղեսիայումն էր նեստորականութիւնն եռում նեստորի մոլի աշակերտ իբասի († 457) ուսուցմամբ, որ Քաղկ. ժողովում արդարացաւ և վերստին իւր վիճակն ստացաւ իրեւ ջերմ քաղկեդրնական. մէկ՝ բազմիցս յիշուած՝ հռչակաւոր Թէոդորէտն էր, հաստատուելով ի Կիւրոս Եփրատի վրայ, իւր եռանգուն դպրոցով խոռվութեան կրակը վառ պահում († 457). մէկ՝ Մծբինի կատաղի եպիսկոպոսն Բարսումա (435+489) արիւնըուշտ մաքառմամբ հնձում էր Պարսից տէրութեան, մանաւանդ ասորի քրիստոնէից, և նցն իսկ Հայաստանի հեռաւոր անկիւններին սպառնում: Եւ ի՞նչ էր գոյա գործունէութիւնը: Ապականել ամբողջ արևելքն և, որպէս գրում է ականատեսն Յակոբ Սրճեցին շուրջ 515 († 521), 45 տարի շարունակ նիւթում էին այդ մախողք, թարգմանելով երկրաբանութեան հիմնադիր Դիոգորի († 394) գրուածները խաղաղ ժողովրդի մէջ խառնակութիւն ձգելու համար: Դիոգոր, Թէոդորոս Մոպսուէստացի († 428) և նեստոր յարաժամ նիւթ էին տալիս թէ Բարսումայի նեստորապաշտ դպրոցին և թէ Թէոդորէտի և իբասի քաղկեդրնական ձեմարանին, Անտիոքայ անընդհատ հոսանքի տակ աճելով: Չնայելով որ

Հայ իշխանաց սայրասուր թրերը պաշտպան էին թէ Մազդեզանց և թէ զոյա յարձակմանց գէմ այնու հանդիր էր ժամանակն և պահանջը մեծ: Ժողովուրդը սոսկում էր օտար վարդապետութեան դիմաց և կասկածանօք էր նայում նցն իսկ առ այն վարդապետք, որոնք արևմուտքում էին ուսել: Բիւզանդ տարուբերում էր. մերթ ընկնում էր Քաղկեդոն և մերթ բարձրանում, մերթ նզովում էր ի հռչակս աշխարհի և մերթ օրհնաբանում արևմուտքի անկեանց մէջ: Աղեքսանդրիան - Կապաղով կիան հռչակաւոր գպրոցն, որի հաւատարիմ պահակներ էին Կոպտերն, Հայք և Ասորիք, սարսեցնում էր կայսրներին: Հալածուեցան Կոպտերը, Հալածուեցան Ասորիք, Հայք ապահով էին քաղաքականապէս և շուտով իւր բեանց կազզուրիչ ձայնը լսեցին Հալածուող եղեաց:

Երբ մոգերը վռնդուեցան և Յովհան Մանդակունու օրհնութիւնն իջաւ Հայոց վրայ, պատերազմի համար ապրող և արեան նախձիրի վրայ, վինուորաց շաբքում կաքաւող այդ ս. Հայրապետին հետեւեցաւ քաջաբազուկն Բարփէն (487+492), որ իսկոյն արծուի աչքերով զիտեց Հայաստանի շուրջն և վճռեց Ճշմարառութեան ձայնն «ի վերայ լերինն բարձու հռչակել, լուղներին խրախուսել և խուլերին լսեցնել: 488-ին գումարեց Վաղարշապատի ս. ժողովն Աղուանից Շուփհաղեց և Վրաց Գաբրիէլ կաթուղիկոսաց աջակցութեամբ, եղծեց ու զեղծեց քաղկեդրնականաց վարդապետութիւնը, խստիւ հրամացեց ժողովրդին ոչ մի հազրդակցութիւն չունենալ նորուր ժողովրդին ոչ մի հազրդակցութիւն չունենալ նոցա հետ՝ ոչ բարեկամութիւն անել և ոչ ազօթել, բայց միայն զնել ինչ և կամ զնոց տալ՝ որպէս ընդ Հրէից:» Երեք երկրների բազմաթիւ եպիսկոպոսք ստորագրութեամբ և երդմամբ պարտաւորուեցան հաստատ մնալ յաւիանան այդ ուխտին, ըստ որում այդ ուխտագրութիւնը պահանջելում էր Հայոց Վեհարանում ի յիշխատակ այդ սիրադոր-

Ճռւթեան (Աւե. 80, 86, 136, Մովս. Կազանկ. Ա, Խէ.):
Ըստ երեսյթին ասա պրոշեցին «որ խաչեցարն» աւելաց-
նել սրբասացութեան ի հաստատութիւն իւրեանց հա-
ւատոց¹:

Հարկաւ այս մեծ գործ էր և անհրաժեշտ եթէ ժա-
մանակի իրերի վիճակն ու հետեղ պատմութիւնն ի նկատ
առնենք: Աստուածային Շշմարտութիւն է, որ կրօնական
իրերում անհնար է անխստապահանջ կամ զիջող լինել.
աստուածային են հաւատալիք ու եկեղեցական տնօրի-
նութիւնք, աստուածային-անանցական պիտի լինին, վասն-
որյ և աստուածային արթնութեամբ պիտի պահպանուին
և յարգուին, ապա թէ ոչ կիորդնեն իւրեանց էութիւնն
և կարեւորութիւնն: Այդ է պատառն, որ հայք ոչ մի
զոհաբերութիւնից չեն խուսափել, եթէ բանը հաւատա-
լեց և եկեղեցուն է վեբաբերել որոնց զրկում կրթուել՝
մնուել՝ պաշտպանուել են: Նոքա հասուն խստութեամբ
են վարուել ոչ միայն ամենամեծ, այլ նոյն իսկ արտա-
քուստ աննշան երեցող խնդիրներում, զի եկեղեցական
հարցերում մեծ և փոքրի, ծանր ու թեթեի խարութիւն
չէ եղել և չկարէ լինել: Սակայն Վաղարշապատի ս. Ժո-
ղովը հիմնական մի խնդրի հետ գործ ունէր, որ կազմում
է քրիստոնէութեան ուղեղն ու ծուծն, առանց որի ձըշ-
մարտութեան քրիստոնեան դադարում է քրիստոնեայ լինե-
լուց և որի առաքելական անփոփոխ դաւանութեամբ
մարդս փրկուիլ կարէ: Շշմարիտ է, հայստանեայց եկե-
ղեցին ժառանգական աղատամատութեամբ քարոզող է իւր
սկզբունքի՝ թէ ամենայն ազգ կարէ փրկուիլ, որպէս ու-
ղում է, սակայն բնաւ խոյս չէ տուել վատարար իւր
պարտաւորութիւնից՝ իւր հաւատարիմ որոյց քարոզե-
լու՝ որ հայն փրկուելու է ս. Գրիգորի, ս. Խոտակէսի,

¹ Տես. Վարք ս. Սարալի. Գլ. 32 (առ Կոտելերիոսի):

ս. Վրթանէսի, ս. Յուսիկի, ս. Ներսէսի, ս. Սահակի և
նոցա անմահ ժառանգների հետ, նոցա հաւատալիքն իսկ
լաւարի ինքնազիտաստութեամբ գաւանելով. այս է եղել
Հայոց 16,00 ամեայ սրբագործուած սկզբունքն, որ պիտի
պատմութեամբ մեզ ներկայնայ:

Պահ մի պարզենք այդ խնդիրը: Արդէն տեսել ենք
որ Հայոց հակառակորդք քարոզել էին սկսել ի Քրիստոս
երկու բնութիւնն ի մի անձն, երկու կամք և երկու ներ-
գործութիւնն: Մէկ է տնձնաւորութիւնն, այսինք մէկ է
Յիսուս Քրիստոս՝ միջնորդն Աստուծոյ և մարդկան, սա-
սայն երկու են նորա կամքերն, մէկն աստուածային բնու-
թեան և միւսն մարդկային բնութեան, երկու են նաև
ներգործութիւնք, մէկ աստուածային բնութիւնից և միւսն
մարդկայինից. ըստ որում հրաշք է գործում Քրիստոսի
աստուածային բնութիւնն ու կամքն, իսկ քաղցում է,
ծարաւում է, թքուում անարգուում է նորա մարդկային
բնութիւնը. կենզանի է մնում և յառնում նորա աստ-
ուածային բնութիւնն, իսկ չարչարուում է, խաչում է,
մեռնում է, թաղուում է նորա մարդկային բնութիւնը:
Ուրեմն գործողք տարբեր են և երկու են, միայն թէ
աստուածային բնութիւնն, որպէս հզօրազոյնն իշխումէ
մարդկայինին, որպէս տկարագոյնին վրայ: Եւ քանի որ
մէկ անձն է Քրիստոս, մէկ Քրիստոս Յիսուս է, այդ պատ-
ճառով ասւում է թէ Քրիստոս հրաշք գործեց, Քրիս-
տոս Աստուած է, Քրիստոս մարդ է, Քրիստոս մեռաւ,
Քրիստոս չարչարուեցաւ և այլն, ըստ որում ոչ թէ Քրիս-
տոս Աստուածն է չարչարուում, խաչում, թաղուում, մեռ-
նում, այլ Քրիստոս մարդը. նաև ոչ թէ Քրիստոս մարդն
է հրաշք գործում, բժշկում, յառնում, այլ Քրիստոս
Աստուածը, միայն թէ այդ աստուածութիւնն և մարդ-
կութիւնն կապակցեալ մէկ անձնաւորութիւն են կազ-
մում: Բնդ սմին երկու բնութիւնք մնում են Քրիստոսի

անձի մշ անշփոթ և անբաժան: Այսպէս են դաւանում
չայոց հակառակորդք:

Այժմ հետեւաբանենք տեսնենք, ի՞նչ է դուրս գալիս:

1. Եթէ իւրաքանչիւր բնութիւն կամեցող ներդործող
է ըստ ինքեան, ուրեմն անձնաւորութիւն է, զի անանձնա-
ւոր բնութիւնը չէ կարող գործել ուստի և երկու անձն
կայ ի Քրիստոս. որ չարաչար նեստորականութիւն է:

2. Բանն Աստուած՝ այսինքն աստուածութեան մի
անձնաւորութիւնը՝ մարդացաւ, անփոխիս մնալով: Եթէ
Քրիստոսի մարդկային բնութիւնն անձնաւորութիւն չէ,
ուրեմն Քրիստոս անշատար մարդկութիւն ունի: Որ և
հին հերետիոսկութիւն է:

3. Եթէ մարդկային բնութիւնն անձնաւորութիւն է,
պարզ է որ կամ պիտի սուզուեր աստուածութեան մշ,
որ եւտիքականութիւն է. կամ պիտի յարակցուեր նորա
հետ մէկ երրորդ անձնաւորութեան մշ, ուրեմն Քրիստոս
երկը անձնաւորութիւն ունի, որ կլինի պսակաւոր նես-
տորականութիւն:

4. Եթէ Քրիստոսի անձնաւորութիւնն աստուածա-
յին է, որպէս այժմ ասում են, որ 2-դ կէտի լրացուցիչ
հետեւութիւնն է, ուրեմն մարդկութիւնը սուզուել է նորա
մշ և սոսկ աստուածութիւնը չարչարուել է խաչի վրայ.
այս ևս պսակաւոր եւտիքականութիւն է:

5. Տուսկ հապա, աստուածային բնութիւնն ոչ մի
փոփոխութեան չէ ինթարկել զմարդկայինն, այլ զայն
ծառայեցնում է ինքեան, որպէս զմեքենայ: Այդպիսով
Քրիստոսի անձն ոչ թէ միութիւն իմն է, այլ երկու տար-
որոշ բնութեանց կապակցութիւնն: Բանն Աստուած չէ
իւրացնում մարդկային բնութիւնն և իւր զգայարանը
գարձնում, այլ իւրաքանչիւր բնութիւնն մնում է յին-
քեան, պահելով իւր գոյակերպութիւնը: Աստուածու-
թիւնն յինքն չէ ձգել զմարդկութիւնն և մարդկութիւնը

չէ վերամբարձել աստուածային բարձրութեան, այլ եր-
կուքն ևս պարզապէս մնացել են Քրիստոսի անձնաւորու-
թեան մշ, այսինքն՝ աստուածային և մարդկային բնու-
թիւնը կապակցուել են միջնորդով՝ Քրիստոս անշատի
մշ: Այս այսպէս լինելով և վերեկի հետեւութիւնը ձրշ-
մարտելով, ձգում է այդպէս հաւատացողին զանազան
տատամասումների մշ և լքեցնում: Եթէ Քրիստոս երկու
բնութիւն ունի, և չարչարուողն, խաչուողը, մեռնողը
նորա մարդկային բնութիւնն է, իսկ հրաշագործողը, փա-
ռաւորուողը, յառնողը նորա աստուածային բնութիւնն
է, ուր է մնում այլ ևս Քրիստոսի մեծագործութիւնն.
ուր է մնում նորա աստուածային զմութիւնն առ մար-
դիկ: Զիջաւ Աստուած և չխօնարհուեցաւ, ուրեմն չքարձ-
րացրեց մեզ չմարդացաւ Աստուած և մեզանից մինը չե-
ղաւ, ուրեմն չաստուածացրեց մեզ չմիացաւ Աստուած
մարդուն հետ էապէս և երկինք չտարաւ նորան, ուրեմն
չփրկեց մեզ: Եթէ նա չմարդացաւ և որպէս Ճշմարիտ և
միագոյ աստուածամարդ չարչարանք և մահ յանձն չառաւ,
այլ ևս ի՞նչ մեծ բան է, եթէ մարդ մի չարչարուեցաւ
և զոհուեցաւ իւր զաղափարի համար, որպէս Պօղոս,
Յովհաննէս, Բարդուղիմոս ևայն. միթէ սոսկական մար-
դու մահը կարէ տպատել իւր նմանեաց. Եթէ այդպէս է,
ուրեմն ամենայն նահատակ պիտի պաշտուի, որպէս փրս-
կիչ և ամենայն մարդ կարէ Փրկիչ - Քրիստոս դառնալ:
Իսկ եթէ մարդկայինն ինքնազոյ բնութիւնն մի ծառայել է
աստուածային տնօրինութեան իբրև մեքենայ՝ Յիսուս
անշատի մշ, ուրեմն աննպատակ էր և խաղ բանին
Աստուածոյ աշխարհագորդ մարդանալը, վասնորոյ և մար-
դաղաւանն են, ոյք Յիսուսի մշ մարդկայինն ինքնազոյ
բնութիւնն մի երկրապատում են:

Բայց տակաւին այլ է վարդապետում հայտատա-
նեայց ա. եկեղեցին ի սկզբանէ մինչեւ ցայսօր: Նա ուսու-
չայ. եկեղեց և բիոգ ժողով պար.

ցանում է «անձառ միութիւն ի Քրիստոս», այսինքն ըստ ամենայնի միութիւն՝ մի բնութիւն, մի կամք, մի ներդործութիւն, մի անձն, մի դէմք: Թէ հայոց հաւատամբն և թէ հայոց եկեղեցու ս. հայրերն, այն է մինչեւ Ե. գարու վերջն, որպէս տեսանք ևս, այդ են քարոզում: Նոցա Եւ յենւում հաւատարմութեամբ և մնացեալ դարերի հայոց հայրապետներն, որպէս պիտի տեսնենք:

Բայց յառաջաբերենք քանի մի վկայութիւնք ի լրումն վերնոց: Հայաստանեայց եկեղեցու առաքելական հայրն ս. Գրիգոր Լուսաւորիչ ասում է. «Զի որ ի մարմինն հաւատացին՝ ծանոյց նոցա զաստուածութիւնն իւր. և որք ի մարմնոյն գթեցին, ուրացան զբնութիւն նորա: Քանզի միացաւ ի մարմնի բնութեամբ, և խառնեաց զմարմինն ընդ իւր աստուածութիւնն» (Ազաթ. Լէ. տես. և լթ. Խ. ԿԱ. ՀԶ. ՀԵ.):

«Եյլ և ինքն իսկ Տէրն փառաց որ ամենայն զօրութեանց և զօրաց արարիչ է և պարզեիւ յորժամ կամեցաւ ցուցանել զաներեցիթ սէր իւր առ ազգս մարզկան, որ չարչարելին էր և վշտառին, որ աշխատելին էր. և նովին հոգւով միաւորեալ առ Աստուած բանն՝ մատորն և բանաւորն, խառնեալ ի մարմին ըստ աւետարանական Բանին, զի «Բանն մարմին եղև և բնակեաց ի մեղ...» «Զգեցաւ զնոյն մարմին և զհողի, և խառնեաց ընդ աստուածութիւն իւր յաղազս անբաւ սիրոյն իւրոյ, և զամենայն կիրս մարդկայինս կրեաց բաց ի մեղաց» (Յաճախ. Էջ. 147. 190. տէս. և 148. 16.):

Ս. Գ. Լուսաւորչի ասածներին յար և նման երգւում է հայաստանեայց եկեղեցում, Մոփ. Խոր. շարականի մէջ. «Ծնար ի կուսէ անձառ միութիւն, անբաժանելի և միշտ դոլով ոչ մեկնեցար ի հայրական ծոցոյ» (Կան. ծն. Քսի. և. աւուր.):

Առօրեայ խոստովանութեան մէջ ևս ամենայն հայ

կրիսում է. «Եղեւ Աստուածն կատարեալ՝ մարդ կատարեալ. հոգւով և մոոք և մարմնով. մի անձն, մի դէմք և միաւորեալ մի բնութիւն» (Ժամագիրք.):

449 թուի Արտաշատի եպիսկոպոսական ս. ժողովը գրում է. «Եւ որ արար զաշխարհս, նոյն եկն և ծնաւ ի ս. կուսէն. . . էր Աստուած Ճշմարտիւ, և եղեւ մարդ Ճշմարտիւ. ոչ ի լինելն մարդ՝ կործյս զաստուածութիւնն, և ոչ ի կալ մնալ Աստուած՝ աղաւադեաց զմարդկութիւնն. այլ նոյն և մի: Եյլ քանզի ոչ կարէաք տեսանել զանախանելին և մերձենալ յանմերձենալին, եկն եմուտ ընդ մերով մարդկութեամբս, զի և մեք մտցուք ընդ նորա աստուածութեամբն: Ոչ անարդանս ինչ համարեցաւ զգենուլ զիւր ստեղծուած մարմինս, այլ մեծարեաց իբրև զաստուածաստեղծ զիւր գործ: Ոչ առ ստկաւ սակաւ շնորհեաց ինչ սմա զանմահութեան պատիւն, իբրև զանմարմին հրեշտակաց, այլ միանգամայն զբուռ բնութիւնն մարմնով՝ շնչով և հոգւով զգեցաւ, և միաբանեաց ընդ աստուածութեանն. միութիւն, և ոչ երկուութիւն. և այսուհետեւ մի զիտիմք զաստուածութիւնն. որ յառաջ էր քան զաշխարհս, նոյն և այսօր» (Եղիշէ. 64—65):

Պէտքից աւելի եղան այս հիմնական պիտառութիւնք. ամփոփենք հայաստանեայց եկեղեցու վարդապետութիւնը Քրիստոսի բնութեան վրայ: Բանն Աստուած իջնելով կոյսի արգանզը, թանձրացաւ, մարմնացաւ, մարդացաւ և ծնաւ աստուածամորդ, այսինքն՝ Աստուած կատարեալ, նոյն ինքն՝ մարդ կատարեալ ըստ որում և խոստովանում ենք ի Քրիստոս, մի աստուածմարդկային բնութիւն, մի աստուածմարդկային աղատ կամք: Աստուածմարդկային բնութիւն է այն, որ յերկուց է, յորում կայ որ ինչ աստուածային է, կայ որ ինչ մարդկային է, դոցա ոչ մէկի վրայ իրապէս չկարէ առանձինն խօսք լի-

նել այլ խօսւում է այդ միաւորութեան վրայ: Ըստ նմին բանն Աստուած մարդանալով չայլայլուեցաւ, այլ «զոր էրն՝ ոչ ի բաց թողլով, եղեւ զոր ոչն էր:» Բանն Աստուած իջներով ի մարդկութիւն, չփակուեցաւ, զի նա անբովանդակելի է. չանարգուեցաւ, այլ «մնալով ի բարձրութեան, գտաւ նոյն ինքն ի խոնարհութեան:» Բայց քանի որ Քրիստոս ներկայանում է իւր գործունէութեամբ երբեմն որպէս կատարեալ մարդ և երբեմն որպէս կատարեալ Աստուած, ուստի նա կատարեալ մարդ է և միանգամայն կատարեալ Աստուած: Զորոր. Հրացեալ երկաթը սոսկ հուր չէ, այլ երկաթ է, ըստ որում և լոկ երկաթ չէ. հուրն և երկաթն ոչ որոշում են իրարից և ոչ շփոթում են իրար հետ. ոչ հուր է իւր յատկութիւնն երկաթին տալիս, ինքն զըկուելով, և ոչ երկաթն է իւր յատկութիւնը հրին տալիս, ինքն սպառուելով, այլ երկուքն էլ մնում են միանին միաւորուած հրերկաթի մէջ: Հուրը կերպաւորում է զերկաթը և երկաթը տեսակառում է զհուրն: Գործն ևս ոչ սոսկ մէկննն է, այլ միաւորութեանն, որ և ծեծուօղն է և ոչ թէ հուրն, որ անշօշափելի է. միայն թէ հուրը մաքրում է զառւմ երկութը ժանգից և աղնուսացնում:

Նմանապէս և Քրիստոս. նորա աստուածմարդկային բնութիւնն է զործող. նա եթէ ուզում է, զգալապէս յասած է քաշում իւր մարդկութիւնն, իսկ եթէ ոչ, յետ է քաշում զայն իւր աստուածութեան տեղի տալիս, մինչ զործն պատկանում է ոչ Բանին պարզապէս և ոչ մարդկային բնութեան սոսկապէս, այլ միաւորութեան: Նոյն այդ աստուածամարդը քաղցեցաւ, ծարաւեցաւ, հրաշագործեց, բուժեց, չարչարուեցաւ, խաչուեցաւ, մեռաւ, յարեաւ: Խաչուեցաւ, մեռաւ որպէս մարդ, զի այդ մարդուն է յատուկ, ըստ որում Աստուած անչարչարելի է. իսկ հրաշագործեց, յարեաւ իւր կամքով, որպէս Աստուած:

զի այդ Աստուածոյ է միայն կարելի: Մեռաւ որպէս մարդ իւր հոգին փշելով, սակայն նա կենդանի էր, որպէս Աստուած: Ինքն անչարչարելի էր, բայց զիթութեամբ բաղմաշարչարելի եղաւ:

Եւ ինչո՞ւ այսպէս: Զի նա եկաւ մեզ վրկելու համար. մարդն մեղսագործ էր. Աղամայ անհնազանդութիւնը բաժանել էր մարդուն Աստուածանից և գժոխքի որդի զարձրել եկաւ բանն Աստուած, իջաւ յանարգութիւն, բռնեց մոլորեալ մարդուն, զրկեց, ողջագուրեց, միացաւ նորա հետ և Աստուած մնալով՝ մարդ եղաւ, ապականացու մարմինն անապականացրեց և որպէս մարդ ապելով, ապրեցաւ որպէս Աստուած, աղամ մեղքերից և ակամայ և անգոսնելիս կըքերից: Տուաւ զինքն մարդու փրկութեան համար, ըստ որում կրեց ամենայն չարչարնք, որի սկիզբն էր իւր մարդանալը. խաչուեցաւ և մեռաւ մեզ համար և յառնելով որպէս աստուածամարդ՝ բարձրացաւ իւր վեհութեան, յորում միշտ էր, որպէս Աստուած: Իսկապէս միանալով մարդուն հետ, եղաւ ձշմարկա միջնորդ, որով վերսախն միացանք Աստուածոյ հետ: Ինքն Աստուածոյ որդի էր ծննդեամբ, մենք Աստուածոյ որպիք գարձանք՝ որգեզրութեամբ: Ինքն իջաւ յանարգութիւն մարդկային բնութեան հետ միանալով, մենք ևս բարձրացանք նորա շնորհեալ համարձակութեամբ առաստուածութիւնն ձախրելով: Ինքն էապէս անչարչարելի, սակայն ի սէր իւր որբոց իբրև մարդ չարչարուեցաւ, մնալով անչարչարելի: Ինքն չարչարուելու պէտք չունէր, բայց կրեց մեր չարչարանքն մեր թուլութեամբ և կամքով, ըստ որում և իրաւապէս փրկեց մեզ՝ ըստ մեզ՝ մեր գատապարտութեան մշտական չարչարանքից: Ինքն իջաւ յերկիր և մենք տարուեցանք յերկինս: Ինքն անմաշ է և մեռաւ, մենք մեռեալ էինք և անմաշացանք: Ինքն Աստուած է և մարդացաւ, մենք մարդ էինք՝ աստ-

ուածայանք: Ընդ սմին աստուածային գթութիւնն ան-
չափ է. մենք այս անցաւոր երկրում, ստկայն ջրով ի
հոգին սուրբ սրբուելով, Քրիստոսի շաւզով ընթանալով,
շնորհօքն նորա, իւր մարմնոյ և արեան հաղորդուելով,
նորա Շմարիտ համայնքում ապրելով, որին պարզեց է
ս. Հոգու ներկայութիւնը, մեր պատկերն անարդող մեղ-
քերից զղջալով և հեռանալով, քրիստոսաբար մեր եղ-
բարց հետ վարուելով, ենք և կլինենք երկնքում, որպէս
աստուածամարդն Քրիստոս Աստուած երկնքումն է:

4

«Մտերիմ կ քաջասիրտ հաւատով զա-
նարժան իրս հալածել և արժանաւոր
օգտիւր զշահմն ժողովել, ուստի անոն
քաշութեան և պարծանաց յերկրի թո-
ղուլ:»

ԳՐ. ԼՈՒՍԱՀՈՐԻՉ.

Լաւ ըմբանելով հայաստանեայց եկեղեցու այդ խընդրի մ.ծութիւնն, կզգանք նորա հռչակաւոր նահատակների մեծափառութիւնն, որով անմահացան հայրապետք, անբաժան իւրեանց եպիսկոպոսներից, վարդապետներից, իշխաններից և ամենայն ժողովրդականներից։ Եյդ ուխտ էր համօրէն, ուխտ էր ազգային, բայց և համաշխարհային, զի ոյք իւրեանց հետ չէին, հակառակ էին, ոյք հակառակ չէին, իւրեանց հետ էին լինելու։ Երեք ազգերի այս մեծագործութեան ձայնը հասաւ Ասորոց, որոնք Բարսումայի անօրէնութիւնների գիմաց սատար և սփոփանք հայցեցին Քրիստուկիոր Ա-ից (515—?), յիշեցնելով առաքելական խօսքը՝ «դուք որ կարող եք, զտկարութիւն առկարացն բարձէք», լսու որում և հայոց կաթուղիկոսն, որին պատմիչը փիլիսոփայ է կոչում, թղթեր գրեց քաջալերեց (Թովմ. Արծ. II, բ. Միք. Մեծ. 313.), բայց Ներսէս Բ. Աշտարակեցու (545—556) օրով Ասորէք կրկին օգնութիւն հայցեցին հայոց աթոռից։ Թէ ինչպիսի ջերմառանզութեամբ էին վերաբերում առ այդ առաքելական ս. աթոռն, երեսում է թղթերի հասցէից, որ է

այս. «լաւաց, ծշմարտից և աստուածամիրաց հռվուաց արդարոց և հարանց հոգեորաց, որ էք լըս աշխարհի և սիւնք հաւատոյց քարողիչք արդարութեան և աշակերաք առաքելոց, ընկերք սրբոց և բարեկամք արդարոց, սիրելիք Քրիստոսի և պահապանք խաչին նորա, Տէր ներսէս...» նոքա բազմաթիւ ստորագրութիւններով նկարագրեցին ուղղափառութեան համար իւրեանց կրտք նեղութիւնք, ապաւինելով Հայոց «յետ Աստուծոյ»: Ուղարկեցին և Սարեբայ վանքի երեց Սբդիսցին, եպիսկոպոսական ձեռնադրութիւն խնդրելով: Ներսէս Բ. հրաւիրեց 551-ի Դւնայ մեծ ժողովն՝ Մովսէս Խորենացու հռչակաւոր աշակերտ Պետրոս Սիւնեաց միարապօլտի, Մամիկոնեանց Սբրահմամ եպիսկոպոսի յաջորդ ներշապուհի և նորընծայ «Ասորոց ուղղափառաց եպիսկոպոսի» Հետ, բազմաթիւ եպիսկոպոսաց և իշխանաց միաձայնութեամբ ջրեց ու մրեց թշնամեաց վարդապետութիւնք. նզովեցին Քաղկեդոնն և երկու բնութիւն ասուղներին և հաստատեցին «մի բնութիւն բանին մարմնացելոյ.» ընդ նմին և եպիսկոպոսաց և իշխանաց «ասանութէրաց և ազատաց և համօքն ժողովրդականաց» ստորագրութեամբ ու խաչեցին ամենայն ոյժով ընդդիմազրել երկաբնակներին, մաքառել նոցա դէմ և այլն: Եւ որպէս զի բնաւ Հոռոմներին չկարոտին, վերացրին նաև նոցա թուարկութիւնն և կարգեցին Հայոց եկեղեցական թուականը: «Հաստատեցին» և «որ խաչեցարն» որպէս կատարեալ ամիտիումն փրկագործութեան և կրկնութիւն Հայոց հաւատամքին: Ապա Հայոց այդ մեծ հովիւն զրեց և քաջալերեց Ասորոց չվհատիլ ո. գործում, ընդ նմին անվեհեր մաքառման ողի ներշնչեց իւր եկեղեցու հաւատարիմների սիրտը ¹:

¹ Զարբ. Պատ. հայ. տա. 1886. 398. Նախն. Թարգ. 272. լոյն պատմէս մի ժամանակակից Combefis, hist. monoth. Paris 1648, 272. Աս. II, Բ. Օրբել. հԱ. ԿԸ. Վարդան Լ. տես. և Ցուշիկ. Բ. 311:

Մինչդեռ քաղկեդոնականք մտած խառնակում էին երկրի մթին անկիւնները, մանաւանդ Սիւնեաց, Վրաց և Աղուանից կողմը, Յովհաննէս կաթողիկոսը († 572—73) թղթով հրամայեց Սիւնեաց Վրթանէս եպիսկոպոսին և Սիւն Սրաւաշիր իշխանին նզովել և մերժել հերձուածողաց և բնաւ հազորդ զինել նոցա, զի նոքա ևն «պղուրիչք եկեղեցւոյն Քրիստոսի յայժմու ժամանակիս յամենայն տեղիս»: Սակայն և պատուիրեց, որ ով գառնայ և զնեսաոր, զթէուրիխոս և զթագկեղոն զրութեամբ նզովէ «ամենայն կամզք իւրովք» ընդունել ապաշխարութեամբ, զի «զուան ողորմութեան Աստուծոյ խոստավանողաց և ապաշխարողաց հանապազ բաց է» (Կաղանկ. III, ԻԳ. Օրբ. ԻԲ. Կիր. 113. Յոյն պատմ.): Սցին այս զգուշութեան ազագաւ զրեց մէկ նամակ ևս Աղուանից Սբաս կաթուղիկոսին, յորդորեց արթուն մնալ հերձուածողներից անմնաս կենալու համար, ընդ նմին պատուիրեց յզել Յ եպիսկոպոս առ ինքն յուստոնիլ ուղղափառ վարդապետութեան, «զի մի՛ ոք կորիցէ ի հովուաց կամ ի հօաից:» Սբաս ժողովեց իւր վիճակի եպիսկոպոսք և «յոյժ քննութիւն առնելով», «հալածեաց ի տանէն Աղուանից զվարդապետ կրօնին այնմիկ՝ զթովմասն և զեղիսյն և զբնուան և զիբաս և զայլս ընդ նոսին զնմանոցս նոցին արարտարբնակ ի հեռաւոր վայրս» (Կաղանկ. II, Է.):

Մինչդեռ Հայք զբաղուած էին եկեղեցական ներքին գործոց, հա՛ փրթաւ Պարսից կտաղրութիւնը Հայոց քայ, զի Խոսրով Անուշըռուան տեսնելով որ Բիւզանդ քրիստոնեայ իմն գոլով հալածում էր միւս քրիստոնեայ աղպաց, խելքի բերուեցաւ մոգերի ջանքով և սկսաւ բրիչ զնել Հայոց եկեղեցու շօշափելի պարիսպների տակ: Ելաւ հրաման և մոգերը զիմեցին ի Դուբին կրակատուն շինելու. Հայք զայրացան, ահսնելով որ իւրեանց մարմնաւոր հնազանդութիւնն ի չարն էր գործադրում և ահա ձայն

բարձրացրին. «Քրիստոնեայք մեք և ծառայք արքայից արքայի, այլ յիրա հաւաառ մարդոյ ումեք լսելոչ կարեմք»... և երբ Պարսիկները բանութեան դիմեցին, ժողովուեցան քանի մի հազար քաջիր Վարդան բդեշխի տաանորդութեամբ և 571-ին ջարգեցին Պարսից, սպանեցին Սուրէն մարզպանին և խոյս տալով դէպի արեմուաք, Բիւզանդի օգնութիւնը խնդրեցին: Նոյն միջոցին մահը յափշտակեց Յովհաննէս կաթուզիկոսին և Դւնայ արեան նախճիրի վրայ աթօռ բարձրացաւ Մովսէս անվեհիր հայրապետը: Պարսիկները գեռ քանի մի տարի կուուի ձականներ յարգարեցին հայտ-յունական զօրաց դէմ և հուսի ապա Խոսրով կենաց վերջում նկատեց Հայոց հաստատամութիւնն և յնցուելով քրիստոնեայ մլրատուցաւ (?). Նո ազատութիւն տուաւ Հայոց, ասելով իւր հօր կաւատի նման, «իւրաքանչիւր ոք զիւր հաւաաս կալցի, և զչայս նեղել ոք մի իշխեացէ, ամենեքին մեր ծառայք են, մարմնով մեզ ծառայեացին. քասն հոգւոցն, որ զհողին դատէ՝ նո դիտէ» (Սեր. Ա. Բ. Յով. Եփես. II, 19. 20... Յովհ. ԿԹ. ԺԶ. Ասող. II, Բ. և այլք):

Մովսէս կարգի բերաւ Հայ-տումարը Տարոնի Աթանաս եպիսկոպոսի ջանքով (Յովհ. Մամ. 8. Յով. ԿԹ. ԺԶ): Նա երկար չաշխատեցաւ եկեղեցու բարեզարդութեան, զի նոր հալածանք մի էր սպասում նորան: Իրերի վիճակը շուտով փոխուեցաւ քաղաքական հանգամանաց ներքոյ, որից կախուած է ազգերի բախսն, ըստ դէպից օգտուելու իմաստութեան: Երբ Պարսից Որմիզդն 579-ին սպանուեցաւ, նորա անշափահաս յաջորդն Խոսրով Ապուրուէզ օգնութիւն հայցեց իւր թշնամի Մօրիկ կայսրից, ընդգէմ իւր ապստամբ Վահրամ զօրավարին: Վահրամ Խորհուրդ տուաւ Հայոց միանալ իւր հետ և զդուշացրեց նոցա՝ որ երկու հարեան ազգերի բարեկամութիւնը կլինի Հայոց համար անբախտութիւն: Մակայն չհաւատացին,

թէե Յունաց և Պարսից բարեկամութիւնը Դ. դարում ևս մեծ թշուառութիւն բերաւ Արշակունեաց զլիսին: Մօրիկ օգնեց. հայա-յունական զօրքը միացաւ Պարսից հետ և Մուշեղ Մամիկոննէանի մասնակցութեամբ ջարդեց Վահրամին: Խոսրով ապաՀովուեցաւ: Հայաստանի մեծ մասը մնաց Մօրիկի ձեռքը: Տփխիս, Գառնի, Ազատ գետ, Մասիս, Առեստն տւան, Վան ծով, Բնձաքիսար, Մծրին, սահման գարձան: Ապա Մօրիկ ձեռք տուաւ Խոսրովին և առաջարկեց իւր մասի Հայոց դէպի արեւելք տանելու, իսկ ինքն իւր մասինը—Թրակիա, որպէս զի Հայաստանը ամէջ անդից բարձութիւն: Ինքն ևս սկսաւ այդպէս պանդիխտեցնել Հայոց. կողոպտելով զիւղերն, սահմանմէր Կիպրոս գաղթել (Սեր. Զ. Յովհ. Եփես. VI, 15. 34). Խաչու խաչուառով հանդիպող Հայոց «լրբութեամբ ընկենութիւնն ի զիան ի գետին, և մերկացուցանէին զեկեղեցականն և զաշխարհականն սպանանէին և զերէին, և զհաւատաւոր կուսանան խայտառակէին. և զզինդս կանացն ականջօքն կորպէին, և ի չկարելն հանել զապարանջանն զձեռուն կտրէին և կորպէին, և այլ բազում չարիս գործէին. և առեալ տաւր՝ դարձան ուրախութեամբ որպէս ի մեծ յաղթութենէ» (Միք. մեծ. 274), այսինքն Ճիշտ այնպէս էին վարւում Հայոց հետ, որպէս Ասորոց և Կոպտերի, որոնց չարչարանաց նկարագրութիւնք մարդու փշաբաղեցնում են: Կայսրների աշխատանքն է եղել հպատակ ազգերին դաւանակից պահել զիւրաւի մի ձուլելու համար, և երբ օրըստօրէ վիհ և տնդունդ բացուեցաւ նոցա և Յունաց մէջ, դիմեցին զէնքի ոյժի: Խակ Հայք քանի որ Պարսից իշխանութեան ներքոյ էին, խաղաղ էին և ապահով, անցաւ Մօրիկի իշխանութեան տակ թէ չէ, ինքն ըստ ինքեան ընկան Ասորոց և Կոպտերի բախտի մէջ: Բիւզանդ, որ առաջ ուխտելով, օգնութիւն խոստանալով Հայոց, վատաբար յետ էր քաշւում և նոցա

Պարսից սրի տակ թողնում, այժմ սկսաւ բացերես ընաբարձ անել իշխանական ցեղեր և հայաստանն անհայաբնակ անել: Մօրիկ ձեռք մեկնեց և հայոց եկեղեցու դէմ, երբ մարմնաւոր հաւատարմութեամբ առ կայսրն հռչակուած իշխան Մուշեղ Մամիկոնեան՝ հաւատոյ գործում հաւատարիմ մնաց միայն իւր եկեղեցուն և խորշեց կայսեր հետ հաղորդուելու, յիշեցրեց նորան ընդ նմին, արգարապէս «Ճշմարտութիւնը հայոց վարդապետաց մօտ որոնելու:» Մօրիկ իսկոյն կոչեց Մովսէս կաթուղիկիոսին, հարկաւ ոչ թէ Ճշմարտութիւնն ուստանելու, այլ բոնահարելով իւր կամքի ոյժը Մուշեղին ցոյց տալու: Սակայն վեհախրսիս հայրապետ պատասխանում է. «քաւ լիցի ինձ ընդ գետն Ազատ անցյանել կամ զթիւեալն ի փռան ուտել, կամ ի ջերմոյ արբենալ» (Յոյն պատմ.): Զայրացաւ Մօրիկ, հրաման հանեց Քաղկ. ժողովն հայոց եկեղեցիներում քարոզել, երկպառակեցրեց իւր բաժնի հայ եկեղեցականաց և նոցա անջատելու և թուլացնելու համար, Դւնայ դիմաց Աւան գիւղում մէկ հակաթոռ կաթուղիկոս դրաւ, Յովհան եպիսկոպոսին¹, «որ այր Ճշմարիս և արգար էր և առաքինի ի վարս, և բնաւ ոչինչ շեղեալ զինի քաղկեդոնականաց ազանդիցն, սակայն հակաթոռ դոլով՝ յերկուս հատուածս ճեղքեալ լինէր միաստարը միութիւն հայրապետական աթոռոյն» (Յովհ. կաթող. Ժէ): Սյս շատ վնասեց հայոց, սկսուեցան վէճեր գահերիցութեան վրայ, որից անշուշտ հետեւեցաւ և Վրաց անջատուիլը հայաստանեայց եկեղեցու դաւանտեկութիւնից և դաշնակցութիւնից:

¹ Սեբ. Թօ. Յոյն պատմ. Կաղանկ. II, ԽԶ. ԽԸ. Ուխտն. ԼԲ. ՀԵ. Կալլի:

Թ.

«Մեր՝ որպէս ընկալաքն երկրպագութեամբ պատուել զա. երրորդութիւնն, առանց թերահաւատութեան ունիմք և կալցուք մինչև յափտեան, խորշելով յամենալն եղօրէ, որ յասմ ստահակից:» ԱԿՐԱՑԱՄ ԿԱԹՈՒՂԻԿՈՍ.

Վրաց բաժանումը հայոց եկեղեցուց խմբուեցաւ սակաւ առ սակաւ, սակայն նրբութեամբ: Բիւղանգայիք գործում էին շարունակ հայաստանեայց եկեղեցու գէմ: մէկ կողմից հալածելով, միւս կողմից ներքին կոխներ յարուցանելով: Եկեղեցականաց այս ու այն կողմ քաշքառ ելը սովորական էր, զի սունութեամբ մոլորեցնեն ու ազատամութեամբ ապաշխարողին ընդունելը հակարութիւնք էին հայոց և հոռոմոց եկեղեցիներում: Այզպիսի վիճակում զժուարին պիտի լինէր սրտով դարձողն ու ծպահեալ կեղծաւորն որոշել իրարից, և այդ էր որ յաձախ անելանելի էր անում իրերի զրութիւնը: Այզպիսի մի հանգամանքի հետեանք էր և հայոց և Վրաց յարաբերութեան կծուիլը (Ուխ. II.): Ոմն կիւրոն, ձուլուած քաղկեդոնական գաղափարներով, կրթուած Բիւղանգական

գպրոյում, գալով Մովսէս կաթուղիկոսի մօտ, զիմակաւորուեցաւ և ընդունուեցաւ Հայոց եկեղեցու գիրկը: Հապա խնդիր բարձրացաւ Վրաց կաթուղիկոսութեան. սովորաբար Վրաց եկեղեցին, օրպէս մէկ ձիւղ և եղբայր Հայաստանեայց եկեղեցու, իւր ընտրեալ կաթուղիկոսք հաստատել էր տալիս Հայոց աթոռին: Հայք իւրեանց բնածին ազատամտութեամբ բնաւ չեն ձգտում բռնանալ Վրաց վրայ, այլ ընդհակառակն միջոց էին տալիս նոցաինքնուրոյնութեան զարգանալուն: Երկու այդ երկրների դրացիութիւնը, ժողովրդի ազգակցութիւնը, մշատական շահակցութիւնը, պատերազմական աջակցութեան կարեռութիւնն և բարեկամական խնամութիւնն միացած էին պահում այդ երկու ազգերին: Այդ խառն ժամանակ իշխանաց մէջ դժողովութիւն մտաւ կաթուղիկոս ընտրելու միջոցին և ահա զիմեցին առ Մովսէս կաթուղիկոսը, կարգադրութիւն խնդրելով: Այս տեսնելով Կիւրոն, ազատանքով ձեռնադրուեցաւ Վրաց կաթուղիկոս, մանաւանդ որ օրպէս ծննդեամբ վրացի յարմարազոյն էր: Երկար տեսեց և Վրաց իշխանք խաբուելով Բիւզանդի կեղծ ու պատիր խոսառեներից և զրգութելով Հայաստանեայց աթոռի գահերիցութեան զէմ Կիւրոնի մաանահարութեամբ, սկսան խորշել Հայերից և ինքնադիլութեան ձգտել ինքնազլիութեան, որ երբէք չէր կապտուել: Կիւրոն կուռան գտնելով իշխանաց ինքնասիրութիւնը, հակուեցաւ առ Բիւզանդ և քաղիկանք պաշտօններ ստացան Վրաստանում: Մովսէս կաթուղիկոս իսկօյն զգուշացրեց նորան մէկ խրատական նամակով և որովհետեւ այդ ժամանակ Պարսից ազգեցութիւնը հզօր էր, Կիւրոն թերեւ նաեւ ակնածելով ծերունի կաթուղիկոսից, ամոքեց նորա կասկածանը մէկ խոնարհ թղթով: Սակայն կարծ ժամանակից յետոյ իրերի վիճակը փոխուեցաւ: Ծերունի կաթուղիկոսը մեռաւ 602 (?). Բիւզանդացոյ ազգեցութիւնը

զօրացաւ արևելքում՝ օրլստօրէ զարգանալով 593-ից գինի, և երբ Կիւրոն հաստատապէս բանակցութիւն սկսաւ Բիւզանդի հետ, սկսու կամաց կամաց հայտածել Յուրացաւայ Հայալեղու համայնքը. Եյնտեղից փախաւ Մովսէս եպիսկոպոսն և զիմեց Վրթանէս Քերթողին, որ ըստ Հայաստանեայց եկեղեցու ս. կարգին աեղապահութիւն վարել էր Հայրապետի կենդանութեան միջոցին և յայնժամ ևս շարունակում էր Հաւատարմութեամբ գործերն իւրեանց ընթացքի մէջ պահելու, և Սմբատ Բագրատունուն եղելութիւնը յայտարարելով: Նա զրգուեց Սմբատին զէնք առնելու և Վրաց պատմելու, սակայն Սմբատ չարաւ այդ, թէև չմերժեց վերջնականապէս. թէ Սմբատ և թէ Վըրթանէս քանից թղթեր գրեցին առ Կիւրոն և յորդորեցին չպառակտել գարաւոր բարեկամութիւնը, չհայտածել Յուրացաւայ եկեղեցին, որ երկու ազգերի համար սիրոյ միջապայր մի էր, այլ մնալ հին հաւատքով միացած ի բարօրութիւն ընդհանուր շահերի. ընդ նմին Վրթանէս հիմնում էր իւր խրատները հանգույցեալ հայրապետի թղթի վրայ:

Այդ բանակցութիւնն երկար տեսեց և վճռական ելք չունեցաւ, զի Կիւրոն երկղիմի քաղաքականութիւն էր բանեցնում՝ մերժ Բիւզանդից կողմը բռնելով և մերժ Պարսից: Վրթանէս տեղապահի մի թաղթը զայրացրեց Կիւրոնին, որ և յանդուզն պատասխանով երեւցաւ առանց գիմակի. սակայն Վրթանէս իրաւունք չհամարեց գործին ելք տալ նոր կարգադրութիւն անել կամ ժողով գումարել. ուստի և սպասեց կաթուղիկոսի ընտրութեան, որ հակաթոռութեան պատճառով ուշանում էր: Սմբատ տեսնելով եկեղեցու անմիմար վիճակը, զոր լաւացնելու հնար չկար Մօրիկի և Պարսից Խոսրով Ապրուէզի բարեկամութեան պատճառով, սպասեց և ի զուր չսպասեց: Երբ Պարսիկները Մօրիկի մահից զինի (602)

ոտքի ելնելավ, օրլուսորէ զօրացան, Սմբատ ժողովեց 607 թուին Պարսից բաժնի եպիսկոպոսներն ի Դուին, կրկին և կրկին բանադրեց Քաղկեդոնականութիւնն և մէկ սոսրագրութիւն առաւ նոցանից ի նշան այդ որոշման հաստատութեան. ինքն Սմբատ հաւատարիմ իշխանն ևս տուաւ նոցա մէկ ձեռնարկ իւր աջակցութեան: Սմբատ այդ ստորագրութեամբ հակիրճ դրոշմեց Հայաստանեայց եկեղեցու այն հիմնական սկզբունքն, որով Հայ աշխարհականք և եկեղեցականք ձեռք ձեռքի տուած են ընթացել. նա զբեց պարծանքով. նզովեմք զնդովեալն ի ձէնջ, որպէս և երանելի Հարքն մեր նզովեցին զնդովեալս ի ձերոց հարցն: Եւ օրհնեմք զօրհնեալն ի ձէնջ՝ որպէս և Հարքն մեր օրհնեցին զօրհնեալն ի ձերոց Հարցն երանելեաց և փարզապետացն աշխարհիս: Եւ յայս ուղղափառ հաւատատուն և անշարժ կացցուք ի կեալ և ի մեռանիլ ընդ ձեզ (Ուխ. II, Էթ. Է.Գ.): Այս քաղցրաբարբառ ուխտագրութիւնից յետոյ ընտրուեցաւ Ապրահամ եպիսկոպոսն ի կաթուղիկոսութիւն (տես և Սեր. Ժ.):

Աբրահամ Ա. Սմբատի խորհրդով և Ցուրտաւայ եպիսկոպոսի յորդարանօք, Կոմիտաս եպիսկոպոսի պատգամաւորութեամբ (Յովհ. Մամիկ. Էջ. 8) քանի մի թըղթագրութիւն ևս ունեցաւ Կիւրոնի հետ, սակայն անհետեանք, զի ըստ երեցին Վրաց իշխանք ևս հակուել էին Բիւզանդի կողմը: Բայց Բիւզանդի բռնութեան գորութիւնն ևս շուտով կոտրուեցաւ ի Հայաստան. Խոսրով Ապրուել զայրացած վէնք բարձրացրեց Մօրիկի մահաւան վրէմն առնելու. կարծ միջոցում Բիւզանդեան դաւառք անցան Պարսից ձեռքը. Յովհան հակաթոռն ևս զերուեցաւ շուրջ 611-ին և ի զերութեան մեռաւ: Աբրահամ իսկոյն տարածեց իւր համատարած աթոռի թեր գէպի Հայաստանի անկիւնք: Արևմտեան եպիսկոպոսք ժո-

զովուեցան ի Դուին և խնդրեցին «խառնել զինքեանս ի միաբանութիւն եկեղեցւոյ Ճշմարիտ հօտին Քրիստոսի», , յանձն առին ամենայն ապաշխարութիւն հայրենի սրբարանի զիրկն ընդունուելու համար: Տուին հաւատարմութեան ստորագրութիւն մի, նզովելով Քաղկեդոնն և տումարն և այլ հերձուածք և ընդունուեցան եկեղեցու հարազատ հօտի մէջ (Ուխ. 63—65. Յոյն պատմ.):

Խոսրով մեծամեծ նուածումներից յետ գերութեամբ և տւարով դարձաւ. յայնժամ եկան առ նա Կոմիտաս Մամիկոնէից և Մատթէոս Սմբատունեաց եպիսկոպոսք Հայոց վիճակի վրայ յայտարարելու: Խոսրով լսելով կրօնական վէճերը, թերեւս Սմբատի խորհրդով մէկ ժողով գումարեց իւր հպատակ քրիստոնէից և երուսաղէմի գերեալ Զաքարիա հայրապետի և այլ իմաստնոց մասնակցութեամբ, իսկ նախագահութիւնը Սմբատին յանձնելով, սկսաւ քննել քրիստոնէից դաւանանքը: Դուրս վռնդելով հրէկից և Ասորի բուն նեստորականաց և քրիստոնէից հարկերը բաշխելով, նա ցուցեց իւր արգարասիրութիւնն Քրիստոսի նկատմամբ:

Խոսրով հրամայեց Զաքարիա հայրապետին և ուղեկից իմաստնոց Ճշմարիտ հաւատքը խոստովանելու, որոնք և Հայոց հաւատոյ Ճշմարտութեան վկայեցին, ասելով որ Քաղկեդոնը հակառակ է Բիւզանդիոյ երեք ժողովոց: Դոցա վկայութիւնը համաձայն գտնուեցաւ նաև Կաւատ և Խոսրով արքաների քննութեանց արձանագրութեան, որ կնքուած մնում էր արքունիքում: Հեթանոս արքան ևս իւր կարծ մտքով բայցատրեց երկու բնութեան վարդապետութեան տրամադրանական անտեղութիւնը. «յայտ է եթէ և զմեղ պարտ է յերկուս բաժանել, երկուս ասել թագաւորութիւն և ոչ մի. զի եթէ զբնութիւն ոք քննէ՝ և ես յերկուց բնութեանց եմ՝ թէպէտ ի հօրէ և ի մօրէ, թէպէտ ի հոգւց և ի մարմնոց»: Այս

քննութիւնից յետ հրամայեց իւր քրիստոնեայ հակատակաց հայոց հաւատքը դաւանելու, իսկ այդ հաւատալիքը զրել ու հնքել տալով արքունիքում պահեստի տուաւ¹: Սակայն զեռ իւր հրամանն իրագործել չտուած, ուղղեց իւր զօրքերը հերակլէսի դէմ, որ արդէն մատել էր Պարսից նուածած երկրները: Պատերազմի ելքն անորոշ էր և առկախեալ ազգերը սպասում էին—իւրաքանչիւրը փափառելով անշուշտ իւր բազմալւցն յաղթանակին:

Իսկ Աբրահամ նկատելով Բիւզանդի գորանալը, հրատակեց շուրջ 614-ին ի զգուշութիւն իւր հօտին այն հռչակաւոր շրջաբերականը, զոր ժողովով պատրաստած ուներ և սպասում էր քաղաքական վիճակին: Նա ցոյց տուաւ Քաղկեդոնի շեղուիլը Բիւզանդի միւս 3 ժողովներից, յառաջ բերաւ տումարից քանի մի կէտեր, բացատրեց և եղծեց և ապա վերստին կրկնելով այն նզովքն, զոր զրել էին իւր նախորդք, արգելեց որ և է մօտաւոր յարաբերութիւն քաղկեդոնականաց հետ, որ իրարանցումի միջոցին վտանգաւոր էր²: Գրեց և Աղուանից յորդորելով առ հաւատոյ նախանձախնդրութիւն, որոնք մալորում էին արուեստախօս թշնամեաց բազմազիմի բանահնարինց: Եփոթ էր տղէտ եկեղեցականաց վարդապետութիւնն, որպէս կիւրոն ևս նոյտ կարդում գրում էր թանձրամտաբար. «Եթե և զայս ունիմք հաւատ և զայտ օրինաց, և աստ հաղորդ եմք և անգր», ուստի և զեղեցկապէս շեշտում է Աբրահամ: «Իթէ որդիք այնց հարցեմք, որք ոչ անզանազան յառաքելոցն են, հաւատ զնոցին ուսուցանել՝ պինդ կալցուք. և մի՛ ջուր ընդ բուռն խառնելով՝ զնմանութիւն անխարդախ կաթինն արասցուք»: Նա կարեցաւ պինդ պահել Աղուանից և հզօր

¹ Աեր. լ. Ասող: II, Բ. Ահք. Մեծն էջ. 286. Ուխտ. 102:

² Ուխտանէս. էջ 132.—Մովս. Կաղանկ. II, Խէ, ԽԹ:

ձեռքով միացնել հայոց ի մի փարախ. այդ արգէն նշանէ, թէ քանի հզօր էր նորա բազուկը, քանի արի նորա ոզին, բայց քանի ծանր էր իրերի վիճակն, որ նոյն այդ զօրաւոր ձեռքը չյաջողեց խանդարել Վրաց անմիտ ձրդառումներն, որոնք խրամատեցին այդ երկու ցեղակից ազգաց նախնեաց սրբագործուած հանձարեղ քաղաքականութիւն թէ պիտոյ է մի հօգի ի կապ և ի զօդ ամենեցուն, որպէս և ոք յիւր մարմնի ուսցի ձշմարտապէս:» Յարուեցան հոգւով առ գորեզագոյն ազգն ի կորուստ իւրեանց... Վրաց պէս հայոց գաւանակից մի այլ փոքրիկ ազգ ևս զրացի, Թ. զարում Փարսման ոմն կապեցի քահանայի նենդութեամբ բաժանուեցաւ հայոց եկեղեցուց և անհետ կորստեան մասնուեցաւ, որի անունն է միայն մնում՝ Ծակն կամ Ծոնդէացիք, այն ևս հայոց պատմութեան մէջ և եթ (Ուխ. 25. Միիթ. Ալրիվ. 69):

Պատերազմաց այդ անորոշ միջոցին վախճանուեցաւ Աբրահամ Ա. նորան յաջորդեց իւր սիլելին, կոմիտաս Մամիկոնէից, «որ, ըստ Յոյն պատմ., Քաղկեդոնի ժողովն ատելով և նզովելով գերազանցեց իւր բոլոր նախորդաց:» Կոմիտաս ձեռք մեկնեց հեռաւոր աեղերն իսկ և նորա հռչակը ձգեց երուսաղէմի հայրապետ Մոգեստոսին (629—33)՝ միսիթարութիւն հայցելու (Աեր. Խե. Ասող. 214): Իսքն ևս զրեց զանազան բացատրութիւնք Քաղկ. հաւատոյ զէմ, որոնք գեռ ևս զրչագրաց մէջ են. նորա գործունէութեան մասնակից էր Յովհան Մայրափանեցի եռանդուն եպիսկոպոսը:

Երբ 628-ին Սեպա. Կաւատ Բ. յաջորդեց Խոսրով Ապրուէզին, մարզպանութիւն տուաւ Սմբատ Բագրատունու որդի Վարազտիրոցին և հայաստան ուղարկեց, որ թափուր գտաւ հայոց հայրապետական աթոռն և ժողով գումարելով ընտրեց Քրիստոփոր Բ.-ին (Աեր. Խ. 10*

Յկ. Ժէ.): Աս իւր հայրապետութեան Գ. տարին մասնակից համարուեցաւ իշխանական աղմուկներին և գահընկէց եղաւ. ըստ որում ընտրեցին Եզրաս Եպիսկոպոսին ի կաթողիկոսութիւն, որ գեռ Կոմիտասի օրով ո. Գրիգոր Եկեղեցու փակական էր և «Էր այր խոնարհ և հեղ, որ ոչ կամեր զոք ցասուցանել, և ոչ ելանէր ի բերանոյ նորա բան տգեղ» (Սեր.):

Ժ.

«Ոչ պարծիմք զմեղ սուրբս լինել,
այլ սակալն ոչ անխտիր ի հաղորդութիւն դիմեմք. այլ ահացեալք՝ բազում
երկրուղիւ մեկուսանամք:»

ԵԶՐԱՆ ԿԱԹՈՒԴԻԿՈՍ,

Տեսանք որ Հայաստանեայց Եկեղեցու եռանդուն հովուապեաք արգելեցին որ և իցէ մօտիկ յարաբերութիւն քաղկեդոնականաց հետ, վճռելով՝ որ ոք անխտիր հաղորդեսցի կամակից լինելով անհաւատութեան նոցա (քաղկեդոնականաց), նզովեսցի հոգւով և մարմնով, և ամենայն կենցաղով իւրով որոշեսցի յեկեղեցւոյն Աստուծոյ. և եղիցին խաւարաբնակ և յաւիտենից հրցյն կերակուր որ զշրամանս զայս արհամարհեսցեն» (Կաղանկ. III, Խէ): Այս նզովը կրկնուել է շարունակ քանի մի դար ժողովներով: Բատ այդմ ոչ մի հայ չպիտի հաղորդուէր քաղկեդոնականի հետ, լինէր դա Հայոց թէ օտար Եկեղեցում: Բնական էր ուրեմն որ եթէ Հայ մի հիւրասիրում էր քաղկեդոնականի մի, կամ նորանից Հիւրասիրում և եթէ նորա հետ հաղորդում էր, նորա անունն ելում էր իբրև քաղկեդոնական և ժողովուրդը հալածում էր նորան: Այս այնքան խիստ էր որ Մօրիկի հետ բարեկամութիւն անող

Խոսրով Ապրուէզ Հեթանոսին անդամ քաղկեդոնական էին անուանում (ԶԵՆ.): Ուստի Հայոց առաջնակարգ անձնք վախենում էին Հոռոմարնակ քաղաքները գնալ, երկեւղալով զբարտուելուց: Զոր. Յովհանն պատմաբանը չուղեցաւ Կ. Պօլիս գնալ այդ իսկ պատճառով, որպէս վկայում է ինքն (ԾԵ.): «Թէպէտ և ստէպ ստէպ հրատիրակն կոչէր սիրալիր կամօք երթալ ի պալատն առ կայսր, սակայն ես ոչ կամեցայ, զմուաւ ածեալ թէ զուցէ դաշի ոք, և ընդ ակամք հայեցի զանդ երթալն իմ ի քաղկեդոնիտսն յարակցել ինձ համարեալ...» Սյսպիսի նրբութեան էր հասել իրաց վիճակը, վասնորոյ շատերի անունն էր այդպէս եինում, սակայն ուշիմ քննութիւն է պէտք պատմական իրողութիւնը տաշօւտ զրոյցներից զատելու համար:

Արդ քնննենք Եղբաս կաթուղիկոսի պատմութիւնը: Ականատեսն Սեբէոս զրում է (ԻԹ.): «Եկն ապա զորավարն Յունաց Մժէժ Գնունին ի Հայաստան երկրէն, և յինքն կալաւ զամենայն երկիրն ըստ ասացելումն սահմանին: Ասէ ցկաթուղիկոսն ցԵղը երթալ նմա յերկիր սահմանայն և հաղորդել օրինօք ընդ կայսեր. ապա թէ ոչ՝ արասցուք մեղ այլ կաթուղիկոս. և զու կա՛լ զիշխանութիւնդ քո ի Պարսից կողմանէ: Իսկ կաթուղիկոսն իբրև ոչ կարաց թողուլ զերկիր իշխանութեան իւրոյ խնդրեաց ձեռնարկ հաւատոյ ի թագաւորէն: Եւ վաղվազակի առաքեցաւ նմա տումար զբեալ ձեռամք թագաւորին, և նզովեալ զնեսաոր և զամենայն հերձուածողս: Բայց ոչ էր նզովեալ զժողովն Քաղիեղոնի: Եւ գնաց կաթուղիկոսն յերկիրն Ասորեստանի, ետես զթագաւորն և հաղորդեցաւ ընդ նմա օրինօք: Եւ ինդրեալ ի թագաւորէն պարզե զաղն կողբայ, և տոեալ զպարզեն դարձաւ մեծաւ շքով ի տուն իւր: Եւ ապա յայնուշեալ նստէր ի մեջ բանակի Յունաց, մինչև զօրավարին հաճոյանալ

ըստ կամաց նորա: Կարգէր զկարգս զինուորացն և բաշխումն շտեմարանաց ի վերայ ամենայն երկրին:» Գրեթէ բառ առ բառ նոյնն է պատմում և Թ. գարու պատմիչն Յովհանն կաթուղիկոս. նոյնն է պատմում և Ժ. գարու զիանականն Յոնողիկ, որ և վկայաբերելու հարկ չկայ, մանաւանդ որ ժամանակակիցներ չեն: Բունը նոյնն է մնում մինչև անգամ յեալին ժամանակի գրողաց, կոպիտ սխալներով արժանիքը կորցրած զրոյցը (Պոր. Օրբ. ԻԵ.):

Արդ ըստ բոլոր պատմութեան Եղբաս զատապարտում է նորա համար որ Հերակլի հետ հազորդուել է: Եղբաս ոչ Քաղիեղոնի ժողովին ձայնակցել է, ոչ այլ դաւանանք է ընդունել և ոչ իւր հաւատոքը փոփոխել: Արդարեւ Եղբասին կարելի է փոքր ինչ արդարացնել երբ ի նկատի ունենանք որ վախենում էր հակաթուութիւնից, սակայն պէտք է խօսառվանել որ նա իբրև կաթուղիկոս պարատաւոր էր ոչ մի սպառնանքից չվախենալ և նոյն իսկ տամենաթեթեւ խնդիրներում անսասան մնալ և ոչ թէ, հակառակ ժողովոյ հրամանին, Հերակլի հետ հազորդուիլ: Բայց բոլոր պատմիները վկայում են միաձայն, որ Եղբ սկզբում չէ կամեցել հաղորդուել և ապա երբ ստիպուել է, Հերակլից դաւանանք է պահանջել Հերակլ տուել և իւր զրաւոր դաւանանքն, յորում Քաղիեղոնի անունը չէ եղել և «ամենայն հերձուածողք» նզովուած է եղել: Եղբ կարգացել է այդ դաւանանքն և ապա հազորդուել Քաջայացտ է ուրեմն, որ Եղբ չարափառ ինչ չէ գտել թղթի մեջ, ըստ որում և Հերակլի դաւանանքն ուղղադաւան է երեւացել նորան: Իսկ եթէ Հերակլի դաւանանքն այնպէս է զրուած եղել, որ Եղբ սխալ է հասկացել և Հերակլին ուղղադաւանի տեղ ընդունել, այն ժամանակ ևս Եղբ հաւատարիմ է մնացել Հայաստանայց եկեղեցու և ժողովներին, զի նա չեր կարող մարգու սիրաբ

կարգալ: Վասնորոյ Եզր արդարանում է ըստ ամենայնի պատմութեան վկայութեամբ:

Սակայն մենք չենք շատանալ այդ անտարակցոյ դրութեամբ. յառաջ վարենք մեր քննութիւնը: Մեր առաջ ծագում են քանի մի հարցեր իրողութիւնը լիովին պարզելու համար. 1) Հերակլի անձն, 2) Եղելութեան հանգամանքները. 3) Հերակլի թղթի որպիսութիւնը, և ապա թէ 4) Բուն իրողութիւնն և նորա հետեանքը:

Ճշտենք ուրեմն այդ կէտերը: Հերակլ իւր դործունէութեան մէջ միացած էր Կ. Պօլսի Սերգիոս պատրիարքի հետ. վերջինս յարկորիկան ծագումից էր և ջանում էր Քաղկեդոնի աղմուկները վերացնել: Շուրջ 618-ին հակաքաղկեդոնական ոմն Գէորգից վկայութիւնք խնդրեց մի կամքի ապացուցութեան համար (Մանսի. XI, 744), և ապա ուղեկցեց Հերակլին գէպի արեւելք: 626-ին հանդիպեցաւ Հերակլ Փոքր Ասիոյ Լազերի հակաքաղկեդոնական եպիսկոպոս Կիւրոս Փաղիացուն և բարեկամացաւ, ըստ որում Սերգիոսի մի գրութիւնը գրաւեց նորան: Նոյն Սերգիոս թուղթ գրեց առ Պօլսո ոմն Սևերիանոս և պնդեց մի կամք և մի ներգործութիւն, յենուելով Պօլսի եպ. Մենասի և Հռովմայ Վիրգիլիոսի թղթոց և Թէոդոր Փառանի վրայ: 629-ին Հերակլ Ասորոց Հերապօլսումն էր, որտեղ խօսակցեց նոյա պատրիարք Աթանասի հետ, որ Եղիպտոսի հակաքաղկեդոնական Անաստասի բարեկամն էր: Հերակլ առուաւ իւր դաւանանքն Աթանասին և նշանակեց նորան պատրիարք Անտիոքայ, յուսալով այդպէս միացնել Ասորոց Անտիոքայ հետ:

Այդ դաւանանքի դէմ գրեց Լիւստրայի Եւբուլոս եպիսկոպոսը: Նոյնպէս Մաքսիմոս վանահայրը Հերակլի գաղտնի քարտուղարը թղթեր էր գրում ընդդէմ Հերակլին և ի պաշտպանութիւն քաղկեդոնականութեան: 630-ին նշանակեց յիշեալ Կիւրոսին պատրիարք Աղկբսանղրից

և պատուիրեց նորան այդ թշնամի երկրի միութեան աշխատի: Կիւրոս իրբե ջերմ հակաքաղկեդոնական, սիրով ընդունուեցաւ և կարճ միջոցում խաղաղեցնելով ժողովուրդն, իւր հաշտարարութեան պայմանները յայտարարեց (633-ին) Սերգիոս պատրիարքին. ըստ որում ասում է, որ հիմնուելով կայսրի և պատրիարքի առւած դաւանագրութեան վրայ (Մանսի XI, 562), հաշտեցրել է կուսակցութիւնք և հաստատել նոյա ի մի գաւանաք: Ապա յառաջ է բերում այդ գաւանանքը, զոր հակառակորդք ընդունել էին, որի մէջ յիշում են. «ով չէ խոստովանում յերկուց բնութեանց մէկ Քրիստոս, մէկ որդի, մէկ մարմացեալ բնութիւն բանին Աստուծոյ, որպէս ո. Կիւրեղ ուսուց, անփոփոխելի և անայլայլելի, որ մեր տէր Յիսուս Քրիստոսն է երրորդութիւնից մէկը. նզովեալ լենի»: «Ով չէ նզովում զԱրիոս, զԵւսոմիոս, զՄակեդոն, զԱպօղինար, զՆեստոր, զԵւափքէս և այն ամէնքին, որոնք ո. Կիւրեղ Աղկբսանղրացու 12 նզովքներին հակածառում են և չեն ուղղուել. նզովեալ լինի»: Արդ կայսրի և Սերգիոսի գաւանանքը բնաւ չէ յիշում Լէօն տումարը կամ Քաղկեդոնի ժողովն և թէպէտ գաւանագրութեան բոլոր մասերում բացարձակ մի բնութիւն չէ քարոզում, այնու հանդերձ բացարձակ մէկ կամք և մէկ ներգործութիւն է ուսուցանում, ջատազովում է մէկ բնութեան վարդապետութիւնն և մինչեւ անգամ նզովում է այն «ամէնքին որոնք ո. Կիւրեղ Աղկբսանղրացու 12 նզովքներին հակածառում են և չեն ուղղուել»: Հարկաւայդ գաւանանքն ընդունեցին Եղիպտացիք, վե իւրեանց ուղածն ևս այդ էր, ըստ որում պարձանքով խրոխտում էին, ասելով. «ոչ թէ մենք Քաղկեդոնին, այլ Քաղկեդոնն է մեզ յարակցել զի մէկ ներգործութեամբ մէկ բնութիւն է ի Քրիստոս խոստովանելը (Թէոփանէս. էջ 330): Նոյն իսկ Հռովմայ Հռովիոսը մէկ կամքի ջատազով

գուրս եկաւ. իսկ Սովորանիսս վանականը զալով Եղիպտոս, սկսաւ կռուել Կիւրոսի դէմ և Ապօղինարեան կոչել նօրան, ապա նշանակուելով Երուսաղեմի պատրիարք (633-ին), անդադրում ջատագով ելաւ երկու բնութեան և այն (Մանսի XI, 461—509): իւր մաքառումը վարում էր Կիւրոսի դէմ, զործելով նաև ի հռովմ Դօրայի Ստեփան եպիսկոպոսի միջոցով, բայց ոչինչ չյաջողեց: Անյայանի է, որ Հերակլի բոլոր զործակիցք հակաքաղկեդոնական էին. նոյն իսկ հռովմ զաւաճանել էր իւր նախորդ՝ Լէօ Լ-ին: Քաղկեդոնի ժողովի անունն անգամ չէր յիշում Հերակլ, այլ միայն ս. Կիւրեղի 12 նզովքը. մինչեւ անգամ բացարձակապէս մէկ կամք և մէկ ներզործութիւն էին քարոզում և ինքեանց ուղղուած էին հրապարակում: Այլ և 638-ին զրեց Սերգիսս մի հրովարտակ («Էկմեղիս») հրամայելով մէկ կամք զաւանել, որ և հրամարակեց Հերակլ նորա մաշից զինի: Այդ ընդունուեցաւ հռովմայ Սևերինոսից ևս (640.), բայց նորա յաջորդ Յովհան IV-ից նզովուեցաւ: Քանի մի տարի յետոյ որպէս պիտի տեսնենք, ժողովով նզովուեցան Սերգիսս, Կիւրոս, Պօղոս, Պետրոս, Թէօգոր Փառանի և հռովմայ Հոնորիսս I պապը, միայն Հերակլէս ազատուեցաւ, զի մահուան անկողնում յայտնել էր որ իւր հրովարտակի գրողը Սերգիսսն է եղել և ոչ ինքն (Մանսի. XI, 9.): Նզովուեցաւ և էկմեղիսը, վասն զի Սերգիսս երկու կամք անկարելի է համարում (Մանսի XI, 534), իսկ մէկ աստուածմարդկային կամք ուսուցաննուով, հասկանալի է որ չկարէ երկու բնութեան վրայ խօսք լինել մէկ բնութիւնից միայն կարէ մէկ կամք լինել:

Այս բացայայտ պատմութիւնից յետ այլ ևս հարկ չկայ Եղիքի զործը կրկնել, բայց անենք և այդ: Հերակլ իւր թշնամեաց սիրաը զբաւելով իւր արդարտիբութեամբ, եկաւ Սերգիսսի և այլ եպիսկոպոսաց հետ ի Կարին,

հրաւիրեց նաև Եղիքին. վերջինս հրաժարուեցաւ գնալ և թղթով պատասխանեց Յովհան Մարդետական (Մայրովանեցի?) և Մաթուսաղայ Սիւնեաց եպիսկոպոսաց հետ (Օրբ. Իլ.): Թուղթը հրապարակում է երեսում և կասկածելի տեղիք չէ տալիս. բերում է ապացոյներ հայոց ուղղափառութեան նոյն իսկ Բիւզանզի հայրերից, Հերակլի հրաւիրական թուղթն ուղղագաւան է համարում, ասելով «Քննութեամբ գտաք բատ ամենայն հարցն ճշմարիտ և ուղեղ խոստովանութեամբ»: Սակայն նկատում է որ Քաղկեդոնի ժողովը չպիտի յիշուէր, զի նորա առաջնորդը Թէօգորիսս և իբասն էին «զուգախտացողքն նեստորի»: Ցոյց է տալիս որ հնագոյն հայրերը գործ են ածել «Աստուած խաչեցաւ» խօսքերը, նոյնակս և առաքեալք: Հերքում է Քաղկեդոնի զաւանակն, որ որոշում բաժանումն է մացնում Քրիստոսի մէջ. յիշում է որ Քաղկ. գաւանանքը հաստատուելով Լէօի տումարի վրայ «որպէս ի վերայ խարխարեալ և շարժուն հիման զիւրն շինէ շենուած»: Պնդում է որ Հայք երբէք չեն ուղեցել հաղորդուել Քաղկեդոնականաց հետ և դատապարտում է անխափիր հաղորդուիլն և վերջացնում է. «զեւտիքէս և գնմանիս նորա՝ զաւածին և զիւրջին հերձուածողս, նզովուեալ եմք և նզովեմք. բայց զժողովն որ զբաժանեալ բընութիւնն ապահէ, և ոչ տայ ասել՝ «Աստուած խաչեցաւ», որպէս այլք բազումք ի հռումոց, յորոց ոմանք և ի մերմէ կողմանէ թիւրեցան, ոչ կարեմք ընդունել, և ոչ ընդ այնոսիկ, որ փոքրկացուցանեն զմարմին և զարիւն Տեառն՝ հաղորդել զի ոչ ունիմք այդպիսի սովորութիւն»: Հերակլ ձեռք չփերցրեց. եկաւ Մէկէժ Գնունին և ստիպեց Եղիքին գնալու, սպառնալով հակաթոռ կաթուղիկոս նշանակել: Յովհան Մայրավանեցին չուզեցաւ ուղեկցել, ուստի Եղիք վերցրեց իւր հետ Տարսոնի եպիսկոպոսին, զուցէ և Թէօգորոսս Քոթենաւորին և զնաց Կարին 633

թուին: Այդտեղ առաջարբեց հերակլ իւր դաւանանքը նզովի ձեռվ, որտեղ Քաղկ. ժողովի մասին այլ ևս խօսք չկար. ուրեմն հերակլ այդ էլ հանել էր իւր դաւանանքից: Եղը քննեց և այժմ հարկաւ ուղղագուածն գտաւ զայն, զի հերակլ մի առ մի նզովել էր բոլոր հերձուածները: Հապա հիմք չունենալով հերակլին արհամարհելու, հաղորդուեցաւ նորա հետ, խնդրելով ստացաւ Կողըի աղահանքը, ժողովրդին և Հայ զինուորաց գրութիւնը բարւոքեց և դարձաւ: Մաթուսաղան նորա կողմն էր. նորան շդատապարտեց և Յովհան Մայրավանեցին, ասելով որ վախից է հաղորդուել (Յոյն պատմ.), բայց հաւանական է որ նա իւր ծայրայեղ հաւատարմութեան պատճառով հալածուեցաւ. Նա Հայաստանեայց եկեղեցու անվեհեր զինուոր գոլով, և թերես արեւմեայց խարէութիւնք լաւ զիտենալով չէր կարող հաւատալ թէ հերակլ քաղկեդոնական չէր. անշուշտ այս վէճից պիտի ծագած լինի Թէոդորոս Քոթենաւորի ձառը Քրիստոսի մարդեղութեան վրայ, որով նա Քրիստոսի բնութեան աստուածմարդկային լինելին է ապացուցում: Բայց ստորև պիտի տեսնենք, որ այսպիսի կոռւաբանական ձառից անկարելի է ձշտիւորոշել թէ ի՞նչ էր Քոթենաւորի հակառակորդի ուսուցածը: Էստ ամենայնի պատմութիւնն ոչինչ չի տալիս Եղիսի դէմ: Նա չհալածուեցաւ ժողովրդից կամ եկեղեցականներից, այլ արդիւնաւէտ և ազգօգուտ գործունէութեան մէջ 8—9 տարի վարեց իւր հայրապետութիւնն, աղօթքներ ևս կարգեց ժամասացութեան մէջ, որոնք նորա յաջորդներից պաշտուեցան, որպէս յիշում է Յովհան Իմաստամէր (30, 104.): Ինչ զիրք որ բռնել էին նորա նախորդք Քաղկ. ժողովի դէմ, նոյնն ևս շարունակեցին նորա յաջորդք. և Պարսից կողմում, որտեղ նստում էր Եղը, Հայաստանեայց եկեղեցին միշտ պաշտպանուեցաւ թշնամու ձեռնձգութեանց և յարձակմանց դէմ: Հուսկ

ուրեմն պատմութիւնն ինքն վկայում է Եղիսի ուղղափառ գործունէութեան¹, ոչ միայն իրողութեանց նկարագրութեամբ, որպէս տեսանկք, այլ բառացի շեշտելով: Աւասիկ ականատեսն Յովհան Մամիկոնեան զրում է. Եպիփան անաց ի ժողովն, որ արար հերակլ ի 19(?) ամի թագաւորութեան իւրոյ, և նզովեցին զամենայն հերետիկոսունս. և եպիսկոպոսն Հաշտենից հալածական լինէր յերկիլն Յովհանց»: Ահա և Սեբէոս վեհաբան եպիսկոպոսը զմում է Եղիսի մահից գրեթէ 10 տարի յետոյ. «Ճշմարիտ հաւատն սրբոյն Քրիգորի կալեալ էր ամենայն կաթողիկոսացն հաստատուն հիմնադրութեամբ ի սրբոյ եկեղեցւոջն, ի սրբոյն Քրիգորէ մինչև ցայսօր», իբրև «զսուրբ և զվճիտ և զականակիտ աղբերացն. . . զջուրս»:

¹ Կաղանկատուացու պատմութեան մէջ կարդում ենք (II, ԽԸ) որ Մայրավանեցուն ևս զրպարտել ան թէ Յովհան կողմն եղած լինի:

«Ունիմք մեք հաւատ, ոչ ի նորագունից սահմանեալ, այլ որպէս ընկալաք մեք ի ս. առաքելոցն ի ծեռն հայրապետին մերոյ Գրիգորի»...

Հերակլի յարուցած վէճերը դեռ չդադարեցան. Մաք-սիմոս վանահայրն զրգուում էր քաղկեդոնականաց. անց-նելով Աֆրիկա, բարեկամացաւ կայսրական փոխանորդ Գրեգորիոսին, որ ձգտում էր ինքնազմիութեան և դու-մարել տալով 645-ի Կարթագինէի ժողովը, վիճեց Կ. Պօլսի գալընկեց պատրիարք Պիրէուսի հետ և զրաւեց նորան: Միւս տարին միասին նզովեցին հակառակորդաց և Կ. Պօլսի պատրիարք Պօղոսի հազորդակցութիւնն ար-գելեցին: Ապա զալով հոռվմ, յօրդորեցին Թէոդորոս պա-պին (642—649) պաշտպան լինելու: Թէոդորոս ընդու-նեց Պիրէուսին իբրև պատրիարք Կ. Պօլսի, սակայն վեր-ջինս անցաւ վերստին հակառակորդաց կողմն և Ռավին-նայի Եկղարխին ընդունել տուաւ իւր զղջումը: Թէոդորոս զայրացաւ, նզովեց նորան զարձեալ, և ստորագրեց այդ բանագրանքը հազորդութեան մէջ թաթախած գրչով: Նա պահանջում էր Կ. Պօլսի Պօղոս պատրիարքից հերակլի

Էկթեղեսը վերացնել։ Պօղոս չարաւ և նորա մահեց յետ
եկաւ Պիրհուս և վերստին գահ ելաւ։ Սպա կայսրն Կոնս-
տանս իւր «տիւպոս» զրութեամբ արգելց 648-ին բոլոր
վէճերը, պատիժ սպառնալով անշնազանդներին։ Սորա
վրայ Հռովմայ Մարտին I գումարեց 640-ին Լատերանի
ժողովը, յորում ներկայ էին նաև յշն վանահարք, քա-
հանայք և աբեղայք։ Ժողովը պնդեց որ մի ներգործու-
թեան վարդապետութիւնը տանում է առ մէկ բնութիւն,
և որոշեց 2 կամք և երկու ներգործութիւն, նզովելով
էկթեղեսն և թէ Տիւպոսը։

Կոնստանտին կատաղեցաւ և դիմեց բռնութեան։ Մարտին I շղթայակատ բերուեցաւ 653-ին ի Կ. Պօլիս, որին և նախ հիւանդ պառկեցրած ծաղքի ենթարկեցին ամբոխի մէջ, բանապեցին և աքսորեցին Քերոսն, որտեղ և սովամահ եղաւ 645-ին։ Մոլիք քաղկեդոնականն Մաքսիմոս նոյնպէս բռնուելով, բերուեցաւ Կ. Պօլիս։ Հակաքաղկեդոնականաց դէմ իւր վարած մաքառմամբ պատճառ նկատուելով Եզիպառի, Կոպտաց ջանքով Մարտինոսաց ձեռքն ընկնելուն, սոսկալի չարչարանքի ենթարկուեցաւ։ Հանեցին լեզուն, կարեցին թեւն և աքսորեցին Լազիստան։ Այս խժգժութիւնից սարսափած Հռովմայ Վիալիսանն ընդունեց միացեալ մէկ կամքի վարդապետութիւնը (Մասի IX, 276)։ Այսպիսով Կոնստանտին անցաւ Ենքաղից իւր միջոցներով։ Նա պատրաստ էր Կոպտերի և Սսորոց մքաքերն ըստ ամենայնի հաճելու, միայն թէ այդ երկիրն Երաբաց դէմ ապահովուէր, ստկայն չկարեցաւ քաղկեդոնականաց մատնահարութիւնք զսպել։ Նա 662-ին Ճանապարհորդելով արևմուտք, մտածեց իւր զահը Հռովմանել և 668-ին ի Սիրակուղ սպանուեցաւ։ Աւելորդ է երկար յիշատակել, որ վերջապէս Կոնստանդին Պողոսատ գումարեց 681-ին Տրուլանեան ժողովն ի Կ. Պօլիս և ընդունել տուաւ Հռովմայ Ազաթոս պապի զրութեան

Հիմունկներն՝ վերջինի նուիրակաց ներկայութեամբ։ Անտիռքայ Մակարիս պատրիարքն ջանացաւ հակառակել, բայց ի զուր։ 13-ր նիստում 28 մարտի Սերգիոս, Կիւրոս, Պողոս, Պետրոս, Թէոդոր Փառանի և Հօնորիոս պապը հանդիսապէս նզովուեցան։ Ժողովի վճիռներին ստորագրեց Հռովմայ Լէօ II, ընդ նմին Կոնստանդին Պոգոնատ գրադապետութիւնն իւր կատարելութեան հասցրեց։ Այս ընդհանուր ծանօթութիւնից յետոյ դառնանք մեր խնդրին։

Հայաստանը ճգնաժամի մէջ էր երկու տիրողների դիմաց։ Հայք հակուում էին առ Արաբները, զզուած Բիւղանդի իշխանութիւնից, որ հաւատարմութիւն էր պահանջում, սակայն ոչ ժողովրդի ապահովութիւնն էր հոգում և ոչ պատիւը յարգում։ Թէոդորոս Ռշտունին միակ հոգատարն էր Հայոց և Ներսէս Շինողը միակ սփոփիչ։ Հայք ատելով ատում էին Յունաց զօրքն և «ոչ երբէք ընդունէին զհոռոմի հաղորդութիւն մարմնոյ և արեանն Տեառն» (Սեբ. 14. Առ. 89)։ Հոռոմը հարկաւ իրեւ տիրապետող տարր հպարտացած, ամբաստանեցին Հայոց Կոնստանտին մօտ թէ փերև զանօրէնս համարեալ եմք յաշխարհիս յայսմիկ։ Քանզի անարգանս համարին Քրիստոսի Աստուծոյ զժողովին Քաղկեդոնի և զտումարն Լեռնի, և նզովն զնոսա։ Կոնստանտ Հրաման մի հանեց, որ Հայք միակցն Յունաց, ընդ նմին և Հայոց հետ բանակուուղ Հայը՝ Դաւիթ փանահայը եկաւ իւրն առաջ տանելու կայսրի Հրամանի ոյժով։ Ներսէս գումարեց (650-ին) մի ժողով Թէոդորոս Ռշտունու և այլոց հետ։ Ժողովը լաւ համարեց մեռնել, քան թէ Գրիգոր Լուսաւորչի վարդապետութիւնից շեղուել, ընդ նմին և զրեց այն զօրաւոր նամակն, որ նկարագիր մի է Հայոց հաւատաց անվեհերութեան։ Այս մեծանձնութիւնն, որ մեր նախնեաց գեղեցիկ

զիջն է, երեւում է և այս զեռ թերի մեզ հասած թըղթում։ Եպիսկոպոսաց և իշխանաց ժողովը զարկում է կայսրի երեսին, որ Հայք զեռ մեծն Կոնստանդիանոսից շատ առաջ ընդունեցին քրիստոնէութիւնն և նոցա հաւատքը հաստատուեցաւ Նիկիոյ ժողովում, ըստ որում և այդ հաւատքն է իւրեանցը։ Պատմում է թէ որպիսի ազատութիւն էր վայելում Հայաստանեաց եկեղեցին Պարսից արքաների օրով, որոնցից ոմննք հալածանք յարուցին, ոչինչ օգտեցան և «ամաշեցին ևս անօրէնք յունայնութիւն իւրեանց», ուստի և ազատութիւն տուին ձարահատեալ։ Այդ ոգեպատար ժողովը բերելով այդ զուգահեռութիւնը հեթանոս և քրիստոնեայ կայսրի միջև, զեղեցկարպառառ նախատինք է տալիս նորան, որ քրիստոնեայ դողով, հալածում է քրիստոնէից, մինչդեռ Հայք ազատութիւն վայելած լինելով հեթանոսաց ներքոյ, առաւել իրաւունք ունին լաւագրն շնորհաց հանդիպիլ քրիստոնեայ պետութեան մէջ։ Ապա բերում է ժողովը Հայոց եկեղեցու վարդապետութիւնը Քրիստոսի մարդեղութեան վրայ, յենուելով ս. Գրիգոր Լուսաւորչին, նզովում է Բիւղանդեան հերետիկոսաց, խորտակում է երկու բնութեան վարդապետութիւնը Բիւղանդեան Հայրերի վկայութեամբ, զրոշմում է Հայոց ս. սկզբունքն՝ ափ ի բերան հարկանելով բռնաւոր կայսրին։ այս «աւանդութեան վերայ հաստատեալ կամք, և ոչ խոտորիմք ի նմանէ ոչ յաջ և ոչ յահեակ»։ Այնուհետև Ներսէս գումարեց եպիսկոպոսաց և բանագրեց Քաղկ. ժողովը, բոլոր հերձուածողաց և մանաւանդ գաղանաբարով Պողիկեանց, և այս ամէնն ուխտազրելով ստորագրութեամբ, կնքեց և զրաւ ի պահեստի (Սեբ. 142. Յով. Իմաս. 39)։

Անցաւ քանի մի տարի և ահա Արաբները նուածելով Պարսկաստանը, մատան 653-ին Հայաստանի արևելքն աւերելու. նորա դէմ զնաց Յունաց զօրավարն և Թէոդո-

Հայ. եկեղ. և Բիւղ. ժողով. պար.

րոս Խշտունին, վերջինս գժկամակելով՝ Պռոկոպի ծուլութիւնից, միայնակ յարձակուեցաւ թշնամու վրայ (Ղեռնդ. 8. Մեր. 135), ջարդեց և աւար առնելով, քաշուեցաւ Գառնի: Երբ Պռոկոպ ևս ճակատի բռնուեցաւ թշնամուց, ջախջախուեցաւ և փախաւ, իւր բանակն աւարի թողնելով: Այս լսելով Կոնստանս, կատաղեցաւ և անձամբ եկաւ (655-ին) Թէոդորոսին պատճելու. 100,000 զօրքով Հայաստանը կոխուտելով և աւարելով, իւր վրէժը կամեցաւ ժողովրդից հանել «և ի միջոյ բառնալ» Հայոց: Ներսէս վշտացած քրիստոնեայ կայսրի այս անօրէն արարքից, ուղևորուեցաւ իւր ծննդավայր Տայքից, ուր բնակում էր (Մեր. 139.), զնայ Մուշել Մամիկոնեանի հետ կայսրին հանդէպ և ողոքանօք քրիստոնէութիւն ներշնչեց նորա սիրալ: Իսկ Թէոդորոս, Ներսէսի մտերիմ բարեկամը, չկարենալով միայնակ Յունաց գէմ ենել նահանջեց յԱղթամար: Կոնստանս ջանացաւ բռնել նորան, բայց ի զուր, ըստ որում և նզավելով պաշտօնանկ յայտարարեց: Սակայն Թէոդորոս իւր զործն էր աեսնում, բանակելով Արաբների հետ (Մեր. 1.Ե.):

Կոնստանս յղելով զօրքի մի մասը Սիւնիք, Վրաստան և Աղուանիք, աւարով ցնծալու և Թէոդորոսից կողաքակ անելու, ինքն 20,000-ով մտաւ Դուին և իջաւ վեհաբանում: Նա Հայոց իշխանաց կոտորող և ժողովրդին կողոպտող կայսրն էր և բարեպաշտութիւն ունեցաւ Հայոց եկեղեցում յունարէն պատարագ մատուցանել տալու և Ներսէսի հետ հաղորդուելու (Մեր. 140—142. Յոյն պատմ.): Թէև Կոնստանս քաղկեդոնական չէր, թէև Ներսէս 20,000 զօրքով շրջապատուած էր, թէև Հայ ժողովուրդը կաթուղիկոսի հովանին էր խնդրում և Ներսէսի ընդդիմագրութեան վրէժը Հայ իշխաններից կհանուէր, և թէև կայսրը Հայոց եկեղեցում հաղորդուեցաւ և ոչ թէ կաթուղիկոսը՝ Հոռոմոց եկեղեցում, այնու հան-

դերձ Հայոց եկեղեցականաց երկիւղած սրտերը վերաւորուեցան և տրանջոց հանեցին: Բայց երբ մի եպիսկոպոս խոյս տուաւ այդ գէպքից և իմացուելով, կայսրի առաջ բերուեցաւ, ամբաստանեց կաթուղիկոսին, և այդ գժգոհութիւն պատճառեց Կոնստանսին, որ Ներսէս փոքր ինչ առաջ նզով ևս էր կարգացել Հոռոմոց վրայ: Հաղորդուեցաւ և նոյն ևսիսկապոսն, ասելով կայսրին՝ «զբարձր հրամանսոդ սրուժել ով իշխէ»: Իսկ Կոնստանս խիստ նեղացած ներսէսից և «զիսացեալ զնենգութիւն նորա, յանզիմանեաց զնա բանիւք բազմօք ի լիզու իւր» (Մեր. 142.), բայց չկարեցաւ մնալ զի սահմողական հանգամանքները փութայնում էին նորան դառնալու: Նա Ճեպով հեռացաւ և ներսէս հետեւելով նորան, զնաց վերատին Տայք, ըստ որում Դուինի գործերը վարում էր նորանշանակած տեղակալն Ակոսեցին¹, որ 663-ին կաթուղիկոս ընտրուեցաւ (Յով. կաթուղ. ի. Ասող. 99. Վարդ. 1.Ե.):

Կոնստանս Թօղեց զօրքերը Մաւրիանոսի ներքեւ, ո-

¹ Սորա ժամանակ և քաջալերութեամբ ծաղկում էր Դաւիթ Փիլիսոփայ, որ իւր պարտքն էր համարում «ոչ միայն զհեղգացելոցն զարձուցանել միտս, այլ և զպակասամտացն ի բաց լուծանել երկունս»... Նա իւր «Բան հաւատոյ ընդէմ հերձուածողաց» մէջ բացատրում է ոմանց հերձման պատճառը, շեշտելով. «այլ զփիմածացն ախտացեալը յանկատար ծնունդ» խարեալք եղն յարգանդէ հոգեոր աւագանին, ըստ վերստին ծննդեանն, յորս ոչ առողջ ի նոսա բերիւր դաւանումն չօր և Որդոյ և Հոգուն սրբոյ. այսպէս օտարացեալք և վրիպեալք ի մայրենի գրկաց կաթուղիկէ եկեղեցու, և ի մննդական դարմանաց հոգեպատում և աստուածախօս կամինն՝ որ լընթերցուածական ստեանցն, ստութիւն բարբառել ծեռնարկեցին ընդէմ ծշմարտութեան»... Նա գրեց և թղթեր ընութեան խնդրի վրալ այդ ծշմարտասէր հայրապետի և Աշոտ հաւատապինդ պատրիկ կամքով և ցուցեց ալն հետևանաց ալանդակութիւնն, որ ելում է հակառակորդաց վարդապետութիւնից: Գրչագիր յարքայ, մարտ. ի Բերլին 32. Թերթ. 264. Աալն:

ըոնք սկսան ըստ հրամանին տմենայն խժդութիւնը գործ դնել հայոց մէջ, կոսորել, թալանել և խռովեցնել. այդ ժամանակից էր որ արևմտեան հայաստանում ծիստկան խրատումներ մտան: Ապա Թէոփորոս միաբանեալ արևելեան հայոց նախարարաց հետ, հպատակուեցաւ Արաբաց, զօրք առաւ և գալով գէպի հիւսիս, կոտորեց և զուրս վոնդեց Յունաց. զնաց ի Դամասկոս մեծամեծ ընծաներով և ի պատիւ ստացաւ ոսկեղէն հանգերձ և իշխանութիւն հայոց, Վրաց և Աղուանից վրայ, ընդ նմին Արաբները խոստացան օգնութիւն տալ Յունաց գէմ (Սեր. 143): Երբ կրկն շուրջ 660-ին պատերազմ ծագեցաւ Յունաց և Արաբաց միջև, Թէոփորոս ստիպուեցաւ իւր Վարդ որդուն Յունաց կողմն ուղարկել: Վարդ գնաց և կոտորածի ճգնաժամում անցաւ Արաբաց կողմն և Յոյները ջարդ ու բուրդ եղան (Ղեռնդ. Դ. 13.): Որչափ առաջ իրերը լարուած էին և Կոնստանտ ջանում էր մերթ վախեցնել հայոց, մերթ բարեկամութեամբ զրաւել, այժմ զբաղուած էր արևմտքով, որից օգտուեցան հայք: Նուտով միաբանուեցաւ Թէոփորոսի հետ Յունաց բաժնի իշխանն ևս Մուշեղ և Ներսէս կաթուղիկասի օրհնակցութեամբ հպատակուեցաւ Արաբաց (Սեր. Լ. 149. Ղ. 14): Թէոփորոս վախճանուեցաւ 661-ին (Սեր. 150): Հաւանօրէն 662-ին, եթէ ոչ ուշ, կնքեց իւր կեանքը նորա սիրելին Ներսէս, որին Յովհաննէս կաթուղիկոս, թերևս ոչ անհիմ, «Մեծ» է կոչում:

ԺԲ.

Հովիւ քաջ զանձն իւր ղնէ ի վերալ ոչխարաց:

ՅՈՎ. Ձ. 12.

Պատերազմի արշաւանաց վերջ չկար. միմիայն դժարարյ կայսրն Յուստինիանոս II անձամբ երիցս ասպատակեց հայաստանն և ծանր զօրքով ի վրէժ Արաբաց աւերեց, գերեց, աւարեց և միայն սրբանուեր Սահակ կարեցաւ նորա արիւնաթաթաւ սուրբ յետ քաշել (Ղ. Ե. Ա. Ա. II, 101.): Այս այն Սահակն¹է (678—703) առ որի զիակն Արաբաց զօրավարն, այն արիւնարբու գաղանը, գուրզուրալով բարբառեց. «Ծանեայ զիմաստութիւն քո ի մատենէն զոր ընթերցայ, զի ըստ օրինի քաջ հովուին ի վերայ քոյին հօտիդ հոգացեալ՝ փութացար գալ ընդ

¹ Մեր յիշած յոյն պատմիչը սորա մասին աննպաստ է խօսում, որ իրը թէ սա Կ. Պոլսում Յուստիանոս B.-ի օրով ժողովում է եղել հաղորդուել և ասպա դառնալով, զղջացել և իւր արածը նզովել է: Սակայն մէկ գրչագրի մէջ կարդում ենք՝ «և աստուածասէր ժողովն», որ նախանձալով եղեալ օրինացն Աստուծոյ և ս. առաքելց բարողութեան, ժողով հրամալեաց լինել ի միջասահմանս աշխարհին Հայոց, Վրաց և Աղուանից, որ ժողովեցան բազում եպիսկոպոսք յամենայն քաղաքաց հանդերձ կաթուղիկոսաւն Հայոց Սահակաւ և հրամանաւ

առաջ խրոխասացեալ սրոյ իմոյ: Հաւանեցայ արգելուլ զուլը իմ յարանց անմեղաց» (Ղե. Թ. 30.): Այս ծանենշան է հայոց քաջալանջ կաթուղիկոսաց, որոնք իւրեանց հօտի համար դիմագրաւեալ շահատակում էին չքրիստոնեայ կայսրաց և հեթանոս հրոսակաց արիւնարբու սրի առաջ: Այս խառն միջոցին քաղկեդոնական նիւթողք ևս Վրաստանից մանելով Աղուանք, մատնահարում էին երկպառակեցնելու համար: Այդ յաջող էր, զի Աղուանից դշխոն Սպրամ և կաթուղիկոսն ներսէս սկսան նոցա սերմերին հող պարզեց: Այս իմանալով Ներոյ իշխանն իւր ազատներով և եպիսկոպոսներով ժողով գումարեց և նզովեց ներսէսին և բոլոր հերձուածողաց: Ապա թուղթ գրեց առ Եղիա կաթուղիկոսը (703—717), խնդրելով օգնել նոցա և չմոցյամորել քաղկեդոնականաց զօրանալը (Կաղանկ. III, Դ. Դ.): Եղիա աեսնելով իւր զգուշացում: Ների չօգափիլ, Վրաց դէպ.քից խրատուած, 704-ին ոստիկան առաւ Արարաց Աբղմելքից, եպիսկոպոսներով մտաւ Աղուանք, կապրուց Սպրամին և ներսէսին և աքսորեց (Կաղան. III, Ե. Զ.): ապա գումարեց Պարտաւի ժողովը, նզովեց հակառակորդաց, դաւանական թուղթ առաւ Աղուանք եպիսկոպոսներից և իշխաններից և ինքն տեւաւ նոցա իրաց եղելութեանց մէկ արձանագրութիւն իպահ-

նորին թագաւորին՝ զարբոց առաքելոցն զաւանդումիւնս և զարբոց ժողովոցն Նիկիոյ և զՃԾ. իցն որ ի Կ. Պոլիս և զՄ. իցն որ լԵփեսոս զայն հաստատել հաւատ և նզովել զամենայն հերձուածոյս՝ զառաջինս և զմիշինս և զգերջինս: Նախ և առաջին զաղանդն Մարգիսնեալ և զաղանդն Արտեմոնի և զաղանդն Մանիքնցոցն և զաղանդն Պողեալ Մամոստացոյ և զաղանդն Արիոսի և զաղանդն Մակեդոնի և զտումարն Լեռնի և զամենայն հերձուածոյս...: Եւ ժողովեցան բազում նպիսկոպոսք Վրաց Աղուանից ի քաղաքի Թէոդոսպոլիս...: Ապա բերում է և կանոններն ալդ ժողովի, համաձայն Հայոց Եկեղեցու: Յարք. մատ. Թ. 34. Թերթ. 303. Այդ ժողովը յիշում է և Կաղանկ. II, ԽԸ.

պանութիւն յիշատակի: Ապա ընտրեց Սիմեոն եպիսկոպոսին կաթուղիկոս, ձեռնադրեց ու դարձաւ (Կաղ. III, Բ. Թ. Յով. Կ. Իթ. Աս. II, 102...): Սակայն քաղկեդոնականաց առաջանաց առելց երկաթէ առելով քաջաբան իմաստամերն Յովհան Օձնեցի (717—728): Անշուշտ թշնամեաց մախողութեամբ, սկսան Բերշապուհ սմն երկց և Գաբրիէլ տորկաւագ Սաորոց մէջ բանսարկել և զրպարտել, հայոց Յուլիանեան կոչելով, իբր հետեղով Յուլիանոսի Ալիկառնացու, որ ուսուցանում էր թէ Քրիստոս անապական մարմին է առել ի ծնէ կամ ի բնէ: Ասորոց կաթուղիկոսն Աթանաս լսեց և իսկոյն պատգամով յայտնեց իմաստամէրին, որ և Հոռոմոց բամբասանքներից ու զըպարտութիւններից ձանձրացած, խնդրեց Բաղդաղի ամիրապետից՝ դուրս վոնդել չարտնիւթ քաղկեդոնականաց, որոնք հայաստանում բնաւորուելով, ժխորում էին հայոց ս. Եկեղեցու խաղաղ փարախը: Խնդրիր կատարուեցաւ և այդ չըրարմատք արտաքսուեցան. ապա Օձնեցին ժողով դրւմարեց 719-ին ի Մանաղկերտ, Արշարունեաց Գրիգորիս կիտնական քորեպիսկոպոսի և Ասորոց ներկայացւցաց հետ և իւր զօրաբան հոգու հարուածով յօդս յնդեցրեց քաղկեդոնականաց և երևցյթականաց բանդագուշանքները: Նա ամոքեց գանձակից Ասորոց կասկածանքն և կնքեց ժողովը հրաշալի մի ճառով: «Մի ոք, ասաց նա, համարեսցի զմեզ մարգատեաց և անդէտ՝ խորհրդեանն Քրիստոսի, որ զսէրն և զխաղաղութիւն եթող զանձ եկեղեցոյ և պատկեր աշակերտութեան իւրոյ: Այլ քանզի Ճեղքին ումանք ի հաւատոց և ի ներքյ վայի մտանեն, և ասեն զբարին որ ի մեղ՝ չար, և զլոյս դնեն խաւար, և զմլրտեալն ի մէնջ կրկին մլրտելով, վերստին ի խաչ հանեն զՈրդին Աստուծոյ. և ասելով նոցա մեզ անհաւատս, ինքեանք անկանին ի հաւատոց, մեզ ինչ ոչ կարելով պակասեցանել:

զականն կըր ասէ, ինքն է կըր, որ չէ ի տեսանել զնորա
աչեղութիւն, զայնպիսին հալածեցաք մեք իբրև զօտարա^{1:}
Այս է Հայաստանեայց եկեղեցու արտաքին գործավարա-
կան ս. սկզբունք, զոր գդուել է նա իւր դաւթում։ Այ-
նուշետև Օձնեցին ձեռք առաւ իւր փսեմախրոխտ զրին
և բուռն յարձակմամբ երեցյթականաց, այսինքն նոցա
դէմ, որոնք ասում էին թէ առ աչօք է Քրիստոսի մարմնա-
ւորութիւնն, ի մի կուտելով՝ հիմնայատակ արաւ իւր
հակառակորդ բոլոր աղանդները։ Այդու պսակեց նա իւր
ուսուցիչ Թէոդորոս Բոթենաւորի ձառը։ Մինչ գեղապէս
բանավարելով երեցյթականաց դէմ, ձշտում է Քրիստոսի
Աստուած և միանգամայն մարդ լինելն և ասում. «Գուք
երկուցեալք յերկուց ասել բնութեանց՝ ի Պանդորոսին
փախուցեալ անկանիք յիմարութիւն, որ զբանն ի մար-
մին և յոսկերս յեղեալ ասէր»։ «Երկնչիս յերկուց տաել
բնութեանց. երկիւղ մեծ գոյ, եթէ ոչ արժանապէս և
զմին ասել Քրիստոսի բնութիւն։ Իսկ եթէ իրաւապէս և
բարեպաշտաբար զերկոսին լսես, ոչինչ է արդել զմին ա-
սելով՝ յիշել և զառ ի յերկուցն. և զարձեալ՝ ոչ մո-
ռանալով զյերկուցն, խոստովանել և զմին»։ Ուրեմն Օձ-
նեցին Ժխտում է նոցա, որոնք պարզ մի բնութիւն աստ-
ուածային էին ուսուցանում, իսկ ինքն վարդապետում է
«յերկուց մի», այսինքն աստուածմարդկային մի բնութիւն։
Բայց ոմանք կամեցան երկու բնութեան վկայութիւն ևս
գտնել սորտ ձառում. աւասիկ Մսերեանի նման՝ եկեղեցու
ախոյեան՝ անձն իսկ աչքից շփոթելով օտարի վկայաբե-
րածն իւր հրաշանդի մէջ է դրել. «անպատկառացըցք
ս. հարքն երկուց բնութեանց Քրիստոսի՝ աստուածայնոյն
և մարդկայնոյն՝ լեալք, բնութիւնքն երկու ասելով, վասն

¹ «Արարատ» 1888. ժ. Ասող, 102: Կիր. 38: Սիր. Մեծն 338:
Օքել, ԺԲ: Վարդ. ԼՇ: Միհմ. Այր. 68: Աբուլֆարած II, 57:

զի Աստուած և մարդ... և եթէ՝ Հաւաստի զերկոսին
ունէր զբնութիւնսն Քրիստոս...։ Ոչ եթէ զերկուց ասե-
լով՝ Հրաժարեին ասել զմին, և կամ եթէ զարին Հա-
կառակն՝ զմին խոստովանելով՝ յամառեին յերկուցն դալ
խոստովանութիւն. այլ համարձակաբար երկոքումքս այսո-
քիւք բարեփառութեան զամպարօք փայլեալք պայծառա-
նային, երկուս ըստ բնութեան, և մի ըստ միաւորութեան
զՔրիստոս քարոզելով»։ Արդ եթէ այդ բանաբաղներն ու-
զում են այդպէս հասկանալ այս կտօրն, ըստ որում և
մասերը հանելով և կետադրելով ընթերցողին խաբել են
ջանում, լրացնենք պակասը, տեսնենք ինչ դուրս կգայ-
«բնութիւնք երկու ասելով, վասն զի Աստուած և մարդ,
և եթէ՝ ի միասին եկին բնութիւնքն, և եթէ՝ Հաւաստի
զերկոսին ունէր զբնութիւնսն Քրիստոս. և եթէ՝ Կրկին
է Քրիստոս. մարդ էր որ երեկը, և Աստուած էր որ
ոչն երեկը. և որ այլ ինչ սոյնպիսիք յայլացն ասացեալ
եղեն»։ Արդ եթէ ստոյգ է թէ Օձնեցին երկու բնութիւն
է ասում, պէտք է ընդունինք որ նաև երկու Քրիստոս է
է վարդապետում. եթէ Ճիշտ է առաջենը, Ճիշտ է և երկ-
րորդը։ Աշա մինչ ուր է ատենում մեզ ոչքակապների
բանաբաղութիւնը։

Քաջայայտ է որ Օձնեցին այդպէս ասելով, բացատ-
րում է թէ Քրիստոս ոչ միայն աստուածային բնութիւն
ունէր, այլ և մարդկային. սակայն ոչ թէ Քրիստոս երկու
բնութիւն ունէր յարակից, այլ նորա բնութիւնն, որ մի
էր, երբեմն երեսում էր իբրև մարդկային և երբեմն իբրև
աստուածային, վասն զի միաւորեալ բնութիւն էր։ Նշյ-
պէս և ոչ թէ կըկին է Քրիստոս, այլ և երբեմն որպէս
Աստուած։ Էստ այսմ է հասկանալ և նորա «երկուս ըստ
բնութեան, և մի ըստ միաւորութեան» երկու ի արամա-
բանական կարգի, որպէս և ասում ենք՝ մարդկային բնութ-
իւնը չարչարելի է և աստուածայինն ոչ, սակայն միա-

ւորութիւնից յետոյ չարչարելին անչարչարելի, և անչարչարելին՝ չարչարելի ըստ միաւորութեան (Տես էջ 58): Բայց ուր թողինք Օձնեցու այն հակիրճ խօսքելն, որոնցով հիմնայատակ է անում քաղկեդոնականութիւնն, առելով. «ապա ուրեմն մի բնութիւն և մի դէմ Քրիստոսի, Եթէ պարտ է համառօտագրյնս ասել, ոչ է ըստ նոյնութեան բնութեան կամ ԸՍԾ ՄիԱՆՁՆԱԿԱՆՈՒԹԵԱՆ, ԶԻ ԱՅՍ ԶԵՐԿՈՍԻՆ ի ՄԻԱՍԻՆ ԳՐԵԹԷ ԶՐԿԵՍՑԷ ԶԱՍՑՈՒԱՌ ի ՄԱՐԴՆ ԼԻՆԵԼՈՅ, ԵՒ ԶՄԱՐԴՆ ՅԱՍՏԱԿԱՆ ՅԱՎԱՐԵՎԵԼՅԱՅ, այլ է՝ որպէս բաղրում անդամ ասացի, ըստ անձառ միաւորութեան բանին, ընդ իւրում մարմնի: Որպէս և ս. Քրիտոր (Լուսաւորիչ) ասէ՝ «միացաւ ի մարմնի բնութեամբ, և խառնեաց զմարմինն ընդ իւր աստուածութեանն»:

Այս մեծափառ հայրապետի մաքրիչ և հաստիչ բա-
ղուկն այնպէս զօրաւոր էր, որ երկար ժամանակ այլ
չյանդնեցան պղասրիչներն ոտք դնել հայաստանեցց ե-
կեղեցու պատոպարեալ և պարսպեալ փարախը:

۶۹

«Եւ արդ եմէ խարդախութեամբ ու-
նիմք զթերութիւն հաւատոց, վասն Էր
չարչարիմք իբրև զապատճապարտ և
ոչ ունիմք հանգիստ» :

ԳՐԻԳՈՐ ՎԿԱՅԱՍԵՐ.

Հենց որ Բիւզանդացիք վանդուեցան և անհետացաւ նոյա ազգեցութիւնը, բարձրացաւ Հայրենեաց աւերակաց վրայ Բաղրատունեաց դրօշակը: Պայծառացաւ երկրի վայշութիւնը, փայլեցաւ և Հայաստանեաց եկեղեցին, ըստ որում Հայոց կաթուղիկոսք պարապեցան ոչ միայն պետութեան բարեկարգութեան, այլ և երբեմն երբեմն քաջ-արի ոգեսրութեամբ գուրս ելան մարդաբանական տապարէզը: Հայք խրատուած անցեալ պատմութիւնից, հեռու էին Հոռոմոց մօտաւոր յարաբերութիւնից կամ շատ զդոյշ: 863 թուականին Զաքարիայի Հայրապետութեան միջոցին Աշոտ Բագրատունին իշխանաց իշխանի ճոխութեան հասաւ, որ գուշակ եղաւ թշնամեաց առաջ նարա ապագայ զօրութեան: այս Նկատեց Բիւզանդ և ահա Կ. Պօլսի պատրիարքն Փոստ միջնորդ գուրս ելաւ Հայոց և Հոռոմոց կայսրի միջև յարաբերութիւն համատելու: Նա մէկ թուղթ գրեց առ Աշոտ (Աս. III, Բ. Կիր. 44, Մի.

Այ. 70.), յորդորելով նորան հակուիլ առ քրիստոնեաց թագաւորութիւնն, ըստ որում և Աշոտ մէկ իմաստուն պատասխան տուաւ, խոստանալով սէր պահել ընդ նմին և շնորհակալութիւն է յայտնում նորա ուղարկած շնորհաւորական ընծային (Յուշիկ. I, 457.): Այս թղթադրութիւնից յետոյ (867—) շատ չանցաւ և ահա Աշոտ կարեցաւ-թագաւորութեան թեէն ածել. թագ տուաւ նորան ամիրապետն, որ հեթանոս էր, իւր բռնապետական լծի կոտրուելու համար, թագ առաքեց նորան և Բարսեղ կայսրն, որ քրիստոնեայ էր, սիրով ի վերջոյ նորա գահը վտանգելու համար. Աշոտ թագաւորեց 887 թուին: Բագրատունիք քաջալերեցին զիտութիւնը, գնահատեցին արժանաւոր եկեղեցականաց, ըստ որում նոյն իսկ աշխարհական մի իւր առաքինութեանց յարդով. Եփրակաւանի ժողովով 854 ին կաթուղիկոս եղաւ: Եկեղեցականք և Ասորոց ձեռնակցութեամբ վառ էին պահում ազգային եկեղեցու ջատագովութիւնը, յաճախ պայքարում յաղթահրում էին հակառակորդաց: Դեռ 801-ին նանա Ասորին խրոխտում էր յաղթեալ քաղկեդոնական եպիկուռոսի վրայ հայական մի կաճառում: Ամբատ Բագրատունու հայցեալ՝ նորա «Մեկնութիւն Յովհ.» երկի թարդմանութիւնն էր որ Աշոտ իշխանաց իշխանի ձեռնարկը դարձաւ (տես. յիշատակարանը Զարբ. թարգ. 620. Մի. Այր. 70.):

Հոռոմք ջանացին նաև Զաքարիայի հետ յարաբերութիւն կապել, ըստ որում Փոս զրեց և առ նա մէկ թուղթ՝ գաւանաբանական համազարանութեամբ ձարտարուած, որի պատասխանը զրեց իմաստութեամբ, Ատհակ Մոռւտ և Ապիկուրէշ եպիսկոպոսն Տայքի, ու Յոյներից հալածուելով, փախել էր և Բագրատունեաց մայրագագն ապաստանել (Աս. III, Բ. 158. Վար. 82—85): Հոռոմք ջանում էին նոցա սէրը ձանկելու: Ընդ նմին

միայն իւրեանց մշտական նպատակաց վրայ էին գագաշում: Կրօնական համբերատարութիւն չէին կարող ունենալ, եթէ մեծ իսկ լինէր հանրային շահը: Ատելութիւնը զնում էր իւր ձանապարհով և այդ այնպէս սաստկացաւ, որ Անանիա կաթուղիկոս¹ եկեղեցականաց խորհրդակցութեամբ հրամայեց քաղկեդոնական մլրտեալները կրկին մլրտել «վասն զի ուրանան քաղկեդոնականքն զԱստուածի մարմնի իւրում լինել ի խաչին և ի մահուն. այլ և երկուս բնութիւնն կամօք ներգործութեամբ տսեն ի Քրիստոս, և մարդկայինսն առն ոչ Աստուածոյ վասն մեր կըրեալ կիրս և մեռեալ, այլ սոսկ մահ մարդոյ, և ի մահ մարդոյ մլրտին», առարկելով (Աս. 178):

Կրօնական մոլեռանդութիւնն այնպէս թունդ էր, որ Անանիայի յաջորդ Վահան կաթուղիկոսն իւր յարաբերութեան պատճառով քաղկեդոնականաց հետ բուռն հարուածի ենթարկուեցաւ: Բատ Ասողկան, որ ականատես է, յԱնի ժողովուեցան ժամանակի նշանաւոր անձինք և դաշնակէց արին Վահանին, որ փախել էր Վասպուրական: Նորա աեղն ընտրեցին Ստեփաննորսին: Վահան մէկ տարի կաթուղիկոսութիւնից յետ, քանի մի տարի ևս խոզութեան պատճառ էր եղել զի Վասպուրականում իւր անմեղութիւնն հրապարակելով, զրդուեց հայաստանի հարաւն իւր գահընկէցութեան դէմ: Թերեւս զրպարտութիւն եղած լինի նորա ամբաստանութիւնը, սակայն երկու կաթուղիկոսաց մահուամբ վերջացաւ խոզութիւնը: Թողնելով մի կողմ յետագայ ժամանակի պատմիչներին տեղեկութիւնք, ըստ որում Ուռհայեցին մեծամեծ զովեստներով է յիշում նորան, բաւական է յիշատակել նորա

1 Բատ արձանագրութեան առ Շահիամունեանի, Անանիայի կաթուղիկոսութիւնը տեսում է մինչև 981. տես. II, 56: Հայոց կաթուղիկոսաց ժամանակագրութիւնը պիտի ջանանք մի ալ անգամ ծշտել:

յանցանքն ըստ ականատեսին՝ այն է որ վահան «ընդքաղկեդոնական» սիրելութիւն և հածութիւն կամեցաւ առնել թթմովք»: Սակայն «սիրելութիւն և հածութիւն» կարելի է հեթանոսաց հետ անգամ անել, պարզ է ուրեմն թէ քանի լքեալ էր հայոց սիրան այդ քաղկեդոնականաց հեթանոսութիւնից, որոնց հետ բանդագուշանք էր սէր անել մտածել մինչդեռ պարզ քաղաքական յարաբերութիւնը վտանգաւոր էր:

Մինչդեռ յարաբերութիւնն այդպիսի նրբութեան և զգուշութեան էր հասած, մարդաբանական ասպարէզն ևս իւր ընդարձակութիւնն առաւ: Աստ հայաստանեայց եկեղեցու կորովաբան կաթուղիկոսաց սկզբանց հաւատարիմ հետեղող մի է Խաչիկ Ա. կաթուղիկոսն, Անանիայի յաջորդը: Հոռոմք զրկուելով հայաստանի օրսարաններից, սկսան անհնարին հալածանք բարձրացնել Բիւզանդական հայաբնակ քաղաքներում: Անամօթութիւնք այն տստիժանի էին հասել, որ Սեբաստիոյ «կանացի հովիւքն և միտրապօլիսն», չկարենալով զիմանալ վայելու պայքարի, խաչը թողած բրիչ ու շղթայ էին ձեռ առել ըստ որում աւերում էին եկեղեցիք, գանահարելով և շղթայելով աքսորի էին ուղարկում հայոց քահանաներին և ամենայն խժդութիւնք գործ դնում, մինչ այն որ նոյն իսկ հայոց եկեղեցեաց զանգահարութիւնն արգելեցին: Շուրջ 986 թուին գրեցին և առ Խաչիկ քանի մի թըզթեր հաւատոյ խնդրոց վրայ և ընդունեցան անհրաժեշտ պատասխաններ, որոնցից միայն մէկն է առձեռն (Աս. III, ի. իԱ.): Հայոց մարդաբանական հմտութեան կատարեալ մարմնացում մի է այդ հրաշազան թուղթը: Խաչիկ պահանջումէ Սեբաստիոյ միտրապօլալից ապացուցանել քաղկեդոնական վարդապետութիւնն աւետարանի և ս. հարց զրուածներից վկայութիւններ բերելով. ըստ որում և ասում է որ եթէ ապացուցեն ձշմարտութիւնը, չի հրա-

ժարուիլ նշնը խոստովանելուց: Նա պահանջում է ապացուցանել, որպէս զի ճշմարիտ տեսանելի լինի. «ապաթէ պածուժանս միայն զնէք զանուանս նոյա, ասում է նա, զօրէն ռամկի թագաւոր կերպարանեալ (զի մի ասացից առիւծնեաւ կերպարանեալ զի ենդանին զայն, կամ զարձուովն զանց արարեալ զնային առասպել առ այլոց հաւուցն գեղեցկութեամբ), ոչ ապաքէն խաբէութիւն է առ ագէտու, ով իմաստունու յայսոսիկ: Խսկ որոց աչք ի գլուխ, և միտք յիմաստութեան և կատարեալ հասակաւ, և կիրթ ճաշակեօք՝ նոյա կարողութիւն է ընտրութիւն առնել ի մէջ բարւց և չարի»: Ահաւասիկ այն ապտաին, որ սարսեցնում է և պիտի սարսեցնէ յաւիտեան ճշմարիտ հաւատաքի թշնամեաց: Հայ մարդաբանը չէ թագցնում իւր խոստովանածն, այլ խօսում է բացարձակ, ուստի և հրձւում է ինքնաբաւականութեամբ իւր աղմաշունչ հակառակորդի ողորմելի և չարախինդ վիճակի վրայ, ասելով. «մեք զհաւատոյս մերս վբարեպաշտութիւն յայանի քարոզեմք և զրեմք ի նամակի աստ: Զի ի վերաց լերին բարձու հրամայեցաւ բարձրացուցանել վբարբառն հաւատացոյ, և ի Տեանէ հրամայեցաւ՝ զի յունկանէ լուեալն ի վերաց տանեաց բարձրութեան ասել և քարոզել»: Նա չէ քաշւում իւրը բացայացակ, ըստ որում և ուրախ կլինի եթէ հակառակորդք քննեն և ցոյց տան սիստը, հերքեն հաստատուն ապացուցներով և ոչ թէ հալածն ու հայհոյեն ժօռատ զագանի նման: Քանի վիթխարի հակընդպիմութիւն երկու կողմանց միջն. այնտեղ միայն խաւարչուտ բռնութիւն, այստեղ լուսաւոր աղատութիւն համոզման իրաւացի ընտրութեան, միթէ կղիմանաց լուսոյ առաջ խաւարային ժանտափուտ մթնոլորտ... Այնտեղ աղջամուղջ և շամանզաղ իւրաքանչիւրի բացակուրութեան համար. այստեղ շողասատ պարզութիւն անձնիւր խելահասի հասողութեան ի նպաստ. միթէ կհակա-

զիմէ խոնաւուտ բաղակցյալը մշտակէզ շողերին։ Խաչիկ գիտէ այդ, ուստի և հիմն ի վեր տապակելով նոյա վարդապետութիւնն, ոչ թէ հայոց վարդապետների խօսքերով է հերբում նոյա, այլ նախ բանական բանավարութեամբ և ապա նոյն իսկ հառվմէական պետութեան եկեղեցու հարց գրութիւններից վկայաբերելով. «որպէս ընդ հրէայսն, զրում է նա, ոչ տւետարաննական և առաքելական վարդապետութեամբք վիճեմք, այլ ի նոյունց մարդարէիցն հաւանեցուցանեմք՝ սոյնպէս և ընդ ձեզ՝ ի վարդապետաց ձերոց և որ յաշխարհ ձեր պայծառացան՝ բանադիր իննեմք յօդնազան և բազմապատիկ պիտառութեամբք, զի առաւել երեելի և նշանաւոր յաղթութիւն լիցի ամենայն հերձուածողաց»։ Քանի գեղեցկախօս է հաւատոյ այդ ախոյեանների պարծանքը՝ հայաստանեայց եկեղեցու հաւատակեաց առաքելական պարզութիւնը, որ բարձրանում է վեհավսեմ ի վեր անդր քան զբնաւու քաղկեդոնականաց դաւանական շեղջակցյափի դիմաց պանծալով. այս գիտէին այդ քաղցրաբարբառ ջատագովք, որպէս Խաչիկ ասում է հենաբար ապտակելով հակառակորդին. «իսկ զի՞նչ վասն վարսաւոր գիտուցդ ասիցէք, զոր իբրև սահման քրիստոնէութեան ունիք»։ Խաչիկ պարծանքով միշում է, որ հայք պինդ են պահելու իւրեանց հաւատքը, Գրիգոր Լուսաւորչի հայրական ժառանգութեան այդ գեղեցիկ աւանդն իւրեանց սրտի և հոգու մէջ, պինդ որպէս իւրեանց մարմիի գոյնն անփոփոխ։ Ակամայից ծաղըում է հակառակորդաց, որ երեք բնութիւն պիտի դաւանէին, երկուքի միջնորդի ևս աւելացնելով, և ցաւում է, որ ստիպուած է յարձակուելու նոյա գէմ. նա նկատում է, թէ այդ չէր անիլ եթէ Յոյնք չմողած լինէին հաւատալն ու հաւատքի զրութիւնն և մնոտի բառաքննութեան յետեւից ընկած, խան իսկ ունայնացնելով։ Ի վեր ամիտոփում է իւր հարուածն ասելով, որ ինչպէս նա զոյ ամիտոփում է իւր հարուածն ասելով, որ ինչպէս նա

իւր թուղթը 5 զիսի էր բաժնել ըստ իւր 5 զգայարանաց, որոնցով ապշել էր, և բաժանումն էր մացրել Գրիտոսի բնութեան, կամքի և ներգործութեան մէջ, այնպէս ևս ինքն ըստ Դաւթի 5 քարերին, որով նա Գողիաթին ջարգեց, խփում է ո. հոգու պարսատիկով և Տէրի բազի զօրութեամբ նորա Ճակատն, որպէս զի այլ ևս չյանդգնի կենդանի Աստուծոյ Ճակատը նախատելու։ Բայց չկրկնենք ամբողջ թուղթն, որի զօրութիւնը ճանաչելու համար պարտ է զայն քանի մի տնդամ կարդալ։

Խորտակից Խաչիկ իւր հակառակորդին իւր հայրէնի յաղթապանծ ձեմով և նորա մշտայաղթ զէնքն էր նախնեաց սկզբանց, ուղղութեան, և ջատագովական մշտազուտ բանահիմանց այդ շարածքը։ Դոյց փայլուն վեհութեամբ էր որ «բարձրանայր եղիւր եկեղեցւոյ ուղղափառ խոստովանութեամբ»։ Հայաստանեայց եկեղեցու յաղթանակը զօրաւոր էր և յաւերժական, ուստի երբ նորա որդիք զինուիլ զիտէին նախնեաց հաւատով, ընկճւում էր թշնամին, վասն որոյ «որք խէթ աչօք հայէին ի մեզ ի սոյա վարդապետական հանգիսիցն կորակնեալք իրեւ զմլունս ի ծակս որմոց սողոսկեալ մտանէին»։

Սրդարե հայք բարձրութիւնից էին նայում իւրեանց հակառակորդաց զօյ, ըստ որում այդ վեհութեան զիտաստութիւնն արտայայտութիւն է ստանում ըստ ամենայնի. Հայոց հայրապետը գերազահում է Բիւզանդիոյ պատրիարքին և հոռոմոց համար ծուր է օրհնում և ցնցուղ լուսոյ ժառագայթից ծագում է ջրի վրայ հայոց եկեղեցու հովուասեափի օրհնութեան տակ (Ղաստ. 12. Ամբ. 29.). իսկ թագաւորն Վասիլ նորա ձեռքով ծուր է ածում իւր զիսին։ «Հաւատոյ եղիւրը» բարձր պահել, եկեղեցին պարզ և անբիծ պահպանել և հինաւուրց առաքելական աթոռի սրբութեան համար ամենայն ինչ զոհել՝ ահաւասիկ այն սկզբունքներն, որոնք ոգեսորել են չայ. եկեղ. և բիւզ. ժողով. պար.

ամենայն ինքնածանալիք. Հայոց կաթուղիկոսի կ. Պօլիս
մտնելով դղրդում է քաղաքը. Հայոց վեհապետի աթո-
ռապահ եպիսկոպոսը Բիւզանդական արքունիքում վեր-
ցնում է կայսրական բազմոցն և տանում է, ով կաթու-
ղիկոսը նստելով այնու վրայ, սրբագործել է զայն, զի «օրէն
է մեր՝ յաթուն յոր նստի կաթուղիկոսն, ոչ այլ ումեք
նստիլ, բաց ի նմանէ» (Ուռ. 124. Սմբ. 51. Կայլն.):

Այսպիսի վեհագոյն զդացմանց վիմաց քաղկեդոնականք կրկին մլրատում էին, հաւատագրուժին և ուրացողին զրկախառնելով պարզեատարում էին, յիշոց և հայ-հայանք էին տեղում հայոց վրայ, անարգում էին հայոց սրբութիւնք, և եկեղեցիքը զոմ դարձնում, այնպէս որ նոյն իսկ տաճիկները քամահելով ասում էին. «զսրբութիւն քրիստոնէից այդպէս առնեք և դուք քրիստոնեայք», և զարմանքով լսում նոցանից. «մեք դհայ եկեղեցին և զձեր մղկիթն միապէս ընդունիմք» (Ասող. III, Խ.).

Բնական էր որ Հայք ատելով կատեին նոցա, ըստ
որում զարմանք չէ, եթէ յաճախ պատահում ենք այս-
պիսի արբայական արձանագրութեան. «արդ եթէ որ ընդ
հակառակ ելանէ... այնպիսին մի' գացէ ողորմութիւն Աս-
տուծոյ... այլ անէծք յափշտակողացն եկեցէ ի վերայ նորա,
և մեղք մեղապարտիցն և նզովք չարագործացն, որպէս
կայենին և Յուղային, և Արիսոսին և Հոգեմարտին Մա-
կեդոնին և Նեսառի Երկարնակին և Լեռնի Հռովմացեց-
ւոյն և որ այլ նմանիք նոցա...» (Օրբ. 237.): Բայց որ-
չափ ատելութիւնը խստանում էր, այնչափ պայծառաց-
նում էին Հայք իւրեանց եկեղեցին, ամենահեռաւոր տե-
ղերում եպիսկոպոսներ էին հաստատում, ըստ որում
Պետրոսի օրով 500 եպիսկոպոսական թեմեր կային, 12
եպիսկոպոս, 4 վարդապետ, 60 քահանայ (կուսակրօն),
500 ժողովրդական նորա հետեւորդք էին կազմում (Ուռ.
Զթ.): Բանակուռական գրականութիւնը հարստացաւ

Պետրոսի հրամանով գրուած Անանիա Անաւշնեցու քնկ-
դէմ երկաբնակայ» երկով (Ուռ. 122.): Նաև Պօղոս
Տարօնացին գրեց այն խիստ յարձակմունքն, որ երկար
ժամանակ միսեցրեց Հակառակորդաց¹:

իսկ Բիւզանդ իւր տմարդի մշտական հոգի մէջ կանչեց խարեկանօք Պետրոս Գետաղարձին, որ իսկոյն հասկացաւ Մոնոմախի խորամանկութիւնն և ձեռնադրեց Խաչի Բ.-ին, ասելով. «գուցէ այլ ոչ թողուն զիս հոռոմք ելանել յարեւելք»: Կանչեցին և Խաչի Բ.-ին և ամենայն միջոցներ գործ զրին նոցա զբաւելու, զերելու, սարկացնելու, նոցա որոնք միայն Աստուծոյ ծառայք էին և եթէ: Նա ջանացաւ աղքատացնել հայրապետութիւնն, որպէս զի թուլանայ. բայց մի՞թէ նորա զօրութիւնը նորա առձեռն հարսաութեան մէջ է: Զյաջողուեցան այդ մերթ խուժագուժ, մերթ շողոմ դաւուզամերը: Առաքելոց այդ հետեւող և արթուն հոփուապետք հասկացան իւրեանց հաւատարմութեան փառաւորութիւնն և ամենայն ինչ պատրաստի պահեցին զահերու այն ամենայնի համար, որոնց համար տասնեակ զարեր անթիւ և անհամար գանձեր և արիւն են զոհուել: Սակայն այս անգամ Բիւզանդ արդէն անօրինութեան վերջին ծայրին էր հասել նա ըրբացաւ, և անարդ խարէութեամբ խորաակեց Բաղրատունեաց հզօր պետութիւնն և ապա սկսաւ կաթուղիկոսութիւնն ևս վտանգել և ուժով նորա աստուածականատառ գոյութիւնն արգելել. արգելել այն զահն զոր Քրիստոս ինքն է ամբարտակել և զոր խորին հեռատեսութեամբ պաշտել և ամրացրել էր հայոց հռչակաւոր քաղաքագէտն Տրդատ. արգելել այն եկեղեցու զիտարանն, որի համար հայք ամենայն անձնագործութեամբ ի պատե-

¹ Յարք. մատ. ի լիենալ կանոնագրքում գտնում ենք և ծառ մի «Անանիալի Հայոց գարդապետի սակա անխտիր հաղորդելոյն Ցունաց»:

բաղմ էին շահատակել։ Եւ ինչու էին արգելել ջանում։ «Գի անտերունչք՝ ասեն՝ եղեալ, լցցին ի կրօնս մեր դարձեալ»։ ողբերգում է ի խորոց սրաի հառաջելով ներսէս Շնորհալին (Վիպաս. 544. Սմբ. 60. Ուռ. 164 և այլն)։

Միւս կողմից ևս շարունակեցին հայոց քաջիշխաններին բնաբարձ անել և էլ որն ասեմ, «զի առաւելքարձրացաւ ծուխ անօրէն գործոց նոցա քան զՍովորայ և զԳոմորայ» (Ուռ. 139.):

Եւ «ով կարող է պատմել զանցմն որ անցին ընդքրիստունեայքն ։ ի չար ազգէն թունաց, որ ըստ իւրեանց չար և անբարի բնութեանն խաւար ածեն հայոց ազգին», ասում է վշտացած հայոց միակ աշխարհական պատմիչն Սմբատ սպարապետ: Բիւզանդացիք, զրում է նա, «քակելով անհետացրին հայոց աշխարհից յաղթող թագաւորներին, որոնք արիական ջանքով հալածում էին անօրէնների գնդերն, ինչպէս բազէն կաքաների երամներն, իսկ փոխանակ նոյց «կուսակալք և գաւառապետք զիւրուերն սահմանեցին»: Իսկ եթէ հայոց մէջ քաջ զօրական էին գտնում, աչքերը հանում էին և ինքեանք «որպէս տկար շունք՝ որ չկարեն պահել զհօտ ի գոյլոյն՝ այնպէս փախչէին և թողուին զաշխարհն՝ թշնամեայն՝ յաւար և ի գերութիւնն ։ և փոխան արանց պատերազմագաց զիւրտերն ուսոգէին. և սկսան ուտել և ըմբել և սուտ հաւատոյ քննութիւն առնել¹ ընդ ամենայն ազգս. և բարձրտմիտ հպարտացեալ՝ զամենայն ազգս քրիստոնէից ատեցին զէտ անհաւատ. և փոխան զինուք զմշնամիտ հարկանելց, զլեզուս սրեալ՝ զազգս քրիստոնէից սկսան

1 Ζεκραξι Սնձի Վարքի Ժ. դարի աւելաբանութեան մէջ ասուած
է Թէ Յունաց կայսրները չեն հոգում պատերազմաց «այլ զիարկաց
միայն, և զիոնիներոյ կարգաց և զբնութեան հաւատոց, զոր հիմնեցու-
ցին առաքելաջան ժողովքն երեք. և քակունցին զբազում ի հաւա-
տոց բրիստոնէիդ. և այն լիցի ջան նոցա և վաստակ:» Սոփ. Զ. 91:

աղջատել. և զիւրեանք միայն կարծեն քրիստոնեայս լինել...» (տիս. և Ուռ. 120):

Տուկիծ յանդքնեցաւ մինչև անգամ Սէնկերիմ
Արձրունու որդոց Ասոմ և Ապուսահլին ստիպել վերա-
միրառիլ ըստ որում և գիր իմն կնքեց ոմն Յակոբ Քա-
րափնեցի վարդապետի հետ. սակայն եկաւ Գագիկ հաւա-
տարիմ հայրենաստերն և պատռեց կայսրի առաջ այն
չարեղպահի թուղթն և մինչև անգամ ջատագովական
թուղթ մի գրեղ առ նա (Աւո. 192. Ամբ. 63.):

Միւս կողմից ևս հայրապետական թափուր աթոռը
բազմապատիկ հոգ պատճառեց հայ իշխաններին. միա-
ցաւ և զինուեցաւ Գագիկ Աբասեան և բուռն ձեռքով
օդնութեան հասաւ անտերունչ հայ ազգի աստուածային
պահապանին. նա ընտրեց արժանաւոր գահակալ՝ Մա-
գիստրոսի որդուն Վահագամին, որ օծուեցաւ Գրիգոր Բ.
1065-ին:

Խաչիկ թ. ևս նորա հոգանու տակ էր ի Թաւբլուր
(Ուռ. իԵ.). խակ երբ Գագիկ 1064-ին փոխադրեց իւր
գահն ի Ծամնղաւ (ՁԼ.), անդ նստաւ և Գրիգոր թ: Սա
իշխան և Գրիգոր Լուսաւորչի ցեղից, ջանացաւ Հայա-
տանեաց Եղեղեցին պայծառացնել: Մինչդեռ Յոյնք ձգնում
էին կաթուղեկոսութիւնը վտանգել, Հայք հակառակի աշ-
խատում էին, որտեղ աստահովութիւն կար, փոքր կա-
թուղեկոսներ նստեցնել: Գրիգորի մի ձեռնազրուածը նըս-
տաւմ էր ի Հօնի, մի ուրիշը Մարաշում: Գրիգոր մի փո-
խանորդ ևս օծեց յԱնի, Բարսեղ եպիսկոպոսին (Ուռ.
ՃԵ. ՃԶԵ. Վար. ԿԶ.): Այսպիսով թշնամիք խարուեցան
իւրեանց յոյսերի մէջ: Գրիգոր մնալով ի Ծամնղաւ 1
տարի (Վար. ԾԼ. Ուռ. ՂՅ.), ձեռնազրեց Գէորգ վար-
գապետին կաթուղիկոս և Ճանապարհորդեց. բայց վերս-
տին դառնալով, մնաց մի կարծ միջոց ի Մուտասաւուն
(Ուռ. ՃԵ.) և ապա անցաւ ի Կարմիր վանք, Տաւրոսի

վրայ, որտեղ ապահով էր Գող-Վասիլ Հղօր իշխանի սրի ներքը:

Սա առաջինն չայաստանեայց եկեղեցու հայրապետաց մէջ, որ հասկանալով իւր եկեղեցու համաշխարհային նշանակութիւնն, սկսու աշխատիլ այլ եկեղեցեաց ծանօթանալու, առաւել նկատելի տնելով նորա փառաւորութիւնը: Նա առիթ առնելով իւր թարգմանական գործունէութիւնը ձանապարհորդեց 1075-ին ի Կոստանդնուպոլիս, որտեղ մնաց երկար իւր քեռորդի Գրիգոր Գ.-ի հետ. այնտեղից ելաւ դէպի Երուսաղէմ և 1086-ին եկաւ նա Եղիպտոս, որտեղ և կաթողիկոս ձեռնազրեց իւր քեռորդուն (Ուռ. 254. Կիր. 53. Վարք Շնորհալու 25). այնտեղ հանդիպեցաւ մեծ ժողովի և բանավէճ ունեցաւ նոցա Կիւրեղ պատրիարքի (\dagger 1092) հետ հաւատոյ խնդրի վրայ, ըստ որում «բազում հոգեռորականաց ներկայից իւր ուղղափառ խոստովանութիւնը»: Այս ի հարկէ մեծ ազդեցութիւն ունեցաւ նոցա վրայ, որոնք կատաղի հակառակորդ էին քաղկեդոնականաց, յոյժ ուրախացան որ Հղօր դաշնակից ունեին և աշտ հին անաղարտ եկեղեցիքը ձեռքի տալով նկատեցին իւրեանց վեհութիւնն և կրկին ու կրկին քաջալերուեցան ձշմարիտ հաւատոց այն առաքելական ու աւանդի պահելու ամրութեան մէջ: «Եյզօր, տառւմ է Տենիսի Միքայէլ եպիսկոպոսն, ամէնքին յայտնուեցաւ որ Կոպտերը, հայք, Ասորիք, Եթովպացիք և Նուրիայիք մի են ուղղափառ հաւատով, զոր հին սուրբ հայրերը միանգամայն խոստովանել էին և զոր մերժեցին Նեստոր, Լէօ և Քաղկեդոնի ժողովը: Թէև մտադրած պիտի եղած լինի նաև արեմուտք գնալու, սակայն չարաւ. թուի թէ արևելքում ցրուած չայ իշխաններն էին չայոց կաթողիկոսաց այցելութեան կարօտում: Այսպէս Գրիգոր Վկայասէս իշխան հայրապետը մէկ նոր քայլ արաւ, հայաստանեայց

եկեղեցու գործունէութիւնն ընդլայնելով. արդէն ի հնուց Ասորիք հոգի և կենդանութիւն էին առնում հայերից, որպէս վկայում է Միքայէլ Մէծն իսկ ասելով, հայք «բազում եղին մեզ նպաստամատոյցք և ձեռնառուք, և զրեթէ նոքօք կարացաք տեսել այն ամենայն անցից որք ելին ի վերայ մեր և եղին մեզ սիւն և հաստատութիւն. և ուխտ խաղաղութեան և գաշն սիրոյ է ի միջի մերում մինչեւ յաւիտեան»: Իսկ այժմ հայոց կաթուղիկոսը, թէև պատահաբար, ձեռք է մեկնում մինչեւ իսկ Ափրիկէի հետառ կողմը:

Հարկաւ Գրիգոր ձեռք կարկառելով առ այդ հաւածեալ եկեղեցիք, կամենում էր գաշնակիցք գտնել Հոռոմոց անդաղըռում անօրինութեանց գէմ. յիրաւի նա մէր հաստատեց Ափրիկեան և Ասորոց ուղղագաւան եկեղեցեաց հետ նախնեաց հետեւելով սակայն չկարեցաւ ամուր պատանէշ մի կազմել թշնամու յարձակմանց գէմ: Նա տռաւել ևս հաւածուեցաւ Ալեքս Կոմինոս կայսրի օրով, որպէս ինքն իսկ գրում է իւր յիշատակարանի մէջ («Վարք Ոսկեբերանի» թարգմ.) և ապաստանեցաւ ի Սեաւ լեառն 1102—3 թուականին (Ուռ. 360. Վարք. Շնորհ. Վիպաս.): Նոյն ժամանակ Ուռհայեցիք սոսկալի հալածանաց ենթարկուելով, թուզթ զրեցին առ նա և յայտարարեցին իւրեանց թշուառ վեճակը: Չնայելով իւր նեղութեանց, Վկայասէր գիտէր որ ինքն էր իւր հօտի աներկեւղ պահապանն, ուստի և բնաւ չփշտաեցաւ, այլ զրեց նոցա քաջարութեամբ. «Թէպէտ և ևս իրախոյս տամ ձեզ և քաջալերեմ համբերել ամենայն իմաստութեամբ, և ոչ իբրև վատասրտեալ հովեւ արտաքոյ մնամ կրիյն, այլ կամաւորութեամբ ևս մահկայ ձեզ գտանիցիմ յամենայն գործս և ի տեսակս տանջանաց...» ըստ որում ոչ թէ իբրև վատ հովեւ յետ է քաշուում և իւր հօտը թողնում անօգնական, այլ զի-

տենալով իւր եկեղեցու Ճշմարտութեան արժանիքը որ-
պէս վեհարի հովիւր, կանգնում է իւր հօտի համար և
եթէ անկարանում է պաշտպանել չէ զանում նորա հետ
տանջուելու։ «Պատրաստ կամք, գոչում է նա անվեհեր,
յամենայն իրս տալ պատասխանի զոր ինչ և հարցանի-
ցեն, բայց ի պատեհ և ի զիպող ժամու. և եթէ տան-
ջանօք է և կամ բռնութեամք և ոչ յայնմանէ յուրաստ
կամք»։ Սակայն այդ հալածանքն առաւել ևս նորան ու-
րախութիւն է առթում, ըստ որում նա այդ նշանակ է
համարում իւր վսեմութեան և Ճշմարտութեան, վասն
որոյ և հրձւում է, ասելով. «Գոհաննամք զԱստուծոյ յա-
մենայն ժամ, որ մինչև յայժմ յանաստուած հեթանոսաց
տէրանցն զանգիտէաք և դատէաք, և այժմ ի քրիստո-
նէիցի այնպէս...» Այնու հանդերձ նա չէ հպարտանում,
այլ իւրն, որ Ճշմարիան է, մեծանձնութեամք սիրելով,
չէ կորցնում իւր խոնարհութիւնը, չի ասում. «ոչ յա-
րուցեալ ընդ առաւօան և զհետ եղեալ մոլորութեանց,
և կամ բարձրիէմ երեսօք հպարտացեալ և ամբարտա-
ւանացեալ իբրև զհոռոմ ազգն» :

Այն անձն որ փախչում է կաթողիկոսական պատուից, այն անձն որ մերժում էր հարիւրաւոր իշխանների թախանձանիքն և չըր ուղրում հայրապետական աթոռ բարձրանալ այն անձն էր որ ի սեր իւր հալածեալ ազգի հովուապետութեան ցուադն առաւ, և նա անտանելի հալածանաց մէջ հաւատուրիմ մնալով իւր սուրբ կոչման, մաքառեց յարաժամ և վերստին պանդխանելով օտարութեան մէջ կնքեց իւր բազմաշխատ կեանիքն (ի Քեսոն, Գող-Վասիլ իշխանի մօտ 1108): Սակայն իւր 40 ամեայ կաթուղիկոսութիւնից յետոյ, զգալով իւր վախճանը, կանչեց Բալսեղ հաւատարիմ կաթուղիկոսին, երաշխաւորեց նորան իւր աթոռն և իւր քեռորդի, Ապիրատ իշխանի, որդիքն, իւր ապագայ յաջորդք: Սրավով խնամեց

Բարսեղ իւր աթոռն ու Գրիգոր Գ.-ին և Շնորհալուն,
գնաց առ Մելքը Նահ «զերկիւղ մարդկան ի բաց մեր-
ժեալ», գահնիկց արաւ Հակաթոռ Թէոդորոս Ալախօսի-
կին և ապահովեց իւր պատանի յաջօրդին: Սա ևս Ճա-
նապարհորդելով Հիւանդայաւ ի Շուշը, հողին ի բոլին
կանչեց Գրիգոր Գ.-ին, յանձնեց նորան իւր կաթուղիկո-
սութիւն և անցաւ իւր պապերի կարգը 1112.-ին: Գրի-
գոր Գ. օծուեցաւ 1113.-ին ի Կարմիր վանք: Սա ևս ա-
րիաբար ժողով զումարեց և տւելի քան 2500 եկեղեցա-
կանաց ներկայութեամբ նղովեց Աղթամարի Հակաթոռ
Դաւթին (Ըսդհանր. 65.):

Սյդ ժամանակներն արդէն չայթ ուշազրութիւն դարձրին գէպի արևմտաքը, որ ԺԲ դարսւ սկզբէն անձնազոհ խաչակիրներ կամ արկածատենչներ էր տալիս սուրբ Երկրի աղասութեան համար: Որչափ խառնիծաղանձ էին այդ մարդիկները, նոյնչափ մեծ էր նոցա վրայ յըսը. 1099 թուին երուսաղէմ հասաւ մէկ «աղատարար» հոսանք, որ արգաւանդ հող գտաւ սուզուելու համար. դորան հետեւ ցաւ երկրորդն 1147-ին, բերաւ իւր հետ երրորդն 1189-ին, ապա չորրորդն 1217-ին ևային, որոնք վերջ չունեցան մինչև ԺԳ դարու վերջելը: Քանի անկանոն և խառն ի խուռան էին այդ խուժամուժ ամբոխի արշաւանքներն, այն քան որոշատենչ և նախորոշ էին նոցա կենդանութիւն տուղ և ուղեկցող հոգեկրկիտների զործունէութիւնք: Հոռվմաց արքայատենչ քահանայապետք էին խաչակրայ արշաւանաց ընդհանուր հրամանատարք և նորա կարգի նալք ու վանականք էին այդ բազմագունակ տարրերի նալք ու վանականք էին այդ բազմագունակ տարրերի նողք: Նոցա յարձակմունքներն այնպէս յանկարծակի էին, նողք: Նոցա յարձակմունքներն այնպէս յանկարծակի էին, որ սկսուեցան արևելքում առասպելներ և մարգարեւութիւնք հեղակուառողք, առաջնորդողք և երկրի անկիւնները բռնշեղակուառողք, առաջնորդողք և արկրի անկիւնները բռն-

նկատուեցան, որպէս Քրիստոսից առաքուածներ, որպէս քրիստոնէութեան համար զոհուողներ, այսինքն սրբեր, քրիստոնէութեան նահատակներ, առաքինի աստուածաւորներ ևայլն: Ցիրուի, ստրկութեան մջ աքնող ժողովզի համար կարող էր արդեօք առաւել մեծ երկնառուք պարզել լինել քան ազատարարը, կարող էր առաւել սրբութիւն և պաշտելի առաքինութիւն լինել, քան ի սկզբան իսպանական ու ֆրազը: Նոքա սիրուում էին, նոքա փարուում էին, եթէ մինչեւ անգամ ամենալժնեայ չարգործները լինէին, ողջագործուում էին որպէս հրեշտակներ:

Հայք ևս մի կողմէն հեթանոսներից նեղուած, միւս կողմէն հոռոմներից հալածուած, ամենայն օդնութիւններ հասցրին նոցա, որպէս ապուզայ նիզակակցաց: Նոքա էին խաչակրաց կերակրողն ու նպարաւողը, նոքա էին առաջնորդող և հանգուցանողը, մանաւանդ ի հեծուկս Յունաց հլապարակապէս իւրեանց սիրոյ արտայայտութիւն տալով, նոցա բարեկամացողը:

Հարկաւ Հայոց եկեղեցականք ևս անբաժան էին իւրեանց հօտից, ըստ որում Հայ իշխաններին մշտագէտ պահապան լինելով կաթուղիկոսք սկսան նոյն քաղաքականութիւնը վարել: Եթէ Հայոց կողմից բարեկամական ցոյցները շատ անհշան էին, խաչակրաց կողմից խոր եղան արձագանքներն, ըստ որում և բարձր տեղ բռնեցին նոցա աչքում Հայոց հայրապետք, որպէս առաքելական յաջորդք արևելքում, այնպէս որ նոցա խօսքն ու գործն ևս նոյն իսկ օտարաց առաջ պատկառելի տեղ բռնեցին: Նոքա նկատուեցան որպէս վերտոցն վարչապետներ արևելքի քրիստոնեայ աշխարհում¹:

¹ Գուլիէլմոս Ցիրոսի եպիսկ. կոչում է Գրիգոր Գ.-ին. «Ճայրագոյն քահանալապետ», «գլուխ ամենայն եպիսկոպոսաց Կապաղովկիոյ, Մարաց, Պարսից երկուց Հայատանեալց, վարդապետ գերազանց, որ կոչի կաթուղիկոս». «Յաղագս պատիրագմաց սրբոց» XV, 18:

Այդ ժամանսակները Լատինք օգաուելով խաչակրաց զօրութիւնից, արքեպիսկոպոսութիւնք էին հաստատել յԱնտիոք և յԵրուսաղէմ, սակայն Հռովմայ կողմից մեծ ջանք էր հարկաւոր նոցա առկախումը պահել: Երբ Անտիոքաց առաջին արքեպիսկոպոսն Բերնհարդ 1135—36-ին մեռաւ, ժողովրդի կամքով և ընարութեամբ աթոռքարձրացաւ Փրանկ մի Խաղուլֆ. սա տեղն ամրացնելուց յետոյ չկամեցաւ Հռովմայ գերիշխանութիւնը ձանաչել զի իւր աթոռն ևս առաքելական էր, այլ և Պիտրոսի աթոռ. էր կոչւելու մինչդեռ Հռովմայն Պետրոսի առուան տակ էր աւետարանն իւր քմահաձութեանց խողալիկ գարձնում: Խաղուլֆին հետեւ աշխատապէս և Երուսաղէմի արքեպիսկոպոսն Ֆուլիսէր: Մինչդեռ Հռովմա էրկպառակուած էր հակաթոռների պատճառով, Խաղուլֆ և Ֆուլիսէր չկարեցան իշխանաց հետ վարուիլ և վտանգուեցան:

Խայմունդ իշխանը սկսաւ Խաղուլֆին հալածել, սակայն երկար աստանգութիւնից յետոյ վերջինս վերստին իւր տեղը բռնեց: Սյոյ ժամանակ եկաւ Հռովմա պատուիրակ Պետրոս Խաղուլֆի հակառակորդ եպիսկոպոսաց դրգմամբ, սակայն Ճանապարհին մեռաւ. ապա նոյն եպիսկոպոսաց գրգռմամբ եկաւ Ալբերիխ կարդինալը: Սա իրողութիւնն իրապէս հետալուսելու համար հրաւիրեց 1139-ին¹ եղելութեան ծանօթ անձանց յԱնտինք և ժողով գումարեց, բայց Խաղուլֆ չեկաւ, իսկ ժողովրդական մի մասն ինպատ նորան էր խօսում: Ժողովը հրաւիրեց նաև Հայոց կաթուղիկոսին² և երկար զեղերանքից

¹ Սոյն տարին իննուկենտ Բ. գումարեց Լատերանի երկրորդ ժողովը հակաթոռութեան պատճառով. նա մինչեւ իւր մահը (1130+1143) խառնուած էր կայսրների կոհիների մէջ:

² Սկզբա, Լամբր, ևս լիշում է «մեծն յԱնտիոք ժողովն եղեալ, ինդրօղ սոցա արագ եղեալ, ուր հանդիսիւ ի ծան խօսեալ, ունկն դնելով նոցա նուածեալ»:

յետոյ, վասն զի ժողովուրդը զրգուռած էր պատուիրակի դէմ և եթէ իշխանաց պաշտպանութիւնը չլինէր, չպիտի պրծնէր կատաղած ամբոխի ձեռքից, պաշտօնանկ արաւ Ռազուլֆին և բանտարկեց: Խալուլֆ փախաւ ի հռովմ՝ որտեղ և թունաւորուեցաւ: Ապա հռովմայ պատուիրակն Ալբերիս գնաց դէպի երուսաղէմ, որտեղ Ֆուլիսէր արդէն յետ էր կայել իւր մաաղրութիւնից, և մնաց մինչև 1140 թուի զատիկը: Նոյն ժամանակ Գրիգոր Գ, Ճանաւ պարհորդեց դէպի երուսաղէմ և եպիսկոպոսներից սիրալիր ընդունելութիւն գտաւ մէկ մասնաւոր կաձառում: Սիոնի եկեղեցում և բարեկամական խօսակցութիւն ունեցաւ: Գրիգոր Գ. այսպիսի հանդիսաւոր յարաբերութեանց զիմեց մանաւանդ ի հեծուկս հոռոմոց, որոնք զեռ 1137 թուին մտնելով ի կիլեկիայ տակն ու վրայ արին, աւերեցին «զբազում վանորայս և զեկեղեցիս. և զնշանս տերունականս խորտակէին, և անհնարին հարուածս ազգի մերում հասուցանէին քինաբար» զրում է Շնորհալին, այլ և հայոց զբազրները, Ս. Գրքերն և այլն այրում էին հեթանոսութար:

Երբ ծօշին իշխանի որդին և նորա մայրը մենակ ապրել չուզեցան ի հռոմելլայ, ծախեցին այդ դղեակը Գրիգոր Գ.-ին, որ և 1150-ին վերջնապէս սմբացաւ անդ Շնորհալու հետ:

Բատ որում, որպէս յետց էլ պիտի տեսնենք, հայաստանեայց աստուածային աթոռին վիճակուած էր զրեթէ ամբողջ հայաստանը պտտելու և նորա անկիւնք սրբագործելու: Այսաեղ ևս հանգստութիւն չունեցան, ըստ որում Շնորհալին զրում է 1151 թուին.

«... նեղիմք յանօրինաց
եւ յարտաքին չար գազանաց,
եւ ոչ նուազ՝ ի զրժանաց
ի սուտանուն քրիստոնէաց»...

Նոքա օգնական չունեին և միայն Աստուած էր յշան ու միիթարիչը, այդ առանձնացած խորթակեցիկ անկիւնում:

Յորոց Փրկին մեր կենաց
Մինչև յայսօր ամբողջ պահեաց
Որք և յապայն ժամանակաց
Յանձն եղիցուք նորին կամաց...» (Բանհաւատոց-
225. «Ըստհ» 421.):

Փրկին էր պահել հայոց, Փրկիչը պիտի պահէր և յաւիտեան: Այդ յուսով էին հաւատոյ քաջ տխոյեանն և նորա արբանեակը ժայռերի մէջ պատապարուել հայաստանեայց եկեղեցին, մայր աթոռն ու հօար պահելու համար: Նոքա զիտում էին այդ վիճակում հայ իշխանաց գործը կիլիկից բարձանց վրայ և ահա Թորոսի և Օշնի վէճերը նոր հոգ պատճառեցին այդ ժայռակեցիկ արծիւներին: 1165-ին գնաց Շնորհալին դոյց հաշտեցնելու: և իւր քաղցրաբարց ներկայութեամբ այնպիսի սէր ներշնչեց Թորոսի սիրան, որ կարճ միջոցից յետց ինամեցաւ իսկ Օշնի հետ և իւր աղջեկը տուաւ նորա որդուն՝ հեթումին: Շնորհալին գնաց ի կամբըն Օշնի հետ և ձանսապահին հանդիպեցաւ ի Մամեստիա Մանուէլ կայսրի (1143—80) փեսայ Ալէքս Աքսուխուսին: Ալէքս զանազան չարանիւթ բանսարկուներից բարուրանք էր ստացել հայոց եկեղեցու գէմ ըստ որում և փափաքեցաւ Շնորհալու կարծիքն իմանալ. վերջինս ցոյց տուաւ որ այդ ամենը զբարտութիւն էր և բացայատեց հայաստանեայց եկեղեցու ուղղափառութիւնը: Ալէքս ինդրեց նորանից այդ զրաւոր տալու, վասն որոյ և Շնորհալին զրեց և մի առ մի հերքելով թշնամեաց զբարտութիւնք, զրոշմեց հայոց գտանատկան կէտերը: Նա իւր հեղաբարոյ բնոյթով և իմաստալիր զրութեամբ այնպէս զրաւեց Ալէքսին, որ վերջինս մեծ պատուով ուղարկեց նոր Օշնի հետի կամբըն:

Շնորհալին վերադարձաւ տուն. քանի մի ժամանակից յետ Ալէքս ևս զնաց ի կ. Պօլիս և ամենայն ինչ պատմեց կայսրին: Մանուել արդէն իւր գահակալութեան տարիներից զբաղած էր դաւանաբանական հարցերի և քանի մի ժողովներում վճիռ էր տուել և վէճերը վերջացրել. նորա մէկ մեծ հոգն էր այդ շրջանում չին չոռված նոր-Հռովմայ հետ միացնել. Հռովմայ քահանայապեաք խաչը թողած, սուր էին ձեռք առել սակայն կրօնաւոլի քօղով և ահա կրօնի միացմամբ պիտի աջողէր Մանուելին իւր պետութիւնն ընդարձակելու: Նա երկար բանակցութիւն ունեցաւ Հռովմայ Ալէքսանդր III-ի (1159—81) հետ և երբ գործը մնաց ժաղովին, միաքը զարձրեց և յարելէք և հրաւիրեց նաև Գրիգոր Գ-ին Շնորհալու միջոցով այդ նպատակին ձգտելու և մասնակցելու, 1167 թուին սեպանմբերին: Մանուել ուզում էր հաւատացած լինել և հաւատացնել որ ազգերն ոչ միայն ի մի հաւատ պիտի միանան և մի հովուից—Գրիստոսից հռվուին, այլ և ի մի փարախ տաւալեն: Առ այս իր թէ Աստուած մանաւանդ իւրեանից է պահանջում հոգալու: Ոչ պակաս պիտի և հայրապեաք հոգան, նկատում է Մանուել զի նոքա ո. Գրիգը ճանաչում են. և յիշում է որ իբր թէ Ներսէս Ալէքս Աքսուտի հետ փափաք է փոխանակել Եկեղեցեաց միութեան վրայ, զոր և Մանուել իւր թէ կարգացել է Շնորհալու նամակում: Այս երես առ երես ստելուց խօսք է առնում և առաջարկում, ընդունել ինքան իբրև միջնորդ Եկեղեցեաց միութեան իրագործման, վասնորդյ և հրաւիրում է Շնորհալուն ի կ. Պօլիս:

Գրիգոր Գ. արդէն մեռած էր, առաջուց իւր հայրապետութիւնը Ներսէս Շնորհալուն յանձնած լինելով (1165+66), որ մի ճառով պարզեց թէ որպիտի ջերմեանդութեամբ և երկիւզածութեամբ բարձրացաւ նորա

նման սուրբ տնձն այն հինաւուրց նուիրական աթոռը¹: Շնորհալին բացէ ի բաց մերժեց այդ հրաւէրը, նախ անխաղաղ հանգամանքները պատճառ բերելով և երկրորդ որ եթէ Գրիգոր Գ. ևս կենդանի լինէր «զիարդ կաթիլ մի զիտութեան հնար էր առ համատարածն ծով իմաստութեան համարձակիլ մերձինալ ի հարցումն և ի պատասխանիս, որով իւր կ. Պօլիս գնալու հնարաւորութիւնը հանեց արմատաքի Հռովմաց մաքից: Հարկաւ նա յայտնեց նախապէս իւր ուրախութիւնն, որ կայսրը հակուած է Եկեղեցիք միաբանեցնելու, ընդ նմին զրեց ամենայն մանրամասնութեամբ Հայաստանեաց Եկեղեցու հաւատքն և առանձնայտութիւնք և ապացուցելով դոյտուղափառութիւնն, առաքեց նորան ի պատասխան: Ժողովը գումարուեցաւ ի կ. Պօլիս 1168 թուին Հռովմայ կարգինալաց և Հռովմայ պատրիարք Միխայէլ Անխիալուսի ներկայութեամբ, ստկայն միաւորութիւնը զլուխ չեկաւ:

Մանուելի նպատակն էր օգաուիլ Շնորհալու քաղցրաբարց բնոյթից և բան մի զլուխ բերել, բայց այդ անշաղող անցաւ, ըստ որում նորա պատասխանն էլ մռացութեան տուաւ, թէկ չմոռացաւ Հայոց. . . Երբ Հռովմայ հիս բանակցութիւնն ապարգիւն անցաւ և երկու հնարիմացներն իրար խաբել չկարեցան, ամբողջ երեք տարիներից յետոյ, այն է 1170 թուին մայիսին Մանուելը կրկին միաքը զարձրեց զէպի Հայոց, ըստ որում կանոնաւոր բանակցութիւն չունեցաւ Շնորհալու հետ և իսկցին վերջ չտուաւ, զի մինչեռ Հռովմայ հետ միաւորութեան զործը կախուած էր զերիշնանութեան, բռնապետութեան, աշխարհային ճոխութեան հարցերից, Հայոց հետ ամենայն ինչ հաստատառած էր ուղղափառ գաւա-

¹ Թուղթք. ս. Էջմիածին, 1865. էջ. 411—426:

Նանքի, աստուածային բանի վրայ, որ ոչ մի խարէութեան տեղիք չպիտի տար և գրչի մի շարժումն ահազին հետեանքներ, փոփոխութիւններ պիտի բերէր. Մանուէլ գրեց վերատին 2 տարի յետոյ 1172-ին դեկտեմբերին, ի նկատումն Շնորհալու 1170-ի հռկտեմբերի թղթին: Շնորհալու գրած թղթերն իսկ կազմում են ամբողջութիւն մի. այժմ տեսնենք թէ ինչպէս վարուեցաւ այդ թղթագրութիւնն և ինչ գրեց Շնորհալին այն ձգնարանից, ուստի բարբառում էր որպէս կաթուղիկոս առ իւր հօտն. «եմք իւր զայծեամն յորսորդաց և ի շանց փախուցեալք՝ ի քարտնձաւս յայս բնակելով» (Ընդհ. 9). և կամ (Էջ 421). «ոչ միայն յարտաքնոյն որք հակառակ են հաւատոյս՝ նեղեալ տագնապիմք ըստ մարմնոյ. . . այլ և յանուամբ քրիստոնէից. նաև յորոց կցորդ են կարգի մերոյ և ձեռյ, որք յաղագս փառամոլ ախտի հակառակ գտեալք Աստուծոյ և աստուածայնոյ աթոռոյս ի սկզբանէ հայրապետութեանս տեառն մերոյ մինչև ցայժմ՝ որ պէս ծանօթ է ամենեցուն, և զաղատեալս ի Քրիստոսէ պէս ծանօթ է ամենեցուն, և զաղատեալս ի Քրիստոսէ զեկեղեցի սուրբ ընդ հարկաւ արարին անօրինաց՝ կամաւ (!) և ոչ ի հարկէ. որոց տալոց են զվրէժ հատուցման այրմամբ գեհենոյն՝ առաւել քան զայլոց մեղանաց (!):»

۶۷.

«Հաւատ ծածկեալ կամ կեղծառընեալ
հը է հեռի յանհաւատութենէ» :

« հնչ և իցէ, երկնչիմ ի Յունաց, նա
զի բաշխել ինչ կամիցեն» :

« Ենորհալին սկզբունք մի վարսելով թէ, «որպէս ի մասունս մարմնոյ քան զամենայն պատուական ադրյն և առաջին զլուխն է... այսպէս և յանդամն հոգեցն՝ մեծ և առաջին իբրև զգուխս՝ է հաւատցն Ճշմարտութիւն» (Ընդհ. II.), ամենայն ժամ չէ զանում հաւատց իւրաքանչիւր խնդրի վրայ բացատրութիւն տալ ըստ որում և իւր առաջին թղթում դնում է Հայաստանեայց եկեղեցու գաւանանքն և յատկութիւնք ի հրապարակ «զբովանդակն պարագրելով հաւատց մեր Ճշմարտութիւն և զեկեղեցւոյ կարգաւորութիւն ի հարցն սրբոց աւանդից ընկալեալ...» (Էջ. 143): Նա ապացուցում է այդ հաւատցոյ ուղղափառութիւնը հրաշալիք քաջաբանութեամբ, չէ յարձակում օտար դաւանանքի վրայ, սակայն չէ մոռանում յիշել ընդհանրապէս այն կէտերն, որոնցից իւր պաշտած եկեղեցին խորշում է. նա հերքում ջրում է այդ կէտերն

և փառաբանում է իւրը հաստատուն բացայայտութիւններով, բայց ազատամիտ խոհեմութեամբ անդիտանում է այն եկեղեցիք, որոնք գաւանում են և ընդունում իւր հերքած եղծած կէտերը: Նա չէ ասում որ հայաստանեայց եկեղեցին է միմիայն ուղղափառը. Նա չէ ասում նաև թէ օտար եկեղեցիք չարափառ են. Նա չէ ասում այլրց հրապարակապէս. այլ նա գեղեցկապէս ապացուցում հայաստանեայց եկեղեցու առաքելական ուղղափառութիւնն, ընդ նմին և համեմատութեամբ հանդերձ հերքում է այն ամենն ինչ որ հակառակ է զորան և գնում է իւրն ամենայն մանրամասնութեամբ իւրաքանչիւրի առաջքննելու և քննաբանելու հրաւիրելով բաղձացողին:

Արդ զեռ. 1151 թուին իւր «Բան հաւատոյ» գեղազրոշմ զբութեան մէջ երգաբանում է իւր դաւանանքն ասելով.

Նոր այս խառնումն պահնչեի,

Աստուած ընդ մարդ բնութեամբ խառնի.

Ոչ էութիւնն փոփօխի,

Եւ ոչ ձեռվ կերպարանի,

Որպէս ասաց ժանան Եւտիքէս՝

Թէ ոչ մարմին առ իսկապէս...

Եւ ոչ երկուցն միութիւն,

Բաժանելով յերկու բնութիւն,

Եւ կամ յերկուս որդիս զմին,

Բստ Նեստօրի չարաբաստին...

Արդ յայսպիսեաց փախչիմք ի բաց,

Իբր ի քարբից թունաւորաց.

Տեսեելով լուսոյ շաւղաց,

Բստ ուղղափառ վարդապետաց.

Եւ դաւանեմը միութիւն,

Ոչ այլայլեալ այնու զբութիւն.

Այլ նոյն Որդին, որ ի չօրէ,

Եղե որդի առ ի մօրէ:

Եւ մի ասեմք բնութիւն այսու,

Բստ խառնըմնն անձառելուց»:

«Ոչ ոմն անմահ ոմն մեռեալ.

Զի այս երկուք են բաժանեալ.

Այլ որ անմահ նոյն և մեռեալ,

Եւ որ մեռեալ նոյն և մնացեալ»:

Սմին նման և նշանախեց չշեղուելով իւր նախնեաց վարդապետութիւնից, զրում է մերթ ընդ մերթ նարեկացու ոճով և իւր թղթերն, ըստ որում և իւր «Բանք հաւատոց» կրկնում է և ողնդում է. «մի բնութիւն ոչ շփոթմամբ ըստ Եւտիքեայ, այլ ըստ կիւրեղի Աղկքանդշփոթմամբ ըստ Եւտիքեայ, այլ ըստ կիւրեղի Աղկքանդշփոթմամբ ըստ Եւտիքեայ»: Եւ բացւյ՝ եթէ «մի է բնութիւն բանին մարմնացելոյ»: Եւ մեք յաւանդութենէ սրբոցն ասեմք զայս...»:

Ճարտարախօս է նա իւր արտայայտութեանց մէջ և զօրաւոր է իւր վայելուչ հարուածներով, զորոնք գիպոզաբար յղում է առ իւր թշնամին: Նա լայնաբանօրէն ապացուցելով հայաստանեայց եկեղեցու վարդապետութեան Ճշմարտութիւնն ու հարազատութիւնը, պարզ է որ խորտակում է իւր թշնամուն, զի չէ կարող Ճշմարտութիւն լինել փրկազործութեան խորհրդի մէջ. Ճշմարտութիւնը մի է և եթէ: Իսկ նորա յառաջարերած մոլար վարդապետութիւնը, որոնցից նա մահու չափ խորշում է, զլաւորապէս երկուք են՝ շփոթմամբ մէկ բնութիւն և բաժանմամբ երկու բնութիւն տառածածը: Շփոթմումն է Եւտիքեսինն, ըստ որում նորա Քրիստոսի մէջ կորել է մարդկութիւնը. բաժանմումն է կօչում այն վարդապետութիւնն, որ ասում է թէ անարգանքն ու թշնամանքը Քրիստոսի մարդկային բնութեան է վերաբերում, իսկ փառքն ու Հրաշքն աստուածային բնութեան. չարչարուաղ մեռնողը նորա մարդկային բնութիւնն է, իսկ յառնող, Հրաշարպործողը նորա տառուածային բնութիւնը: Եւ ակն-

յայտնի է որ այս քաղկեդոնական վարդապետութիւնն է. ասել է թէ՝ Ներսէս Շնորհալին, որպէս և առհասարակ հայք ի Հնուց անակ քաղկեդոնականութիւնը կոչում էին՝ վարդապետումն երկու բնութեան բաժանմամբ: Եւ իրօք բաժանմամբ էին վարդապետում քաղկեդոնականը, որպէս տեսել ենք, ուրիշ բան է, եթէ բառապէս չեն շեշտում: Ակներև բաժանումն է, եթէ մեռնող բնութիւնն այլ էր և յառնողն այլ, և ոչ բնութեամբ միացեալն Քրիստոս մեռեալ և միանգամայն նշն ինքն կենդանի...»

Շնորհալին հիմն ի վեր տապալելով եւակականութիւնը, չէ ուզում նոյնպէս վարուել քաղկեդոնականութեան հետ. նա լաւ գիտէ Հայաստանի ապատամութիւնն, որ չէ անարդում այլարաւաններին և իւր ամբողջ գոյութեան ընթացքում չէ փորձել այլ եկեղեցեաց վրայ յարձակուելու, եթէ նոքա չեն սպառնացել իւր հօտին, ուստի և նա ջանում է չվերաւորել իւր թշնամուն, թէւ անուղղապէս հերքում է նորա դաւանանքը: Նա գեղեցիկ նրբաբանութեամբ գրում է զեռ իւր առաջին թղթում: Փոխանակ միանձնաւորութեանն, զոր դուք ասէք ի Քրիստոս, որ է ուղիղ և խոստովանեալ ի մէնջ, է և մերս մի բնութիւն ասեն զցդ և նման, և ոչ հերձուածողական կարծիաց աղադաւ»: Այսինքն ուղղափառ է ասել մէկ անձնաւորութիւն ի Քրիստոս, որպէս և մենք խոստովանում ենք. սակայն ուղղափառ է և մէկ բնութիւն ասելը. «Քանզի մի բնութիւն ոչ վասն այլ իրիք ասի ի մէնջ, այլ յաղագս անբաժանելի և անձառ միաւորութեան Բանին և մարմնոյն»:

Այսու հանդերձ հոռոմք երկու բնութիւն էին տառւմ, ուստի և Շնորհալին զլում է «նուե յերկու բնութիւն ասելոյն՝ յորժամ ոչ վասն բաժանման լինին ասացեալքն»՝ ըստ Նեստորի, այլ վասն զանցփոթութիւնն ցուցանելոյ

ընդդէմ չարափառացն եւակիքեայ և Ապողինարի՝ ոչ փախչիմք»: ուրեմն երկու բնութիւն կարելի է ասել «յորժամ ոչ վասն բաժանման լինին ասացեալքն», բայց ինչպէս պէտք է ասել որ այդպէս լինի: Շնորհալին իսկըն և եթ հերքում է երկու բնութիւնն զրութիւնը, յարելով. «այլ զոր օրինակ հոգի և մարմին մարզյ՝ են այլ և այլ բնութիւննը, վասն զի ոմն երկնային է և ոմն երկրային, ոմն երկելի և ոմն աներեցթ, ոմն ժամանակեայ և ոմն անմահ, սակայն յետ միաւորութեանն՝ մի բնութիւնն ասի մարդն և ոչ երկու, և ոչ մի բնութիւն ասելով շփոթումն իմանի ի մարդն, կամ հոգի միայն կարծիկ զնա կամ մարմին միայն: Այսպէս և Քրիստոս թէպէտ և մի ասի բնութիւնն, ոչ շփոթման աղազաւ են ասացեալքն, այլ վասն անձառ միաւորութեանց երկուց բնութեանցն ընդ միմեանս. զի եթէ այսպէս ոչ էր, հարկ էր ասպա ոչ երկու բնութիւն միայն, այլ և երիս բնութիւնն իմանալ Քրիստոսի, երկուս զմարդկայինո՞՝ հոգի և մարմին, և մի՝ զաստուածայինո՞»: Հետևաբար մոլար է երկու բնութիւն վարդապետել ի Քրիստոս, զի այդ բաժանումն է մոցնում Քրիստոսի մէջ ուստի և զիազողաբար զրում է. «բայց յետ միաւորութեանցն բարձան երկուութիւնք բաժանմանցն՝ ըստ սրբոց վարդապետացն ասելոյ» (130, 137), Հասկանալի է որ մարգեղութիւնից յետոյ չէ կաբէլի Քրիստոսի մէջ երկու բնութիւնն ճանաչել, զի այդ երկուութիւնն է, այդ բաժանումն է, ուստի և ասում է «եթէ միութիւնն վասն անքակաելի և անբաժանելի միաւորութեանն ասի և ոչ վասն շփոթման, և երկու բնութիւնն վասն անշփոթ և անայլայլի ի ինելոյ և ոչ վասն բաժանման, երկաքանչեւրքն ի սահմանի են ուղղափառութեան»: Սակայն Շնորհալին վերագոյն ըստ Նեստորի, ապացուցեց որ իւր մի բնութիւն ասածը բացայացաւց և ապացուցեց որ իւր մի բնութիւն ասածը շփոթմամբ չէ. իսկ երկու բնութիւն չէ կարելի ասել

մարդեղութիւնից յէտ յ, ուրեմն մի բնութիւնն ուղղա-
փառ է, իսկ երկու բնութիւնը չարափառ:

Նոյն է երգում նա և «Բան Հաւատոյ»-ի մէջ.

Երկուս ասել դարձեալ բնութիւն
Վասն ի յերկուց դոլ միութիւն,
Զէ այս օտար Ճշմարտութիւն,
Թէ չբաժանեն յերկուս զմին:
Բայց մեք այսպէս խոսսովանիմք,
Աստօւածայնոցն հետեւի մք.
Եթէ հոգի, մարմին և միաբ,
Որով մեղան աղդ մարդկայինք,
Էտո ի մէնջ Աստուածն բան
Եւ միացյց բնութեամբ յինքեան.
Անմեղ արար զմեղանշական,
Զապականեալն՝ անապական...

Ըստ նմին և եղծում է երկու բնութեան վարդապե-
տութիւնն ասելով:

Զի որք երկուս բնութիւնս ասեն
Եւ ի յերկեակս բաժանեն,
Հարկ է յերիս դոլ զատանել,
Եւ կամ ի մին միաւորել
Սյա է յոգի և ի մարմին
Եւ ի բնութիւն աստուածային,
Եւ կամ զիսառնումըն մարդկայնոյն
Ասել հզօր քան զԱստուծոյն»:

Այսպէս և գեռ իւր առաջին գաւանազրութեան մէջ
Ճեշտում էր. «յաղագս որոյ մոլորին որք ասենն թէ, այլ
ոմն է որ չարչարեցաւն, և այլ ոմն՝ որ ոչ չարչարե-
ցաւ» (124):

Յար և նման գեղեցիկ բանափարութեամբ ապացու-
ցում է կամքի և ներգործութեան միութիւնը Հայաստա-
նեայց եկեղեցու պաշտական կարգերի և ծէսերի ուղղա-

վառութիւնն, այն է, բաղարջ հացով և անապտկան
գիսով պատարագելը, ծննդեան և մլրասւթեան տօնի մի
և նցն օրը կատարելը, երեքսրբեան փառաբանութեան ի
գէմա Որդյո տաելն, և այլ քանի մի խնդիրներ, սակայն
չէ մառանում իւրաքանչիւր անգամ մեղմացնել իւր յար-
ձակմունքն, ասելով «եթէ այսպէս և եթէ այնպէս՝ ի
փառս Աստուծոյ կատարեցին» և այն: Որչափ նա ջանում
է չփերաւորել իւր հակառակորդին, այնու ամենայնիւնա
շեշտելով որ իւրաքանչիւր եկեղեցի իւր սովորութիւնն
է պաշտպանում, առանց տեսանելի վիրաւորանք հասցնե-
լու, անկման հարուած է տալիս իւր թշնամեաց ասելով.
«Ճշմարտութեանն սիրողաց արժան է ոչ սովորութեան
ծառայել որպէս տղէտ, և ոչ անիրաւութեամբ արդարա-
նալ որպէս վիճարան, այլ ի հոգեկորական դրախտս յաստ-
ուածաշունչ զիրս շրջել մտօք և խնդրել ի նոցանէ
զպտուղն Ճշմարիս, և ապա Ճաշակել: Քստ որում և
մի առ մի հետեաբանում է յառաջարեալ կտերի Ճըշ-
մարտութիւնն, որպէս յիրարկում է Հայաստանեայց ե-
կեղեցին:

Ոյս է հրաշաբան հայրապետի հայրենի եկեղեցու
Ճատագովական եղանակը. սակայն նորան հրաւիրում էին
միաբանեցնել եկեղեցիներն. այդ լաւ զործ էր, իսկ լաւ
զործից խոյս տալը մեղք է, ուրեմն պէտք էր աշխատել
լաւապէս իրացործելու, մանաւանդ որ ինչպէս մի կողմից
այլագաւան Ասորիք էին դիմել առ Հայոց կաթողիկոսն
Հայաստանեայց եկեղեցու հետ միանալու մտօք, նոյնպէս
և Հոռվմ բանակցում էր կայսրի հետ. Հարկ էր ուրեմն
որ Բիւզանդ և Հայք ևս միաբանէին.. Կասել ևս ան-
կարելի էր, զի, որպէս զրում է Գրիգոր Տղան, «յառաջ
կուն զմեզ յոյնք միանդամ և երկիցս, արդ ոչ է պարտ
արիաբար ընդդէմ զալ նոցա, կամ հաւանել կամ հա-
ւանեցուցանել: Եթէ երկու բնութիւն ասեն չարաչար,

ըմբերանեսցուք և յանդիմանեսցուք, եթէ դարձցին՝ ընկալցուք և շահեսցուք զեղբարսն... Թէև ոչ այլ ինչ՝ գոնեա զմերս լաւութիւն և առողջութիւն ծանուացուք նոցա»: Այս գաղափարն էր որ ոգեօրում էր հայոց դէսի յառաջ եռանդ էր տալիս նոցա, որպէս նախնաց արժանաւոր քաջարի զինուարներ ցոյց տալ որ վարկապարագի չեն կոռւել և մաքառել և անմառութեամբ չեն մեռել հայստանեայց եկեղեցու հաստատութեան համար:

Ըստ այս սկզբանց առաջնորդուելով, պէտք է նոյնպէս որոշել թէ ի՞նչ ձանապարհով էր կարելի զործը գլուխ բերել: Շնորհալին այստեղ ևս չէ յապազում: Նատալիս է կայսրին անհրաժեշտ հրահանդ. նախ՝ կայսրը պարտ է աշխատիլ ծշմարիտ հաւատքն որոշել և գտնել, որ թագնուած է որպէս պատուական մարդարիտ, զորմիայն իմաստուն վաճառականն է ձանաչել կարենում: Դորա համար հարկ է որ կայսրը խօնարհուի իւր դահից և ոչ որպէս աշեղասարս բոնապետ զործի դիմե, զի աշեղութեամբ պատերազմի են գնում միայն, որից բարձր նշանակութիւն ունի եկեղեցու խաղաղութիւնը. իսկ միացնել (երկրորդ) չէ կարելի բռնութեամբ, որպէս չէ կարելի ծոռուած ծառը բռնութեամբ ուղղել, զի կկոտրուի. չէ կարելի և աչ զի խստերախ հանդարտեցուցանել բռնութեամբ սանձից՝ առանց ողոքանաց և զգաստացուցանող ձայնից»: Ուրեմն ա. պարտ էր գտնել ծշմարիտ հաւատքն և ֆ. ի նա միացնել քրիստոնէական եկեղեցու պառակտեալ մասերն, որոնց մէջ զանազան թշնամանքներ են մտել և կարօտ են հոգատարութեան, որպէս զի բժշկուին և ապա միանալ կարենան:

Այս նպատակներին հասնելու համար տալիս է նա ծրագիր ևս, որին պարտ է կայսրը հետեւի. նա պարտ է նախ հրամայել եկեղեցական դասին և ուսմիկ ժողովրդին այլ ևս չհայհայել, չժշնամանալ հայոց, չաւերել եկեղե-

ցիք, չանարդել սրբութիւնը ինչպէս անհաւատք, այլ սիրով վարուել, վասն զի հայք տեսնելով այդ հայհոյութիւնք, ինքեանք ևս բնականաբար նոյն հակառակութեամբ են ընդդիմադրում: Երկրորդ, պատուիրել բոլոր եկեղեցիներում աղօթելու, որպէս զի միութեան գործն կատարման համար Աստուծոյ ողորմութեամբ, որպէս և ինքն է հրամայել հայոց եկեղեցիներում անելու:

Իսկ այս ամենը յառաջ վարելու համար պէտք չէ որպէս տէր և ծառայ խօսիլ իրար հետ հաւատոյ ինպրի վրայ ծշմարտութիւնն որոշելու համար, այլ իրաւունք ունին համարձակապէս իրար պակասութիւնը յառաջ բերելու, զի աննիւթեական շնորհիւ հաւատար են Քրիստոսի հաւատացեալք: Այս այսպէս անելուց յետոյ մնում էր ժողով գումարել և պիյուք երկոցունց բաժանեալ որմոց՝ զլուխ անկեան և թագաւոր զվէմն Քրիստոս՝ որպէս և է իսկ ծշմարիտ, և գատաւոր՝ զդիրս առաքելոցն և մարդարէիցն և զուղղապէս վարդապետաց եկեղեցույ, և մեք իւրաքանչիւր ոք որպէս զատախազք կարով առաջի թագաւորին և գատաւորացն՝ խօսեցուք իրաւունս ի նոցանէ, և որում բանի և զիմաց վկայեն զատաւորքն ուղիղ և ըստ կամաց նոյա լինել զայն ընկալցուք անհակառակ. և զոր վկայեն արտաքոյ եղեալ ծշմարտութեան, եթէ ի գաւանութիւն հաւատոյ և եթէ յաւանկութիւնս եկեղեցոյ և եթէ առ մեղ և թէ առ ձեզ, յայնցանէ ի բաց հրաժարեսցուք երկոքեան: Եւ այսպիսի գեղեցկաբարբառ խօսքերով ճակատ արած ենում է և ասպարիզի է հրաւիրում իւր հակառակորդին՝ ցոյց տալ իւր եկեղեցու վիրում իւր հակառակորդին՝ ցոյց տալ իւր եկեղեցուն աւետարանի պակասութիւնք խօսքերի վրայ հիմնուած: Կանչում է քննութեան անվեհեր սրտով, որպէս ծշմարտութեան տիոյեան, հաստատ համազուած իւր եկեղեցու հարապատութեան:

Նա յանձնառու է ամենայն, ինչ որ իւր հակառակորդք գտնեն Հայաստանեայց եկեղեցում և ո. Գրքի խօսքերով և տռաքելական Հայրերի զրուածներով հերթեն, նա ընդունում է արտամերժել փոխել առանց տատամսելու: Սակայն և Բիւզանդ պէտք է փոխէր՝ այն ամենայն, ինչ որ Հայք ցցց կտային և Հաստատ ապացոյցներով հերքէին, վասն զի սխալն ուղղել ամօթ չէ, վասնորոյ և ամօթ չէ Բիւզանդի Համար, Եթէ, զիտութեան վայր գորով, Հայոց նուաստութիւնից բան սովորէին, զի ճանակ հմտութշշկաց սովորութիւն է ոչ անարգանս համարել յորժամ հիւանդանն՝ յաշակերտաց իւրեանց ընդունել զեղս քժշկութեան...» մանաւանդ որ Բիւզանդ չպիտի հպարտանար թէ, հենց ինքն է անսխալը, քանիզի ճանակ բիրք աշաց թէպէտ սրտոցին լինի զայլս տեսանելով, բայց զինքն և որ շուրջ զինքեամբ են զիրք մարմնոյն՝ անկարանայ նկատել, որ և յախտանալն՝ այլում կարտանայ աշաց և ձեռին վասն առողջութեան»:

Այնուհետև Շնորհալին հրաշալի կորովաբանութեամբ ապացուցելով Հայտառանեայց եկեղեցու դաւանանքն ընդդիմ քաղկեդոնականաց և Հաստատելով Հայոց տօների առաքելական Հարազատութիւնն, ասում է վեհութեամբ պանձալով. «ոչ ինքնահաճութեամբ բաժանեցաք մեք յայլոց ազգաց այսպէս տօնելովս, այլ՝ այլք զմերս ունելով յառաջագոյն փոխեցին որպէս կամեցան՝ զոր այժմ ունին: Իսկ մերս եկեղեցի անփոփոխ զառաջնոցն պահեաց սովորութիւն, Եթէ հեռաւորութեան աշխարհին պատճառաւ և Եթէ բաժանելոյն աղազաւ... ոչ զիտեմք». Հետեւաբար Բիւզանդ պարտ էր և պէտք էր գառնար առ այդ Ճշմարտութիւնն, որից խախտուել էր: Ներսէ չէ ուղում Յունաց անտեղի և վայրահաչ զրպարտութիւնք մի մի հերքել, զի Յոյնք բարի Համբաւից ծածկում են իւրեանց ականջներն, իսկ ասութեանց Համար բանում և լսածը ծիշտ Համարում:

Շնորհալին կնքում է իւր նամակը, մաղթելով. «Դուզնաքեայ բանիս մերց սերմն ի բարի և ի պարարտ անդս մուաց ձերոց սերմաննեալ ածեցունս և բաղմապատիկս աւրասցէ Աստուած, և մի լիցի փշովք հեղձեալ և կամ բուսեալ առանց արմատոյ և արագ ցամաքեալ և կամ յօդային թռանոց կերեալ». Նա մաղթում է որ իւր այդ ցանած սերմերը Մանուէլի խելքում պաղաբերեն հարիւրապատիկ ածելով, որպէս զի կայսրն ըստ չափոյ պաղաբերութեանն», վարձ ստանայ Քրիստոսից (195):

Այս Ճշմարտախրոխտ թռողթն, որ որքան խոնարհ էր և հեղաշունչ, նցնկան՝ և ևս առաւել՝ խորտակիչ էր և տապալիչ, խորապէս զժկամակեցրեց կայսրին: Այդ թռողթը լուութեան մատնուեցաւ, միութիւնն տնկարեկի երեկոյաւ Յունաց իւմաստոնց: Երկու ամբողջ տարիներ զլորուեցան և ահա Մանուէլ կրկին աչքը դարձրեց զէպի ալեւելք. թէ ինչ հնարիմացութեամբ էր իւր ծրագիրը պատրաստել այդ այժմ պիտի տեսնենք. Նա զեռ յոյս ունէր Շնորհալուն խաբելու, վասն զի 1168 կամ 69-ի ժողովում և ապա անկարող եղաւ հոռվմոյ քահանայապետին խաբել, բայց զեռ Մանուէլ և Միխայէլ ուրախ էին, որ ինքեանք չխաբուեցան: Այս անգամ այն է 1170 թռուին մայիսին ուղարկեց Մանուէլ մէկ թռողթ և իւր «իմաստուններից» Ճարտար ու Ճարպիկ Թէորիանոսին, ըստ որում մինչգեռ առաջ զրում էր առ Հայոց Հայրապետն առ պատուական և սրբազն կաթողիկոսն Հայոց Տէր Գրիգորիս», այժմ առձայնում է. «յաստուծոյ Հաստատեալ պատուական և իմաստուն կաթուղիկոսի Հայոց Տէառն Ներսիսի և այլն»:

Մանուէլ զրում է որ «ի վաղ ժամանակաց իմացել է Շնորհալու բարուք մտածութիւնն» և կամքն «սակս միաւորութեան եկեղեցւոյ և ուղղափառ Հաւատոյ»: և քանզի, ասում է նա, անկարօտ էք վերստին ուսանել «քանզի»:

յաղագս պատշաճ գոլոյ ձեզ՝ համախոհ լինելով
այսմ ուղղափառ եկեղեցւոյ, և հաստատել զմիաբանու-
թիւն ձեր ընդ սրբազն պատրիարքիս ընդ աստաւածայ-
նոյ ժողովոյս. «որով և մեծապէս գովի ի մաս-
տութիւն ձեր և երկիւղածութիւն» մանաւանդ
որ «զլուխ է անկեան յետ զլսոյն եկեղեցւոյ». ուստի և
առաքում է Թէորիանոսին և Յովհաննէս Ութմանին լիա-
գոյն երաշխաւորութեամբ իւրեանց կողմից այդ իրի վրայ
խօսելու: Նա յիշեցնում է, որ Շնորհալին Քրիստոսից
յետոյ «զլուխ անկեան» գոլով, պիտի վարձատրուի Տէ-
րից, եթէ բաժանեալ սերմերը միացնէ: Ընդ նմին և կա-
շառում է Հայաստանեայց եկեղեցու անկաշառ Հայրապե-
տին, ասելով, որ այդ միութիւնից յետոյ կվայելէ իւր
թագաւորական շնորհները «բազմապատիկ բարեմասնու-
թեամբ ըստ կամաց ձեր և խնդրոյ»: Ուրեմն չկարենալով
համոզել և ապացուցանել իւրի ծշմարտութիւնն, որ բա-
ցակայ է, կամ հերքել Հայոց և ցոյց տալ որ և է մոլո-
րութիւն, նա վատաբար ստիպում է նորան միանալ իւր
եկեղեցու հետ, թէև վերջինս մոլար ևս լինի:

Արդէն ծանօթ լինելով այդ ժամանակուայ Հայոց
տարաբաղդ վեճակին և կիլիկից իշխանաց ձգտումներին,
ակնյայտնի է թէ Մանուէլ Շնորհալու սրտի որ լարերին
է բախել աշխատում. բայց նա չգտաւ այդ լարը Շնոր-
հալու նման մեծատարած ծովի մէջ...: Շնորհալին իմաց
էր տուել այս ամենը նաև «Ասորոց ուղղափառաց» կա-
թուղիկոս Միքայէլ Մեծին, որ թէև փոքր ինչ մասնակ-
ցեց, սակայն օգուտ մի չափնելով այդ բանակցութիւնից
գրեց. «Աեր զաւանութիւն այդ է, մի բնութեամբ և կա-
մօք և ներգործութեամբ փառաւորել զՔրիստոս ըստ ա-
ռաքելոց և մարգարեից և ուղղափառաց հարցն մերոց,
և այդր վրայ հաստատեալ եմք անշարժելի. և որ ոք այ-
դու ընդ մեզ զիսաղաղութիւն կալցի և սիրէ զմեզ կալ-

յուք և մեք և սիրեացուք. և եթէ վասն այդորիկ ատեն
զմեզ և պատերազմին, մեք ընդ Աստուծոյ և ընդ հարցն
մերոց զնացուք, և մատուցուք զպարանոցս մեր ի վկա-
յական հանդէս նախնեացն մերոց»¹, ըստ որում և այդ
կարսկոն խօսքով մերժեց Մանուէլի հրաւերը Կ. Պօլիս
գնալու²: Բայց մենք աեսանք թէ ինչն էր Շնորհալու բա-
րեսրառութիւնը շարժում: Նա քանի մի եալիսկոպոսաց՝
Քրիզոր Տղայի, Ասորոց Յովհաննէս եպիսկոպոսի և Մի-
քայէլ Մեծի աշակերտ Թէորիոսի ներկայութեամբ խօ-
սեցաւ Թէորիանոսի և Յովհաննէս Ութմանի հետ, զի
վերջինքս հարցեր ունէին Հայոց եկեղեցու նկատմամբ, ո-
րոնց և Շնորհալին մի առ մի պատասխանեց և բացատ-
րեց Հայոց գաւանական և ծիսական զանազան կէտերը:

Բայց Թէորիանոս չուզեցաւ մի բնութեան վարդա-
պետութեան ուղղափառութիւնը ճանաչել, որպէս և զը-
րում է ականատես պատմին, որպէս և այլ հարցերում:
կար ինչ յորում միաձայն էին, կար ինչ յորում տա-
րաձայն. զիսաւոր կէտն հարկաւ բնութեան հարցն էր, որ
միաբանեցնելու հնար չկար, վասն զի «Հայրապետն սուրբ
երկրումբն սպառազինէր ընդ առաջին սրբոցն ընդիմ
նեստորականացն՝ միաւորելով, և առ եւտիքիանոսս՝ զբա-
կութիւն ճշմարտելով»: Սակայն որպէս Շնորհալին ապա-
ցուցեց որ Հայք Եւտիքէսի շփոթումից հեռի են, Թէո-
րիանոս բանտարեց որ Հոռոմք խորշում են «ի նեստորի
բաժանմանէն, ըստ որում երկու կողմերն ևս մերձնում
են իրար «Հոռակ եկեալք միմէանց ուղիղ զաւանութեամբ
Հաւատոյ» շնորհօքն Աստուծոյ»: Այս կէտից զատ Մա-
նուէլ քանի մի առաջարկութիւնք ևս ուղարկել էր հա-

¹ Միքայէլ Մեծ, 461, որ գործի շարունակութեան վրայ ասում
է. «Իսկ զպատասխանի տեսան ներսիս զոր զրեաց մեք ոչ իմացաք,
բայց կորովի էր յաստուածաշունչ զիրս և պարկեշտ և ջանացող ալր
ուղիղ կանոնաւ զրոց, և նա վծարեաց զիւրն»: ² Արուլք. II, 550:

ւատց և եկեղեցու կարգաց նկատմամբ, սակայն զոյա պատասխանը Շնորհալին հրաժարուեցաւ տալ, մանաւ անդոր հոռոմք ևս իւրաքանչիւր անդամ ժողովից էին զրում: Բայց որում այդ տարիները ժողովոյ տարիներ էին նոյա համար: Շնորհալին չուզեցաւ այդ խնդիրների վրայ խօսք բանալ անդամ, «զի մի փոխանակ միաբանութեան զանազան պատճառաս տացուք բաժանմանց, և շարժուն և փոփոխական երևեցին բանք մեր», ուստի և թողեց զայն-պիկ ժողովով քննելու և պատշաճ պատասխանը տալու: Իսկ հոռոմաց պատգամաւորաց խնդրանօք վերստին զրեց իւր խոստովանութիւն, վասն զի Շնորհալու խօսքն թէ հոռոմք հեռի են «ի նետորի բաժանմանէն», կարծել տոււաւ նոյա թէ Ներսէս ընդունում էր երկու բնութեան վարդապետութիւնը:

Շնորհալին իւր այդ թղթին մէջ, զոր առողբեց 1170-ին հոկտեմբերին, գրում է որ պատգամաւորաց խնդրանօք առաքում է սակաւ ինչ ևս իւր դաւանութեան ապացոյցներն, «Պոր արարաք սակաւուք ոչ ի մէնջ, այլ ի սրբոց վարդապետաց եկեղեցւոյ բանից՝ յօրոց նախ քան զբաժանումն»: Ասաի երեւում է որ Յօնիք իւրեանց նոր դաւանանքը նոր վարդապետաց խօսքերով էին ջասագովում: Ներսէս վկայաբերում է Քրիզոր Աստուածաբանից և Կիւրեղ Աղեքսանդրացուց, բացայայտելով որ երկու բնութիւն պէտք է միայն վերացաբար հասկանալ, որ նշն է, եթէ ասում ենք՝ թէ Քրիստոս Աստուած է և Մարդ միանդամայն, ըստ որում յայտ է թէ աստուածային ունէր բնութիւն և մարդկային, այլ մի աւորեալ և անբաժանելի, ըստ հոգւոյ և մարմնոյ յեղանակի», և կամ առաւել զեղեցիկ, «ոչ այլ ոք և այլ, մի լիցի, զի մի են խառնելով՝ Աստուածոյ մարդանալովն և մարդոյն աստուածանալովն...»: Ապա բերում է Կիւրեղի տրամախօսութիւնն, որով նա տապալում էր

երկու բնութիւն ասողներին և մի բնութեան ուղղափառութիւնն հաստատում մարդու բնութեան օրինակով. թէ որպէս և մարդն է ի հոգւոյ և ի մարմնոյ, քանզի այլատեսակք են այսոքիկ և միմիանց ոչ համագոյք, սակայն միաւորեալք՝ մի բնութիւն մարդոյն կատարենա: Ընդ սմին երկու բնութիւն իմանալի է, այնպէս ինչպէս և մարդու նկատմամբ, վասն զի հոգին մարմին չէ, և մարմինը հոգի չէ. և որպէս մարդու վերաբերմամբ կարող են ասել երկու բնութիւն, զի «շարադրութեան բանիւք» այսինքն տրամաբանական մտածութեամբ «տեսութեամբ, մտածութեամբ», «եկեալ ի մտածութիւնս միայն և ի տեսութիւնս հոգւոյ աչօք», «մտաց աչաց միայն տեսանելի» (202, 206):

Շնորհալին իւր այս բացարութեան կատարելութիւն տալու համար նզովում է նոցա, որոնք յեղումն և այլայլութիւն են ասում, կամ երեցիթականութիւն և այլն, այսինքն Եւակիքսի նմանեաց: Սակայն Շնորհալին չէ մոռանում և իւր վերջնական հարուածը տալ. նա դնում է հետեւալ նզովքը. «նզովեմք և զայնոսիկ՝ որք ի յերկուս բնութիւնս բաժանեն զմի Քրիստոսն ըստ նետորի, այլ տաերով զԱստուածն և այլ զմարդն. զմարդն չարչարելի և մեռեալ և զԱստուածն անչարչարելի և անմահ, և ոչ միտուլութեանն տան զերկաբանչիւրսն՝ զբաժարանն և զանչարչարութիւնն, զմահն և զանմահութիւնն» (207): Այս են է որ այս Քաղկեդոնի դաւանանքն է, զոր Շնորհալին բացարձակօրէն նզովում է:

Ապա Շնորհալին մտաղբելով ժողով գումարել արւեալ հարցմանց վրայ իրաւամբ խօսելու, աւելացնում է որ մէկ լիտակատար զբութիւն հայրց անփոփոխելի(!) հա-

ւատոց և հայաստանեայց եկեղեցու և թիւզանգացոց հաւատքի տարբերութեանց (!) վրայ պիտի զրէ ժողովից: Այսու որոշում է Շնորհալին իւր հրաւիրելի ժողովի նպատակն:

Կայսրն ստացաւ Շնորհալու թուղթն, որ որպէս քաղցր թջն, զարդարուն էր վայելուչ արտայայտութիւններով, սակայն այդու հանդերձ վտանգիչ էր և տապալիչ: Այդ թուղթն այնպէս զայրացրեց Մանուկին, որ երկար ժամանակ մուխը չհանդարտեցաւ. բայց նա լռեց և այլ ևս չպատասխանեց: Ընդ նմին Շնորհալին ևս բարձաթող արաւ այդ գործն և այլ ևս իւր վերջին թըղթում յիշած ժողովը չգումարեց, թերեւ լաւ համարելով լուսթեան տալ այդ անհետեանք բանակցութիւնն, որ իրապէս ապարդիւն պիտի մնար: Երկու ամբողջ տարիներ բոլորուեցան. վերջապէս 1172 թուին դեկտեմբեր ամսում թուղթ գրեց, և մի կողմ թողնելով իւր առաջուայ յիրարկած շողոքորթական գովեստները, դիմեց այս անգամ, լոկ «պատուական և սրբազն կաթուղեկոսիդ հայոց» հասցէով: Մանուկը ապա նախ ստում է անարգաբար, ասելով «ընկալաւ իսկ և թագաւորութիւնս իմ որբան քո պատուականութիւնդ ծանոյց սակս երկու բնութեանցն՝ զորս ի մի յանձնաւորութիւն Քրիստոսի, այս է՝ միոյ երեսաց», որի ոչ մի նշոյլը չկայ Շնորհալու թղթի մէջ: Հոռոմոց արքան այս խօսքերը ներս խմորելուց յետոյ սաստիկ վշտացած և կոշտ ու կոպիտ արտայայտութեամբ յանդիմանում է Շնորհալուն, որ սա մի բնութիւն է վարդապետում «զըիւր խրատս և զվկայութիւնս աստուածազգեցիկ հարցն (?) ընկեցիկ և խոտան առնելով». և անվայելչօրէն անուանում է Շնորհալուն «Հաճոյակից—այնոցիկ՝ որ շփոթումն ասեն երկուց բնութեանցն որ ի Քրիստոս»: Այս անարգանքից յետոյ ուգում է վճռաբար վերջ տալ այդ անորոշ բանակցութեան

և բոնաբար զբում է որ ուղարկել է Թէորիանոսին և Ութմանին ժողովում ներկայ լինելու, սակայն Շնորհալու համեստութիւնից խրոխացած, աւելացնում է որ եղած առաջարկութիւններից զատ առաքում է 9 կէտեր ևս, բերանացի ապագլուխով խորամանկութեամբ «որոց ոչ կամիք զհաւանականն հնազանդութիւն՝ զպատճառն յայտ առնելով պատասխանի արարէք»:

Պահանջած 9 նոր կէտերն են. ա. նղովել մի բնութիւն ասողներին, ընդ նմին և տղիտաբար մի շարքում է զնում եւտիքէսին, Դիոսկորիին, Սևերիոսին և Տիմոթէոս կուղին. բ. խոստովանել մի Քրիստոս, մի անձն՝ երկու բնութիւն, երկու կամք և երկու ներգործութիւն, միայն մարդկային կամքն ստրուկ աստուածայնին. գ. խաչեցեալը վերայնել. դ. տօնել հոռոմոց հետ միաժամանակ. է. միւռոնը ձիթով եփել. զ. հազրորդութիւնը խմորուն անել և ջրախառն. է. քանի մի բիւզանդական ժողովներ զաւանել և այլն, բայց որ զիստաոր փորացաւն է կայսրի—այդ այն է, որ կաթուղիկոսն ոչ թէ հայերից ընտրուի, այլ կայսրից նշանակուի. . .

Միքայէլ պատրիարքն ևս մէկ թուղթ գրեց, որով բարձրացնում է կայսրին և մէկ խրառիլակ շնուր, ասելով տղայաբար. «գրեթէ ամենայն թագաւորք երկրի հնացանդ լինին սմա, այլ և ահաւոր է յաշա ամենեցուն՝ որ զանդ են զնովաւ», կարծելով թէ Հայաստանեայց եկեղեւը հաւատոյ ախցեանը պիտի վախենայ նորա առաջ: Նա շողոքորթում է Շնորհալուն առանց համոգելու եռանդն առ ի չգոյէ բանեցնելու: Քանի մեծ հեռաւառութիւն երկու կողմերի միջև. մինչզեռ նա այդ անախօսութիւնից յետոյ յաւակնում է ասել մեծամատութեամբ առ Շնորհալու վեհութիւն. «ահաւասիկ դարձեալ չափաւորութիւնս մեր և որ ըստ մեզ սուրբ և առաքելական եկեղեցիս զգիրկս իւր պարզեալ ունի ձերում սրբութագութիւն»:

թեանդ, և է պատրաստ ի ձեր ընդունելութիւնդ», ան-
շուշտ կլանելու համար. Հայաստանեայց եկեղեցու շնոր-
հալի հայրապետն և արթուն հովուապետը քարոզում է
երկու կողմերին միաժամանակ մօտենալ իրար և որպէս
եղբայրներ սիրել միմեանց: Հայաստանեայց եկեղեցին կա-
րէր ազատամտաբար իւր թշնամուն, առանց նորան վնա-
սելու, սակայն չէր զրկել նորան, զի իւր սրբագործուած
պատմական համազումն էր, որ ամենայն բարեմիտ զրկումն
կզոհէր նորան անյատակ կորստեան. . . :

Ենորհալին ստանալով այդ առաջարկութիւնք, ինքն
վճիռ չոռուաւ և թողեց ամենը ժողովին, ըստ որում և
զրեց թէ գայթակղիչ կէտերն արդէն պարզաբանել է ըստ
ո. զրոց; իսկ առաքուած խնդիրներն կառաջարկէ ժողո-
վին և, եթէ Հնար լինի, Հնարաւորը կրնդունի. սակայն
կրկին և կրկին շեշտում և պնդում է որ այնտեղ մոլար
կէտեր չկան, իսկ եթէ ինչ և իցէ ընդունի, այն «յաղագու
աստուածային սիրոյն հաղորդութեան» պիտի լինի «և
ոչ իբր ի մոլորութենէ գտոնալով ի ձշմարտութիւն»: :
Բայց այս անարդար պահանջներն ևս ներում է միայն մի
պայմանով, այն է, որ Հայոց ժողովը պիտի քննէ և Բիւ-
ղանդիոյ եկեղեցին և նորա թերութիւնք ու մոլորութիւնք
մատնացցց պիտի անէ «Ս. Գրոց և առաքելական
Հայրերի վկայութեամբ» ապացուցելով (և ոչ թէ
կամակութեամբ փոխել կամելով զայն), որ «ի վկայու-
թիւնէ աստուածաշունչ Գրոց հաստատեալ են». ըստ ո-
րում և կայսրը պարտաւոր է զայնոքիկ լրացնել և ուղ-
ղել: Առ Միխայիլ ևս զրեց թուղթ մի, ցոյց տալով որ
միաբանելուց բնաւ խոյս չէ տալիս և այդ իւր մշտական
փափաքն է եղել և այժմ ժողովով պիտի քննէ և պա-
տասխանէ, ընդ նմին և խնդրում է որ նա ևս նմանապէս
ժողով գումարէ և այդ նմանապէն աշխատի:

Այնուհետեւ Ենորհալին հրաւեր ուղարկեց «առ ե-

պիսկոպոսս և վարդապետս Հայաստանեայց», որով հա-
կիրծ նշանակեց ժողովուելու պատճառն և որպիսութիւնն՝
որ Մանուէլ Ենորհալու աթոռակալութեան օրից՝ թուղթ
և պատգամաւորներ է ուղարկել քանի մի անդամ «յա-
ղագու սիրոյ և միաւորութեան եկեղեցւոյ ըստ նախնեացն
ժամանակի», որ ինքն ևս պատասխանել է «որպէս ար-
ժան էր», և այժմ հասել են այն աւարտման որ ինքն
իրու զուլս առանց անդամոյ չէ կարող առաջարկուած
ինդրոց պատասխան տալ, ուստի և ժողովով կզրէ «զայն
ինչ՝ զոր հոգին Սատուծոյ ցուցանէ մեզ»: Վասնորոյ հրա-
մայում է պատրաստուել, որպէս զի երկրորդ հրաւերն
ստանալով, Հոռմլայ գային: Ընդ սմին աւելացնում է
Ենորհալին, որ այս ամենն իմաց է տալիս, որպէս «զի մի՝
յանիմաստից ոմանց անուղղապէս ինչ լուեալ այլ ընդ
այլոյ ինչ կարծիցէք»:

Ենորհալու վերջին խօսքերից երեսում է որ այլ ինչ
էր տարածւում նորա գործերի վրայ և այդ ոչ միայն
Հայոց մէջ, այլ և ի կ. Պօլիս, վամն զի մինչդեռ, որպէս
տեսանք Ենորհալու թղթերից և ականատես պատմչից,
նա պարզ հարցաքննութիւն ունեցաւ Թէորիանոսի և
Ութմանի հետ երկու կողմերի եկեղեցեաց կենդանի ծա-
նօթութիւն ստանալու և տալու համար և ոչ վէճ կամ
պայքար, ըստ որում և պատգամաւորք ձանացէլ են
իւրեանց խոնարհութիւնն և միայն բերած հարցերին պա-
տասխանն ու լուծումն ստանալով, յայտնել են նաև կայ-
սրի այն ապսպրանքները, զօրոնք վերջինս թուի թէ
քաշում էր զրելուց: Այդ էր պատճառն որ Ենորհալին
յետ գարձրեց այդ երկու մէզմեխներին, թոյլ չտալով նոցա
Հայոց ընտանեկան ժողովին ներկայ լինելու և ներքին գոր-
ծերին խտանուելու, այլ և հեռատեսութեամբ զրոշմեւմ է
իւր թղթում իւրաքանչիւր անգամ բանաւոր ապսպրանաց
և «հարցաքննութեանց» հետեանքն ու որպիսութիւնն:

Սակայն Հայաստանեայց եկեղեցու շնորհալի հայրապետն և հօվուապետը տենչում էր առ հաւատայ փառաւոր ախոյեանները. նա հանգեաւ 1173 թուին օդոսառու ամսում 13-դ օրն, իւր բոլոր առաքինութեանց և իմաստութեան հիմն ու կատար հոչակելով այն ոսկեղբոշմ սկզբունքը, զոր Հայոց այդ մեծ դաստիարակն ի լրումն ամենայն ծշմարիտ կրթութեան և գիտութեան զրում էր առ իւր եղօրորդին՝ ուսանողն ի Կ. Պօլիս՝ ապագայ կաթողիկոսն Գրիգոր Ապիրատ.

«Այլ և զհաւատսղ որ յաւաղան Անշարժ պահեա միշտ յաւխտեան»

६८.

«Որոց աչք և տեսութիւն ի գլուխ իցէ և առ զլուխն, ընդ խաւար ոչ գնայ դալթակղելով և բախնլով ի կոշտից ծանապարհին» :

ԳՐԻԳՈՐ ՏՂԱՅ.

Մինչդեռ Շնորհալու¹ մահուան գոյքը հասաւ առ
Մանուկը և վերջինս միսիթարական թուղթ գրեց առ
Գրիգոր Տղան՝ նորին յաջորդն, հրատիրուած ժողովն գու-
մարուեցաւ ի համապայ և մերժեց կայսրի առաջարկու-
թիւնք: Գրիգոր Տղան ամենայն ինչ լուռթեան առւաւ.
Բայց երբ 1175 թուին եկաւ կայսրն Խփոխից կողմն Խլե-
ճասալանի դէմ, Գրիգոր Տղան շատեց թուղթ գրել առ
նա միութեան գործն աւարտելու փափաքով ըստ որում
ջանում է բարեկամութիւն մի նկատել կայսրի մէջ դէ-
պի հայոց, իսկ իւր թղթին ուշացնելու պատճառ է ա-
ռարկում նախ իւր տարտամութիւնն և ապա «ի վաղ
ժամանակաց հնացեալ մախանացս չարութիւնը» և երկրորդ

1 Ծնորհալու խօսակցութիւնը Յունաց դեսպանի հետ կայ Ա. Էջմիածնի մատենադարանի զբչագրաց մէջ. Եթէ դորա հնութիւնը ձշտուի, կիրատարակենք:

իւր հեռի լինելն կայսրի բարեգթութիւնից: Այս նկատողութիւններից յետոյ յայտարարում է որ առաջարկուած խնդիրները չն ընդունում և բուռն ընդդիմավութիւնն են Ենթարկում, ուստի խնդրում է առարկեալ կէտերը թեթևայնել, որպէս զի աստուածային խաղաղութիւնը հաստատուի և այնուշեակ ինքը սէրը կծնէ և կրուցնէ այն, ինչ որ իւր աճման օժանդակ է: Խսկ հաւատոյ խոստովանութիւնն այլ ևս աւելորդ է համարում կրինել, քանի որ Շնորհալու թղթերը կան, դրում է նա, «ունիմք առաջնորդ առ Քրիստոս խոստովանութեան ի մէջ մեր, որ զձեր թագաւորութիւնի նուածեաց ի հաւանութիւն Աստուածի մաստ գիտութեամբ՝ յոր առ մեղ ուղղափառութեան»: Հայք արդէն ուրախ էին որ Մանուէլ այդ հաւանութեամբ ընդունեալ է համարում Հայոց հաւատքն (Էջ 235, 244), ուրիշ բան էր, եթէ կայսրի այդ խոստովանութիւնը լոկ բանորսութիւն էր, միայն թէ Հայք այդ իրեւ Ճշմարտութիւն ընդունեցին և սկսան պարձանքով վերաձնել գնաց համբաւ նորա (Ներսիսի) ի կոստանդնուպոլիսիս և ի Հռովմ առ պատրիարքունքն և առ կայսերքն և նովաւ հաստատեցան ամենայն ազգ ի դաւանութիւնն Հայոց» (Միք. 88):

1176-ին սեպտեմբերին կայսրը պարացաւ Մելիտինէի մօտ և հաշառութիւն անելով թշնամու հետ, վերադարձաւ ի Կ. Պոլիս և ապա 1177-ին յունվարին գրեց իւր վերջին պատասխանը, նորէն միութեան բանակցութիւն սկսելով: Մանուէլ այս անգամ այլապէս է գործի ձեռնարկում: Նա կոչում է զինքն բարերար Գրիգոր Տղայի և ապա յիշում է որ Հայոց մէջ տարածուել է թէ Հռովմք երկու Քրիստոս են պաշտում, զի ի մի անձնաւութեան երկու բնութիւն են գաւանում, այնպէս և Հռովմք, զրպարտում են «Հայոց թէ մի բնութիւն

են խոստովանում «և աստուածաչարչարք գտանին և ոչ տան իւրաքանչիւր բնութեանցն զպատշաճ յատկութիւն վայելչական»: ընդ սմին և ուզում է խմօրել Հայոց գաւանանքն, ասելով: «անձնաւորութեանց միութիւնց ձեր իստով թիւնը կարծեցրեց թէ բնութեանց միութիւն էք բաւանում: Ապա ներբողելով Գրիգոր Տղային, նկատում է որ ինքն առաւել ևս փափաքում է միութեան ըստ որում և գնում է իւր գաւանանքն: Սյսպիսով ջանում է ըստ Ղեոնդ Բիւզանդացու՝ «բնութիւն» և «անձն» բառերը ձանաչել որ հարկաւ ծիծաղելի է, զի այդու ոչ միայն երրորդութեան վարդապետութիւնը մոլորութիւն կդառնայ, այլ նկատելու է, որ Հայոց լեզում «անձն» բառն է գնութեան» նշանակութեան մօտիկ և ոչ ընդհակառակն (զոր օր. Մատթէոս աւետարանչի 2, 20, 10, 39, 16, 25 ևյլն.): իւր քաղկեդոնական գաւանանքից յետոյ յարգործում է նցնն ուսուցանել և հակառակողներին զրպարտողներին «կռիկել և ի բաց վարելը և սէր հաստատել եղբարց մէջ, ըստ որում և ընդունելի անել երկու կողմանց ընծաներն և եթէ զրպարտազ է լինում, ժողովով ջրել և ուղեղը ցըց տալ զի բաժանման երկարաւետութիւնը շատ ցաւեր է յառաջացրել և ժամանակ է պէտք բժշկելու, քընութիւն է պէտք գայթակղութիւնք յարգարելու համար:

Ապա Մանուէլ, որ սկզբում առաջարկութիւնք շատացնում էր պինդ տեղից բռնելով սակաւով շատանալու համար, այժմ մերժեալ է տեսնում այդ ամենն և մոռացութեան տալիս, ընդ նմին յիշում է խորամանկութեամբ և ստախօսութեամբ, որ իբր թէ քննելով՝ շարականներում շատ տեղ երկու բնութիւն երգաբանուած է գտել, վասնորդյ և յորդորում է այնոքիկ բացարձակ խոստովանելու: Եւ այլ ևս ասում է նա. «ահա ոչ կայի մէջ մեր մէծ պատճառ, քանզի ըստ բարեպաշտ մտա-

Ժութեանն մի գտաք»։ Այսպէս միութիւնը վերջացնելով, Մանուկը զրում է որ Գրիգոր Տղան ևս ժողովով իւր խոստովանութիւնն առաքէ կամ, առաւել ևս լաւ, ինքն իւր եպիսկոպոսներով տեսակցութեան դայ խնդրին վերջ տալու համար։

Միխայէլ պատրիարքի ժողովն ևս հաստատելով կայսրի թղթի ուղղափառութիւնը, զրեց և մի թուղթ Միխայէլի ձեռքով, Շնորհալու թղթերի մերձաւոր հետեւութեամբ, սակայն խմորուած «երկու բնութիւն» ընթացակցութիւն եղեւ բնութեանցն» և այլ արտայայտութիւններով։ Ապա խնդրում է իւր այդ թուղթն ի նշան միութեան ստորագրել, ընդ նմին և առաքել Հայոց դաւանանքը, զոր խոստանումէ ինքն ևս ժողովով նմին նման ստորագրել։

Նկատելի է պարզապէս, որ Հոռոմը անզիտանալով իւրեանց առաջարկած կէտերն և միութեան բոլոր զործն երկու բնութեան խնդրին ուղղելով, ոչ թէ ուզում էին դորանով ամենայն ինչ վերջացնել այլ այդ միայն ձանկելու կոռւան մի էր, որով երկու հակառակ և իրարու խորթ եկեղեցիք համաձայն և միացած պիտի հրատարակուէին ի լուր աշխարհի և ի կուրայումն Հայոց։

Իսկ ապա, որպէս Մանուկը նկատում է թէ երկարաւէտ բաժանումը շատ ցաւեր է յառաջացրել, ուրիշն պէտք կայ դեռ ժամանակեայ բուժման, այսինքն քննութեան, վերաստուգման, արդէն մասնում է իւր խորհուրդները, որ ժամանակի ընթացքում իւր զործն ու մտադրութիւնք սիրով և խաղաղութեամբ, շցելով և բարեկամութեամբ է կատարելու Հայոց եկեղեցու վրայ, նորահօտի միամտութիւնից օգտուելով։

Հայք հասկացան այս, ուստի և կարեօր արթնութեամբ վերաբերուեցան իւրեանց պատասխանով, ըստ որում իրերի բերմունքը ցոյց է տալիս որ զրով խօսածն իրաք չպիտի լրանար և այդ պիտի խկոյն տեսնենք։

Գրիգոր Տղայ սկսաւ իսկոյն ժողով հրաւիրել և ահա Հայաստանի հիւսիսային վարդապետները զրգուուեցան Յունաց գէմ ասելով՝ որ արդէն մի անդամ կայսրն ընդունել է Հայոց հաւատքն, այլ ևս ինչ հարկ կայ վերսակն բանակցելու։ Նոքա զրեցին առ կաթուղիկոսն, որում որպէս նուասա «անդամք միոյ զլիոյ» յայտնում են, որ նա հիւսու կենաց այդ յարտերութիւնից «զի զրեալքս ի նոցանէ պատրուակեալ յինքեանս ունին զթոյթեամբ ապանութեանն ապականչացն»։ Սոցա թուղթը մի հրաշալի ապացոյց է թէ ինչպէս Հայոց վարդապետք հետեւում էին եկեղեցական գործերին և իւրեանց խոնարհութիւնը պահելով հանդերձ, հնազանդութեամբ զրուշացնում էին Հայրապետաց, գէմ ցոյց տալով որ ինքնանք միաձայն, մահու չափ հաւատարիմ են նախնեաց։ Նոքա շեշտելով որ Հոռոմոց հաւատքը նեստորականութիւն է, թէև «երկու զէմ» չեն ասում, սակայն «երկուս կամս ասելով» և երկուս ներգործութիւնս, նովին վարենի իրաք հարկատորութեան ներհակաց կամաց ի ներքս ածել յանձտուելին տնտեսութիւն»։ Ընդ սմին նկատում են խելամտութեամբ, որ նախնի Հայք զուր չեն խորշել Հոռոմի և թէ Հոռոմը «չեն ինչ նուազ քան զառաջնոյն բաժանութեան լիալ պատճառս, յորմէ և զուր պարտիք զրուշանալ»։ Որքան անպաճոյձ են այս խօսքերն, այնքան ստոյդ և յաւիտենական։

Ապա այդ քաջախրոխա վարդապետք յիշելով չեմք ինչ թիւրեալ ի սրբոյն աւանդից, և ոչ նորաձես ինչ արարեալ, խցանում են պատրաստի կալ և ապացուցել թշնամու մոլորութիւնք, ընդ նմին և հռչակել Հայաստան եկեղեցու ուղղափառութիւնն «զի ոչ յանկեան ուրիշ ի թափստեան է Ճշմարտութիւնն, և ոչ ծառայէ տուրիք ի թափստեան է Ճշմարտութիւնն, և ոչ ծառայէ տառութեանն»¹։

¹ Թուղթը, Տպ. Ս. Էջմիած. 424:

Նազլիսութիւն են վայելում, իբրև սիւնք եկեղեցու, որոնց վրայ է գլուխը: Բայց եթէ կաթուղիկոսը շեղութի գիտութեամբ, նա կորյնում է իւր իրաւունքն և ամենայն հաւատարիմ հայ իրաւատէր է դառնում նորա վրայ:

Գրիգոր Տղայ այս լաւ զիաէ, ուստի և շաապում է իւր եկեղեցու անհաւատարիմ անդամոց վրդովմունքը փարատել: Նա թուղթ գրեց, աշխատելով ամոքել նոյս զայրոյթն և մարդասիրութիւն ներշնչել դէպի հոռոմք: Նա յիշեցնում է, որ պէտք չկայ հրապարակ հանելու թէ նոքա աղանդաւորներ են, գտնիղ ունին նոքա եկեղեցական հայրեր, որոնց գրուածներն ամբարուած են և կարող են խելուհաս անել նոյս, յիշեցնում է թէ չպէտք է մոռանալ որ հոռոմք միշտ ջանացել են ժողովով արմատախիլ անել աղանդներն և քանի որ զիտութեան աղքեր են, չպէտք է տակել նոյս թէ մենք նոցանից սովորելով հանգերձ, հինց միայն մենք ենք ուղիղ: Եւ իրաւամբ յիշատակում է Գրիգոր Տղայ, որ մենք ոչ մի գործ չունինք նոյս աղանդաւորաց և հայրերի հետ, այլ մենք մերով պէտք է պարձենանք և մերով վիճաբանենք, ընդ նմին և հայք ի հնումն բնաւ չեն խորշել զոյտ եկեղեցական գործերին մասնակցելուց, այնպէս ևս մենք չպիտի ատենք, նախատենք նոյս, այլ հաւատարիմ մնալով իբրև «Ճշմարիտ և աներկայ» սրտիւ հայ, կարելի է և սէր անել օտարի հետ նոյա շահելու համար: Իսկ ինչ վերաբերում է նեստորին, Քաղկեդոնին և այլոց, հայք ոչ գործակից են եղել դոցաւ և ոչ էլ «Անեցիք և Զորագետացիք կամ Դւնեցիք» են ներկայ եղել նոյտ խռովութեանց, ուրեմն ինչ միտք կայ նոյտ անուան յիշատակութեան կամ նոյտ գործոց քըննութեան: Պոքա հոռոմոց մէջ են եղել և նոյտ են պատկանում, այլ ևս «զիարդ, զոչում» է Գրիգոր վշաայած, կանում, այլ ևս «զիարդ, զոչում» է Գրիգոր վշաայած, զիարդ այնչափ կատեցաք ի բանս սոյտ և վասն որոյ իրեք ուղղութեան»:

Կարծ է թուղթը, սակայն վճռական և բացայայտ յայտարար ժամանակի հայոց եկեղեցականաց քաջարի և լաւարի ոգում: Նոքա գիտելով, որ կայսրը ջանում է մարմանական պատուով և ծոխութեամբ շլայնել հայոց, ներշնչում են գրել՝ չեմք յանկացեալք մարմանին պատույ և փառաց, այլ որ առ միոյն Աստուծոյ: Որչափ խոնարհ ոծ են բանեցնում, այնու հանգերձ չեն մոռանում և իւրեանց անյօղգոզդ հաստատամտութիւնն հաւատոյ համար առանձնապէս գրոշմել, ասելով վեհութեամբ: «Քաւ և մի՛ լիցի այս նորաձայն աղանդոց զհատատութիւն ի հայտասաննեայցս առնուր»:

Դեռ այսպիսի քաջազնիւ անձեր կային հայաստանի այն թշուառ ժամանակներում, երբ մարմնի ապահովութիւնը մոռացած ամենայն զրկողութեան մէջ՝ չէին խոյս տալիս հայրենի եկեղեցու համար արիւն իսկ թափելու և նախնեաց փառաց արժանանալու. հայոց կաթուղիկոսն սոցտ ներկայութեան էր կարօտում արժանաւոր պատասխան տալու համար:

Արդ ամենայն հայոց կաթուղիկոսը նստում էր հայաստանից գուրս, Միջագեաքում, սակայն հայք սրաով և մտքով նորա հետ էին: Տեսնում ենք որ հայաստանեայց եկեղեցու հայրապետն ընտրուելով, ստանում է լիակատար իրաւունք ինքնապլուխ գործելու. և ազգի զեկը վարելու, սակայն այդ իրաւունքը սահմանափակուած է հայաստանեաց եկեղեցու սկզբանց և վարդապետութեան հաւատարմութեամբ, որով ամենայն կաթուղիկոսն, վտառաւորւում է: Այդ հաստատութեան մէջ պարա է կաթուղիկոսն, ինքն գլուխ գործի իւր եկեղեցականաց և ժողովը քաջանաց հետ, որոնք իւր անդամներն են, միութիւն կազմել: Իսկ եկեղեցականք և ժողովրդականք, իբրև անդամք այդ միութեան, իւրեանց զլսին հնագանդ կենալով և նոյն հաւատարմութեան մէջ մնալով, գրեթէ նման

Հաւատոյ նկատմամբ ևս զրում է որ լիապէս հետեւում է Յովհանն Իմաստաէրի, Գրիգոր Վկայատէրի, Քարլսեղին, Գրիգորիսին և Ներսէս Շնորհալուն, որոնց զրուածները մնում են իւր մօտ: Ապա յիշելով որ Յջնք յառաջ են կոչում բաղմիցս, յորդորում է որ չպէտք է վատաբար յետ քաշուել, այլ դիմազրուել եթէ երկու բնութիւն են ասում, ըմբերանել և յանդիմանել եթէ դառնան, ընդունել որպէս եղբարց. «Եթէ լուծան ի պէտպէս ազտեղագործս մարմնոյ, լիցուք պատճառս զջման նոյա. Եթէ ներքինեօք և ներքինապետօք վարին, խրատեցուք զաղացեղի գործս նոյա, թերեւս զկծեսցին սրախիք և հայեսցին յանձինս...» Եթէ ոչ գոնէ մեր լաւութիւնը ցցց տանք նոյա: Բայց այդ միայնակ չէ կարող անել ուստի և հրաւիրում է խորհրդակցել, ասելով. «աչք էք զլիսց լուսատու և ձեռք մարմնոյս կերակրիչք, բան և ձայն լեզուի շարժողիս: Արագ այսր պարտիք ժամանել, զի թերեւս թիւրեալ իցէ զլիսց ի լուսոյ պակասեալ և կամ տկարացեալ իցէ մարմնոս...» Նա խոստովանում է ուրբեմն, որ ինքն թէւ զուխս է, սակայն առանց ձեռաց, ձայնի, խօսքի, ոչինչ չկտրէ անել և թէ եկեղեցին սիւներով է կանգուն և այդ սիւնքն են Հայոց եկեղեցականք, վասնորց առանց նոյա՝ մենակ ոչինչ չէ ուզում ձեռնարկել:

Հիւսիսային կողմանց վարդապետած դրածին, որին այն պատասխան է, ինկատենք որ Գրիգոր յածախ խստագոյն է պատասխանում քան նոքա արժանի են, կամ թէ այլապէս է հասկանում այն նկատութիւնք, որոնք գտընում են նոյս թղթի մէջ: Գրիգոր յիշեցնում է որ ինքն անձնահամար ջանքերով չէր կաթուղիկոսական «սարսափելի պատուին» բարձրացել, այլ ազգի կամքին» զիջանելով և ամուր հաստատուած հաւատքի վրայ ասում է. «պատրաստ կամ զէմ յանդիման զի ամենայն որ ոք հարցի ընդ վիմիս ընդ այս, խորտակեսցի և փշրեսցի» (Էջ 19): Տուտէորդին հաւատց համար զիմագրաւելով, մոռացել էր խոնարհութիւն պահել առ իւր եկեղեցու աստուածահաստատ աթոռն, ուստի և Գրիգոր ասում է իրաւապէս. «զպանգիտե՞ս ո յերկնահանդէտ աթոռոցս և աթոռակալէս», առ որոնք Տուտէորդին ամենայն երկիւղածութեամբ պիտի վարուէր, իթէ կարեոր ինքնազիտատութիւն ունենար: Ապա Գրիգոր Տղայ գրումէ որ իւր հաւատքը նոյն է, որ ինչիւր նախնիք են դաւանել բայց քանի որ Տուտէորդին իւր նամակում ջանացել էր, թուի թէ անուղղակի, զայոց վարդապետութիւնը պարզաբանել Գրիգոր Տղայի համար, սակայն հարկաւ վերջինից աւելի պաշար չէ ունեցել ընդ նմին Յունաց գէմ կռուելով, ոյժ էր առել Քրիստոսի աստուածութեան և մոլորութիւնից չէր զգութեան պատում է հայատանեացց եկեղեցու վարդապետութիւնը գորեղ է համաշացել, և իւր թեթև բանագարութիւնը գորեղ է համաշացել, ուստի Գրիգոր ամենայն վսկածութեամբ և ոյժով յառաջադրում է հայատանեացց եկեղեցու վարդապետութիւնը Քրիստոսի բնութեան վրայ: Նա բացարանում է թիւնը Քրիստոսի բնութեան վրայ: Նա բացարանում է Քրիստոսի կատարեալ մարդ և միանգամացն կատարեալ Քրիստոսի լինելը, յենուումէ զինաւորապէս Յովհան Օձնեցու «Ճառ ընդդէմ երեցյթականաց»-ին և ամիոփում է իւր հաւատալիքն ասելով. «Հաւատամ և խոստովանիմ է իւր հաւատալիքն ասելով. Աստուած և որդի Աստուածոյ, և ըստ որբոյն Աթանասի. Աստուած և որդի Աստուածոյ,

որդի մարդոյ, ի մի բնութիւն Բանին մարմնացելոյ»։ Նա իւր ուղղափառ գաւանանքը տալով չէ շատանում և հերքելով Տուտէորդու, երեխ անզգուշութիւնից յառաջած, Քրիստոսի մարդկային կողմի զրժումը, շեշտում է խրոխտալով նաև Յունաց փրայ. «ոմանք յեկեղեցականաց այժմ ջանան կարկատել՝ ոչ բնութեամբ միանալ Բանին Աստուծոյ ընդ մարդոյ, այլ անձնաւորութեամբ. և վեց գսցյն իսկ զԱրքաստոտէլ ունելով, զի թերես այսու կարասցեն ի մի բնութեանն բան ածել զնա հարկաւորաբար», որով և խփում է Տուտէորդու երեսին, որ «երկու բնութիւն ի մի անձնաւորութեան» գտանողք են այժմ ջանում կերպով իմն մի բնութիւն վարդապետել ի Քրիստոս։ Ընդ սմին յորդորում է Հայհրել Հոռոմոյ, այլ մարդասէր լինել, ասելով. «մարդ է՝ արարած Աստուծոյ, և եթէ մոլորեալ է, զարձն. եթէ վերաւորեալ է, սպեղանեօք պատեան. Քրիստոսի լեռ աշակերտ»։ Եւ քանի որ ինքն այդ սիրոյ մէջ անսասան հաւատք ունի և նախնեաց վարդապետութիւնից չէ շեղում, գոչում է զեղեցկապէս. «մինչև յյովտ մի նշանախեցի ոչ պակասեցուցանեմք, և ոչ առաւելումք ի շարէ շնմանն»։ Հաւատարիմ առ իւրն, աղատամիտ առ այն—այս էր ժառանգել Քրիդոր Տղայ, որին և լիագոյն արտայայտութիւն տուաւ այս հոգելից թղթում։ Ըստ որում և շեշտելով որ հաւատարիմ է իւր այդ Ճշմարիա հաւատպին, բացայայտում է վերստին թէ ինչու չէ խորշում արտաքին յարաբերութիւնից, զրելով. «յայս միայն եմ հաստատեալ զի որ առ մեզ այժմ խօսակցին, եթէ գտցեն յայսց սրբոց դաւանութիւն և հաւատ յաստուածաշունչ զրոց վկացութենէ, ընդունիմք իրեւ զեղբարս իւրաբանչեւր կարգօք և կրօնիւք. և թէ սխալեալք են՝ ընդունիմք զզդումն. ապա թէ ոչ, աղօթեմք փասն գարձին իրեւ զկարեկից անձն, որպէս ուսաք և ի վերայ թշնամեացն աղօթել։ Հաւատափոխք ոչ լինիմք ըստ քոյդ

տարակարծ մտաց, զախտս իւրաքանչիւր անձանց առընկերն տեսանելով»։

Հատեւեցան հաւատաց անվեհեր ախցեաններն իւրեանց եռանդրուն հայրապետին և եկան։ Գրիգոր գումարեց 1179 - ին ի Հոռմլայ մէկ ժողով և 33 ստորագրութեամբ տուաւ իւր վերջին պատասխանն առ կայսրը։ Նա զնելով կարծ ի կարծոյ Հայաստանեայց եկեղեցու գաւանանքը, շեշտում էր այդ ուղղափառ եղել է ի Հնումն, ուղղափառ գտաւ և Շնորհալին և իւր գտածը զրեց, միայն այդ ուղղափառութիւնը նոր ծանուցուեցաւ նոյա, որոնք ատելութեամբ հայհրում էին և զպարտում Հայոց եկեղեցին։ Ցիշում է թէ յարգում է ամենայն ժողով որ քրիստոնէութեան օգտակար է եղել լինի այդ ժողովը ի նիկիայ, ի Կ. Պոլիս, յԵփեսոս թէ այլուրիք։ Ընդ սմին և ուղարկելով Շնորհալու թղթերից մէկի պատճէնը, ինքն և ժողովը պարզում են, Քրիստոսի բնութեան և կամաց խնդիրը։ Նոքա կրկնում են հայրերի խօսքերն և մերժելով Եւակբէսի ասած մի բնութիւնը, զրում են՝ «ոչ ի վերայ միոյ բնութեան ասացան բանքս սուրբ հարցս, այլ ի վերայ երկուց միացելոց»։ Իսկ կամքի վրայ զրում են. մոյն ինքն էր որ ներգործէր զաստուածայինն աստուածաբար և զմարդկայինն մարդկապէս ի պէտս մերց փրկութեան, վասն զի Աստուած էր և մարդ», որով մերժում են երկու կամք և երկու ներգործութիւնը Հոռոմոյ։ Ապա յլիշում է ժողովն, որ Հոռոմք համաձայնութիւն են տուել Հայոց ուղղափառ հաւատարին թէ այս ի ձէնչ, այլ և յաստուածապստկ ինքնակալէդ տուաւ մեզ համաձայնութիւն ձեր ի սուրբ և յուղղափառ հաւատս։ Սակայն ի լրումն ամենայնի որ Հայաստանեայց եկեղեցին մերժում է «երկու բնութիւն ի մի անձնաւորութեան» գտանել ժողովը ժխտում է այդ վարդապետութիւնն ամենայն Ճարտարութեամբ՝ ցոյց տա-

լով որ «ի մի անձն երկու բնութիւն» ասելը — բազմայնելք աշխանել է զմին Քրիստոս, ըստ որում յառաջ է բերում Քրիստո Նիւսայու հակիրճ խօսքերը. «պատշաճի այս յարացոյց աստուածութեանն ընդ մարմինս միութեան, ըստ որում միաւորեալ մնայ անշփոթ, ոչ ըստ անձին յեղանակի, քանզի սա ի բազմացելոցն թուի գով (էջ 260):

Ժողովը զրոշմելով հայաստանեայց եկեղեցու հաւատքի ուղղափառութիւնն և զանխլաբար հիմն ի վեր տապալելով քաղկեդոնականութիւնը, վերջացած է համարում ամենայն ինչ և յորդորում է «ի բաց վարել իբրև զլացող ճշմարտութեանն» նոյա, ոյք այլատարագ են խօսում հայոց հաւատքի վեայ, «զհնացեալ ոխակալութիւնն ի զուխ մարդատեաց թշնամուցն կուտեցէք, և առ եղբարս զսէր և զխաղաղութիւն պայծառացուցէք»:

Հայոց այս վերջին թուղթը տեղ չհասած, մեռաւ
չոռոմոց պատրիարքն և նորան ուղեկցեց կայսրն Մանուկի:
Թերևս այս բանակցութիւնը մեղմացրեց հոռոմոց թշնա-
մութիւնն դէպի Հայոց, որ նոյն խսկ կայսրն Մանուկը
«ըստ ատելութեան բարուց խրեանց զոր ունէին առ ա-
մենայն քրիստոնեայք», չէր շատանում հալածանքով, այլ
նաև հիթանոսաց պարբեներով զրգում էր Հայոց դէմ
(Միք. Մեծ. 428. 437):

đq

«Մի յուսալը յիշխանս յորդիս մարդկան, զի ոչ գոյ փրկութիւն ի նոսա» :

Այսոց կաթուղիկոսք ամոքում էին Յունաց
թշնամարկութիւնը, հայ զօրացաւ Բիւղանդեան նախկին
հզօր պետութեան մի անկեան բարձանց վրայ հայ քա-
ջամարտ իշխանաց բազուկը: Բիւղանդ յաղթուել ձեռք
էր վերցրել Կիրիկիայից և հայք թիկունք էին որոնում
ապահովութեան: Յցս կար, որ խորաակուած պետութիւնը
հայոց դաշնակիցը պիտի դառնար, բայց այժմ արեւմուտք
ևս գուրս եկաւ, մրցելով հայոց բարեկամութիւնը շահելու:
Թէև խաչակիրք արդէն փոքր իշատէ գրաւել էին հայոց,
այնու հանգերձ, որպէս անհաստատ ոյժեր և մանաւանդ
որպէս հեռու աղքեւրից բղխեալք և ինքեանք աղքեւրին
կարօտելով, չէին կարող ինչ հայոց մատակարարել: Բայց
այս յուստաեղին այլ կերպարանք ստացաւ, երբ արե-
մտեան իշխանք անձամբ յարաբերութեան ձանապարհ
բացին հայոց առաջ: Այդ իշխանք էին Ալամանց կայսր-
ներն, որոնք «Հռովմայ ինքնակալներ» էին կուլում կամ
«Հռովմայեցաց կայսրներ» և «Փրկիչք աշխարհաց»: Տարած-
ուեցան և զրոյներ, որ իբր թէ Գերմանք Արշակունեաց

Հայոց եկեղեց և Բիւզանդական պար

ցեղից են, որ վիճակուած են աշխարհը աիրելու և այլն: Կային և զառանցողք, որ Բիւզանդն է այդ բախտաւորը, մինչդեռ առաջուայ հզօր պետութիւնից միայն մի բեկորն էր շնչում: Այսոքիկ մարգարէութիւնք էին Ռուբինեանց քաղաքականութեան նիւթ տալու համար. միւս կողմից Ռուբինեանք փառաբանուում էին, որ Արքահամի և Արշակունեաց, այլ և Դաւիթ մարգարէի ցեղիցն էին:

Քանի որ Բիւզանդի պարտութեան մուխը չէր հանգչել, Ռուբինեանք այլ դաշնակցի էին կարօտ ոչ միայն Յունաց մախանաց, այլ և հեթանոսաց դէմ: Հայ իշխանաց բարեկամութիւնը սերտ կապուեցաւ Գերմանաց կամ «Հռովմայեցոց» կայսրների հետ, որ սկսուեցաւ, ինչպէս յիշեցինք, խաչակիլներով: Վերջնոց վարիչները Հռովմայ պապերը լինելով, ջանում էին օգտուել առթից և արեկուում իւրեանց մարմնաւոր նպատակաց համար և մասնաւանդ Յունաց զկծեցնելու մտք՝ յարաբերութիւններ կապել ըստ որում և ձգնում էին Գերմանաց կայսրների յարաբերութեանց մասնակից երեալ: Երբ Հայոց կաթողիկոսք ևս, թէև շատ ուշ անձամբ մօտեցան Ռուբինեանց, սոցա յարաբերութեանց շրջուվները նոյա ևս կպան, այդով և հապա քանի մի թղթագրութիւնք փոխանակուեցան Հայոց և Հռովմայ քահանայապետաց միջև: Ոմանք կարծում են թէ այդ սկսուել է Գրիգոր Բ. Վայսէրի օրով, բայց այդ անյատակ սխալ է, որ ծագել է Հռովմայ Գրիգոր VII-ի մի թղթից՝ գրեալ 1080-ին առ «արքեպիսկոպոսն Սիւննադայ»: Այդ քաղաքն ի Փոխիա է, արքեպիսկոպոսը կաթողիկոս ասել չէ: Իսկ եթէ Սիւննադան Մամնադաւի աղջատումն է, պիտի նրկատենք, որ 1080-ին Գրիգոր Վայսէր Մամնդաւում չէ եղած, այլ ի ձանապարհորդութեան: «Սիւննադայումն կար այն միջոցին յակոբիկեան մետրապօլիտ մի, տեղի չունինք պետքելու թէ չկարէր անդ և Հայոց կաթողիկոսուն» իւր պալիումն, իւր Խոյրն

մի լինել, որ պահանջել էր Գրիգոր VII-ից, ի Հռովմապատճաննեալ Մակար ոմն հերետիկոսի զուրս վռնդել: Հաստատ է սակայն, որ Հռովմայ յարաբերութիւն Ճանկեցից համար մեջ Այսուհետ կաթողիկոսաց հետ ժթ. զարում. այսպէս է պատմում Ներսէս Լամբանեցին Շնորհալու Ներբողի մեջ: «Մեծն ի Հռովմայ լուրն հասեալ առ Հայրապետն որ անդ նստեալ. նա գաւազան և քող յըղեալ՝ զրով զսէրն պահանջեալ: Ուրիմն Հռովմայ սիրոյ յարաբերութիւն խնդրեց Գրիգոր Գ-ից: Թէրեւս այս լինի պատճառ եղած, որ Ֆրիզինգինի Օտտո եպիսկոպոսի (VII, 32) առասպելախառն ասածին նայելով, հրեշտակութիւն մի եկաւի վիտերբի, եթէ հարկաւ այդ սոսկ այցելութիւն կամ փոքր կաթուղիկոսներից զրկուած չէ: Ընդ սմին գիտենք որ Հայք խիստ ատում էին Հռովմէական կղերին, այնպէս որ երբ Թիւրքերն առին Միջագեաքը, Հայք և Ասորիք խլեցին Թիւրքաց միջոցով Լատինաց եկեղեցիքը Սամուսատում, Եղեսսայում ևայն (Ներսէս Լամբանացի 528):

1185-ին Գրիգոր Դ. Տղան ուղարկեց Գրիգոր եպիսկոպոսին առ Լուցիուս III պապն և խնդրեց յորդորել Մահակ Փիսիկ կայսրին Հայածել Հայոց: Ուրաքս պատմումէ առասպելաբար Վարդան Մեծն, Լուցիուս Հրաւիրեց Գերմանաց, Ֆրանկաց, Անդլերի թագաւորաց, նոյա մեծամեծներին և եպիսկոպոսներին, խորհուրդ արաւ նոյա և Երուսաղէմի պատրիարքի հետ և նոյա ձայնակցութեամբ թուղթ գրեց առ Գրիգոր Դ., յայտնելով որ Հայոց կաթուղիկոսն այնուշետե իշխանութիւն ունի ոչ միայն Հայոց, այլ և Յունաց և այլ ժողովրդոց վրայ Արեկելքում, Ճիշտ այնպէս, ինչպէս իբր թէ ինքն պապն Հռովմայ իշխանութիւն ունչպէս արևմուտքի վրայ: Նա մեծարեց Հայոց պատգամաւորին, Հաղցրեց նորան իւր եկեղեցական զգեստը և ուղարկեց առ «Եղբայր կաթուղիկոսն» իւր պալիումն, իւր Խոյրն

և իւր կօշիկներն, ի նշան սիրոյ^{1:} ի հարկէ, Հռովմ-իշխանութիւն ըւներ այդպիսի իշխանութիւն տալու, սակայն նա կտրեր այդ տնել քանի մի նպատակով. 1) Հայոց բարեկամութիւնն որսալու. 2) Յունաց Ճնշելու և 3) իւր բաղձացած արեմտեան իշխանութեան՝ իրաւաբանական տեսք իմն տալու. Նորա այդ թղթի փռայ է որ հեղինակուեցաւ «թուղթ Դաշանց» կոչուած աղաւաղ և անմիտ գրութիւնը ժ՞—ժԵ գարում:

Հռովմ առաւել մօտեցաւ Հայոց, երբ խաչակիրք օդ-նութեան կարօառում էին: Դեռ Կղեմու III (+1191) թուղթ գրեց առ նոյն կաթուղիկոսն իւր «պատուական եղբօր» և քանի մի աւետարանական համոզաբանութեամբ ինդրեց յորդորել Հայոց օգնական լինել խաչակրաց, ընդ նմին և բանալով՝ ըստ Հռովմէական Ճարպիկութեան՝ իւր աստուածակատակ թողութեան պարկը, գնում է խաչակրաց օգնողների բոլոր մեղքերը^{2:} Բայց շուտով այս արտաքին գործոց քաղաքականութիւնն անցաւ Խուրինեանց ձեռքը, Լեռն Բ-ի գահակալութեամբ (1186): 1189-ին Տանօթացաւ սա խաչակրաց ռազմավար Ֆրիդրիխ I Բարբարուսա, Գերման կայսրին, որ Լեռնի բարեկամական մեծամեծ նը-պաստներին ի շնորհակալութիւն՝ խոսանցաւ թագ ու-ղարկել բայց ինքն խեղբուելով, չկարեցաւ կատարել: Միւս կողմից բարեկամացաւ Բիւղանդի Ալեքս III (1195 — 1203) կայսրին. այս սէրը դարձեալ եկեղեցական եղաւ, որպէս զե Բիւղանդ ևս շահ իմն նկատէր իւր համար: Լեռն առ ինքն ձգեց և ներսէս Լամբրոնայուն, որի

¹ Վարդ. Գլ. ՀԹ: Մխիթ. Ալր. Էջ. 80. Ցիշատակ. Ներս. Լամբ. առ Զարբ. նախ. Թարգմ. Էջ. 500. Թղթի մի կտորը Սիսուան 467: Ս. Էջմիածնի ձեռագրաց մէջ ևս կալ, որ գուցէ ժամանակին հրատարակենք: ² Գրչագիր Ս. Էջմիածնի մատենադարանի: Տես և Սիսուան Էջ 467: Այս թղթերի մասին «Արարատի» մէջ մանրամասն պիտի խօսենք:

և իւր համակարծների երեակայութիւնը մարդարէութեանց աշխարհումն էր պտտում, որոնք Ս. Գրքից այս ու այն խօսքը պոկելով և ջլատելով, ջանում էին մարդարէներ հռչակուել և գուշակել, որ Բիւղանդի հետ է ամենայն ինչ պայմանաւորուած, ըստ որում նորա ճոխութեամբ շլայտ, ասում էին, որ իբր թէ նոյն իսկ Աստուծոյ արքայութիւնն այն ժամանակ պիտի գար, երբ այդ պետութիւնը փլատակուէր: Այդպիսի մի յաւիտենականութիւն վերադրելով այդ մերձամահ պետութեան, կարծել սկսան թէ հենց այն է երազած «երկաթէ գաւաղաղանն» որ կար, որին պէտք է Հայք յենուէին, այլազգի հռուսանուտ հրոսակներից պատսպարուելու համար: Այդ ցնորքներն առաւել ևս համոզական էին երեւում կարձամաց, երբ նկատում էին Բիւղանդի սէրն իբր թէ վայելող Վրաց իշխանաց կենդանական շարժումները: Այդ ցնորքները էին բուծուում այդ ժամանակի օտարայոյս անձինք, որոնք տնցեալը մտահան արած և ապագան չտեսնելով, ողորմաբար ներկայով էին ապրում:

Լեռն այդ բոլոր ցնորքները գոցանով ապրողներին թողնելով և Աստուծոյ և ինքեան ապաւինելով, մի մեծ ծրագիր ուներ իւր առաջ՝ այն է սէր հաստատել քրիստոնէից մէջ և միանդամ ընդ միշտ կործանել հեթանոսաց կազմը: Նա այդ լոիկ գործունէութեամբ մէկ «տիեզերական ժողով» գումարեց ի Տարսոն 1196-ին Ծաղկապարզին, որտեղ կային շատ թշներ: Ժողովի նապատակն էր սէր ներշնչել երկու կողմերի մէջ և ջանալ արմատախիլ անել հնացեալ ատելութիւնը: Ներկայ էր և Գրիգոր Ապիրատ, սակայն Ներսէս Լամբրոնեցին մէկ գեղեցկաբարբառ առենաբանութեամբ, որ լիակատար ամփոփումն է իւր և Լեռնի քաղաքականութեան: Լամբրոնեցին իւր զիտութեան բոլոր ձարտարութիւնը յիրարկում է ժողովականաց համոզելու համար որ չպէտք է քրիստոնէից ատել

ըստ որում՝ յաճախ իմաստակութեան է գիմում անդամ։ Նա հայեացք ձգելով առաջին դարերի եկեղեցական աշխարհի վրայ և յիշելով որ Քրիստոսի առաջ յոյն, առորի, հայ, վիր ևայլն հաւասար են և Սպանիա, Արևելք, Բարբարոսք, Եզիզտայշիք և այլք միակ Գլուխն, այն է՝ Քրիստոսի անդամներն են, ներբողում է Ծրդատի և Կոստանդիանոսի ժամանակը, յորում «արարին զամենայն տիեզերս մի տուն միջն Քրիստոսի, և եկեղեցի» և իբր թէ հռովմայեցոց տէրութիւնն. «իբրև զգաւտզան երկաթի նեցուկ պնդութեան և ամրութեան հանուրցս լինէր»։ Սակայն սատանան, ասում է նա, ինչպէս Աստուծոյ խօսքը թիւր մեկնելով, զթեցրեց Աղամին և Եւային, այնպէս ևս արաւ քրիստոնէից հետ եկաւ Մակեղոն Հոգւոյն Սրբոց դէմ թշնամանք յարոյց, եկաւ նեստոր և սկսաւ յորդորել Միածնի փառաց զլանալու, եկաւ Եւտիքէս, որ «զիստար խաւարաւ բժշկել վարդապետէր»։ և ահա տապալուեցաւ եկեղեցու միութիւնն և մի հիման՝ Քրիստոսի վրայ հաստատեալքս բաժանուեցանք, ըստ որում թէւ մի է եկեղեցու վէմն Քրիստոս, սակայն այժմ իւրաքանչիւր ոք այն իւրն է համարում, և քրիստոնէից բարիքները թշնամիք են վայելում, վասն զի Քրիստոսի մի եկեղեցին արօրուել է բազում մասերի։

Այնուհետև Լամբրոնեցին (Զաք. պլ. Բ.) ծեփելով,
Ճնում է սփոփել Հայոց որ քրիստոնեայք պիտի միա-
նան և Աստուծոյ օգնութիւնը ստանան, և այդ խօսքերը
դարձնելով, զում է առ ժողովականք մանաւանդ առ
Գրիգոր Ապիրատ. «Քեզ տայ զքաջալերութիւնս, ով Յի-
սուսի փոխան ի մէջ մեր՝ նորա պատուովն բազմեալ»,
իւր գեղեցիկ ճարտասանութեամբ նորա մտաց վրայ և
աղդել ջանալով: Եթէ հեթանոսք միանալով, առում է նա,
Աստուծոյ շնորհները վայելեցին, քրիստոնեայք առաւել
ես, ուստի չպէտք է պյաղգեաց ատել, թէ նոքա հայ

չեն և կամ զ՞րիստոս Աստուած և մարդ են դաւանում
ընդ սմին և մաքերի մանրամասնութիւնք վերակոխելով,
ձայնում է, «ո՞ք ի ծագս աշխարհի եկեղեցի Քրիստոսի,
որ ոչ զ՞րիստոս Աստուած և մարդ դաւանէ. և թէ այս
այսպէս է, ապա ընդէ՞ր այսքան հակառակութիւնք ի մէջ
մեր բռնացեալ», փասնորոյ և կարծում է որ հակառա-
կորդք ոչ թէ իրար դէմ են կռւում, այլ հերձուածողաց,
որոնք այլ ևս չեն ի միջի, և իբր թէ դոցա դէմ են եղել
չայոց ժողովները: Լամբրոնեցին ջանում է Յոռոմոց դա-
ւանանքը հայականին վերածել և ապա պարզում է որ
չայք ոչ թէ մի բնութիւն ասելով առսկ աստուածային
կամ լոկ մարդկային բնութիւն են հասկանում, այլ «զմի
բնութիւն ասել բանին մարմնացելոյ՝ անձառ խառնմանն
հռչակ՝ ընդդէմ նեստորի. և բան ասելով՝ և մարմնա-
ցեալ լյատակութիւն այլ և այլ բնութեանցն հաստա-
տեմք՝ ըստ սրբոյն կիւրղիյ»: Մի բնութիւն ասացեալն
ի վերայ Քրիստոսի՝ ոչ թէ զէութիւն նորա հաստատէ,
որ յերկուցն էր անշփոթ և յայտնի, այլ զներգործու-
թիւն անձառ միաւորութեանն բացաձայնէ»¹:

Լամբրոննեցին այսպէս մակերևակի հաշտեցնելով երկու կողմերը, բանավարում է, որ չայք են հոռոմոց անգուստ ատել սկսել, ուստի և պարտաւոր են իւրեանք իսկ գործել սկսել՝ սիրուելու համար, վասն զի եթէ ո. Գիրքը սիրել սկսել՝ սիրուելու համար, վասն զի եթէ ո. Գիրքը հրամայում է հեթանոսաց անգամ սիրել, ուր մնաց հոռոմոց, որոնք քրիստոնեայ եղայլներ են. «Մի զլուխք ու նիմք գլորիստոս, ասում է նա, միշտ գլխոյ անդամոց զիարդ չնար է ի միմեանց պառակտիլ. վհրս ունիմք, ի միմեանց բժշկեցուք. առողջութիւն, ի փառս իրերաց զուարձաս-ցուք...»: Նա դժկամակում է որ միասին հաց են ուտում, բայց միասին հաղորդուելուց խորշում են, ըստ որում և

1 Տպագրուած՝ Վենետիկ 1865:

ազատամոռւթեան մոլեգոյն ծայրայեղութեան համնելով, քարոզում է այնպէս սիրել նոցա, որ մինչև անգամ լաւ համարել զրկուիլ քան զրկել, յաղթուիլ քան յաղթել: Ամենայն հաղորդութիւն մի և նոյն է, շեշտում է նա, չպէսք է խորշիլ պղծուելուց վախճանալով. անօգուտ է և միմեանցից հրաժարուիլը, վասն զի այլով չէ կարել նոցա շահել այլ սիրով ըստ Պօղոսի, ըստ որում երբ ատում ենք մէկին, նա առաւել ևս պարձինում է: Իսկ զանազան տօնելն ու կարգերը սիրոյ հետեանք են, եթէ ատելութեան պատճառով է որոշումն, այդ չար է: Հուսկ ուրեմն նա եկեղեցական սիրակցութեան վրայ իւր գաղափարք ամփոփում է այսպէս. «զի թէ վասն զեղքայրն անգունելց, և զնորա պատարագն որ ի խմորեալ հացէ, առնես զքցոյ պատարագն բաղարջ թերի ես ի հաւատոցն, և նախանձուն ծառայ: Իսկ ապա թէ պահես զքցոյ աւանդութիւն ի վառս Աստուծոյ, և ընդունիս զնորայն ի նորին փառս, միոյ Քրիստոսի մարմին Ճշմարիտ զ'ի խմորուն օրհնեալ հացէն, և զքաղարջէն, այդ է դրվելի կարծիք»:

Ուրեմն Ներսէսի ջանքն է սէր հաստատել քրիստոնէից մէջ, առ որ ոչինչ միջոց չէ խնայում: Նա ուղղափառ է համարում բոլորին ևս, թէև զորանով հակասութեան մէջ է ընկնում: Նոյն ուղղութեամբ նա զրել էր զեռ ջահել ժամանակ իւր խորհրդածութիւնք, որում զոր արդարացնում է Հայոց եկեղեցու առանձնութիւնք՝ հաղորդութեան, ընդ նմին և Յունաց ու Հռովմայ, Հայոց եկեղեցականաց միրուք պահելն և Հռովմայ՝ չպահելն եայն: Նորա սկզբունքն է, թէ մեղք է ուրիշին քննել քննադատեն, և միայն ինքնաքննումն թոյլատելի է: Նորա զերական է՝ ատուիլ հակառակորդից, քան թէ ատել, յաղթուիլ, քան թէ յաղթել: Մի խօսքով նա ծայրայեղ միջոցի է զիմում քրիստոնէից մէջ սէր հաս-

տոտելու համար, ըստ որում որպէս Հայոց քարոզում է լինել այլոյ զիմաց, նշնը պնդում է որ այլք ևս զէպի Հայոց լինին: Նորա ջանքն ուղղուած է առ այն, որ Հայք զադարեն օտար քրիստոնէից ատել: Եւ որպէս զի իւր խօսքերը հիղինակութիւն ստանան, նա կոչում է այն ժողովն աստուածային գործ, որին ոչ ոք չպիտի համարձակուելու հակառակիելու:

Լեռն հասաւ յաջողութեամբ իւր նպատակին: Հռովմայեցոյ և Բիւղանզայց կայսրները նորա բարեկամքն էին. նա զրաւեց նաև միս այլ քրիստոնէից իւր առաստերաբործութեամբ. «ոչ միայն զհամազի վանորայս այսպէս փարթամացոյց, ասում է Միքայէլ Մէծն, այլ և զայլակու քրիստոնէից, զԱսորոց և գՓռանկաց և զՎրաց, չպահելով նոցա ոխս, զոր արարին նքառ ընդ նա և ընդ զքուկելու, ինքնելով նորանից միաբանութիւն սիրոյ»: Տարսոնի ժողովից զինի Հռովմէական հակառակն՝ Ալեքս Առաքարեան գահի Բիւղանզեան գահակալն՝ Ալեքս III թագ ուղարկեց 1196-ին Ռուբինեան միահեծանին պատկելու, ինքնելով նորանից «միաբանութիւն սիրոյ»: Լեռն յղեց Ներսէս Լամբրոնացուն երեք իշխանաց հետ ի կ. Պօլիս Հռովմաց միաբանութեան աշխատելու, իսկ իւր քարտուղար Յովհաննէս եպիսկոպոսին առաքեց գէպի Արքա նուաճեալ Հռովմայեցոյ Գերման գահակալի թագը հանդիպելու, որին ուղեկցում էր Կոնրադ՝ Մայնցի գերման եպիսկոպոսը: Ըստ Կիրակոսին (92), Կոնրադ պահանջած պիտի լինի առնել զտօն Տեառն և ամենայն հանջած պիտի լինի առնել զտօն Տեառն և ամենայն սրբոց, յորում առուր հանդիպի, և միշտ յեկեղեցւոյն կատարել զտօթման տուրնջեան և զիշերոյ (այս Կիլիկեկատարել զտօթման դէմ էր)... և ոչ լուծանել զՃրագացոց անկարութեան և յարութեանն, բայց միայն ձկամբը և լոյցն ծննդեան և յարութեանն, բայց միայն ձկամբը և ձիթով», կամ թէ ոչ ոսկով և արծաթով վՃարել: Իսկ Վինիկնատիս ոմն պատմում է որ Լեռն պարտաւորուել է Լատին լեզուն ուսուցանել առաջ մանկանց: Սա-

կայն Միքայէլ Մեծն, Սամուէլ Անեցի, Վահրամ Եղես-
սացի, Սմբատ, Հեթում պատմիչ և Վարդան Մեծն այս-
պիսի ինչ չգիտեն:

Աւելորդ չէ զնել այստեղ Միքայէլ Մեծի պատմածն,
որ ուշադրութեան արժանի է, իբր օտար, բարձրաստի-
ճան անձի մի խօսք. նու գրում է. «իսկ արիադրյնն Լւոն
աիրեաց 72 բերդից, և ել անուն նորա ընդ ամենայն
երկիր. և փութացան պսակել զնա տունն Յունաց և
տուն Փռանդաց. ըստ որում առաքեցին նմա թագ յեր-
կաքանչիւր կողմանց՝ ի պարծանս ինքեանց առնելով
զնա»: Իսկ Վահրամ Եղեսսացին, Լւոն Գ-ի քաջադրիչ
առենազպիրը գրում է.

Լւոն «անուն ստացեալ,

Եւ ամէնից գովասանեալ:

Ֆռանկաց ումբրունն (empereur) զայս լուեալ
Եւ Յունաց կայսրըն ծանուցեալ,

Յաստուածական ինամոցն յուզեալ,

Եւ երկոքեանն թագ կապեալ,

Մեծաւ պատուով աստ առաքեալ,

Զմեծն Լւոն թագիւ պատուեալ:

Յայնժամ հայոց բովանդակեալ

Եւ ի Տարսոն քաղաքն եկեալ,

Կաթուղիկոսն ի մէջ կացեալ,

Յեկեղեցին անդ ժողովեալ,

Եւ օրինօք զԼւոն օծեալ:

1197 ին¹ յունուարին Լւոն մեծահռչակ տօնախըմ-
բութեամբ օծուեցաւ հայոց թագաւոր հայաստանեայց ե-
կեղեցու հաւատարիմ հոգուապետ Գրիգոր Ապիրատից,

¹ Միք. Մեծ. 504: Վարդ. ԶԲ: Կրը, 94: Հեթ. պատմ. 81: Սամ.
Անեցի: Կան և այլ աղբիւներ գրչագրաց մէջ, որոնք ժամանակին
կիրատարակենք:

և նոյն միջոցին թագ ստացաւ և Զաքարիա սպասալա-
րից փառաց ի փառս բարձրանալով եռապսակ թագա-
ւորութեամբ:

Իսկ Լամբրոնացին Կ. Պոլիս հասնելով, խորհրդա-
կցութիւն ունեցաւ Յունաց գիտնոց¹ հետ և չնայելով
իւր բոլոր ոգեսրութեան և սիրայօժար տրամադրութեան,
ոչինչ չկարեցաւ զլուխ բերել. յուսախաբուած և ապա-
շտելով վերադարձաւ նա ձեռնունցն և իւր ծայրայեղ
ազատամութեամբ հանդերձ ամուր վերջակէտ մի զրաւ
այդ անմիտ մտադրութեան, զրելով. «Պատաք զսոսա (զթոյնս)
անծանօթք ի սոյանէ (ի թղթոց) թանձրաբարբառք, և
հրէտական կամօք ընդ նիւթս կապեալք, որք ոչ ախորժեն
ծառայել. Աստուծոյ՝ նորոգութեամբ հոգւոյն, այլ հեռու-
թեամբ զրցին: Եւ ստրացեալ ի հոգեւոր կամս մեր՝ դար-
ձաք յիմաստախոհ յուսոյ սոցա՝ ամօթով...»²: Մեծ էր
նորա հիասթափումն, մեծ էր և նորա ստրանքը, բայց
մեծ էր նորա ամօթն այն անձանց առաջ որոնց քարո-
գել էր զրկութիւ յշներից, քան թէ զրկել նոցա. սակայն
և այնպէս չատեց նոցա և չդադարեցրեց մանաւանդ, զի տղիտագոյն վարդա-
պեաներից անդամ հալածուեցաւ, ըստ որում իւր մե-
ծամութեան և զիսութեան վրայ հպարտացած, ընդ-
հարուելով հսկայազօր և բռնամուր Լւոն արքային,
փշուեցաւ անդարմանելի:

Լւոն իւր արտաքին քաղաքականութիւնը հրաշա-
պէս վարելով, գիտաց և ներքինի սանձերը պահել. նա
իւր հաւատարմութիւնն առ հայաստանեայց եկեղեցին
հրապարակով էր հոչակում: Գումարեց նա Տարսոնի ժո-
ղովն և առաջ նետելով ներսէս Լամբրոնացուն, ինքն

¹ «Հարցումն պատրիարքին և պատախանի ս. Ներսիսի», որ
շուտով պիտի հրատարակենք, բանակցութեան պարագների հետ միա-
սին: ² Գրչագիր ի մատենադարանի Ս. Էջմիածնի:

յետ քաշուեցաւ, իսկ երբ Լամբրոնացին ողեռութեան մէջ ծփալով Տարսոնի եկեղեցում ժողովական ծունացի հաճոյս ուղեցաւ յունարէն աւետարան կարգալ առաջ, Լեռն իսկոյն արգելեց այդ^{1:}

Այնուհետեւ հայաստանի արևելեան վարդապետք, որոնք ուշաղրութեամբ զիտում էին Կիլիկիոյ եկեղեցական գործերը, զայրացան Լամբրոնացու վրայ, և քանի մի թղթեր զրեցին նորան բուռն յարձակմամբ և գանգատ բարձին նորա դէմ առ Լեռն: Լեռն ամոքեց գանգատաւորաց մաքերն և քննութեան կանչեց Լամբրոնացուն, հրաման ուղարկելով առ նա, որպէս «առ տհաս մանուկ»: Այդ հրամանը կամ ապսպլանքը կրկնում է Լամբրոնացին իւր առ Լեռն զրած պատասխանի մէջ, ասելով. «յայս համառօտեցան բանքն, թէ անկարգ է իմ ընթացք ու անօգուտ. և չէ ընդ շաւիզս երանեալ հարց մերոց Գրիգորիսի Վկայասիրի, և նորին համանուանն՝ որ յեղիպառս, և որ զինի նորին աստ հայրապետ Գրիգորիս, և նորին եղբայրն Ներսէս. և ես ստերիլեալ գնամ ի նոցա շաւզաց, և զուք և այլ հայք՝ նոցին ընթացակիցք: Եթէ ոչ էի յայս, արժանի էի հայրապետութեան և պատուց սակայն այս վերջացուցանէ զիս ի պատահմանէն պատուց. և ոչ միայն զիս, այլ և ձեզ լինիմ պատճառ նախատանաց ի ջորդյետացեացն, որք և անէծս վայրապար խօսին ի զլուխ իւրեանց, և զուք աղաչեցք զմեզ վասն զնոցա դայթակ դութիւնն շինելոյ դառնաւալ ի մոլորմանէս. ապա թէ ոչ զրկիմք ի պատուցն, զոր մինչեւ ցայժմ ի ձէնջ եմք ընկալեալ»:

Լամբրոնացու ամբաստանողք էին զլսաւորապէս

Զորոյդետացիք, հաղբատեցիք, Անեցին, Տուտէորդին և Քորաբեցին, իսկ ամբաստանութիւնն էր. նախ որ Լամբրոնացին նոցա զգեստով չէր պատարագում, ընդ նմին և անարժան էր սեղան բարձրանալու և երկրորդ որ անխութիր հաղորդւում էր այլ քրիստոնէից հետ: Առաջին կետում չնոր կարող որոշել թէ Լամբրոնացին ինչ նոր զգեստ կամ ծէս էր նորոգել զի նու ընդհանուր է խօսում այդ հարցի վրայ, իսկ եկեղեցական զգեստը շատ հին է հայոց մէջ և արդէն Եղիպարից վկայութիւն ունինք որ հայք Կ. Պօլսից էին այն բերել տալիս: Միայն թէ Լամբրոնեցին բուռն համարձակութեամբ պաշտպանում է զինքն, հիմնաձայնելով. «պատրաստ եմ ի պատասխանատութիւնն... որ չեմ մոլորեալ և ոչ ստերիւրեալ ի սուրբ եկեղեցւոյ ուղիղ շաւզացն, ոչ ըստ հաւատոյ, և ոչ ըստ բարեկարգութեան», և յարում է որ զատախալ չէ եղել իւր ամբաստանողաց մոլար ընթացքին: Նա ասում է որ ինքն ամենենին չէ փոխել այն ինչ որ ստացել է իւր հայրերից և ունի հայոց կաթուղիկոսայ զրուածներն, որոնցով կարող է ապացուցել իւր Ճշմարտութիւնը, սակայն յիշում է և իւր օգտակար նորոգութիւնը որ վանքերում երրորդ, վիշերորդ, և իններորդ ժամերը ջոկ ջոկ է կատարել տալիս «զիւրաքանչիւրմ» յիւր ժիւրմն... և եօթն անգամ յաւուրն զԱստիւրմն յիւր ժամն է օրհնում, խաղաղական աղօթք չէ եղել և նա մացրել է, հաստատել է կրօնաւորի օրհնութիւնը նախ քան զքահանայացումն. օտարաց մօտ տեսնելով որ սահմանած ողորմութիւն կար աղքատաց համար, ինքն ևս կարգել է ի Տարսոն^{1:} Այսու հանդերձ Լամբրոնացին

¹ Եղել սն խորմութիւնը Կիլիկիոյ եկեղեցիներում, որոնք մտել էին հեթանոսաց հալածանաց պատճառով և կամ օտարութեան մէջ, զորոնք Լամբրոնացին վերացրել է և կամ վերացնել առւել:

1 Թուղթ Լամբրոնեցուն առ Լեռն Թագաւոր. Վենետիկ, 1865.

Հատագովում է զինքն նախ սաստիկ անարդելով իւր հակառակորդաց նա շուն և աղուէս է կոչում նոյա և Տուեկորդու համար ասում է. «ուտելով և ըմպելով ընդ աշխարհականաց զպորտն պարարէ, և զեկեղեցւոյ դուռն թէ ընդ որ է՝ բնաւ չփիտէ». նա զատապարտում է նոյա արարքն, որ մինչեւ անդամ հակառակութեամբ Գրիգոր Գահավէժ պատանուն կաթուղիկոս ընտրեցին և Լեռնին զրպարտեցին, իսկ իւր ծմարտութիւնն ապացուցում է, բանավարելով որ իւր արածները նորոգութիւններ են խափանուածների և իւրեան համակարծիք են ժամանակի նշանաւոր եկեղեցականք, այլ և Գրիգոր Յաղիրատը (բայց սորանից ևս հալածուել էր, որպէս ինքն է գրում). որ իւր իմաստութիւնը սէր հաստատեց թշնամի եկեղեցեաց մէջ, ըստ որում թէ Լատին եպիսկոպոսք և թէ Հոռոմէ զարմանքով փառաբանեցին զԱստուած, երբ տեսան որ ինքն քաջ գիտէ(!) թէ Հայոց և թէ նոյա եկեղեցական արարողութիւնք ու կարգերը: Յիշում է որ մէկ զիրք է զրել (Կիլիկիյ) նորամուա անկարգութեանց վրայ, բայց, ասում է նա, «կարող եմք շնորհիւ զիտութեանս՝ զոր ունիմք ի սուրբ զիրս ափիրերան առնել զհելենացին, թէ զհայն խորշեալ կարծիցէ յուղղափառութենէ» և ընդհակառակն:

Լամբրոնեցին պարծանքով շեշտում է իւր քրիստոնէական ծայրայեղ բարութիւնը, պնդելով որ ամենայն հաստատութեամբ պիտի սիրէ քրիստոնէից, ըստ որում պատիւ է համարում որ ինքն սիրում է Լատինաց և չելենացոց, ասելով. «թէ և ատիմք ի նոցանէ, ոչ ատեամք զնոսա»: Բայց սորանով չէ վերջացնում իւր ջատագովութիւնն և յիշում է որ մինչդեռ ինքն շատ զէպքիրում Լեռնին հնագանդելու համար է յուել անարդարութեամբ իւրեան են զատապարտում, ընդ օմին և մի առ մի բերում է և Լեռնի երեսով տալիս Գահավէժի մահը, Հոռոմլայի կողոպտումը, Լեռնի արևմտեան զգես-

տը, երկար մաղ ու մօրուք չպահելը, լստինական և յունական կարգով և նոյա պաշտօնեաների հետ սիրով ապրելն ևային, ասելով որ եթէ ուզում է թող նա որպէս մարմնաւոր տէր մարմնաւոր իրերով հետեւի իւր նախորդաց, ըստ որում այն ժամանակ և ինքն որպէս հոգեւոր ըստ հոգեւորին կիսորշի օտարներից:

Հարկաւ Լամբրոնացու այս թուղթն երևան է հանում Լեռնի ամբողջ քաղաքագիտութիւնն ու գաղտնիքներն, ըստ որում չափազանց անարդական է, մանաւանդ որ նորան ստութեան պաշտպան է դուրս բերում, շատախօսութեան ջատագով, անզգամաց ուշ գարձնող նմանեցնում է նորան Նիկողիմոսին ևայլն. մինչ իսկ թղթի հասցէն վիրաւորական է, որ է այս¹. առ քրիստոսազօր իշխողն մեր ինքնակալութեամբ Լեռն, ի նուաստ ներսիսէ որ ի Տարսոն սրբոյ եկեղեցոյն պաշտօնեայց: Յիրաւի, Լեռնի նման ահեղախրոխա բռնաւորին այս թուղթը պիտի կատաղեցնէր. բայց ի՞նչ հետեւցաւ. պատմութիւնը լուսում է. Ներսէս Լամբրոնացին մեռաւ 1198 թուին:

Արդ Լեռն իւր գահակալութեան տարիները մեկնեց աջ ձեռքը գէպի Բիւզանդ և ձախն գէպի Գերմանիայ, բայց նա շուտով զզուեցաւ և իւր աջ ձեռքն իսկոյն յետ քաշեց, այն է 1189-ին. այժմ տեսնենք ձախովն ինչ արաւ: Լեռնի բարեկամութիւնն արեմուտքում, որպէս յիշուեցաւ, Բարբարոսայի հետ սկսուեցաւ, նորա որդու հայնրիխ VI-ի հետ ամրացաւ:

Լեռն իւր թագադրութիւնից յետոյ, տեսնելով որ միայնակ է միացել Խլիճ.Ասլանի նման ահաւոր թշնամուառաջ, որից պարտեցան և Հոռոմիք, մատածեց նորա զօրութիւնն ընկճել իւր գահի պահովութեան համար. բայց միայնակ չիմաղրաւեց և այլուստ յօյս չունենալով զի-

¹ Վենետիկ, 1865, 207—208:

մեց արևմուտքը: Սյնաեղ երկու հակաթոռ կայսրներ էին ընարուած Փիլիպ (1198—1208) և Օտտօ IV (1198—1218), և ժողովուրդն երկառաւակուած էր և այդ միջազգային խոռվութեան վարիչն էր Իննովինտ III (1198—1216): Լեռն չփարանեցաւ և ինչպէս երևում է՝ առաջին անգամ՝ թուղթ (Սիսուան. 465) գրեց առ նա 1199-ին, որ միայնակ պահւում է ի հռովմ: Նա հռովմայ ուշաղրութիւնը ճանկելու համար հարեւանցորդն ակնարկում է որ ինքն ևս փափաքում է հռովմէական եկեղեցու միութեան աշխատիլ, և իւր այդ բաղձանքով յուսուցեալ ի սէրն հռովմայ, իննորում է քրիստոնէաբար ձայն բարձրացնել և օգնել հեթանոսաց դէմ, շեշտելով. «փութասջեք հասուցանել մեղ ամենաքրիստոնեայ օգնութիւն, մինչ չե իցէ անդարմանելի հեղեղաց հասեալ ի մեր վերսց»: Սակայն այս անգամ Լեռնի քաղաքագիտութիւնն անցածող եղաւ. նա իսկըն պատասխան ստացաւ, յորում հռովմ գովում է իւր եկեղեցին և ջանում է այն ծանօթացնել Լեռնին: Իննովինտ III գրեց մի թուղթ և առ Գրիգոր VI և քաջալերեց նորան, հաւատացնելով որ ինքն ևս կանգնած է քրիստոնէից թշնամաց դէմ: Բայց այս միայն խօսքեր էին, զի Լեռն ոչ միայն օգնութիւն չստացաւ, այլ և տաճարականաց բանտարկութեան ու մատնահարութեանց և Սնախոքայ Լատին իշխան Խայմունդի թշնամարկութեան ենթարկուեցաւ: Վերջինիս չարամտութիւնը հասաւ մինչ այն որ զրգուց նկոնից սուլթանին հայոց դէմ: Բայց Լեռն չվհատեցաւ, նա իւր յշյոր գրաւ Աստուծոյ վրայ, սուր առաւ, ջարդեց Ռայմունդին առանց հռովմայ տեղակալի նզովքներին նայելու և Անտիոքը կրկին առնելով, իւր եղբօրթոռն Ռուբենին գահ նստեցրեց, ընդ նմին և բարկացած հռովմէական «Եղութաների» վրայ, գուրս վոնդեց իւր պետութեան սահմաններից. հռովմայ թղթերն նոցա իւր պետութեան սահմաններից.

այլ ևս չօգտեցին և չխարեցին նորան. Հռովմ պարզեներ էր յղում իսկ առ եպիսկոպոսն Սոոյ, յորդորելով «ի հնազանդութիւն» ածել Լեռնին, բայց ի զուր: Նոյն միջազգանդութիւնը ածել Լեռնին հրեշտակ ուղարկեց՝ հեղի անուն մէկին՝ առ Օտտօ IV և 1211-ին թագ ստանալով, պատակեց Ռուբենին: Հզօր բազկով նա յետ մղեց իւր թշնամեաց, կտրեց իւր յարաբերութիւնը հոգեկրկիտ հռովմէականներից, արգելեց նոյա մուտքն ի Կիլիկիայ, իւր հատու սուրը շարունակ արեան մէջ թաթախելով և հրձուելով: Լեռն այդ ազգային ռազմական մեծագործութիւններից յետոյ, փառքով իջաւ մահուան մահիճը. նա իսկըն կանչեց փառքով իջաւ մահուան մահիճը. նա իսկըն կանչեց Յովհաննէս Մեծաբարց հայրապետին և հաղորդուելով, կաքեց իւր բազմարդիւն կեանքն 1219-ին և թաղուեցաւ իւր բարեկարդած խստակրօն և ճգնաւորական Ակներ վանքում:

Լեռն իւր պետութիւնն այնպիսի մի բարձրութեան և փառքի հասցրեց, որ կարելի է նորան իւր խոչեմ և զօրաւոր քաղաքականութեամբ միջին գարու Տրդատն համարել, որի պետութիւնը Ճիշտ ինն գար յետոյ տուաւ իւր մանրանկարը Կիլիկիոյ բարձրութեան վրայ Լեռն Մեծագործի սրի տակ: Բայց Տրդատ իւր սիզալով հայրենեաց թումբ և առապարներն էր յարդարում, Լեռն իւր փքալով Կիլիկիոյ սար ու փափարներն էր զարդարում:

۶۲

«Առանց իմ ոչինչ կարէք առնել»:
ՅՈՒՅ. ԺԵ. 5.

Աւոն իւր բոլոր արտաքին քաղաքականութեամբ
հանդերձ այնպիսի մի հոգի ներշնչեց իւր յաջորդների և
գործակիցների սրտերը, իւր գահն այնպիսի մի հաւատար-
մութեամբ առ Հայաստանեայց եկեղեցին ձուլեց, որ երբ
նորա դուստր - Թագուհու Լատին ամուսին Ֆիլիպը գա-
ւաճանեց «Երդմնաղանց եղեալ ի յեղեալ ուխտէն Հայա-
գաւան և Հայասէր լինել»¹, իշխանք իսկըն գահընկէց
արին նորան, բանտարկեցին 12 21-ին և գահը Կոստան-
դին իշխանի խնամակալութեան յանձնելով, գահաւորե-
ցին նորա օրգի Հեթումին, պսակելով նորան Թագուհու
հետ 1227-ին:

Լւսն Մեծագործի զարկած քաղաքականութեան ընթացքն իւր ուղղութեամբ յառաջցաւ գրեթէ ամբողջ գար մի. մինչզեռ 1219 — 20-ի խաչկրաց արշաւանքի միջոցին ոչ միայն Հռովմէական խաւարասէր վանականք, այլ նոյն խսկ կարդինալն Պելագիոս ամենայն ջանք յիշարկում էին Հայոց արքունիքում երկպառակու-

¹ Վարդան. ԶԴ. Սմբատ. էջ 111:

թիւն մացնելու, երկու թաղաւորներն չեթում (+ 1270) և Աւոն Գ. (1271—89) խոհեմութեամբ պահպանեցին իւրեանց նախորդ առաջին պատկաւորից ստացած ժառանգութիւնը, խորշելով այդ արեւմտեան նիւթող ու մախոզներից։ Հաւատուարմութիւն առ Հայաստանեայց եկեղեցին այնպիսի մի առաքինութիւն էր, որ այդ ինքնազմիակ թագաւորք իւրեանց պարձանաց առաջինն այդ էին համարում և ստորագրութեանց և արձանագրութեանց մէջ «խոստովանող ուղիղ հաւատոյ ևայլն» ի նշան իւրեանց մեծութեան զրոշմում։ Բարեզարդել եկեղեցին, նորոգել այլազգեաց բռնութեան տակ խանգարուածները, ջանալ հաւատարիմ միալ Հայաստանեայց եկեղեցուն, ցոյց տալ, ապացուցել և հռչակել նորա ուղղափառութիւնն և առաքելական հարազատ պարզութիւնն—այս էր հոգին և ողեօրիչ զաղափարն, թէ արքայի թէ կաթուղիկոսի, թէ ուսեալի թէ անուսի։ Պահլաւունեան հռչակաւոր հայրապետաց հետևեցան շարք մի կաթուղիկոսաց, որոնք ստիպուեցան զեռ մաքառել Հռովմայ աշխարհակալութեան դէմ, ջանալով պահպանել Հօսոր նորա սատանայական նիւթումներից։

Թէ հոռոմք և թէ հոռվմ ձեռք չվերցրին Ռուբի-
նեան գահից: Երբ Յովհաննէս Դուկաս կրկին նեղել սկսաւ
հայոց, Կոստանդին (1220+1267), որ
իւր մտերիմ և մտակից և սրտով ու հոգւով իւր հետ
կապուած, Վարդան պատմչի հետ եկեղեցու բարեկարգու-
թեամբ եր քբազուտծ և յոյժ ատելութեամբ փառուած
էր առ քաղկեդոնականք, ջանացաւ դորա առաջն առնել
և ուղարկեց Յակոբ Կլայեցուն նոցա զըպարտութիւնք
Հերքելու. որպէս և յաջողութեամբ կատարեց հայաստա-
նեայց եկեղեցու հաւաարիմ զինուորը¹: Այս միջոցը

1 Կիրակոս. էջ 220:

զրեթէ լիովին կուռաբանական մի շրջան է, յորում պայքարել և յաղթանակել թշնամեաց վրայ ի քաջալերութիւն հայաստանեայց եկեղեցու փառասէր որդոց, գլխաւոր տեղն էր բոնում^{1:} Ասելութիւնն այժմ հոռվմայ դէմ էր, և հայք ջանում էին առաւել ուր պահել Բիւզանդի Հետո:

Հոռվմ աքնում էր իւր դիրքը փոխել Գրիգոր IX մերթ վէճ բարձրացրեց, մերթ պարզեների դիմեց, մերթ հայոց կաթուղիկոսի իշխանութիւնն ամբողջ արեւելքի վրայ վերստին հաստատեց, բայց այդ ամէնին նշանակութիւն առողջ չեղաւ: Այլ և հոռվմայ ջատագովք քընում էին հայոց եկեղեցու վարդապետութիւնն և նորա մէջ մոլորութիւնք գտնել կարծում, իսկ պապերը հաւատոյ հարցեր էին անում հայոց արքաներին: Մինչդեռ վերջինքս քաղաքական դրից ուշադրութեամբ էին ընթանում, հայոց կաթուղիկոսը պարզապէս արհամարհում էին հոռվմայ այդ խաղերը: Կոստանդնի աջ բազուկն Վարդան Մէծ վիճակուած էր հեթում թափառորին խրախուսել ընդգէմ հոռվմայ, ըստ որում և զրում է իւր թղթում. «Եթէ քեզ հաւատ հարցանեն. դու ասա. թէ ես զիմ առաջնորդայն ունիմ հաւատ և զիմ եկեղեցւոյն, և նոցա պարտիմ համար տալ և ոչ ձեզ»^{2:} Նա լոկ քմահաճութեամբ չէ ուղարկում իւր քաջալերութիւնք, այլ մի առ մի քննելով հոռվմայ եկեղեցին, յառաջազրում է նորա ակներե մոլորութիւնք ամենապարզ բանավարութեամբ, որպէս օրինակ հաղորդութեան վրայ. «Ֆրանկը զեւրեանց ժողովուրդն հաղորդեն ի մարմնոյ տեռան, և յարենէ տեռան զըկեն, վասնորոյ ըստ Բանին Քրիստոսի ժողովուրդն նոցա ոչ ունիցի զկեանս յաւիտենականս»^{3:} Եւ

¹ Տես. և «Արարատ» 1892. № 11: ² Տես. «Արարատ» 1892. № 11: ³ «Արարատ» 1869.էջ 52:

Ելի 1250-ին հոռվմ փափաքեց հայոց վարդապէտութիւնն իմանալ Ա. Հոգու բղխման նկատմամբ, կարծուեցաւ թէ արեմուտք ևս հայոց գաւանակից է, զի չգիտէին թէ հոռվմ 589-ի Տօւղօի ժողովում փոխեց հին դաւանակը, պնդիլով որ հոգին սուրբ բղխում է «ի հօրէ և յՈրդւց», որով աղջատեց ս. երրորդութեան միութիւնը: հայաստանեայց եկեղեցին դաւանում է «բղխումն ի հօրէ» «առումն յՈրդւց», այսպէս Քրիստոս վկայում է. «ևս առաքեցից ձեզ ի հօրէ՝ զհոգին Ճշմարտութեան, որ ի հօրէ ելանէ, նա վկայեցէ վասն իմ» . և «պայս իբրեասաց՝ վհեաց ի նոսա՝ և տսէ. առէք հոգի սուրբ» և կամ «յիմմէ անտի առնուցու և տացէ ձեզ» և այն: Սոյնպէս և ս. Գրիգոր Լուսաւորիչ. «Հոգին Ճշմարտութեան որ ի հօրէ ելանէ. ելանէ և ոչ բաժանի, և բղխէ և ոչ սպասի», այսինքն աղքիւրաբար, անհատաբար, «անհատահոս», որպէս երգում է շարականում (Հոգեզ. շարականք): Ատկայն շուտով հասկացան հայք որ հոռվմ այլապէս էր զաւանում, ըստ որում և Վարդան զրում է. «երկրորդ սխալ է. զի զհոգին սուրբ ի հօրէ և յՈրդւց ասեն. որ շփոթումն և պղտորումն առնէ մտաց լսողին».—«մի է պատճառն հայր՝ միցն ծննդեամբ և միցն ելողութեամբ. ապա պատշաճ է, որ մի լինի պատճառն յատուկ և յստակ. և հոգի Որդւց ասի, զի Որդւովն բաշխեցաւ պարզեց հոգւոյն որպէս հայրենի բարիք»:

1262-ին հոռվմայ նուիրակը Աքքա գալով, որտեղ գտնուում էր հոռվմէազաւան այլազգեաց վարչութիւնը, մոլորում զրել էր եկեղեցական գահէրիցութեան վրայ հայոց հետ վիճելու: Նորա հրաւերին ուշ չգարձրեց Կոստանդնին և պատուիրեց այնտեղ անցող պատգամաւորաց արժանը տնօրինել: Նուիրակը այդ վիրաւորանք համարեց իւր մեծապատութեան և ընդունեց նոցա: Երբ ապա 0շին, հեթմոյ եղացրը, թագաւորական հրամանով գնաց

Աքքա պատուիրակի և իշխանի մօտ, առաջինը յայտնեց նորան որ հայոց հայրապետն «Եթէ ոչ վասն օտարասիրութեան և հիւրնկալութեան, սակայն վտան բնական հարկին, զոր ունի ի հռովմայ եկեղեցւոյն, պարտ էր տեսանել զմեզ»: Այդ իմաստութիւնն անհասկանալի է, բայց պարզ է որ հեթում ակնկալութիւններ ունէր արեւմուտքից: Օշին պատմեց այդ իւր եղբօր և «նոքա, տսում է Միսիթար Տաշրացին¹, ըստ բնական բարուց աղզիս մերոյ զայլս բարձրացուցանողաց և զինքեանս նուտառացուցանողաց, իրաւունս յոյժ վարկուցեալ զստգանսն», յայտնեցին կաթուղիկոսին որ ընծաներով մարդ ուղարկէ արքայական գեսապանի հետ: Գնացողն էր յիշեալ վարդուպեար Միսիթար Տաշրացին:

Հռովմայ պատուիրակը նախ չընդունեց այդ պատգամաւորաց «կամ բարձրացօնութեամբ կամ չգիտենալով ի՞նչ ասել»: Բայց յետոյ ընդունեց նոցա, կարդալ տուաւ բերուած թուղթն և դժգնելով յայտնեց ընթերցանութեան կիսում, որ կաթուղիկոսի անձամբ դալը պէտք էր հոգեոր իրաց համար, սաելով ընդ նմին. «ինայելով ի ձեզ՝ խնդրէաք, զի եկեալ յօդեսցի ի զլուեխն եկեղեցւոյ»: Ուրիմն հայոց հայրապետի չմիանալն հռովմայ հետ վտանզի պիտի ենթարկէր հայոց. այսպիսի սպառնալիքի է զիմում հռովմայ պատուիրակը...:

Վշտացան հայ պատգամաւորք և հրաւիրեալ ծաշը մերժեցին, որ և կակլեցրեց պատուիրակին, ըստ որում տօնից յետոյ սկսաւ կեղծաւորել, գովելով և առաջին պատիւը տալով Միսիթար Տաշրացուն և ուզեցաւ նորա հետ խօսիլ և հարցեր տնել: Հրաւիրուած էր մի մեծ կաձառ դոյն կամ այլ նպատակով, յորում Միսիթար

¹ «Միսիթար Տաշրացոյ յաղագս ծանապարհորդութեան 12 առաքելոցն... ի հրամանէ թագաւորին Հայոց Հեթմոյ...» Երուսաղէմ 1865:

խոհեմութեամբ պատասխանեց որ սխալ է պատուիրակի կարծիքը, զի ինքն յեալններից է հայոց զիանոց մէջ, որ պազում անգամ լինի յարքունիս, զի վատացն պատահէ բարեբախտութիւն», որ գժգոհ է ընծաների արհամարհելուն համար և որ կպատասխանէ որչափ կարող է, մասցեալ թողնելով հայրապետին:

Վիճաբանութեան պատճառն էր այն, որ հռովմանդնում էր ուշից քրիստոնէական եկեղեցիք քննել գատել, ըստ որում և Միսիթար ասելով «յաւէտ մեք ունիմք կար, ըստ առաքելոյն օրինակի գատել զմեզ» և զուք ոչ կարէք քննել զմեզ», ջանացաւ առաքելոց առ Պետրոս ունեցած վերաբերմունքի ցուցմամբ՝ հերքել հռովմայ աչքակապութեան թեակոխումները: Հռովմայ պատուիրակը, թէե «ասէր յոլով և սակաւ լսէր», այնուհանդերձ վիրաւորուեցաւ, իսկ Միսիթար ինքնազիտաստ վարդապետն իւր հաւատարիմ գործով վեհացած, դարձաւ տուն և իւր յաղթաբանութեան ընդարձակ նկարագրութիւնը մատոյց հեթումին ութառողեան ոտանաւորով:

Նկատելի է որ մինչդեռ կաթուղիկոսի նուիրակը Միսիթար վեհանձնութեամբ էր խօսում պատուիրակի հետ, հեթումի պատգամաւորը՝ թովմաս ջանում էր շարժել նորա բարեսիրութիւնն և ընծաներն ընդունել: Այսպիսով հռովմայ պատուիրակը հեռացաւ մեծ գժգոհութեամբ Միսիթարի անսեթեեթ ձշմարտախօսութիւնից հարուելով¹:

Հեթում այսպիսի վստահ զիրք բռնելով, լքեցրեց հռովմայ սիրտն, ըստ որում վերջինս ուրախ էր, եթէ

¹ Կարծեմ սոյն ժամանակին է պատկանում և «Յակոբ վարդապետի հաւաքեալ ի ս. Գրոց, յաղագս Սստուծոյ Հոգուոյ, ի Հօրէ անսկզբնականէ դոլ բդիսումն և ելումն նախ քան զլափտեանս անժամանակաբար»: Ազգակին մատենադարան Պարիզի Տիֆլեմենտ արմén. № 135:

Հայոց թագաւորը բարեկամաբար էր վարւում Լատինաց կամ Ֆրանկաց հետ, ուստի և զրեց ու յորդորեց կայսր Միխայէլ Պալէօլոգոսին, և Պոլսի և Երուսաղէմի պատրիարքաց պատերազմ մի ձեռնարկել հեթանոսաց դէմ:

Հեթում Ա.ի ուղղութեամբ ընթացաւ և Լեռն Գ. (1270—1290), որ նոյն իսկ Բիւզանդացոց վոնդեց, որովք իւր դէմ դաւադիր էին, որպէս զրում է Միխթար արեղան (Էջ 52). «Աղիղծ և ուրացող ազգն Հոսոմոց, սուտ քահանայքն, և ստոյդ քաղկեդոնիկքն, եղեալ էին ի մտի քակել զվանորայքս, և զհաւանեալսն ի յազանդս նոցա պահել և զոչ հաւանեալսն բառնալ ի կենաց...»։ Սակայն իրերի վիճակը փոխուեցաւ, երբ հեթանոսաց զօրութիւնն սպառնալ սկսաւ, օրըստորէ բռնանալով։ Հեթում Ա.ի զլիսաւորած դաշնակյութիւնը Թաթարաց հետ այլ ևս մեծ օգուտ չտուաւ, ուստի և Հեթում Բ. (1290—) ձեռնարկեց վերստին Լեռն Ա.ի քաղաքականութեան։ Մինչդեռ մի կողմից Հայոց եկեղեցու ջատագովութիւնն էր ծաղկում, այնպէս որ մինչև անդամ Ոնտիոքայ Արսենիոս պատրիարքն ընդունեց Հայոց հաւատքը¹, բարձրացրեց Հեթում Բ. Ճշմարտութեան դրօշակն և սկսաւ աշխատել քրիստոնէից միացնել զօրացող հեթանոսաց դէմ, վասնորոյց և քննութեան բովի մէջ ձգեց բոլոր եկեղեցեաց վարդապետութիւնք, նպատակ դնելով Ճշմարտութիւնը գահաւորել ամէնքի վրայ։ Նորան քաջալերում էին մանաւանդ Թաթարք, որոնք նոյն իսկ պատգամ ուղարկեցին նաև ի Հռովմ, յորուրելով քրիստոնէից միանալ Թիւրքաց դէմ։ ըստ որում և նիկողայոս IV պապը պատուիրակ առաքեց առ Հեթում 1289-ին և զրեց քրիստոնէից միութեան ջանալ։ Իւր պատուիրակ Յովհաննէսի ընդունելութեան շնորհակալութիւն ևս

զրեց ապա 14 յուլիսին, և որովհետեւ Հեթում քննութեան էր ենթարկում նաև Հռովմայ եկեղեցին, ուստի նիկողայոս յայտնում է առ այս իւր տհաճութիւնն, որ իւր եկեղեցու նկատմամբ քննութիւն լսել չէ փափաքում։ Յորդորներ զրեց և Հայ իշխանաց և ժողովրդեան հասցէին։

1292-ին Հռովման առնուեցաւ և Ստեփանոս Դ. կաթողիկոսը գերուեցաւ, ուստի և Հայրապետական աթոռը փոխադրուեցաւ ի Սիս, որտեղ և մնաց մինչև 1441-ը։ Նոյն տարին քրիստոնէից զատիկների խոտորումը նկատելով, հաւաքեց Հեթում քանի մի եկեղեցական, քննեց ս. Գիրքն և արքայաբար հրամայեց ապր. 6-ին տօնել ընդ նմին «բազումք եպիսկոպոսաց և վարդապետաց», որովք ընդդիմացան, աքսորուեցան։ Այս նորա գիտութեան առաջին քայլն էր, որպէս և ինքն զրում է. «Ղինել ժողով յօժմարեցաք, քննել զգիրս աղաշեցաք, և զոր ստուգի յանձին կալաք։ Յայնժամ եկեալ ի միասին հանուր լրմամբ եկեղեցին, զատուածաշունչ զիրս քննեցին, և անդստին ճշգրտեցաւ արդարութիւն իննդրոյն ցուցաւ։ որով հիմն կանոնեցաւ տօնել ի վեցն հաւասահաւ. յորում բոլոր աղզք որ ի նոյն, «միաբանեալ եղեն ողջոյն»¹։

Այսպէս Հեթում թողնելով իւր սուրբ, խրուել էր աստուածաբանութեան մէջ և մարգարէական աչքով կարէր իւր գահի վախճանը աեսնել։ Շուտով թողեց իւր գահը Սմբատին և ինքն բերաւ իւր քոյր Սարիամին ի Կ. Պոլս կայսր Անդրոնիկ որդուն, Միքայէլի հետ պսակելու, որով անշուշտ յցս ունէր իւր ծրագրի մէկ թեր նախապատրաստած լինել։ Առ նոյն նպատակը յորդորեց Հռովմայ Բանի Փայտիոս VIII և Սմբատին, որի խնդրանօք թղթեր զրեց և ժամանակի թագաւորաց, զրդելով խաչկրութիւն մի բռնեցնել։ Հեթում զարձաւ, վերստին

¹ Georgius Pachym. II, 52:

խլեց իւր գահն և սկսաւ առաւել վճռակի քրիստոնէից միութեան ձգտիր. Թղթեր զրուեցան զանազան կողմեր և նոյն իսկ առ նեստորականք, ընդ նմին և աշխատում էին, որպէս տարածւում էր, Անտիռքայ աթոռը ստորալրել չայոց կաթուղիկոսին¹(Օլբ. ԿԵ.): Բայց այս բանակցութիւնք վարանման մէջ ձգեցին Մեծ չայոց հաւատարիմ և արթուն եկեղեցականաց, մանաւանդ զի յիշեալ զատկի կարգադրութիւնից անմիջապէս յետոյ 1293-ին աթոռ էր բարձրացել Գրիգոր Անաւարզեցին, որին և կարծում էին այդ անկարգութեան մասնակից լինել²: Օրբելեան ինքն չէ հաւատում տարածուած լուրերին և բամբասանքներին, որպէս և զրում է. «ո՛ հայր պատուական և պետ պանծալի՛ զոն բաղայք բասրանաց ի բերանս բիւրաւոր մարդկան ի բայս և ի բանս օտարս և ի բաղայս բարրանաց, յորմէ երկուցեալք ակն ածեմք». և դարձեալ. «ըթին (զրտան և ունայնայխոյզ պարսաւտղիր արք), սպրտեալք տանէ ի տուն՝ և շշուկս չարակարծ զամենեքումք արկանեն այսպէս. «Հոռոմ է մեր կաթուղիկոսն և ընդ նոսա գաշնագիր»: զորոյ Ճշմարիան Աստուած գիտէ և դուք»: Ուրեմն բանսարկուները մտնելով ժողովրդի մէջ, մատնահարում էին թէ Անաւարզեցին դաշնակից է և հաւատակից Յունաց: Անաւարզեցին, որ էր «այր զիտնական

¹ Այս ծգտումը կար և Տարսոնի ժողովի ժամանակ: ² ԺԴ. դարի ունիթոռներից մէկ տպէտի ծեռքով մի թուղթ է յերիւրուել անձոռնի և անարգ լեզուվ ու բովանդակութեամբ, որ Գրիգոր Անաւարզեցուն են վերագրում: Թղթի աւանդողն է Սիմիթար Ապարանեցին(?) և լուս ընծայողն՝ Կղեմէս Գալանոս եղուիթը (նորանից և Զամչեան): Ապարանեցին ևս մի ուրիշ աղբիւրից(?) է վերցնում, ուրեմն այդ անշնորհ թուղթն երեք մարդու ծեռքով անցել և ապա մեզ է հասել: Այդ թուղթը կատարեալ կնիք է հոռվմէականաց այլանդակ միջոցների և հմտութեան: Դորա հետազօտութիւնը կտնեն ընթերցողք Պալանոսի եղուիթական գրուածոց քննարանութեանս մէջ, որ յուսամ շուտով հրատակել:

և զիտէր զլեզու և զբարութիւն լատին և յօյն ազգին», «այր իմաստուն և յօյժ հմուտ հին և նոր կտակարանաց», անշուշտ ունէր իւրայնոց մէջ իսկ նախանձող չկամներ. բայց քանի որ գատապարտում է և բամբասում իբրև Յունաց գաշնագիր, քաջայայտ է, որ հառվմէականք ևս մատ ունէին այդ բանսարկութեանց մէջ: Այս ամէնին ձիշտ արտայայտութիւնն է և վանական վարդապետի եղօրորդու ստորագրութիւնն. «օձն կամի շարժել զտուտն՝ ջանացարուք ոչ տալ տեղի զիսցն և մի՛ հաւատայք խարողին»: Հարկաւ մէկ կաթուղիկոս, որ այնքան հետու էր նստում բուն հայաստանից, շատ պէտք է զգոյշ լինէր, զի ամենայն հայոց կաթուղիկոսի համար առաւել փառք չկարէ լինել, քան այն որ ունի հաւատատրմութեամբ, և իւր աղզը Սսից կառավարելով, կարձատես պիտի լինէր՝ չգիտէնալու, որ զոյզն մի կամահամ խախտումն հայաստանեայց եկեղեցու վարդապետութիւնից կամ կարգերից, կարէր նորան զրկել Մեծ հայքից և Կիլիկիոյ մասնաւոր կաթուղիկոս մի դարձնել, որ ոչ մի կաթուղիկոսի սրտով չէր լինիլ:

Այլ Գրիգոր Անաւարզեցին միջոց չունեցաւ իւր մեծահոչակ նախորդաց նման ամսութեալ իւր հաւատարիմ հովիւների անհանգստառ թիւնք և վախճանուեցաւ:

Սստացաւ Գրիգոր հայոց վարդապետաց թուղթը, թէ ոչ, այդ նոյն է. միայն թէ հետամուտ լինինք դորան հայաստանեայց եկեղեցու քաջամիտ և հաւատարիմ հօտնու հօտապեաները ձանաչելու համար: Այդ թուղթը հեղինակուած է Ստեփանոս Օրբելեանի ձեռքով, որ մետրապոլիտ էր Սիւնեաց և «նախաթոռ ու զլուխ ամենայն եպիսկոպոսաց հայոց»: Թուղթն ստորագրուած է եկեղեցականներից և Սիւնեաց իշխաններից, ըստ որում և իւրաքանչիւրը գնում է իւր նզովքն. «որք ոչ միարանին այսմ հայրենաւանդ և հայրապետական հաստահիմն գա-

ւանութեանցս՝ նզովեալ եղեցին, որպէս Սաբէլ և Արիոս»:
Ստորագրող եպիսկոպոսներից մէկն է և հռչակաւոր ու-
սումնականն ժամանակի Եսայի Նղեցի իւր աշակերանե-
րով: Նմանապէս զրում են և իշխանք, զորօր. «Եթ ան-
պիտան ծառայքս Քրիստոսի Ելիկումն և Լիպարիտս,
որդիք փառաւոր իշխանացն Տարսայիցին և Խւանէի,
Եղեարք Արովք և որդւովք և ամենայն աղատօք հաւան
եմք և Հնազանդք մահու չափ այսմ աստուածատուր և
Հայրենաւանդ. կտակիս. և որ հակառակին՝ որոշեալ լիցին
ի սուրբ Հարցն մասնակցութենէ»:


Թուղթն սկսում է Հայաստանեայց Եկեղեցու դո-
հունակութեամբ, եկեղեցու, որ աստուածային անյաղթ
զօրութեամբ բարձրացեալ և անեղական աջով Հզօրին
պարսպեալ բարձր բազկօքն Յիսուսի զգուեալ և Հիազօր
շնորհօք Հոգւոյն պերձացեալ՝ սուրբ, անբիծ, անարատ
Եկեղեցիս Հայոց՝ անբասիր և անշաղախ Հարսնս Երկնաւոր
Փեսային՝ տնկեալս և Հիմնաղբեալս ի ս. առաքելոցն Թա-
գէոսէ և Բարդողիմէոսէ, մշակեալս և բեղմնաւորեալս
ի սքանչելի քրտանց ահարկու և անհամեմատ առնն Գրի-
գորիսի...» վասն զի գարաւոր փորձանաց մէջ Հաստատ է
մնացել և անփոփոխ միմիթարիչ իւր հօտին: Ապա ող-
ջունում է Հայաստանեայց պետին, ձայնելով. «Ճնրահան-
գոյց գագաթամբ ողջունէ զգլուխդ իւր պանծալի՛ զսխրա-
լիդ բնաւից, զչքնաղդ և զնորոգ գերահրաշացեալդ ի
Հոգւոյն զՔրիգորիոս՝ Հայր Հանուրց սեռից Հայկայ և կա-
թուղեկոս տիեզերական ի ըրանէ Հոնաց և Լիփանց, ի ծովէ
Կասպից և ի լեռնէ Կովկասեաց մինչ ի սահմանս եղիպ-
տական և ի ծովն արևեմտային, ուր զգիշերն ագանի ակն
տունջենային»: Այս է Հայաստանեայց Եկեղեցու ողջոյնն,
Մեծ Հայքի եպիսկոպոսաց զլուխ, Ստեփ. Օրբելեանի բե-
րանով, ընդ որ կամենում է մէկ զգուշութիւն ներշնչել
իւր պետի սրբութեան և մէկ ևս ջրել զրաբանների զրպար-

տութիւնք, ըստ որում և կատարել երկու բան—յանձ-
նառականք—պինդ պահել Հայաստանեայց Եկեղեցու բաղ-
մաթիւ ժողովաց նզովեւք հաստատած կարգերն, «յորոց
ոչ ունիմք Հնար արեամբ և մահու չափ մասամբ միով
շեղել այնքան նզովեց պարտապան լինել. և ի մեր հա-
րանցն մասնակցութենէ Հեռանալ, իբրև որդիկ ժանաք և
խրամատիչք ցանկոյ Հարցն, որոց պատիմն յայտնի է ի
գրեալսն». և Հրաժարական—նզովել և Հեռու կենալ այն
ամէնից, որոնցից խորշել է Հայաստանեայց Եկեղեցին դա-
րեր շարունակ: Յիշում են, որ թէ Հնազանդ են ըստ
ամենայնի, սակայն կամենում են, որ իւրեանց զլուխը
թղթով փարատէ տարակուսանքները. «զի յայնժամ ա-
ռաւել Հաստատութեամբ և հլու Հպատակութեամբ Հնա-
զանդ լիցուք աստուածային զլիսոյդ. և թագաւորեսցես
յեկեղեցիս մեր ջահաւորեալ՝ որպէս արեգակնա: Յոյց
տալու Համար, որ այդ տարակոյները տարածուած լու-
րերից են ծագել կոչում են Սնաւարզեցուն. «Թագաւորա-
կան արգասիւքդ ճնողդ իմաստից և մայրդ ուղղափա-
ռութեան, աղբիւրդ Հաւատոյ և անվախ ախոյեանդ ս.
Եկեղեցւոյ՝ Գրիգորիոս կաթուղիկոս Հայոց»: Բայց որպէս
զի Սնաւարզեցին զիտենայ, որ այդ մեծափառ իշխանու-
թիւնն ունի Հայոց վրայ, միմիայն ուղղափառ Հաւատար-
մութեամբ իւր նախնեաց և թէ փոքր շեղուիլն անզամ
պիտի զրկէ նորան իւր փառքից, յիշում են. «ապա թէ
աւելի ինչ կամ պակաս կամիք մուծանել յեկեղեցիս մեր,
ոչ ունիմք ի Հարցն՝ և կամ զրեալքս խոտանեն առ ձեզ
յայնժամ մի՛ աշխատ լինիք և մի՛ զմեզ աշխատ առ-
նէք. ըստ ձեր կամաց լիցի աշխարհդ այդ և այլ ոք որ
կամիցի...»: Ընդ նմին Սնաւարզեցին չպիտի կարծէր, թէ
նոյտ սաստել կարէր Հրամանով կամ բռնութեամբ, զի
բացի այն որ Մեծ Հայքն օտար իշխանութիւն տակ էր,
որ կարող էր նորա իշխանութիւնից վատանջել, այլ և

նկատում են ըստ Հայրենի սկզբան խրոխտալով, որ չեն վախենում պատիմներից և ապատրաստ եմք ի տանջանս, յաքսորս և ի բանտ, ի մահ և ի մեռանել ի վերայ ո. և առաքելական հարցն աւանդից»: Այսպիսով այս քաջարի ժառանգներն իւրեանց մեծափառ նախնեաց՝ ազնիւ հաւատարմութեամբ կանգնում են իւրեանց անսման և փառաւոր ժառանգութեան համար, որ նախնեաց արեան գնով պահուած լինելով, թանգագոյն է քան զամենայն հարստութիւնն և փառքն աշխարհիս: Զեռք ձեռքի տուած իշխանաց հետ նզովում են իւրեանց հակառակորդաց, նզովում են նախնեաց նզովեւք, և դնում են իբր անսասան հիմք իւրեանց կենաց. «Հաւան եմք մեք ընդ մեր հարսն ի դժոխս իջանել և ոչ ընդ հոսոմոց յերկինս ելանելք :



ՎՐԻՊԱԿՆԵՐ.



| Էջ. | ՄոռԼ. | Ա Խ Ա Լ. | Ռ Ա Դ Ա |
|-----|-------|----------|------------------|
| Գ. | 13 | Կերկից. | Եղակումին |
| Ժ. | 11 | Ներքնից. | Են |
| ԺԲ. | 11 | Վ. | Հնջինագոյնը |
| ԺԸ. | 8 | Ն. | Աէտքերն |
| ԻԱ. | 7 | Վ. | Բաւ... |
| ԻԲ. | 16 | > | Ուսավարից |
| | 2 | Ն. | Ճիահեծումեան |
| | 3 | Վ. | Ճեռքեր |
| | 4 | > | Այդ |
| | 8 | Ն. | Կաթուղիկոսումեան |
| | 9 | Վ. | Կեղրոցքեց |
| | 14 | > | Գրաւելի |
| | 16 | > | Նողիսի |
| | 18 | 10 | Արդինքը |
| | 27 | 15 | Հընկունցաւ |
| | 32 | 11 | Բովանդակումինից |
| | 40 | 4 | յերկարման |
| | 46 | 20 | ինն |
| | 74 | 8 | որ և իցէ |
| | 82 | 15 | duabis |
| | 96 | 7 | Երկրաբանումեան |
| | 100 | 12 | հերետիկումին |
| | 110 | 14 | Ցովհ. ԿԹ. |
| | 122 | 2 | (Ցեն) |
| | 140 | 10 | Բոթենաւորի |
| | 142 | 5 | աւելով |
| | 143 | 10 | մարդաբանական |
| | 144 | 4 | ու |
| | 146 | 10 | մարդաբանական |
| | > | 6 | որ |
| | 147 | 13 | մարդաբանը |
| | 156 | 16 | յի ասում |

| Էջ. | Առաջ. | Ա Խ Ա Հ. | Ո Ւ Ղ Ի Դ. |
|-----|----------|----------|-------------------|
| 157 | 16 | Վերկից. | մարդիկները |
| 159 | 18 | > | Հոռվմ |
| 161 | 1 | Ներքից. | նոր |
| 167 | 13 | > | յէ կարող |
| 176 | 11 | Վ. | սերմերը |
| 177 | 21 | > | զրատկութիւն |
| 187 | 10 | > | բառերը |
| 190 | 7 | Ն. | ամնայն |
| 193 | 1 | Վ. | վարդապետաց |
| 195 | 8 | > | շեշտում էր |
| 211 | 9 | Ն. | 1189 |
| 212 | 10 | > | բանտարկութեան |
| 213 | 2 | > | առապարներին |
| 216 | 3 | > | տեռան |
| 218 | 5 | Վ. | իմաստութիւն |
| > | 17 | > | դժգնելով |
| > | ԵԱՆՈԹՈՒ- | | ծանապարհորդութեան |
| | ԹԻՒՆԸ. | | համապատութեան |
| 224 | 3 | Վ. | Նգեցի |
| > | 7 | Ն. | Լիփնաց |



ԳԻՒՆ է 1 թ. 50 ս.